ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



# ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑ



Վարագա վանքը

Գիրքը հրատարակվում է հովանավորությամբ
Տեր և Տիկին Վարդգես և Արմենուհի Թովմասյանների՝
ի հիշատակ իրենց հանգուցյալ ծնողների։

Հեղինակը խորին շնորհակալություն է հայտնում
հարգարժան հովանավորներին։

A 93538

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

# ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑ

## (Կյանքը և գործունեությունը)

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ
36

ARCH. MESROB ASHJIAN BOOK SERIES
36

ԵՐԵՎԱՆ 2008

ՀՏԴ 891.981.0 : 391 / 335 = 919.81
ԳՄԴ 83.3 Հ + 63.5 (2Հ)
Կ 755

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիրներ պատմ. գիտ. թեկնածուներ
Ռ. Փ. Հովհաննիսյան, Դ. Ս. Վարդումյան

Կոստանդյան Է.

Կ 755 Գարեգին Սրվանձտյանց: (Կյանքը և գործունեությունը).-Եր.:
ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2008 - 200 էջ:

Աշխատությունը նվիրված է «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսի հայտնաբերող, գրող, գիտնական ու մանկավարժ Գարեգին Սրվանձտյանցի լուսավորական, հրապարակախոսական գործունեությանը, ցույց է տրված նրա ավանդը հայ բանահյուսության և ազգագրության զարգացման գործում: Քննարկված է նաև Սրվանձտյանցի հասարակական գործունեությունը՝ կապված ազգային-ազատագրական շարժումների հետ: Տրված են Գ. Սրվանձտյանցի հասարակական-քաղաքական հայացքները:

Նախատեսվում է պատմաբանների, բանասերների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանների համար:

ԳՄԴ 83.3Հ + 63.5(2Հ)

ISBN 978-99941-73-18-1

# ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

*«Գարեգին Սրվանձտյանց (կյանքը և գործունեությունը)» աշխատությունն առաջին անգամ լույս է տեսել 1979 թ. 1000 տպաքանակով: Ամենևին չթերագնահատելով Սրվանձտյանցի մասին գրված գիտական բազմաթիվ արժեքավոր հոդվածները, այս աշխատությունը մինչև օրս մնում է միակ համապարփակ ուսումնասիրությունը մեծ բանագետի, բանահավաքի, ազգագրագետի, ժամանակի ականավոր հասարակական-քաղաքական գործչի, հայ առաքելական եկեղեցու նվիրյալ հոգևորականի մասին: Մոտ 40 տարի առաջ հրատարակված այս հետազոտության կարիքն այսօր շատ է զգացվում: «Վան-Վասպուրական» հայրենակցական միության Լոս-Անջելեսի մասնաճյուղի անդամներ Տեր և Տիկին Վարդգես և Արմենուհի Թովմասյանների հովանավորությամբ լույս է տեսնում սույն աշխատության երկրորդ հրատարակությունը: Այստեղ կատարվել են որոշ խմբագրական փոփոխություններ և ավելացվել է գիտաժողովում կարդացված երկու զեկուցում, որոնք իբրև հոդված լույս են տեսել Լոս-Անջելեսի «Վարագ» պարբերաթերթի թիվ 50-ում և «Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների ժողովածուի թիվ 5-ում:*

# ԱՌԱՋԱԲԱՆ

*Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին բախտորոշ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար: Ռուսաստանի կազմի մեջ մտած Արևելյան Հայաստանը դարձավ հայ ժողովրդի հավաքման ու ազգային համախմբման օրրան: Այդ իրադարձությունը շրջադարձային նշանակություն ունեցավ նաև Արևելյան Հայաստանի արտադրողական ուժերի և ողջ տնտեսական կյանքի զարգացման համար: Երկրի տնտեսությունը ներգրավվեց համառուսաստանյան տնտեսական կյանքի ոլորտը: Հայ ժողովրդի արևելյան հատվածը տնտեսական ու մշակութային կյանքի աշխուժացման լայն հնարավորություններ ստացավ:*

*Պարսկական դաժան լծից ազատագրված հայ ժողովրդի արևելյան հատվածը ուշադրությունը բևեռեց Արևմտյան Հայաստանի վրա: Սերտ դարձան արևելահայերի և արևմտահայերի հարաբերությունները: Արևելահայ և արևմտահայ պարբերականները սկսեցին իրենց էջերում փոխադարձաբար նյութեր զետեղել մյուս հատվածի մասին: Թիֆլիսում հրատարակվող «Կռունկ Հայոց աշխարհին», «Մեղու Հայաստանի», «Մշակ» պարբերականներն անընդմեջ պատմում էին Կ. Պոլսի, Իզմիրի գաղթավայրերի և բուն Արևմտյան Հայաստանի գավառների բնակչության կյանքի մասին: Արևմտահայ «Մասիսը», «Միւնաւորին», «Մեղուն», «Արեւելեան մամուլը», «Արծուի Վասպուրականը» տեղեկություններ և լուրեր էին հաղորդում արևելահայության վերաբերյալ: Ազգային ինքնագիտակցության զգացումն ավելի ուժեղանում է դարի երկրորդ կեսից: Դրա հետևանքով և որպես թուրքական բռնությունների պատասխան, աշխուժանում են ազգային-ազատագրական շարժումները: Զեյթունի 1862 թ. ապստամբությունն իր վրա է բևեռում համայն հայության ուշադրությունը: Հայ ժողովրդի երկու հատվածների մեջ էլ շարժում է ծավալվում ապստամբներին օգնելու համար:*

*Հայ գրողների ստեղծագործություններում պատշաճ տեղ է գրավում Զեյթունի հերոսամարտերի նկարագրությունը, հայորդիների սխրանքների արտացոլումը: Ուժեղանում է հետաքրքրությունն ազգային հոգևոր արժեքների նկատմամբ: Ազ-*

դային ինքնաճանաչման նշանաբանով մեծ աշխատանք է ծավալվում ժողովրդական բանավոր ստեղծագործությունների հայտնաբերման, գրառման և հրատարակման ուղղությամբ: Արևմտահայ մտավորականները (առանձնապես Մկրտիչ Էմին, Գրիգոր Խալաթյանը) մեծ ուշադրություն են դարձնում Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ օգտագործված ավանդական բանահյուսության առանձին հատվածների ուսումնասիրմանը: Ռուսերեն լույս է տեսնում Գր. Խալաթյանի «Հայկական էպոսը Մովսես Խորենացու պատմության մեջ» աշխատությունը:[1]

«Պետք էր համաշխարհային հասարակական կարծիքի առաջ վավերացնել պատմական Հայաստանը, հայ ժողովրդի ազատագրության ու անկախության իրավունքը հավաստել աշխարհագրական, ազգագրական, պետական ու քաղաքական գոյության փաստարկներով»:[2] Ալիշանը հենվելով գրական և աշխարհագրական աղբյուրների վրա, առանց սեփական աչքերով տեսած լինելու իր նկարագրած վայրերը, հրատարակում է «Սիսուան», «Այրարատ», «Սիսական» աշխատությունները[3] Հայաստանի առանձին հատվածների վերաբերյալ: Պատշաճ ուշադրության արժանացավ նաև ժողովրդի բանավոր ստեղծագործությունը: Ժամանակի մտավորականներից ոմանք կարծում էին, թե հայ ժողովուրդը, դարեր ի վեր գտնվելով օտար նվաճողների կրնկի տակ, կորցրել է հազարամյակներ առաջ ունեցած իր հոգևոր գանձերը և այլևս ի վիճակի չէ նորն ստեղծելու:

Գարեգին Սրվանձտյանցն առաջինն էր հայ իրականության մեջ, որ հետևողականորեն զբաղվեց ժողովրդական բանահյուսության հավաքման, գրառման և ուսումնասիրության խնդրով: Մեկը մյուսի ետևից հրատարակած նրա ժողովածունե-

[1] Гр. Халатян, Армянский эпос в истории Армении Моисея Хорейского. Опыт критики источников, ч. 1-2, М., 1896.
[2] «Հայ նոր գրականության պատմություն», հ. 4, Երևան, 1973, էջ 33:
[3] «Սիսուան, համագրութիւն Հայկական Կիլիկիոյ և Լևոն Մեծագործ», ս. Ղազար, 1883, «Այրարատ, բնաշխարհ Հայաստանեայց», ս. Ղազար, 1890, «Սիսական, տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի», ս. Ղազար, 1893:

րը[4] սկզբնավորեցին հայ ժողովրդական բանավոր ստեղծագործությունների լույս աշխարհ հանելու գործ: Առաջին ժողովածուին՝ «Գրոց ու բրոցին», իբրև հավելված լույս տեսավ Գ. Սրվանձտյանցի հայտնաբերած հայ ժողովրդական էպոսի՝ «Սասնա ծռերի», առաջին պատումը՝ «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» խորագրով: Այդ հայտնագործությունը Սրվանձտյանցի ժամանակակիցների կողմից ընդունվեց մեծ զարմանքով ու հիացմունքով:

Րաֆֆին, վեր հանելով «Գրոց ու բրոցի» արժանիքները, քննադատում է մեր անցյալի պատմագիրներին, նույնիսկ մեր պատմահորը, ժողովրդի կյանքը անտեսելու համար: «Պետությունը կազմող մարմինը-ամբոխը չի մտնում նրա (Խորենացու - է. Կ.) պատմության մեջ. ժողովրդի ընտանեկան և քաղաքական կյանքից մենք ոչինչ չենք գտնում»:[5] Սրվանձտյանցի ժողովածուներում արևմտահայ իրականության մեջ առաջին անգամ գրականության նյութ էր դառնում ժողովրդի կյանքը, զբաղմունքը, տառապանքները, սովորույթները, հոգևոր արժեքները և այդ ժողովրդի ապրած բնատարածքի՝ պատմական հայրենիքի մանրամասն նկարագիրը: Գարեգին Սրվանձտյանցը մեր այն սակավաթիվ մտավորականներից է, որ ոտքով շրջել է համարյա ողջ Արևմտյան Հայաստանը և իր գործերում վերակենդանացրել այդ հողում ապրող ժողովրդի կյանքը:

Գարեգին Սրվանձտյանցի հանդես գալը պայմանավորված էր XIX դարի 50-60-ական թվականների գրական-հասարակական մի նոր ուղղությամբ, որն ավելի ևս խորացավ 70-80-ական թվականներին: Դա գավառական գրականության, այլ խոսքով՝ գյուղագրության առաջացումն էր կամ «գավառի մուտքը գրականության մեջ»:

Վարագա դպրոցի հիմնադիրը, ունակ ուսուցիչները և սաները գրականության նյութ են դարձնում Հայաստանի հնագույն նահանգներից մեկի՝ Վասպուրականի, ապա և Տարոնի բնակիչների կյանքը: Ժողովրդանվեր գործիչների մի փայլուն աստղաբույլ՝ Մ. Խրիմյանը, Ղ. Փիրղալեմյանը, Երեմիա, Արիս-

4 «Գրոց և բրոց», Կ. Պոլիս, 1874, «Հնոց և նորոց», Կ. Պոլիս, 1874, «Մանանա», Կ. Պոլիս, 1876, «Համով-հոտով», Կ. Պոլիս, 1884:

5 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1958, էջ 94:

տակես, Սեդրակ Տեկանցները, Գ. Սրվանձտյանցը, Տ. Ամիրջանյանը, Ա. Թոխմախյանը և ուրիշներ դառնում են արևմտահայ «գավառիկ» գրականության սկզբնավորողները: Սրվանձտյանցի գործերն աչքի են ընկնում խորությամբ, նյութերի բազմազանությամբ և հարստությամբ: «Նորա (Սրվանձտյանցի – Է. Կ.) ժողովածուն բոլորովին ազգային ոգու շնչով է շնչում, որտեղ եւ՛ ճաշակ կա, եւ՛ իմաստ, եւ՛ հանճար, եւ՛ բարոյականութիւն, եւ՛ այս բոլորը մերն է, մեր հայկականը եւ ոչ օտարինը: Դոքա անհերքելի ապացոյց են, թե ժողովրդական բանաստեղծութեան անփոխարինելի ազդեցութիւնը որքան կախված է հավաքողի շնորհքից, որ իր նուրբ ու հանճարեղ ճաշակով գիտէ ընտիրն անպետքից ջոկել, բուն ազգայինը՝ թաթարացած բանդագուշանքից»,-գրում է Սեդրակ Մանդինյանը «Գրոց ու բրոցի» մասին:[6] Բարձր գնահատականի են արժանացել Սրվանձտյանցի մյուս ժողովածուները ևս: Գրաքննադատ Հակոբ Օշականը «Համով-հոտովի» արժանիքները գնահատելիս նշում է այն ոգևորությունը, որով ժողովրդի կողմից ընդունվել է այդ ժողովածուն: 1915 թ. եղեռնից մազապուրծ հայերը լացով ու արցունքով էին կարդում «Համով-հոտովը», որովհետև այն բռնակալի ձեռքով ընդմիշտ խլված ու «կորուսված» հայրենիքի վերհուշն էր:

Սրվանձտյանցն ունեցավ իր հետնորդ-բանահավաքները՝ Գ. Շերենց, Պ. Նաթանյան, Մ. Միրախորյան, Ս. Հայկունի և ուրիշներ՝ արևմտահայերից, իսկ արևելահայերից՝ առանձնապես Տ. Նավասարդյանը: Նրանք մեծ խանդավառությամբ ձեռնամուխ եղան հայ ժողովրդական բանահյուսության անգին գոհարները հավաքելու և հրատարակելու գործին: Կարևոր նշանակություն ունեցավ Մ. Աբեղյանի 1889 թ. գրի առած ազգային էպոսի «Դավիթ և Մհեր» նոր պատումը: Հայ ազգագրության և բանահյուսության հետագա զարգացմանն առանձնապես նպաստեց Գր. Խալաթյանի «Ծրագիր հայ ազգագրութեան և ազգային իրավաբանական սովորութիւնների» աշխատությունը[7], որը հեղինակը ձոնել էր Գ. Սրվանձտյանցին: Հետևելով ռուս և եվրոպա-

---

[6] Տե՛ս «Համով-հոտով», Թիֆլիս, 1904, էջ Թ (այսուհետև մեջբերումները նույն հրատարակությունից):

[7] Գր. Խալաթեան, Ծրագիր հայ ազգագրութեան և ազգային իրավաբանական սովորութիւնների, Մոսկվա, 1887:

կան բանահյուսական տեսությունների, հենվելով հայ ժողովրդական բանահյուսության վրա, Խալաթյանն առաջադրեց դրույթներ, որոնք ուղենիշ եղան հետնորդ բանահավաքների, բանագետների և ազգագրությամբ զբաղվողների համար: «Ծրագրում» ըստ արժանվույն գնահատված էր Գ. Սրվանձտյանցի դերը հայ ազգագրության և բանահյուսության զարգացման գործում: «Ծրագրի» նպատակն էր հայ բանահավաքումն «ազատել կամայական արհեստավորությունից և դնել միասնական սկզբունքների, պրոֆեսիոնալ մակարդակի վրա»[8]: «Ծրագիրը» բարձր գնահատականի արժանացավ Գ. Սրվանձտյանցի կողմից. «Վրա հասավ Ձեր «Հայ ազգագրութեան ծրագիրը»: ...Արդէն կանխաւ եա, թէ ի Տարոն և թէ այլուր պատահածս գաւառները թելադրած էի այդպիսի բանըը գրելուն: Նվիրեցի ծրագիրդ երեք անձանց, որոց մէկն կգտնվի ի սբ. Կարապետ, մէկն՝ ի Մուշ, մյուսն՝ ի Պոլանըլս. որքա՜ն մեծ բացուեցան անոնց աչքերը ծրագրիդ ճառագայթներով, որ կլուսավորէր, կառաջնորդէր և կցուցանէր ամեն բան պարզ ու կատարեալ: Մեծ գործ և պիտանի է ծրագիրդ»:[9]

Սրվանձտյանց ազգագրագետ-բանագետը բարձր է գնահատվել ժամանակակիցների կողմից: Հայ պարբերականները ողջունել են «մեղվաշուրթ» գիտնականի սխրագործությունները: Հիշատակության արժանի են հատկապես Րաֆֆու հոդվածը «Մշակում», Ստ. Պալասանյանինը՝ «Փորձում», Գ. Տեր-Աղեքսանդրյանինը՝ «Մեղու Հայաստանիում», Ս. Մանդինյանինը՝ «Վարժարանում», Մ. Մամուրյանինը՝ «Արևելյան մամուլում» և այլն:

Գ. Սրվանձտյանցի ծառայությունները հայ ժողովրդաբանության զարգացման գործին, նրա՝ բանահավաք-ազգագրագետ-բանագետի կուռ և ամբողջական կերպարը առանձնապես լավ է արտացոլվել «Հայ նոր գրականության պատմության» երրորդ հատորում:[10]

---

[8] «Հայ նոր գրականության պատմություն», հ. 3, Երևան, 1964, էջ 52:
[9] Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Գր. Խալաթյանի ֆ., բ. 5, գ. 730:
[10] «Հայ նոր գրականության պատմություն», հ. 3, էջ 555-586:

Սակայն Գ. Սրվանձտյանցը բանագետ և ազգագրագետ լինելու հետ միաժամանակ՝ եղել է իր ժամանակի քաղաքացի և հասարակական գործիչ: Խորապես գիտակցելով իր կատարած հասարակական աշխատանքների արժեքը, «Համով-հոտովի» առաջաբանում նա բողոքել է, որ այդ աշխատանքներն իրեն հնարավորություն չեն տվել խորանալու որևէ նախընտրելի ասպարեզում. «Մեր ազգին մեջ պաշտոնի կամ գործողութեան հատուկ սահման մի չկա, մանավանդ եկեղեցականց համար: Չենք կարող մեք մասնավոր ասպարեզի մը մեջ առաջանալ. կամ հատկապես մշակել ճյուղ մը. զորօրինակ. այսօր քարոզիչ, վաղը ժողովո մը անդամ, օր մը հեղինակ, օր մը նվիրակ, օր մը դաստիարակ, քննիչ, առաջնորդ, խաղաղարար, ուղեւոր, դատաւոր, վանահայր. տեղական վարչական ժողովո անդամ եւ այլն. կարճն ըսելով, ես իսկ անցած եմ այդ ամենէն. եւ շատ ես անախորժ անցքերէ, որ գործողի մը առջեւ կելնեն, եւ ծանր դժվարութիւն կպատճառէն գործելու կամ ընթանալու»:[11]

XIX դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում հոգևոր առաջնորդ, քարոզիչ, նվիրակ, Արևմտյան Հայաստանի առաջին պարբերականի փոխխմբագիրը և երկրորդի խմբագիրը. Վարագում, սբ. Կարապետում, Կարինում, Կ. Պոլսում ժամանակի աչքի ընկնող ուսուցիչներից ու ուսուցչապետներից մեկը՝ այս ամենը համառոտ թվարկումն է այն մեծ գործի, որ կատարել է երախտաշատ բանահավաքը:

Արխիվային փաստաթղթերի, ժամանակակիցների նամակների և ստեղծված գրականության մանրակրկիտ ուսումնասիրությունը բերում է այն խոր համոզման, որ Գ. Սրվանձտյանցը XIX դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանի բնատարածքում կատարել է գործնական մեծ աշխատանք՝ հայրենասիրական, ժողովրդապահպանման, ազատագրական շարժումների նախապատրաստման, գյուղացիական զանգվածներից հարկերի բռնագանձումը մեղմացնելու՝ ուղղությամբ: Իր հայրենանվեր գործունեության համար նա հաճախ Բ. Դռան կողմից համարվել է անբարեհույս անձնավորություն:

[11]«Համով-հոտով», էջ Ա-Բ:

Եթե Սրվանձտյանցի գրական, բանահավաքչական և բանագիտական աշխատանքներին ծանոթ են հետնորդները և ըստ արժանվույն գնահատել են այն, թեկուզև փոքրիկ հոդվածներով, ապա նրա հասարակական-քաղաքական գործունեությունը դրեթե չի լուսաբանված: Մինչդեռ նրա դիմապատկերի ամբողջացման համար անհրաժեշտ է նաև գործունեության այդ կողմի նկարագիրը: Այդ է պատճառը, որ հետազոտության առարկա դարձրինք Գ. Սրվանձտյանցի կյանքը և հասարակական-քաղաքական, գիտական գործունեությունը:

* * *

Աշխատության համար աղբյուր են ծառայել Գ. Սրվանձտյանցի հրատարակված երկերը՝ «Գրոց ու բրոց» և «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», «Հնոց և նորոց», «Շուշան Շավարշանա», «Մանանա», «Համով-հոտով», «Նոր ընթերցարան», «Թորոս աղբար. Հայաստանի ճամփորդ» երկհատորանոց ուղեգրությունը: Ուշագրավ է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվը: Այստեղ գտնվող Գ. Սրվանձտյանցի, Թ. Ազատյանի, Գր. Խալաթյանի, Պ. Սիմոնյանի, Մ. Խրիմյանի ֆոնդերում պահվում են բազմաթիվ նամակներ՝ գրված Գ. Սրվանձտյանցի ձեռքով, ուղղված ժամանակի հասարակական-քաղաքական, գրական նշանավոր անձանց: Ծավալով հատկապես աչքի է ընկնում Սրվանձտյանցի ֆոնդը, որի երկրորդ բաժնում գտնվում են հարյուրից ավելի նրա և հազարից ավելի նրան ուղղված արևելահայ և արևմտահայ նշանավոր գործիչների նամակները: Հույժ ուշագրավ են Մ. Խրիմյանի երկու հարյուրից ավելի նամակները: Այս ֆոնդում են պահվում նաև Մ. Պալլարյանի, Մ. Նաթանյանի, Պ. Թումայանի, Մ. Թիմուրյանի, Գ. Նորատունկյանի, Մ. Սամուրյանի, Գ. Պատկանյանի և այլոց նամակները, որոնք լույս են սփռում Գ. Սրվանձտյանցի գրական-հասարակական գործունեության վրա: Նրա կերպարի ամբողջացման համար առանձնապես կարևոր են Թորոս Ազատյանի ֆոնդում գտնվող Գ. Սրվանձտյանցի ձեռագրերը, որոնցից մի քանիսը Ջմշկածագի, Չարսանջակի, Բալուի և Մալաթիայի նրա կազմած վիճակագրություններն են ու նամակները՝ ժամանակի պատրիարքական փոխանորդ Հովհաննես ավագ քահանա

Մկրյանին: Դրանք լույս են սփռում այն գործունեության վրա, որ ծավալել է Գ. Սրվանձտյանցը ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո:

Օգտագործված են ժամանակի պարբերականներում և տարեցույցներում հրատարակված Սրվանձտյանցի նամակները, ինչպես նաև «Արծուի Վասպուրական», «Արծուիկ Տարօնո» պարբերականներում զետեղված հոդվածները, «Մանրումէի էֆ-քիարում» լույս տեսած բազմաթիվ ստորագիր և անստորագիր նյութերը: Սրվանձտյանցը եռանդուն թղթակցել է ժամանակի մեծ թվով պարբերականների. «Մեղու», «Ժամանակ», «Մեղու Հայաստանի», «Երկրագունտ», «Արևելք», «Մասիս» պարբերականներում նա հանդես էր գալիս «Վարդ», * * *, «Հայ երեց», «Աշակերտ» ծածկանուններով:

Աշխատության համար աղբյուրագիտական նշանակություն ունի Գյուտ Ադանյանցի հրատարակած «Դիւան հայոց պատմու-թեան» ԺԳ հատորը, որը կրում է «Հարստահարութիւնները Տաճկահայաստանում» խորագիրը: Հատորում լույս ընծայված նյութերի գերակշռող մասը Սրվանձտյանցի կամ նրան ուղղված նամակներն են:

Արխիվային նյութերի պատառիկներ են հայտնաբերվել ՀՀ Ազգային արխիվում գտնվող «Մշակի» և «Սինոդի օրագրութիւն-ների» ֆոնդերում, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող «Կաթողիկոսական դիվանի» ֆոնդում, Վրաստանի կենտրոնական պետական պատմական արխիվի N 5 (Կովկասի փոխարքայի գլխավոր վարչության պետի դրասենյակ), N 416 (Կովկասի հնագրական հանձնաժողով), N 480 (Մամուլի գործե-րի Թիֆլիսի կոմիտե) ֆոնդերում:

Արխիվային նյութերից բացի, կարևոր են Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող Երեմիա եպիսկոպոս Տեր-Սարգսյանի (Տեկանց) «Տոհմային հիշատակարանների» ձե-ռագիր հատորները[12], ուր հեղինակը նկարագրել է 1741-1880 թթ. ընկած ժամանակահատվածի պատմական դեպքերն ու իրա-դարձությունները: Հիշատակարաններում առանձնապես լավ են

---

[12] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. N 3721, 4177, 4179, 4180, 4182, 4184:

շարադրված XIX դարի երկրորդ կեսի իրադարձությունները, օսմանյան կառավարության վարած հայահալած քաղաքականությունը, Զեյթունի 1862 թ. ապստամբությունը, ռուս-թուրքական պատերազմի դեպքերը: Չնայած ինքնագովության երանգներին, ձեռագիր հիշատակարանները հավաստի պատմական աղբյուր են, որոնք նաև բնութագրում են ժամանակի հասարակական անվանի գործիչներից մի քանիսին, այդ թվում՝ Գ. Սրվանձտյանցին: Հիշատակարանները, ըստ հեղինակի ծրագրման, պետք է բաղկացած լինեին 12 գրքից. IX, X, և XII գրքերը չկարողացանք գտնել: Առանձնապես հետաքրքիր պետք է լիներ XII գիրքը, ուր Երեմիա Տեկյանցը նախատեսել էր պատմել Վանում 1880-1881 թթ. Գ. Սրվանձտյանցի ծավալած գործունեության մասին: Գրվել է այդ հատորը, թե՞ մնացել է լոկ ծրագիր. մնում է անհայտ:

Ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն ժամանակակիցների գրած հուշերն ու աշխատությունները, մասնավորապես Հ. Երամյանի «Հուշարձան Վան-Վասպուրականի» աշխատության Ա հատորը[13], և Ա. Թերզիպաշյանի «Արծիվը իր բոյնին մեջ» գիրքը:[14] Առաջինը նվիրված է Վան-Վասպուրականի պատմությանը, մշակութային կյանքին, ազատագրական շարժումներին և միաժամանակ պատմում է Վասպուրականի նշանավոր հասարակական գործիչների (Մ. Խրիմյան, Գ. Սրվանձտյանց, Գ. Աղվանյան, Պ. Մելիքյան) գործունեության որոշ շրջանների մասին:

Ա. Թերզիպաշյանի գիրքը նվիրված է համեմատաբար փոքր ժամանակահատվածի՝ Մ. Խրիմյանի առաջնորդությանը Վանում 1880-1885 թթ.:Այդ ընթացքում 14 ամիս Վանի առաջնորդական փոխանորդի պաշտոնը վարել է Գ. Սրվանձտյանցը: Գրքում հետաքրքիր մեկնաբանություն է տրված Խրիմյան-Սրվանձտյանց, Խրիմյան-Պ. Մելիքյան հարաբերություններին:

Պետք է նշել մի հանգամանք: Սրվանձտյանցի հասարակական գործունեությանը նվիրված առանձին աշխատություն մինչ այժմ չի գրվել, սակայն նրա մասին խոսվում է ինչպես Մ.

[13] Հ. Երամեան, Հուշարձան Վան-վասպուրականի, Հ. Ա, Ալեքսանդրապոլ, 1929:

[14] Ա. Թերզիպաշեան, Արծիւը իր բոյնին մեջ, Փարիզ, 1933:

Խրիմյանին նվիրված համարյա բոլոր գործերում, այնպես էլ Վան-Վասպուրականի ու Տարոնի վերաբերյալ եղած հուշագրություններում և ուսումնասիրություններում: Քանի որ Գ. Սրվանձտյանցը առաջնորդական պաշտոններ է վարել Ակնում, Խարբերդում, Բաղեշում, ուսուցիչ է եղել Կարինում, ապա այդ վայրերի մասին գրված աշխատություններում քննարկվում են նաև Գ. Սրվանձտյանցի գործունեության այդ ժամանակահատվածները:[15]

Փաստորեն այդ աշխատությունների ընդհանուր թերությունը հետևյալն է. հրատարակված լինելով Սփյուռքում, տարբեր հայրենակցական միությունների կողմից և ցանկանալով փրկել իրենց ծննդավայրի գոնե վերհուշը, հեղինակները հավաքում են Տարոնին, Վասպուրականին կամ այլ վայրերին վերաբերող բոլոր հիշողությունները առանց քննական մոտեցում ցույց տալու նյութերին:

Արևմտյան Հայաստանի XIX-XX դարերի պատմության ուսումնասիրությունը առանձնապես հաջող է ընթացել սովետահայ պատմագրության մեջ: Հրապարակի վրա են տասնյակից անցնող լուրջ պատմագիտական աշխատություններ, որոնցում բազմակողմանի քննության են ենթարկված Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային, ազգային-ազատագրական շարժումների և հասարակական մտքի պատմությանը վերաբերող հարցերը: Դրանցից է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Աշոտ Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկհատորանոց աշխատությունը: Խոսելով Մ. Նալբանդյանի արտասահմանյան ուղևորությունների մասին, հեղինակը հանգամանորեն քննարկում է արևմտահայ հասարակական կյանքի աչքի ընկնող այնպիսի երևույթ, ինչպիսին է ազգային սահմանադրությունը, ներկայացնում է պոլսահայ գաղութը սահմանադրական պատրանքի շրջանում, վերլուծում է Ստ. Ոսկանի, Հ. Սվաճյանի, Մ. Մամուրյանի, Հ. Շիշմանյանի գործունեությունը: Անդրադառնալով արևմտահայ ազգային-ազատագրական շարժ-

---

15 Մ. Ճիզմեճեան, Խարբերդը և իր զաւակները, Ֆրեզնօ, 1955. Վահէ Հայկ, Խարբերդը և անոր ոսկեղէն դաշտը, Նիւ-Յորք, 1950. Ղ. Ջարըդ, Կարինապատում, Յուշամատեան Բարձր Հայքի, Պէյրութ, 1957, Ե. Տէր-Մկրտչեան, Գանձեր Վասպուրականի, հ. 1, Նիւ-Յորք, 1966:

մանր. հեղինակը մի քանի էջ է նվիրում նաև Գ. Սրվանձտյանցի գործունեությանը. նրա՝ 60-ական թվականների պայքարի կոչերին և Միսաք Թիմուրյանի հետ ունեցած համատեղ գործունեությանը: Ամենևին նպատակ չունենալով՝ լուսաբանել Սրվանձտյանցի ողջ հասարակական գործունեությունը, հեղինակը նշում է, որ Սրվանձտյանցը արտահայտում էր «տեղական առևտրի և ապրանքայնացող գյուղատնտեսության պրոգրեսիվ մղումները»:[16] Մեր կարծիքով վիճարկելի է հեղինակի այդ նյութը:

Արևմտյան Հայաստանի պատմությանն է վերաբերում ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ» աշխատությունը:[17] Խոսելով Արևմտյան Հայաստանի գաղտնի կազմակերպությունների մասին, հեղինակը անդրադառնում է Գ. Սրվանձտյանցի գործունեությանը և նշում, որ նա ժողովրդի ազատագրությունը չի կապել արևմտաեվրոպական պետությունների և ցարական Ռուսաստանի օգնության հետ: Հեղինակը ճիշտ է գնահատում «Արծուի Վասպուրական» և «Արծվիկ Տարօնո» պարբերականների կատարած գործը:

Ռ. Հովհաննիսյանն իր «Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը աշխատության մեջ ավելի հաճախ է անդրադառնում Գ. Սրվանձտյանցի և Մ. Խրիմյանի գործակցությանը և նշում նրանց մասնակցությունը արևմտահայ ազգային ազատագրական շարժումներին:[18]

Գ. Սրվանձտյանցի հասարակական գործունեությանն է վերաբերում Վ. Բդոյանի «Հայրենիքը Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցի երկերում» հոդվածը:[19]

---

[16] Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը. հ.1, Երևան, 1955, էջ 374:

[17] Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955:

[18] Ռ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965:

[19] Վ. Բդոյան, Հայրենիքը Գարեգին Նպիսկոպոս Սրվանձտյանցի երկերում, «Էջմիածին», 1944, N 2-3, 4-5:

Ա. Համբարյանը «Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914 թթ.)» աշխատության մեջ բազմիցս օգտագործում է Սրվանձտյանցի հաղորդած տեղեկությունները ու նյութերը, դրականորեն արտահայտվում նրա մասին: Սակայն, մեր կարծիքով, հեղինակը ճիշտ չի վարվում Գ. Սրվանձտյանցին դասելով կղերա-ադայական հոսանքին պատկանող գործիչների շարքը:[20] Գ. Սրվանձտյանցը ողջ կյանքում պայքարել է այդ հոսանքի ներկայացուցիչների դեմ: Նա բացասաբար էր արտահայտվում հոգևորականներից շատերի մասին: Հրատարակված աշխատություններում, նամակներում երևում է Սրվանձտյանցի չթաքցրած բացասական վերաբերմունքը այդ «պորտաբույծ» խավի նկատմամբ: Նա նշում էր, որ հայ հոգևորականները «չինելու փոխարեն գեթ ավերելու չջանային»:

«Արծուի Վասպուրական» և «Արծուիկ Տարօնոյ» թերթերի դերը արևմտահայ իրականության մեջ ճիշտ է գնահատել պրոֆեսոր Վ. Պարսամյանը: Նա գրում է, որ այդ պարբերականները կանգնած էին արևմտահայ գյուղացիության պաշտպանության դիրքերում և շեփորում էին ազգային-ազատագրական պայքարի գաղափարներ:[21]

Հ. Ղազարյանի «Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ.» աշխատության «Ազգային պահպանողական հոսանքը» ենթաբաժնում մանրամասն քննարկվում են Խրիմյանի և Սրվանձտյանցի գործունեության հետ առնչվող մի շարք հարցեր: Նրանք ներկայացվում են իբրև ժողովրդանվեր գործիչներ՝ որպես գավառահայ բուրժուազիայի ներկայացուցիչներ և դասվում ազգային պահպանողական հոսանքի ներկայացուցիչների շարքը, որին մենք համաձայն չենք:

Տարոնի ու Վասպուրականի ընչազուրկ գյուղացիությունը շատ հաճախ նրա միջոցով բողոքագրեր էր հղում Բ. Դուռ և Կ. Պոլսի հայոց պատրիարքարան: «Արծուիկ Տարօնոյում» հրատարակված Սրվանձտյանցի հոդվածների մի զգալի մասին համամիտ էր արևմտահայ դեմոկրատիայի ամենանշանավոր դեմքերից

[20] Ա. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914 թթ.), Երևան, 1965, էջ 9-13:

[21] Վ. Պարսամյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1967, էջ 355-356:

մեկը՝ Հ. Սվաճյանը: Համերաշխվելով դրանցում արտահայտված մտքերին, նա այդ հոդվածներն արտատպում էր «Մեղվում», առանց նշելու հեղինակի ինքնությունը: Դա էլ առիթ է տվել սխալ եզրահանգումների: Հ. Ղազարյանը վերը հիշված աշխատության մեջ ցանկանալով բնորոշել Հ. Սվաճյան հեղափոխական-դեմոկրատին, գրում է. «Դասակարգային պայքարի մարտահրավերով արդեն գավառին լավածանոթ Հ. Սվաճյանը գրում էր.«Արտաքին ձեռք չէ զմեզ չարչարող. մենք կտանջվինք մեր ձեռքին, կչարչարվինք մեր ազգեն. իրենց փառաց համար զմեզ կզոհեն, իրենց շահուն համար զմեզ կվաճառեն...գնեցեք զմեզ ...ալ դանակ ոսկորին հասած է»:[22] Հ. Ղազարյանը սխալվում է. նա Հ. Սվաճյանին վերագրում է մտքեր, որոնք նրանը չեն: Մեջբերումն արված է Գ. Սրվանձտյանցի «Առ պատրիարքական տեղապահ ս. Հայր մեր և ազգախնամ վարչութիւն ազգիս Հայոց ի Պոլիս (Մշեցիների բողոքագիրը)» հոդվածից, որը լույս տեսավ «Արծուիկ Տարօնոյ» լրագրում՝ 1863 թ. ապրիլին:

Սվաճյանին հոգեհարազատ էին այդ հոդվածում արտահայտված մտքերը: Տարոնի գյուղացիության սրտակեղեք ճիչը Ազգային վարչության ականջին հնչեցնելու և կրկին նրան քննադատելու համար Սվաճյանն արտատպեց այդ հոդվածը «Մեղվի» նույն թվականի հուլիսի 16-ի համարում: Ստացվում է այնպես, որ «ազգային-պահպանողական» համարված գործչի մտքերը վերագրվում են հեղափոխական-դեմոկրատին: Այստեղից էլ բխում է եզրակացությունը. անհրաժեշտ է վերանայել Գ. Սրվանձտյանցի տեղը հայ հասարակական մտքի պատմության մեջ: Միանգամայն համաձայն ենք ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ Ա. Ղանալանյանի՝ Գարեգին Սրվանձտյանցի մասին արտահայտած կարծիքի հետ. «Սրվանձտյանցի մեջ ինքնօրինակ ձևով հանդես են եկել մի կողմից 50-60-ական թվականների հայ ազգային լուսավորիչների, մյուս կողմից 70-80-ական թվականների գյուղացիական դեմոկրատների բնորոշ գծերը»:[23]

---

[22] Հ. Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ, Երևան, 1967, էջ 624:

[23] «Հայ նոր գրականության պատմություն», հ. 3, էջ 555:

Վ. Ի. Լենինը նշելով դեմոկրատի և լիբերալի տարբերությունը, գրում է. «Դեմոկրատը ներկայացնում է բնակչության մասսային: Նա բաժանում է սրա մանրբուրժուական նախապաշարմունքները...դեմոկրատը հավատում է մասսաների շարժմանը, նրա ուժին, նրա իրավացիությանը, ամենևին չվախենալով այդ շարժումից»:[24] Պաշտպանելով և արտահայտելով արևմտահայ ամենահոծ զանգվածի՝ գյուղացիության շահերը, Սրվանձտյանցը ներառում է այդ գծերը:

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ բոլոր աշխատություններում հեղինակները մասնակիորեն են անդրադարձել Գ. Սրվանձտյանցի կյանքին, հասարակական, գիտական գործունեությանը: Հետազոտողների ստվար մասն օգտագործել է Սրվանձտյանցի հաղորդած արժանահավատ նյութերը, առանց գնահատելու նրա գործունեությունը: Այս աշխատության մեջ ցանկացել ենք լրացնել այդ բացը և տալ ճիշտ ու ամբողջական ներկայացնել Գ. Սրվանձտյանցի դիմապատկերը:

A II 93538

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

24 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 18, էջ 349:

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ ԿՅԱՆՔԸ: ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ-ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

XIX դարի երկրորդ կեսին հայ ժողովրդի մեծագույն մասը գտնվում էր Ռուսաստանի և Թուրքիայի տիրապետության տակ:

Մինչև 1860-ական թվականները Թուրքիան, ինչպես նաև նրա կազմի մեջ մտնող Արևմտյան Հայաստանը, բաժանված էր փաշայությունների: Արևմտյան Հայաստանի բնատարածքն ընդգրկում էր Էրզրումի, Բայազետի, Վանի, Մուշի, Կարսի և մասամբ Դիարբեքիրի ու Սվազի փաշայությունները: 1864 թ. Թուրքիայում կազմակերպվեցին վարչական ավելի փոքր միավորներ: Փոփոխություններ եղան նաև 1880 և 1886 թվականներին: Օսմանյան կառավարությունը հայաշատ շրջաններն անընդհատ մասնատում և միացնում էր քրդաբնակ և թուրքաբնակ շրջաններին, նպատակ ունենալով հայ բնակչությունը տարրալուծել և կանոնավոր վիճակագրության բացակայության պայմաններում, կեղծված ներկայացնել, անհամեմատ փոքր ցույց տալ հայ ժողովրդի քանակը:

Արևմտահայերի ամենաստվար զանգվածը գյուղացիությունն էր, որը զբաղվում էր երկրագործությամբ: Ժամանակի հասարակական գործիչների կազմած վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ արևմտահայ գյուղացիության գերակշիռ մասը զուրկ էր սեփական հողից: Իբրև հողատեր հանդես էին գալիս թուրք և քուրդ ֆեոդալները,հոգևոր հաստատությունները, այդ թվում՝ հայ եկեղեցին:

Ծանր էր արևմտահայ գյուղացիության վիճակը: Հարկահանման բնագավառում կատարվող ապօրինությունները նրան դրել էին անելանելի կացության մեջ: Արևմտահայ գյուղացին հարկատու էր համարվում պետությանը, թուրք և քուրդ հողատերերին, խաֆիրներին, ինչպես նաև հայ եկեղեցուն: Մեծ թիվ էին կազմում նրա կողմից վճարվող ուղղակի և անուղղակի

հարկերը: Իրենց ծանրությամբ առանձնապես հայտնի էին խարաջը կամ գլխահարկը, որը հետագայում փոխարինվեց զինվորական հարկի՝ բեդելը ասքերիեի, տասանորդը, որը պետք է կազմեր եկամտի մեկ տասներորդ մասը, սակայն հաճախ կազմում էր գյուղացու եկամտի նույնիսկ մեկ քառորդը: Ծանր էին նաև աղնամ-ռեսմին կամ յուրաքանչյուր ոչխարի համար սահմանված հարկը, կայվածահարկը կամ էմլաքի տուրքը և այլն: Դրանցից բացի, գյուղացին վճարում էր նաև քուրդ բեկերին և խաֆիրներին, սուլթանի ճանապարհորդությունների համար սահմանված հարկ, պատերազմական հարկեր և այլն: Անընդհատ մեծանում էր հայ գյուղացուց գանձվող հարկերի չափը: 1840-1850-ական թթ. համեմատությամբ 1860-1880-ական թթ. մի քանի անգամ ավելացավ այն:[1]

Արևմտահայ գյուղացիական զանգվածների սոցիալ-տնտեսական հիմնական խնդիրը ֆեոդալիզմի վերացումն էր, ճորտական և կիսաճորտական վիճակից ազատվելը: Այդ ուղղությամբ էր ընթանում հայ ժողովրդի սոցիալ-դասակարգային պայքարը: Սակայն այդ պայքարն արևմտահայ իրականության մեջ անխուսափելիորեն ստանում էր ազգային-ազատագրական երանգ, որովհետև շահագործողի դերում հանդես եկողը թուրք պետությունը և քուրդ աղաներն էին:

Արևմտահայերի քաղաքական պայքարը XIX դարի երկրորդ կեսին ընթանում էր «սահմանադրական պայքար» անվան տակ: 1854 թ. սկսած պայքարը տարբեր ուժգնությամբ և ընդմիջումներով շարունակվում է մինչև 1863 թ.: Այդ պայքարն իր էությամբ առաջադիմական էր՝ ուղղված ամիրայության, կղերականության և սուլթանական ռեժիմի դեմ: Պայքարի հիմնական շարժիչ ուժերը քաղաքներում կենտրոնացած արհեստավորությունն էր՝ էսնաֆությունը, գավառներից Կ. Պոլիս եկած հայ գյուղացիության ներկայացուցիչները՝ պանդխտությունը և առաջադեմ դեմոկրատ մտավորականությունը: Պատահական չէ, որ սահմանադրության կողմնակիցների և հակառակորդների պայքարը ժամանակակիցների կողմից որակվեց իբրև «լուսավորյալների»

---

[1] Մ. Ներսիսյան, Հայաստանի տնտեսական և քաղաքական դրությունը 1860-1880-ական թթ., «Տեղեկագիր հաս. գիտ.», 1946, N 10, էջ 48:

և «խավարյանների» պայքարը: Դրա ընթացքում ժողովրդական զանգվածները դաշն էին կնքել լիբերալ-բուրժուական տարրերի հետ, որոնք ստանձնել էին պայքարի ղեկավարի դերը: Սակայն հետագայում, վախենալով ժողովրդական զանգվածների շարժման թափից ու հզորությունից, լիբերալ բուրժուազիայի ներկայացուցիչները սկսում են հաշտության եզրեր որոնել նախկին հակասահմանադրականների հետ: Ժողովրդի պայքարով ձեռք բերած 1860 թ. սահմանադրությունը փոխարինվում է 1863 թ. սուլթանի շնորհած և Մ. Նալբանդյանի արտահայտությամբ՝ «մթլպատուած» սահմանադրությամբ: Ըստ այդ կանոնադրության, Ազգային ժողովի կազմում տեղեր են գրավում նաև նախկին հակասահմանադրականները, սահմանափակվում է Ազգային ժողովի անդամ դեմոկրատ մտավորականների թիվը: Նման սահմանափակումների դեմ բողոքելու համար նրանց պատասխանատվության են կանչում Ազգային ժողով: Սակայն այդ սահմանափակումներով հանդերձ, սահմանադրությունը վաստակեց հարուստ ամիրաների, Բ. Դռան պաշտոնյաների և պահպանողական հոգևորականների ատելությունը: Սահմանադրական պայքարը հիմքում խորապես տնտեսական էր: Այն կոչված էր սահման դնելու երկար ժամանակ ամիրաների խոսափողը հանդիսացող պատրիարքի, պահպանողական հոգևորականության, թեմական առաջնորդների ոտնձգություններին: Ռեակցիոն հոգևորականությունը զրկվելու էր ժողովրդից հավաքած և հայ եկեղեցիներում ու վանքերում ամբարված հարստությունը շահարկելու իրավունքից: Այդ իսկ պատճառով սահմանադրական պայքարը ստանում էր առավել կատաղի բնույթ: Ժողովրդի ծոցից դուրս եկած մի խումբ առաջադեմ հոգևորականներ, սերտորեն համագործակցած Ֆրանսիայում կրթություն ստացած երիտասարդության ներկայացուցիչների հետ, ղեկավարում են այս պայքարը: Դրանց մեջ առավելապես աչքի է ընկնում Վարագա խումբը՝ Մկրտիչ Խրիմյանի գլխավորությամբ:

* * *

Գարեգին Սրվանձտյանցի լուսավորական, հասարակական-գիտական գործունեության բացահայտման համար կարևոր նշա-

նակություն ունի նրա գիտական կենսագրությունը ամբողջական ներկայացնելը, մի բան, որ տակավին թերի է: Նրա առաջին կենսագիրը եղել է Գ. Շերենցը, որի գրածը, սակայն, հեռու է լրիվ լինելուց: Սրվանձտյանցի մասին հատուկենտ տեղեկություններ ենք քաղում Խրիմյանին նվիրված աշխատություններից: Համեմատաբար ամբողջական է «Հայ նոր գրականության պատմություն» երրորդ հատորում ներկայացված «Գարեգին Սրվանձտյանց» բաժինը (հեղինակ՝ Ա. Ղանալանյան): Սակայն այստեղ էլ, ելնելով հատորի բնույթից, առավել ուշադրություն է դարձված Գ. Սրվանձտյանցի կյանքի այն դեպքերին և իրադարձություններին, որոնք առնչվում են նրա բանահավաքչական և ազգագրական գործունեությանը: Բաց են մնացել նրա հասարակական գործունեությանը վերաբերող շատ հարցեր: Ժամանակի մամուլի, արխիվային նյութերի, Սրվանձտյանցի և ժամանակակիցների նամակագրական հարուստ ժառանգության հիման վրա աշխատել ենք առավել լրացված և ճշտված տալ Սրվանձտյանցի կենսագրությունը, կատարել որոշ շտկումներ, ուղղել վրիպումները: Ուստի և նրա գործունեության առանձին բնագավառներին անդրադառնալուց առաջ անհրաժեշտ ենք համարում համառոտ ներկայացնել Գարեգին Սրվանձտյանցի կենսագրությունը:

Գարեգին Սրվանձտյանցը ծնվել է 1840 թ. Վանի Այգեստան թաղամասում, Սանդենց տոհմում: Մանուկ Հովհաննեսը (մկրտության անունը) վաղ հասակից հրապուրվում է մեծահասակների պատմած հրաշապատում հեքիաթներով: Վանի գեղեցիկ բնությունը, նրա պատմական հուշարձանները՝ Զըմզըմ-մաղարան, Ակուփու քարը, Վանա միջնաբերդն իր արձանագրություններով աստիճանաբար խորացնում են Սանդենց Հովհաննեսի սերը դեպի ժողովրդական բառ ու բանը, նրա բանավոր ստեղծագործությունը: Սկզբնական կրթությունը ստանում է Վանի Հայնկուսների վարժարանում, ուր սովորում է կարդալ և գրել: Դա բավարար համարելով ծնողները նրան տալիս են կոշկակարի արհեստ սովորելու, բայց գրասեր պատանին չի հրաժարվում ուսումը շարունակելու մտադրությունից. որոշ ժամանակ անց նա սկսում է հաճախել Վանի նշանավոր մանկավարժներ Բողոս Հովհաննեսի և Ավետիս Սահառունու դպրոցը, այնուհետև, 1857 թ. մեկնում է Վարագ և դառնում Մկրտիչ Խրիմյանի ժառանգավո-

րաց վարժարանի առաջին սաներից մեկը: Նորաբաց դպրոցն ուներ գրասեղաններ, գրատախտակներ, աթոռներ, աշխարհագրական քարտեզներ: Դրանք նորություն էին արևմտահայ իրականության մեջ: Խրիմյանի նպատակն էր ազգի համար պատրաստել կրթված ու գիտակից հոգևորականներ, սակայն պարտադիր չէր, որ բոլորը կրոնավոր դառնային: Հայ ժողովրդին անհրաժեշտ էին առհասարակ մտավորականներ՝ ուսուցիչներ, հանրային գործիչներ, որոնք նույնպես մեծ գործ պիտի կատարեին: Դասավանդվող առարկաների մեջ մտցվում են աշխարհագրություն, թվաբանություն, Հայոց պատմություն:

Ժառանգավորացի առաջին սաները՝ Գարեգին Սրվանձտյանց, Արսեն Թոխմախյան, Արշավիր Փոխանյան, Տիգրան Ամիրջանյան, Հրաչյա Սնիկյան, Նշան Շիրվանյան, Եղիշե Մեսրոպյան և ուրիշներ (քսան հոգի), հետագայում դարձան հայ իրականության մեջ ճանաչված դեմքեր: Իրենց գործունեությամբ նրանք մի շրջան բացեցին ողջ արևմտահայ իրականության մեջ, ոմանք էլ կապող օղակ եղան արևմտահայ և արևելահայ գործիչների միջև: Նրանց շարքում իր արժանի տեղն ունեցավ Գարեգին Սրվանձտյանցը:

Ուսումնառության տարիներին քաջ ծանոթանալով հայ ժողովրդի պատմությանը, նա առանձնապես ազդվում է Եղիշեի «աղու մրմունջներից» և նրա պատմության հերոսներից մեկի անունով իրեն կոչում Գարեգին Սրվանձտյանց: Այդ տարիները համընկնում էին «Արծուի Վասպուրականի» տենդագին գործունեության հետ, որի էջերում հոդվածներով սկսեց հանդես գալ երիտասարդ Գարեգինը:

«Արծուի» էջերում լույս են տեսնում նրա «Բուրաստան բարոյական առաքինութեանց», «Շիրիմք նախնեաց», «Հայրենասիրութիւն և հայրենիք» հոդվածները: Չի կարելի ասել, թե դրանք բոլորն ունեն նույն ուժը: Հաճախ միամիտ, պատանեկան խանդավառությամբ գրված տողերի միջից ուրվագծվում է ապագա եռանդուն գործչի, հայ երիտասարդության պայքարի կոչողի կերպարը:

1860 թ. Գ. Սրվանձտյանցն ավարտում է ժառանգավորացը, բայց չի բաժանվում ոչ իր ուսուցչից, ոչ էլ վարժարա-

նից: Նա մնում է վարժարանում իբրև ուսուցիչ և «Արծուի Վասպուրականի» փոխմբագիր:

1860 թ. նոյեմբերի 10-ին Խրիմյանն ուղևորվում է Արևմտյան Հայաստան՝ իր վարժարանի համար հանգանակություն կատարելու, ինչպես նաև Արևմտյան Հայաստանը տեսնելու և հայ ժողովրդի արևմտյան հատվածի հետ կապ հաստատելու ցանկությամբ: Նրա հետ մեկնում են Գարեգին Սրվանձտյանցը, Հրաչյա Սեփիլյանը, Երեմիա Տեկյանցը: Էջմիածնում ժառանգավորացի հիմնադիրը ներկայանում է Ամենայն Հայոց կաթողիկոսին, նրանից Ղարաբաղի և Շուշու ազգայիններից հանգանակություն կատարելու կոնդակ ստանում: Նրանք լինում են Երևանում, հանդիպում տեղի ազգային գործիչների հետ: Երևանի երիտասարդությունը մեծ ջերմությամբ ունկնդրում է Խրիմյանի ելույթները: Երիտասարդ Գարեգինը կապեր է հաստատում Երևանի երիտասարդության ներկայացուցիչների հետ:[2]

Իր սաների հետ Խրիմյանը լինում է նաև Թիֆլիսում, որը արևելահայ մշակութային կյանքի կենտրոնն էր: Նա արժանանում է ջերմ ընդունելության: Խրիմյանին ողջունում է «Կռունկ Հայոց աշխարհին» հանդեսը: Դրան բանաստեղծությամբ պատասխանում է Գարեգին Սրվանձտյանցը, նշելով ընդհանրապես պարբերականների և մասնավորապես «Կռունկի» և «Արծուի» կատարելիք մեծ դերը:

Այնուհետև Խրիմյանը շարունակում է ճանապարհորդությունը դեպի Ղարաբաղ: Ապա ուղեկիցներով անցնում է Ագուլիս և 1861 թ. հուլիսին Պարսկաստանով վերադառնում Վան:

«Մեղվի» 1862 թ. 176-179 համարներում անընդմեջ տպագրվում է Գ. Սրվանձտյանցի անստորագիր ընդարձակ հոդվածը «Ուղևորութիւն Մկրտիչ վարդապետի Խրիմեան ի Ռուսա-

---

[2] Նրանցից մեկի՝ Նահապետ Ալթունյանի (Աբովյանի աշակերտներից) հետ Սրվանձտյանցը երկար տարիներ նամակագրական կապ է պահպանում (ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., 2 բ., գ. 70, 71): Սա այն Ալթունյանն էր, որ Նալբանդյանի Կ. Պոլիս ուղևորվելու ճանապարհին իբրև Երևանի երիտասարդության ներկայացուցիչ հանդիպել էր Մ. Նալբանդյանի հետ և ոգևորվել այդ տեսակցությունից (տե՛ս Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 333):

Հայք» խորագրով: Հոդվածը գրված է Խրիմյանի հանդեպ մեծ սիրով և ակնածանքով:

1862 թ. Հայոց պատրիարքարանը սբ. Կարապետի վանքի վանահայրության հետ Խրիմյանին է վստահում Տարոնի առաջնորդությունը: Խրիմյանը կարգավորում է Վարագա վանքի գործերը, նշանակում փոխանորդ, ունակ աշակերտներից համալրում ուսուցչական խումբը, վերցնում տպարանը և Գարեգին Սրվանձտյանցի հետ մեկնում Տարոն:

Սբ. Կարապետի վանքը Արևմտյան Հայաստանի ամենամեծ վանքերից էր, հայտնի իր հասույթներով, ողջ Հայաստանից ժամանող ուխտավորների և աշխարհի բոլոր ծայրերում գտնվող հայերի նվիրատվություններով: Այդ ամբողջ հարստությունը ծախսվում էր վանքի միաբանության և մի խումբ հայ մեծահարուստների կողմից: Խրիմյանի գալուստը մեծ անակնկալ էր նրանց համար: Նա ստեղծեց «տնտեսական խորհուրդ», վերահսկողություն սահմանեց ստացված նվիրատվությունների վրա՝ նպատակ ունենալով վանքի հարստությունն օգտագործել ազգօգուտ գործերում: Այդ պատճառով էլ սկսվեց մի երկարատև պայքար՝ երկու կողմերի մեջընդմեջ հաղթանակով ու պարտությամբ:

Իր գործունեությամբ Խրիմյանը նվաճում է Տարոնի ազգաբնակչության սերը և արժանանում «Հայրիկ» պատվանվանը:[3] Մինչ Խրիմյանը պայքար է մղում Տարոնի ցեցերի դեմ, Սրվանձտյանցը զարկ է տալիս ուսումնական գործին: Խրիմյանի նախաձեռնությամբ և Սրվանձտյանցի ջանքերով սբ. Կարապետում բացվում է մի նոր ժառանգավորաց ուսումնարան, որի տեսուչը և գլխավոր ուսուցիչն է դառնում ինքը: Այս ուսումնարանում ուսուցչական կազմի մեջ գերակշռող տեղ է դրավում աշխարհական տարրը: Կենտրոնական այդ ուսումնարանից բացի, Սրվանձտյանցի ուշադրությունը բևեռվում է Տարոնի գյուղերի վրա: Նա շրջում է գյուղերը, զրուցում գյուղացիների հետ, նրանց բացատրում ուսման կարևորությունը:

Առանձնապես հետաքրքիր է Սրվանձտյանցի տարոնյան շրջանի հրապարակախոսական գործունեությունը: 1863 թ. ապ-

---

[3] Մատենադարան, ձեռ. N 4177, էջ 72:

րիլին սբ. Կարապետի վանքում հրատարակվում է «Լրատար Արծուիկ Տարօնոյ», որի խմբագիրը Սրվանձտյանցն էր: Ինչպես «Արծուի Վասպուրականը» հայ առաջին պարբերականն էր Վասպուրականում, այնպես էլ «Արծուիկ Տարօնոյ»՝ Տարոնում: Երկուսն էլ մեծ դեր խաղացին հայ մամուլը ժողովրդական լայն զանգվածներին մոտեցնելու ու հասկանալի դարձնելու գործում: «Արծուիկը» «Արծուի»-ի համեմատ մի քայլ առաջ էր, ավելի դեմոկրատական հակումներով, ժողովրդին դյուրամատչելի և դյուրըմբռնելի: Եթե «Արծուին» լույս էր տեսնում գրաբար, ապա «Արծուիկը» հրատարակվում էր աշխարհաբար: Եթե «Արծուի Վասպուրականում» մեծ տեղ էր գրավում հայ ժողովրդի հեռավոր անցյալի ջատագովումը, ապա «Արծուիկը» Տարոնի գյուղացիության բողոքի ձայնն էր հնչեցնում Կ. Պոլսի Ազգային վարչության առաջ, բողոքում այլազգի և սեփական հարստահարողների դեմ, հականե-հանվանե նշում տգետ և կաշառակեր հոգևորականների պիղծ արարքները: Նման գործունեության համար հալածանք է սկսվում Սրվանձտյանցի դեմ. 1864 թ. քաղաքական մեղադրանքներով փակվում է թերթը: Սակայն խավարամիտ կղերի և ցեցերի հաղթանակը երկար չի տևում. մի քանի ամսից հետո նորից սկսվում է հայրենասիրական աշխատանքը: Արդեն զգույշ «Արծուիկը» դիմում է այլաբանական քարոզի, ժողովրդին կոչ անում չմնալ պառավ վիճակում, «գայլերի դեմ մարտնչելու համար առիւծ դառնալ»: Երկար չի տևում այդ գործունեությունը: 1865 թ. հայ խավարամիտների ամբաստանության հետևանքով վերջնականապես փակվում է «Արծուիկ Տարօնոյ», փակվում են վարժարանները: Խրիմյանը և Սրվանձտյանցը մեկնում են Կ. Պոլիս արդարանալու: Կ. Պոլսում Սրվանձտյանցը հանդես է գալիս Խրիմյանի պաշտպանությամբ, այցելում է պատրիարքին, Ազգային վարչության, Քաղաքական ժողովի անդամներին:[4]

1867 թ. Գ. Սրվանձտյանցը Կարինի հոգևոր առաջնորդ Հարություն արքեպիսկոպոս Վեհապետյանի կողմից ձեռնադրվում է վարդապետ:[5] Ձեռնադրվելուց անմիջապես հետո Խրիմյանին

---

[4] ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., բ. 2, գ. 4, 6:

[5] Ուսումնասիրողների մի մասը գրում է, թե Սրվանձտյանցը վարդապետ ձեռնադրվեց 1864 թ.: Փաստաթղթերի մանրամասն ուսումնասի-

*գրած մի նամակում նա խոստովանում է, որ մերժում է վանական ամուլ կյանքը և դրա համար չի ծնվել: Ժամանակակիցների վկայությամբ Սրվանձտյանցն ունեցել է կրքոտ և մարտնչող բնավորություն, նրա համար անընդունելի էր վանական լճացած և միապաղաղ կյանքը: Վարդապետի վեղարը նրա համար ոչ թե նպատակ էր, այլ գործելու միջոց: Խրիմյանի անմիջական խորհրդով Սրվանձտյանցը վարդապետական իր առաջին այցելությունը տալիս է հայրենի Վան քաղաքին և Վարագա վանքին: Նրա հայրենաշունչ ելույթները գրավում են ժողովրդի ուշադրությունը:*

*1869 թ. Կարնո Հայության Հայրենասեր գործչին պահում է Կարինում և նրան հանձնում քաղաքի կենտրոնական վարժարանի տեսչությունն ու վարժարանների լիազոր տեսչի պաշտոնը: Միաժամանակ նա ստանձնում է Հայոց պատմության դասերը: Ավելի հիշարժանն այն է, որ Սրվանձտյանցը Կարինում բացում է մեծահասակների կիրակնօրյա երեկոյան դպրոց:*

*1869 թ. Խրիմյանն ընտրվում է Կ. Պոլսի պատրիարք: Նորընտիր պատրիարքի կողմից նշանակվելով սբ. Կարապետի վանքի վանահայրության փոխանորդ, Սրվանձտյանցը Բ. Դուռ ու Հայոց պատրիարքարան է հղում բողոքագրերի մի հույք: Կ. Պոլսի հայ լրագրերը հրատարակում են Սրվանձտյանցի հոդվածները, որոնցում քննադատվում են Տարոնի թուրք պաշտոնյաները, հայ մեծահարուստները և հոգևորականները: Հիշատակության արժանի է հատկապես 1869 թ. «Մանզումէի էֆքիարում» տպված «Մշեցւոց վրա ընդհանուր տեսութիւն մը» ընդարձակ հոդվածաշարը:*[6]

*Խրիմյանի պատրիարքության տարիներին առանձնապես մեծանում է Սրվանձտյանցի գործունեության ոլորտը: Պատրիար-*

---

*րությունը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ նա վարդապետ է ձեռնադրվել 1867 թ.: Ինչպես ժամանակակցի՝ Տեկանցի վկայությունը, այնպես էլ Սրվանձտյանցի ֆոնդում պահված Խրիմյանի ու Սրվանձտյանցի նամակագրությունը ու նրա վարդապետական վկայականն այդ են ապացուցում:*

[6] *Մանզումէի էֆքեար,1869, N 892, 895, 898, 902, 918, 921, 923:*

քը իր «մարտադիր զինվորին» հանձնարարում է ամռանը գործել Վասպուրականում, իսկ ձմռանը՝ Տարոնում:[7]

1871-72 թթ. Սրվանձտյանցը նշանակվում է սահմանադրության գործադիր Վասպուրականում: Այդ տարիներին նա ղեկավարում է պողոսյան-ապողոսյան պայքարի ապողոսյան թևը (այդ պայքարի մասին կխոսվի համապատասխան տեղում): Նրան հաջողվում է Խրիմյանի միջամտությամբ Պողոսին հեռացնել Վանից և այդ հայաշատ կենտրոնի բնակիչներին փրկել նրա դավերից: Դրանից հետո Սրվանձտյանցը կրկին վերադառնում է Մուշ և նոր զարկ տալիս կրթական գործին:

1873 թ. Խրիմյանը հրաժարական է տալիս պատրիարքությունից և մնում է Կ. Պոլսում իբրև Գուդկունճուք թաղի եկեղեցու քարոզիչ: Սրվանձտյանցը ևս մեկնում է Կ. Պոլիս և 1874-78 թթ. ապրում այնտեղ: Այս շրջանի նրա հրապարակախոսական նշանակալի գործերից է «Օրվան խնդիրներ» հոդվածաշարը:[8] Այդ տարիներին լույս տեսան Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց», «Հնոց և նորոց», «Մանանա» ժողովածուները և «Թուշան Շավարշանա» պիեսը, որոնք մեծ ժողովրդականություն բերեցին նրան: Այդ ժողովածուները հայ բանահյուսության լավագույն նմուշները հայտնաբերելու և հրատարակելու առաջին փորձերը եղան: Միևնույն ժամանակ դրանցով էր, որ հիմք դրվեց հայ ազգագրությանն ու բանագիտությանը:

Սրվանձտյանց ուսուցչի, գործչի, հրապարակախոսի, բանահավաքի անունն արդեն դուրս էր եկել արևմտահայության շրջանակներից: Նա նամակագրական կապ էր պահպանում ոչ միայն արևմտահայ, այլև Արևելյան Հայաստանի, Թիֆլիսի, Պետերբուրգի, Մոսկվայի, Վիեննայի և Վենետիկի հայ մշակութային և հասարակական բազմաթիվ գործիչների հետ:

1877-78 թթ ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը երկու վարդապետների հետ Սրվանձտյանցին ևս ուղարկում է Արևմտյան Հայաստան՝ հայ բնակչության, գավառների, վանքերի, ձեռագրերի ճշգրիտ վիճակագրությունը կազմելու, քաղաքների ժո-

[7] ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., ց. 2, գ. 449:

[8] «Մասիս», 1874, N 1511, 1512, 1514, 1515, 1520, 1523, 1527:

*ղովրդին՝ Հաստատ մնալ Հայրենի «շենից և ավերակաց» վրա: Ճանապարհորդությունից անմիջապես Հետո, 1878 թ. Սրվանձտյանցն ընտրվում է Ակնա առաջնորդ և մեկնում իր պաշտոնատեղին: Պահպանվել են ակնեցիների Հուշերը նրա առաջնորդական եռանդուն գործունեության մասին: Մեկ տարի Հետո, 1879 թ. Սրվանձտյանցը դարձյալ ճանապարհորդում է. պատրիարքի Հրահանգով նա ուղեկցում է սուլթանական կառավարության կողմից կոմիսար նշանակված Աբեդին փաշային՝ իր Հետ ունենալով պատրիարքարանի կազմած բարենորոգումների ծրագիրը:*

*1879 թ. վերջերին Խրիմյանն ընտրվում է Վասպուրականի թեմական առաջնորդ և 17-ամյա բացակայությունից Հետո վերադառնում է Վան, որտեղ խիստ զգում է իր աշակերտի կարիքը: Այդ պատճառով էլ Հրավեր-նամակ է ուղարկում Սրվանձտյանցին, իսկ պատրիարք Ներսես Վարժապետյանը կոնդակով նրան նշանակում է Վասպուրականի առաջնորդական փոխանորդ, նրա վրա թողնելով Ակնի առաջնորդությունը:*

*Դժվար տարիներ էին Արևմտյան Հայաստանի Համար: Ռուս-թուրքական պատերազմը ավերել էր երկիրը: Սովն իր ողջ արՀավիրքներով մոլեգնում էր Արևմտյան Հայաստանում, մասնավորապես Վասպուրականում: Իր Համեմատաբար Հարուստ վիճակից՝ Ակնի ազգայիններից Հավաքելով մի պատկառելի գումար՝ Հօգուտ Վասպուրականի սովյալների, Սրվանձտյանցն շտապում է Վան: Իբրև երկրին քաջ ծանոթ անձնավորություն, նա փաստորեն վարում է առաջնորդությունը, իսկ Խրիմյանը «Սովելոց Հանձնաժողովի» նախագահ էր և կատարում էր «վերին Հսկողի» դեր: 14 ամիս այդ գործը Հմտորեն վարելուց Հետո, Սրվանձտյանցը Հրաժարական է տալիս և մեկնում Ակն՝ շարունակելու Հոգևոր առաջնորդի իր պարտականությունը: Միաժամանակ նա վարում է նաև Բաղեշի առաջնորդությունը: Ներսես Վարժապետյանի պատկերավոր արտաՀայտությամբ, մեծ շռայլություն էր միայն Ակնա Համար ունենալ այդպիսի առաջնորդ: Կարճ ժամանակամիջոցում նա առաջնորդ է լինում նաև Խարբերդում: Մինչ բարձրաստիճան Հոգևորականները չէին ցանկանում Հեռանալ Բոսֆորի և Մարմարայի «գեղազվարճ» ափերից, ապրում էին մայրաքաղաքում, Հարմարավետ պայմաններում, Սրվանձտյանցը առաջնորդական պաշտոններ է վարում*

Արեւմտյան Հայաստանի տարբեր գավառներում, մոտիկից ծանոթանում հայ գյուղացու ծով տառապանքներին եւ աշխատում հնարավորին չափ սպեղանի դնել նրա վերքերին:

1879 թ. հրատարակվում է «Թորոս աղբար, Հայաստանի ճամփորդ» ուղեգրության առաջին հատորը, 1884 թ.՝ երկրորդ հատորը եւ «Համով-հոտով» ժողովածուն: Երկուսն էլ ջերմ ընդունելության են արժանանում ժամանակակիցների կողմից:

1884 թ. Գ. Սրվանձտյանցն ընտրվում է Տրապիզոնի (Պոնտոսի) թեմի առաջնորդ: Չնայած Մուշի եւ Վասպուրականի բնակչությունը հանրագրեր է ուղարկում պատրիարքին եւ խնդրում Սրվանձտյանցին առաջնորդ նշանակել Մուշում կամ Վասպուրականում, բայց Բ. Դուռը, որ այդ վայրերը դիտում էր իբրեւ հայ ազգային-ազատագրական շարժումների կենտրոն, թույլ չի տալիս քաղաքականապես անվստահելի Սրվանձտյանցին վերադառնալ այդ գավառները:

1886 թ. մայիսին Սրվանձտյանցը Մաղաքիա Օրմանյանի հետ մեկնում է էջմիածին եւ օծվում եպիսկոպոս: Առիթն օգտագործելով, նրանք լինում են Արեւելյան Հայաստանում, Թիֆլիսում: Երկուսն էլ քարոզ են կարդում Թիֆլիսի եկեղեցիներից մեկում: Տեղի թերթերը եւ քարոզներին ունկնդիր Հ. Երամյանը նշում են առանձնապես Սրվանձտյանցի քարոզի մեծ ժողովրդականությունը: Եպիսկոպոս օծվելուց հետո էլ Սրվանձտյանցը շարունակում է վարել Տրապիզոնի առաջնորդությունը:

1887 թ. Կ. Պոլսի Ազգային ժողովի որոշմամբ միավորվում են Տարոնի առաջնորդությունը եւ սբ. Կարապետի վանքի վանահայրությունը, որի առաջնորդ ու վանահայր է նշանակվում Գ. Սրվանձտյանցը: Նրա վրա է թողնվում նաեւ Պոնտոսի առաջնորդությունը: Ութից ինն ամիս Սրվանձտյանցը մնում է Տարոնում: Գր. Խալաթյանին եւ Պ. Սիմոնյանին ուղղած նամակներում նա խոսում է իր «դժվարին աշխատանքի» մասին: Ժամանակակիցները վկայում են, որ այդ շրջանում նրա գործունեության վերաբերյալ եղան մատնություններ եւ ինչպես Գ. Ալեաթճյանին, այնպես էլ Սրվանձտյանցին արգելվեց մնալ Տարոնում: Նա վերադառնում է Տրապիզոն եւ շարունակում իր առաջնորդական պաշտոնը: Բայց այստեղ էլ ժողովրդանվեր գործիչը հանգիստ չի մնում: Նա հսկողություն է սահմանում թուրք գավա-

ռապետի, աշարի հարկահավաքի գործունեության վրա: Այդ պաշտոնյաները ատելությամբ են լցվում Սրվանձտյանցի դեմ, որն անհետևանք չի անցնում:[9] Վաղուց Սրվանձտյանցը Բ. Դռան աչքում պատկանում էր կասկածելի և անբարեհույս հոգևորականների թվին: 1888 թ. նա կանչվում է Կ. Պոլիս և այլևս չի վերադառնում հայ գավառները:[10] Իզուր են անցնում նրա և ողջ պոնտահայության ջանքերը Տրապիզոն վերադառնալու ուղղությամբ: Դրանք շարունակվում են մինչև 1891 թ.: Այդ թվականին Տրապիզոնի հայ բնակչությունը Սրվանձտյանցին կրկին ընտրում է առաջնորդ և պատրիարքարանից խնդրում է միջնորդել Բ. Դռան առջև՝ նրան վերահաստատելու համար: Սրվանձտյանցը հույս ուներ, թե այդ աշխատանքները կպսակվեն հաջողությամբ[11]:

Սակայն իզուր էին ակնկալությունները: Գ. Սրվանձտյանցը երբեք չվերադարձավ գավառ: Կ. Պոլսում նա ընտրվում է Ազգային ժողովի երեսփոխան, կրոնական ժողովի փոխատենապետ: Միևնույն ժամանակ կարգվում է Բերայի Սուրբ Երրորդություն եկեղեցու քարոզիչ և ուսուցիչ Ղալաթիո կենտրոնական վարժարանում:

---

[9] ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., բ. 2, գ. N 128, 129, 588, 589, 590, 591. տե՛ս նաև Մատենադարան, Խրիմյանի ֆ., թղթ. 105, վավ. 208:

[10] Ուսումնասիրողներին հայտնի էր, որ Սրվանձտյանցը պաշտոնանկ է արվել օսմանյան կառավարության կողմից արևմտահայ գավառներում ծավալած իր հայրենասիրական գործունեության պատճառով: Սակայն այդ բանը հաստատող փաստաթղթեր չկային: 1970-ական թթ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանից ստացվեցին նոր փաստաթղթեր, որոնք զգալի չափով համալրեցին նրա արխիվային ֆոնդը: Այդ փաստաթղթերի շարքում էր նաև պաշտոնական մի գրություն՝ «Արդարութեան գործոց վսեմափայլ նախարարին» խորագրով: Ահա այն. «Ատյին Նազրին յայտնելով, թէ Տ. Գարեգին եպիսկոպոս հավատարմութեան հակառակ վարմաց և գաղափարաց մեջ գտնուելու և մինչեւ իսկ վնասակար գրութիւններ հեղինակած լինելուն պատճառով, մինչդեռ ասկէ առաջ օգոստոսափառ սուլթանին իրադեւմն պաշտոնանկ եղած է, ոչ միայն Տրապիզոնի առաջնորդութեան մեջ վերահաստատվելը, այլ նաև ուրիշ վիճակի առաջնորդութեան կոչելն իսկ անհարմար է, մինչև որ իւր ընթացքն ու գաղափարները չուղղէ, վասնզի հիշեալ եպիսկոպոսը, ինչպես իմացուած և տեղեկացուած է, իւր օտարոտի ընթացքի մեջ տակավին կշարունակուի» (ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., լրացուցիչ նյութերի բաժին, գ. 37):

[11] ԳԱԹ, Գր. Խալաթյանի ֆ., բ. 5, գ. 731:

Մրրկոտ էր կյանքը Կ. Պոլսում: Սուլթանական կառավարությունը օրըստօրե սաստկացնում էր ճնշումները ոչ մահմեդական բնակչության, մասնավորապես հայերի նկատմամբ: Այդ իրադրության մեջ Սրվանձտյանցը կասկածում էր, թե իր «նամակները բռնվում են» և գիտեր, որ իր «գործոց ու գրուածոց վրա խիստ հսկողութիւն կա»:[12]

1891 թ. օգոստոսի 6-ին Կ. Պոլսում լույս տեսնող «Հայրենիքը» ազդարարում է. «Սրուանձտեանց Տ. Գարեգին եպիսկոպոս պատրիարքարանէն ի Գաղատիա կը խրկուի իբրև պատրիարքական փոխանորդ»:[13] Նույն լրագիրը մեկ այլ համարում հայտնում է, որ Սրվանձտյանցը հրաժարվեց այդ պաշտոնից և Գաղատիա մեկնեց ուրիշ եկեղեցական: Դրա պատճառը հայրենասեր գործչի առողջության անմխիթար վիճակն էր: Մշտական ճանապարհորդությունները ձմեռվա սառնամանիքին կամ ամառվա տապին, ոտքով կամ ջորու կռնակին, Արևմտյան Հայաստանի վտանգավոր երթևեկության պայմաններում, դեռևս ճանապարհորդության օրերին կարող էին եղերական վախճան ունենալ նրա համար: Նա երբեք չձգտեց հարմարավետ կյանքի, չնայած փնտրված «ուսուցիչ մըն էր, սիրուած եպիսկոպոս մը, ազդեցիկ ազգային մը Պոլսո մեջ բոլոր բարիքներուն և վայելքներուն արդար իրավունքով»[14] և իր ողջ կյանքը անցկացրեց հայ գավառներում: Կյանքի 52-րդ տարում նա անբուժելի հիվանդ էր շաքարախտով, աղիքների և երիկամների բորբոքումով: 1892 թ. նոյեմբերի 18-ին մահանում է Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցը, Խրիմյանի արտահայտությամբ՝ «արծուո բնորելագոյն ճետը տարաժամ մահէն կորուսեալ»:[15]

Գ. Սրվանձտյանցի մահվան առթիվ գրած դամբանականում Արիփար Արիփարյանը նշում է.«Այդ վարդապետը գրեթէ դպրոց չէր տեսած և սակայն գտնուեցան հնախոսներ, որք տեղեկանալով անոր գրքերու պարունակութեանը, կարծեցին, թե

---

12 ԳԱԹ, Պ. Սիմեոնյանի ֆ., գ. 68 բ:

13 «Հայրենիք», 1891, N 20:

14 Հ. Օշական, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 4, Երուսաղեմ, 1956, էջ 312:

15 «Ամենայն հայոց հայրիկ» (Համավաստուրականի հայրենակցական միութիւն), Պոսթոն, 1956, էջ 226:

գիտէ քանի մը հին ու նոր լեզուներ, որոց առաջնորդութեամբ գիտուն եղած է:... Սրուանձտեանցի բոլոր գործերը լաւ քննող մը կրնայ հաւատալ, թէ անոր տաղանդը թերևս մօտենար մինչև հանճարի սահմանագծերը, եթէ ստացած ըլլար զօրեղ կրթութիւն մը:

...Շատ կանուխէն ըմբռնեց, թէ հայ վարդապետի մը պարտականութիւնն էր մտածել նաև խեղճ տգէտ ժողովրդին սրտին համար: Այդ պարտականութիւնը կատարելու համար գաւառացի վարդապետը պատրաստեց գրքեր գաւառական բարբառով...»:[16]

Սրվանձտյանցի գործունեությունը բարձր է գնահատվել թե ժամանակակիցների և թե հետագա սերունդների կողմից: Հայ ազգագրության մատուցած ծառայությունների համար կենդանության օրոք նա ընտրվել է Պետերբուրգի կայսերական հնագիտական ակադեմիայի պատվավոր անդամ:[17]

Ա. Քիշմիշևը ռուսերեն է թարգմանել նրա «Թորոս աղբարը»,[18] իսկ անգլիացի հայագետ Վրնկերը անգլերեն՝ «Մանանան» և «Համով-հոտովը»:[19]

* * *

Գարեգին Սրվանձտյանցն իր գործունեությունը սկսեց 1850-ական թվականների վերջին և 60-ականների սկզբին: Դա մի ժամանակաշրջան էր, երբ Արևմտյան Հայաստանը խարխափում էր խավարի մեջ: Կ. Պոլսի և Իզմիրի գաղթօջախներում գործում էին Իսկյուտարի և Մեսրոպյան վարժարանները, սակայն բուն Արևմտյան Հայաստանը զուրկ էր միջնակարգ դպրոց-

---

[16] «Հայրենիք», 1892, N 306:
[17] «Էջեր հայ գրականութենէն», Հ. Ա, Գահիրէ, 1942, էջ 11:
[18] Торос ахпар, путеводитель по Армении. Путевые очерки архимандрита Гарегина Срвандзтянца. Сокращенный перевод А. О. Кишмишева. "Приложение к первому выпуску IX тома "Известии Кавказского отдела императорского русского географического общества", Тифлис, 1887, (Материалы для описания Персии, азиатской Турции и Закаспийского кеая, Тифлис, 1887).
[19] «Կեանք և արուեստ», 1940, N 5-6, էջ 71:

ներից: Ժառանգավորացը, նրա տնօրենը, մյուս ուսուցիչներն ու շրջանավարտները շատ բան արեցին Արևմտյան Հայաստանի գյուղացիության լուսավորության և ազգային ինքնագիտակցության արթնացման համար: Գործի դրվեցին ժողովրդի մեջ լուսավորություն տարածելու բոլոր միջոցները: Այդ միջոցներից ամենից հզորը երկուսն էին՝ ուսումը և տպարանը, որոնցով և զինվեց Վարագա դպրոցը:

Սրվանձտյանցի լուսավորական գործունեությունը կարելի է բաժանել երկու բնագավառի՝ հրապարակախոսական և մանկավարժական: Գիտակցելով տպագիր խոսքի նշանակությունը ժողովրդի լուսավորության գործում, նա, որպես փոխխմբագիր, եռանդուն մասնակցություն էր ցույց տալիս «Արծուի Վասպուրականի» հանդեսի աշխատանքներին: Իր հոդվածներում Սրվանձտյանցը կոչ էր անում հայ երիտասարդությանը՝ ականջը խուլ չպահել ժամանակի արթնացնող ձայնի առաջ, բարձրանալ գիտության աստիճաններով. «զի գիտութիւն զօրութիւն է»: Ուսման միջոցով կարելի է «հինօրյա կեանքը կրկին նորոգել», բուժել ազգի ցավերը: 1861 թ. «Կռունկ» պարբերականին նվիրված մի բանաստեղծության մեջ[20] Սրվանձտյանցը «դարու անժխտելի վճիռ» համարում է ուսումը, լուսավորությունը: Նա կարծում է, թե անցել են այն ժամանակները, երբ սուսերն էր վճռում գործը, սուսերից էլ հատու է գիրը, գրականությունը: Արևելյան Հայաստան կատարած շրջագայությունից նոր վերադարձած «արծուո ճետը» կոչ է անում հայ ժողովրդի երկու հատվածներին զորանալ միասնությամբ, «զի միութիւն զօրութիւն է»: Սրվանձտյանցի կարծիքով, միասնության քարոզը պետք է լիներ արևմտահայ և արևելահայ պարբերականների ամենագլխավոր խնդիրը: Նույն նպատակով էլ նա «Արծուի Վասպուրականի» էջերում հանդես է գալիս Արևելյան Հայաստանին վերաբերող նորություններ պարունակող հոդվածներով: Սրվանձտյանցը պատմում է Երևանի մասին. «Տեղվոյս ազգայինք սկսեր են զարթնուլ հայրենասիրութեան հոգւով, արդեն բավական ուսումնականներ կգտնուին իրեանց մեջ, որք և մեծ յոյս կուտան շուտով յառաջ

[20] Մատենադարան, արխիվ, կաթողիկոսական դիվանի փ., թղթ. 193, վավ. 139:

տանել իրենց հայրենիքը դեպի լուսավորություն»:[21] «Արծուի» էջերում «Տեսարանք հայրենի աշխարհաց» ընդհանուր խորագրի տակ լույս են տեսնում Սրվանձտյանցի հոդվածները՝ նվիրված Արևելյան Հայաստանի հայերի հասարակական-քաղաքական կյանքին:

Ամենամյա հանդեսից ավելի կարևոր և ժողովրդին ավելի մոտ կարող էր լինել լրագիրը: Այդ պատճառով էլ Սրվանձտյանցը 1863 թ. Տարոնում սկսում է հրատարակել «Արծուիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթը: Թերթը էժան էր, դյուրամատչելի հայ շինականին, շարադրված գյուղացուն հասկանալի, պարզ, ժողովրդական լեզվով. փոքր էր թերթի ծավալը, որպեսզի գյուղացին չհոգներ կարդալուց: Խմբագիրը քարոզում էր ժողովրդին. «Ուսանիլ պետք է... ռռնութենից, խեղճութենից ազատուելու համար պետք է կարդալ գրել ուսանինք. պատիժը ռառնալու համար մեղքը ռառնանք, մեղքը ռառնալու համար խելք ունենանք, խելք ունենալու համար վարժատուն-դպրոցներ բանանք: Այս է Արծուիկի բաղձանքն ու նպատակը, այս է Հայաստանի դեղ ու ցաւոց միակ սփոփանք»:[22]

Սակայն ուսումը և լուսավորությունը երիտասարդ խմբագրի համար ինքնանպատակ չէին: Սրվանձտյանցն ընդգծում է ուսման գործնական նշանակությունը: Ուսում առած մարդը կբողոքի հարստահարությունների դեմ, անմռունչ չի հնազանդվի կեղեքիչներին, կիմանա փոքր հողակտորից շատ բերք ստանալու գաղտնիքը: Սրվանձտյանցն իր քարոզներով հորդորում էր գյուղացիներին, ցույց տալիս ուսման օգուտը ամենօրյա կյանքում: «Կարդացողն գիտէ, թե տերութիւն ինչքան տուրք սահմաներ է, այնքան կուտա, չկարդացողէն ինչքան որ ուզէն, կուտա: Կարդացողն գիտէ քրդի կամ բարբարոսի համար տերութեան կառավարութեան բողոքել և դատ վաստակել. չկարդացողն ռռնութեան և անիրավութեան գերի է, ինչ որ ուզեն կտանեն, ու ինքը կլռե: Կարդացողն գիտէ պզտիկ արտէ մը շատ պտուղ քաղել, չկարդացողն շատ արտ ունենա և շատ ալ ցանէ, բայց ա-

[21] «Արծուի Վասպուրական».1861, N 1, էջ 21:
[22] «Արծուիկ Տարօնոյ», 1863, N 2:

նոթի կինա»:[23] Նա գերագնահատում էր ուսման և լուսավորության դերը: «Բռնութինից ու խեղճութինից» ազատվելու դարմանը համարում էր ուսումը և լուսավորությունը: Սրվանձտյանցն իր եզրակացությունների և հորդորների մեջ հայտնում էր հետաքրքիր մտքեր. ուսումը իշխող դասի մենաշնորհը չէ. այն օդի և ջրի, հանապազօրյա հացի հետ անհրաժեշտ է գյուղացուն, ժողովրդին: Սրվանձտյանցը գրում էր, որ հայ ժողովրդի ամենամեծ հանճարները եկել են ժողովրդի ծոցից. «Գեղացի հայ, ինչո՞ւ նստ կքաշվիս կարդալէ, մեր նախնի սուրբէր ու իմաստունները շատը քո գեղէն ելած են. Խորէնացին, Մեսրովը և այլ թարգմանիչները, որոնք այսօր կպաշտուին իրենց սրբութեամբ և իմաստութեամբ, մեյ մեկ գյուղացու տղա են եղէր, բայց ազգի մը լուսաւորիչ և վերանորոգիչ»:[24]

Որպեսզի բոլորը դպրոց հաճախեն, հարկավոր է դպրոցներ բանալ ամենուրեք. «վարժարաններ պէտք են ամէն գեղի մեջ, ամէն թաղի մեջ. ամէն քաղքի մեջ...վերջապես, ամեն հայի մեջ»:[25] Սրվանձտյանցը հորդորում է հողագործին ու արհեստավորին՝ միանալ, հզորանալ, դպրոցներ բանալ, լրագրեր ընթերցել, ընկերություններ ստեղծել: «Արծուիկը» ուրախությամբ հայտնում է իր ընթերցողներին Մուշում բացված նոր ուսումնարանների, նոր ընկերությունների մասին, ուր «հայրենեաց գեղեցիկ յոյսեր կպատրաստուին»:

Եթե գիտությունը բոլոր բարիքների մայրն է, ապա տգիտությունը «մարդկային ամեն թշվառութեանց մայր է»,-հայտարարում էր Սրվանձտյանցը: «Տգետներ և տգիտութիւն»[26] հոդվածում նա խարազանում էր տգետ հոգևորականներին, որոնք «կոյր աչօք» առաջնորդում են ժողովրդին դեպի անկում և կործանում: Խորհրդածելով «լուսավոր գաղափարի և խորհրդի», «հոգվոյ և մտաց դաստիարակութեան» և անձնական կամ մարմնական «պիտոյքների» մասին, Սրվանձտյանցն առաջնությունը տալիս էր մարմնական պիտույքներին՝ «հաց պետք է և

---

23 Նույն տեղում, N 12:
24 Նույն տեղում:
25 Նույն տեղում:
26 «Արծուիկ Տարօնոյ», 1865, N 41:

զգեստ»: Միայն դրանից հետո է նա ընդգծում լուսավորության նշանակությունը ամենօրյա հացը վաստակելու գործում:

Երիտասարդ խմբագիրը «Արծուիկի» նպատակը համարում էր ժողովրդի լայն խավերի մեջ գրագիտություն տարածելու, ժողովրդին լուսավորելու գործը: Գործունեության առաջին իսկ օրերից իրեն համարելով գյուղացիության շահերի արտահայտիչ և մտահոգված լինելով առավելապես նրանց մեջ լուսավորություն տարածելու հոգսով, նա գրում էր. «Քանզի դրա («Արծուիկի»-է. Կ.) նպատակն է գիւղացւոյն քան քաղաքացւոյն խօսք հասկացնել, սրտերնին կրթել, միտքերնին զարթուցանել ազգասիրական և քաղաքական սկզբունքներ լսելու, կարդալու և ուսանելու»:[27] Ուրեմն, ուսումն անհրաժեշտ է ժողովրդին ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական նկատառումներով: Սրվանձտյանցը բացում է ժողովրդի աչքերը, դրդում առաջադրել իր պահանջները, ոտքի է հանում նրան ազգակից և այլազգի տիրողների դեմ. «Զուզենք այն ռեսը, դու կառաւարես երրեմն ալ...չընդունենք այն իշխանը. մենք նորա տեղ նստինք ատեան դատաստան, միայն եթե բաւական լինինք տալ հասարակաց պատասխանը և պահպանել զազգ խաղաղ և առաջադեմ»:[28] Ռես և իշխան «չուզելու» այս գրույցի տրամաբանական հետևությունը գյուղացուն կարող էր այլ եզրակացությունների հանգեցնել: Ըստ Սրվանձտյանցի, «կրթուած և ուսեալ» ժողովուրդը չի հանդուրժի բռնակալներին:

«Արծուիկ Տարօնոյ» դադարելուց հետո, հետագա ողջ գործունեության ընթացքում Սրվանձտյանցը շատ սուր է զգացել պարբերականի կարիքը: Խրիմյանը և Սրվանձտյանցը երկար են խորհել, ուղիներ որոնել «Արծուիկ Տարօնոյ» կամ «Արծուի Վասպուրականը» վերստին հրատարակելու համար:[29] Երկու գլխավոր պատճառ խոչընդոտում էին նոր պարբերականի հրատարակությունը. առաջինը դրամական սղությունն էր. ծախսերը կրճատելու նպատակով նրանք մտածում էին «Արծուին» և «Արծուիկը» համատեղ հրատարակել, բայց հաջողության չեն հասնում: Երկրորդ պատճառը հետզհետե սաստկացող սուլթա-

---

[27] Նույն տեղում, 1863, N 1:
[28] Նույն տեղում, N 2:
[29] ԳԱԹ, Սրվանձտյանցի փ., բ. 2, գ. 34, 72:

նական ռեակցիան էր: Խրիմյանը և Սրվանձտյանցը իրենց գործունեությամբ դեռևս 60-ական թվականներից կառավարության կողմից դիտվում էին իբրև անբարեհույս: Արդեն պատրիարք դարձած Խրիմյանը նկարագրում է լրագրի հրատարակության արտոնություն ստանալու դժվարությունը. «Գիտե՞ք, ներկայիս մեջ որչափ անհնարին է լրագրի մի արտոնութիւն ստանալ, վասնզի ժամանակ չար է և խիստ չար. Մանզումէն դարձեալ զգուշացավ»:[30] Խրիմյանի պատկերավոր արտահայտությամբ՝ «լրագրաց քոլերան սկսած է»: Մեկը մյուսի հետևից փակվելու կամ դադարելու հրաման են ստանում արևմտահայ պարբերականները՝ Կ. Փանոսյանի «Մանզումէի էֆքեարը», Մ. Մամուրյանի «Արևելեան մամուլը» և այլն: Սրվանձտյանցը հրատարակության թույլտվություն չի ստանում, սակայն դա չի խանգարում նրան. նրա առջև հյուրընկալորեն բացում են իրենց դռները «Մեղուն», որը միշտ արտատպում էր Սրվանձտյանցի «Արծուիկ Տարօնոյում» հրատարակված հոդվածները, «Մանզումէի էֆքեարը», «Մեղու Հայաստանին», «Փորձ» և ուրիշ պարբերականներ:

Մեծ են լրագրի հնարավորությունները. նրանով կարելի է կապվել ավելի լայն զանգվածների հետ, սակայն դրա բացակայության դեպքում անհրաժեշտ է գործադրել այլ միջոցներ: Սրվանձտյանցը այցելու է, նվիրակ, քարոզիչ: Պատահական չէ, որ Հայաստանի բոլոր ծայրերից երախտապարտությունը մշտական կապի մեջ է եղել Սրվանձտյանցի հետ, ստացել նրա ամենօրյա խորհուրդները և աջակցությունը՝ նորաբաց ուսումնարանների, նորակազմ ընկերությունների գործը հաջողությամբ առաջ տանելու համար: Նրան գրում էին աշակերտներ, ուսուցիչներ, մշակութային գործիչներ: Ակնի Կամարկապ գյուղից Սարգիս Խեչյանը Սրվանձտյանցին նամակով բողոքում էր Ակնա ամիրաներից, որոնք ավելի «վնաս հասուցած են, քան նպաստ և արդիւնք, վասնզի գիտէնք, որ փոխանակ իրենց հայրենակիցները սփոփելու, շարունակ զրկանք տուած են»:[31] Կամարկապում ստեղծվել էր «Ձայն բազմաց» ընկերությունը, որը «պիտի անարգէ հա-

[30] Նույն տեղում, դ. 479:
[31] Նույն տեղում, դ. 363:

*բռատներու աղքատաց վրա ունեցած իրաւունքը», Նրա սկզբունքը պիտի լինի հասարակության բոլոր անդամների հավասարությունը: Այդ ընկերությունը հալածվում էր Ակնի և Կամարկապի հայ հարուստներից: Սրվանձտյանցն շտապում է նամակով խրախուսել ընկերության անդամներին, «Մանզումէում» անստորագիր հոդվածով հանդես գալ ընկերության օգտին:*

*Թոքատի «Վարդանանց» դպրոցի աշակերտները դիմում են Սրվանձտյանցին, գանգատվում իրենց դպրոցի թշվառ վիճակից. երբեմնի կյանքով լեցուն դպրոցն իր բանիմաց ուսուցիչներով և աշակերտներով զոհ էր դարձել մատնության: Սրվանձտյանցը բողոքում է Ազգային վարչությանը, վրդովմունքով գրում այդ մասին «Թորոս աղբարում»: Դիմողները նրան անվանում են «երկրորդ հայրիկ»: Դա վկայում է Սրվանձտյանցի մեծ ժողովրդականությունը:*

* * *

*Սրվանձտյանցի լուսավորական գործունեության ամենափայլուն մասը արևմտահայ դպրոցի զարգացման ուղղությամբ կատարած նրա աշխատանքն է:*

*Դպրոցը, ըստ Սրվանձտյանցի, երիտասարդ սերնդի միտքն ու հոգին վերափոխողն է.«Մեր ազգին համար այսօր և ամեն ժամանակ առաջին գործը դպրոց պէտք է ունէնալ, դպրոցները արդիւնաւորել գիտնալ»:*[32]

*Այսօրվա դպրոց հաճախող մանուկները լինելու են վաղվա հայրերն ու մայրերը, վաղվա մատաղ սերնդի դաստիարակողները: «Մարդկութեան, Ազգութեան մեծ և միակ ընտանիք կազմող, գեղեցիկ ընկերութիւն մի է դպրոց...»:*[33] *Մեծ էր դպրոցի դերն ու նշանակությունը առանձնապես այն պատճառով, որ պետականությունից զուրկ հայ ժողովրդի միասնությունը հենված էր հոգևոր և բարոյական գործոնների վրա: Որոշ չափով տուրք տալով ժողովրդին լուսավորությամբ փրկելու իր տեսակետին, Սրվանձտյանցը երբեմն ծայրահեղության մեջ էր ընկնում. «Ոչ*

---

[32] *Նույն տեղում, գ. 65, էջ 30:*
[33] *Նույն տեղում:*

*բարբարոս քրդերու նուաճումները, ոչ վանքերու կամ եկեղեցեաց կողոպտուիլը, ոչ այս և այն անհատ Հայու սպանվիլը...ոչ Պոլսո Թափուր մնացած պատրիարքարանը, այնչափ իմ կարեկցութիւնս չեն կրնար գրաւել. ասոնք գրեթէ աննշան դեպքեր են բոլորովին դպրոցական խնդրոյն առջև»:*[34] *Կյանքի առաջընթացը, արհեստների, արվեստների ծաղկումը և բազմաթիվ նոր Հայտնագործությունները · «ասոնք բոլորը դպրոցէ ելած ժողովրդեան արդիւնք են»: Ըստ Սրվանձտյանցի, դպրոցը մեր ազգի Համար ազգային կառավարության առաջին օղակն է, որի վրա պետք է դարձնել ամենամեծ ուշադրությունը: Հանգանակությունները պետք է կատարել Հօգուտ դպրոցի: Վարդապետ Սրվանձտյանցը ժողովրդին քարոզում է վանքերին նվիրատվություններ տալու փոխարեն, տալ դպրոցներին և դպրոցները Հիմնել ոչ թե ժողովրդից մեկուսացած վանքերում, այլ ժողովրդի մեջ ու ժողովրդի Համար:*

*Սակայն Սրվանձտյանցը չի սաՀմանափակվել միայն գրավոր և բանավոր ելույթներով: Նա ամենօրյա մասնակցություն է ցույց տվել Արևմտյան Հայաստանի կենտրոններում դպրոցներ Հիմնելու և ուսուցչական կազմով ապաՀովելու գործին: Սրվանձտյանցն առանձնապես մեծ աշխատանք է կատարել Տարոնում՝ 1869-1872 թթ.. Խրիմյանի պատրիարքության տարիներին: Նրա անմիջական օգնությամբ դպրոցներ են բացվում Մշո դաշտի, Վերին և Ներքին Բուլանըխների, Մանազկերտի, Վարդոյի գյուղերում և Տարոնում գտնվող սբ. ՀովՀաննու, սբ. Դանիել, սբ. Կարապետ վանքերում: Այդ տարիներին Սրվանձտյանցի կողմից բացված դպրոցներում սովորել է մոտավորապես 1000 աշակերտ: Այն ժամանակվա Համար դա պատկառելի թիվ էր: Խրիմյանին ուղղած նամակներից մեկում Սրվանձտյանցը Հաղորդում է Խնուսի և Բուլանըխների գյուղերում կատարած իր գործերի մասին. «Աւելորդ և անպատշաճ է ինձ գրել իմ մասին, թե լասպես կատարեցի պաշտոնս, և շատ գեղեր խաղաղութեամբ, դպրոցաց և եկեղեցաց շինութեան և բարեկարգութեան ձեռնարկութիւնը...Հաջողեցանք...: Առջի օրը Մեղտուա դպրոցին այցե-*

---

[34] *Նույն տեղում:*

*յուՁեան գնացի, գիրք տարա և անցա Գոմսը, նոյնպես անոնց ալ վարժարանին գրքեր տվի…: Աւրանա վարժարանը սկսել տուինք, ճապաղջուրա Մատրակ գեղը վարժապետ մը դրկեցինք»:*[35]

*Մեծ են Սրվանձտյանցի ջանքերը նաև Վանի դպրոցաշինության բնագավառում: 1871 թ. վերջերին նա նշանակվում է Վասպուրականի սահմանադրության գործադիր և զգալի աշխատանք կատարում այնտեղ նորանոր դպրոցներ բացելու, եղածներն ուսուցիչներով ապահովելու և համայրելու գործում: Առանձնապես նշանակալից է Վանում իգական վարժարան բացելու ուղղությամբ նրա կատարած աշխատանքը: Մինչև 1870 թ. Վանը իգական վարժարան չուներ: 1870 թ. Սրվանձտյանցի նախաձեռնությամբ Կ. Պոլսում վանեցի գաղթականներից կազմվում է Սանդխտյան ընկերությունը, որի միջոցներով Վանում բացվում է Սանդխտյան վարժարանը:*[36] *Մինչև իր կյանքի վերջը նա հոգածություն է ցուցաբերում այդ դպրոցի նկատմամբ: Առանձնապես ծանր էր դպրոցի վիճակը 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո: Պատերազմի, հրի ու սովի ճարակ դարձած Վանն ապրում էր ճգնաժամային օրեր: Հայրենասեր գործիչը, չնայած այդ տարիներին առանձնապես զբաղված էր և կատարում էր պատրիարք Ներսես Վարժապետյանի հանձնարարությունը, միշտ էլ ժամանակ է գտնում հոգալու վարժարանի պետքերը: Վանի առաջնորդական փոխանորդ Երեմիա Տեկյանցի վկայությամբ, Սրվանձտյանցը նյութական միջոցներ հայթայթեց դպրոցի համար, փոխեց հոգաբարձուական և ուսուցչական կազմերը, որից հետո աշխատանքներն ընկան հունի մեջ:*[37]

*Ժամանակակիցների հիշողության մեջ խոր հետքեր է թողել այն աշխատանքը, որ Սրվանձտյանցը կատարել է 1867-69 թթ. ընկած ժամանակամիջոցում, Կարինում, երբ նա ընդհատումներով եղել է Կարինի վարժարանների լիազոր տեսուչը: Նա անհրաժեշտ շատ փոփոխություններ է մտցրել դպրոցական ծրագրերի և դասավանդվող առարկաների մեջ: Կարինի դպրոցներում դասավանդել են ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, հողա-*

---

[35] *Նույն տեղում, գ. 45:*

[36] *Հ. Երամեան, նշվ. աշխ. էջ 79:*

[37] *Մատենադարան, ձեռ. 4182, էջ 221-222:*

գործություն, լեզուներ, Հայոց պատմություն: «Կարնո ուսումնարանը…յառաջադիմութեան քայլափոխին մեջ սքանչելի փոփոխութիւններ ունեցած է սա Սրուանձտյանց Գարեգին վարդապետին շնորհիւ, որ ազգայնոցս անզուգական ումն է. տեղվոյս ժողովրդեան թախանձանօքը, դպրոցին տեսուչ կարգուած է. ինքը գրեթէ առավոտէն մինչեւ երեկո մանկանց դաստիարակութեանը համար քրտինք կթափէ»:[38] Այդ փոփոխությունների պատճառով Սրվանձտյանցը ընդհարումներ է ունենում Կարինի առաջնորդ Հարություն Վեհապետյանի հետ:[39]

Նշանակալից երևույթ է եղել Կարինում Սրվանձտյանցի բացած մեծահասակների կիրակնօրյա երեկոյան դպրոցը: «Նոր գործ մը, որ Կարին մինչեւ այսօր չէր տեսել, այսինքն՝ կիրակնօրեա դպրոց բանալը, իր (Սրվանձտյանցի-Է. Կ.) մտաջան աշխատութիւնն էր»:[40] Տարեց մարդիկ ամեն կիրակի հաճախում էին դպրոց, ուր Սրվանձտյանցի հայոց պատմության ամեն մի դասը վերածվում էր հայրենասիրության ոգեշունչ քարոզի:[41] Կարճ ժամանակամիջոցում Կարինում շատ բան է արվում ժողովրդի ազգային ինքնագիտակցության արթնացման համար: Ժողովրդի լուսավորության գործին Սրվանձտյանցը տալիս է քաղաքական հնչեղություն և նպատակասլացություն: Կարինի նրա աշակերտները՝ Նշկյանները, Պալարյանները, հետագայում դառնում են ազատագրական շարժման գործիչներ և հաճախ ակնածանքով են արտահայտվում Սրվանձտյանցի մասին: Սակայն երկար չի տևում այդ եռանդուն գործունեությունը. Հաղթում են հետադիմական ուժերը, փակվում է դպրոցը: 1870 թ. մայիսին «Մանզումէի էֆքիարը» գուժում է. «Կիրակնօրեա դպրոցը խափանուած է հոս, դասախոսութիւն չըլլար, ոչ դասառու կա և ոչ դասատու...»:[42] Դպրոցը գոցվելուց հետո Սրվանձտյանցը հեռանում է Կարինից և մեկնում Մուշ, Խրիմյանի կողմից նշանակվելով սբ. Կարապետ վանքի վանահայրության փոխանորդ:

---

[38] «Մանզումէի էֆքիար»,1869, N 995:
[39] «Մշակ», 1892, N 145-146:
[40] «Մանզումէի էֆքիար»,1869, N 995:
[41] Նույն տեղում, նաև N 997:
[42] «Մանզումէի էֆքիար»,1870, N 1233:

*Կարինում գտնվելու ժամանակին է վերաբերում Սրվանձտյանցի «Ճառ ազգային լուսաւորութեան և դաստիարակութեան վերա»[43]-ն, որ նա կարդացել է ուսումնական տարվա փակվելու կապակցությամբ: «Ճառի» մեջ արտահայտված են Սրվանձտյանցի հայացքները լուսավորության, դպրոցի, ծնողների դաստիարակիչ դերի մասին: Նա շեշտում է, որ երեխաների դաստիարակության գործում կարևոր տեղ է գրավում ծնողների և ուսուցիչների անձնական օրինակով կրթելու հանգամանքը:*[44]

*Գարեգին Սրվանձտյանցը մասնակցություն է ունենում նաև Արևմտյան Հայաստանում կրթություն և լուսավորություն տարածելու նպատակով ստեղծված Կիլիկյան ընկերության աշխատանքներին: Մինչ այդ, Կ. Պոլսում կազմակերպվել էին Արարատյան, Դպրոցասիրաց, Արևելյան ընկերությունները: Նուպար-Շահնազարյան վարժարանի նախկին շրջանավարտների և Գ. Սրվանձտյանցի նախաձեռնությամբ 1878 թ. փետրվարի 18-ի ժողովում ստեղծվում է նաև Կիլիկյան ընկերությունը:*[45]

*Հայրենասեր գործիչը լուսավորական լայն գործունեություն է ծավալել նաև 1878-79թթ. ուղևորությունների ընթացքում: Պատրիարքարանի հանձնարարությունը կատարելուն զուգընթաց, Սրվանձտյանցը ձեռնարկում է բազմաթիվ այլ ազգօգուտ գործեր: Նա այցելում է հայկական դպրոցները, օգնում ուսուցիչներին, հաճախ վերաբացում ինչ-ինչ պատճառներով փակված վարժարանները, խրախուսում ունակ ուսուցիչներին, պախարակում անկարողներին: Իր դիտողությունները նա թղթին է հանձնում «Թորոս աղբար» աշխատության և պատրիարքարանին ուղղած տեղեկագիր-նամակների մեջ: Չնայած դրանք արվել են կոնկրետ առիթներով, սակայն ունեն այնպիսի ընդհանրացումներ, որոնցով կարելի է որոշել Սրվանձտյանց-լուսավորչի հայացքները: Դպրոցը, ըստ նրա, «ազգային հոյսն է», որը գտնվում է անմխիթար վիճակում: Այնտեղ տիրում է ուսման տեր-թոռլիկյան դաժան մեթոդը. համարյա բոլոր դպրոցներում իշխում է ծեծը, փալախան, «պսլարուն վարոցը»: Դպրոցները*

---

[43] *ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., ը. 2, գ. 65, եջ 30-35:*
[44] *Նույն տեղում:*
[45] *Ա. Ալպոյաճեան, Մինաս Չերազ, Գահիրե, էջ 33-34:*

դտնվում են անկանոն շենքերում, «ապականեալ օդերու մէջ», առանց պատուհանի և բնական լույսի, չունեն դրասեղաններ և նստարաններ: Դասավանդումը տարվում է անծրագիր, բացակայում է միասնական ընթերցարանը, իսկ ուսուցիչները՝ «անգետ իրենց պաշտոնին և անկիրթ»: Սրվանձտյանցը պատկերավոր լեզվով պատմում է Ամասիա քաղաքի իգական վարժարանի մասին, որի վարժապետը «այլանդակ դեմքով, խառնած մազերով, բոբիկ, պատմուճան ի ձեռին» մեկն էր: «Քահանա է, ըսին, և աղջկանց վարժապետ, որ ոչ քահանա, և ոչ մարդ կնմանէր»: Նա փոխանակ զբաղվելու իրեն վստահված աշակերտների դաստիարակությամբ, շաբաթական տաս փարա է վերցնում ամեն մի երեխայի ծնողից և հատկացնում խմելու:[46] Սրվանձտյանցը խարազանում էր ծնողներին նման անձնավորությանը ուսուցիչ նշանակելու համար: Նույն առիթով նա դատապարտում էր սեբաստացիներին: Նման կացություն էր տիրում նաև Մալաթիայում. ուսուցիչը դասավանդում էր տաճկերեն, հայերեն, թվաբանություն, կառավարիչ էր և տնօրեն, առաջնորդարանի գրագիր և ուներ այլ պաշտոններ: «Ո՞վ կրնար դատել զինքն, թե իրավ այսքան բանգէտ էր կամ բան մը չգիտեր. իրեն կըսեին՝ բավական ես մեզի, դու ամեն բան գիտես, ամեն բանի կարող ես»:[47] Կային վայրեր, որ բոլորովին վարժարան չունեին, որովհետև գործիչներն էին պակաս՝ «զգացմունք արթնցնելու համար քարոզող և գործող ալ չկար»: Արևմտյան Հայաստանում այդ համատարած խավարի մեջ Սրվանձտյանցը միայն փոքրիկ լուսավոր կետեր է նշմարում. դրանք էլ երբեմն խամրում են թույլ կառավարության հալածանքների հետևանքով:

«Թորոս աղբարի» հեղինակը ուրախությամբ նշում է Սեբաստիա քաղաքի «Թարգմանչաց ուսումնարանի» ավագ վարժապետ Թադևոս պատվելի Կյուրեղյանի, Հակոբ Մեսիայանի անունները: Նույն վարժարանի «երկրորդական» ուսուցիչները ևս կարող էին «յառաջանալ և կատարելագործել իրենց պաշտոնը, եթե լիներ մանկավարժական կամ նոր և իրական դրությամբ

---

46 «Թորոս աղբար. Հայաստանի ճամփորդ» (այսուհետև՝ Թորոս աղբար), հ. 1, Կ. Պոլիս, 1879, էջ 52-53:
47 Նույն տեղում, էջ 310:

վարժարանները բարեկարգել գիտցող տեսուչ մը»:[48] Առանձնապես գովեստով է արտահայտվում Սրվանձտյանցը Թոքաթի «Վարդանանց» վարժարանի ուսուցիչ Փասպանյանի և տեսուչ Փորթուգալյանի մասին: Վերջինս «շատ եռանդ ու քրտինք թափեր էր»՝ նրա տեսչության օրոք Թոքատը «նախանձելի քայլեր առեր էր ազգային ոգվոյն և ժամանակի յառաջադիմութեան», բայց քաղաքի «ոսկիով զորավոր անձինք» ամբաստանել են նրան Հայոց թագավորություն վերականգնելու ջանքերի համար և Փորթուգալյանը «կապանոք ի Սեբաստ տարուած էր», դպրոցը փակվել, աշակերտները ցրվել էին:

Արևմտյան Հայաստանի որ վայրում էլ լիներ Սրվանձտյանցը, առաջին հերթին այցելում էր դպրոցները, դեղ ու դարման որոնում, առաջարկություններ անում, ծնողներին քարոզում ընտրել լավ ուսուցիչներ: Անմոռանալի կմնան Խարբերդի սբ. Նշան վարժարանի, Բալուի, Մարզվանի, Արաբկիրի դպրոցների Սրվանձտյանցի նկարագրությունները: Դպրոցների մեծ մասում, երբ նույնիսկ զգուշացվում էր պատրիարքարանի ներկայացուցչի գալստյան մասին, ուսուցչի պատրաստված վիճակն էր «տաքը բոպիկ, փայտ ի՛ ձեռին, ֆալախանը մեջտեղ...այսուհետև գրեթե ամեն տեղերու վարժարանները թե գրեմ և թե չգրեմ, պետք է գիտնալ, թե այս տանջարանները կան ու կան. և ամեն տեղ կ՚ըստիպվեի ծանր դիտողութիւն ընել վարժապետաց, թե՝ ինչպես փայտով դաստիարակեալ մանուկն մարդ չէր լիներ, և թե՝ ի՞նչ էր իրոք կրթութիւն տալու կերպն»:[49] Դրանից բխող հետևությունը մեկն էր՝ «իսկ վարժապետները ո՞վ կրթեր»: Ամենուրեք Սրվանձտյանցը զգում էր ուսուցիչների փաստ պատրաստվածության, որակյալ մանկավարժների մեծ կարիքը:

Դպրոցների ամենամեծ թերություններից էր միասնական դասագրքերի բացակայությունը: Միևնույն դասարանում ուսանում էին գրաբար և բողոքականների աշխարհաբար ավետարաններով, հին աշխարհագրությամբ, սուրբ գրքերի պատմութ-

[48] Նույն տեղում, էջ 143:

[49] Նույն տեղում, էջ 20-21:

յամբ: Ամենուրեք Սրվանձտյանցն առաջարկում էր միասնական, միօրինակ ընթերցարան հաստատել ողջ դասարանի համար:

Գ. Սրվանձտյանցի ուշադրությունն առանձնապես բևեռվում է իգական վարժարանների վրա, որոնք ավելի անմխիթար վիճակում էին, քան արականները: Այսօրվա աղջիկը վաղվա մայրն է, գրում էր Սրվանձտյանցը: Մեծ է կնոջ դերն ընտանիքում, նա է երեխաների հիմնական դաստիարակը: Տղամարդը մեծ մասամբ հեռու է երեխաներից: Փաստորեն հայ ժողովրդի ողջ ապագան, ազգության հույսը՝ մանուկ սերունդը, անխզելիորեն կապված է կնոջ հետ: Այդ պատճառով էլ ամենից առաջ պետք է լուսավորել նրան, կանոնավորել իգական վարժարանները, իսկ այնտեղ, ուր չկան դրանք, բացել և ընդունել որակյալ մանկավարժների:

Սրվանձտյանցը խորհում է դպրոցների վիճակը բարվոքելու, ուսուցման նոր ծրագրեր մտցնելու մասին: Այդ դիտողությունները վերաբերում էին ոչ միայն գավառի դպրոցներին, այլև Կ. Պոլսին. «Ներկա վարժարանները բարեկարգելու մեծ պէտք ունին, որոնցմով օգտակար աշակերտներ կրնան ընծայել ազգին, մանաւանդ աղջկանց դաստիարակութեան վրայ ուշ դարձնելով, հոդ պետք է տանիլ ընտիր ուսուցիչներ և լավագոյն մեթոտներ հաստատել, որոց պակասութեամբն է միայն որ մեր վարժարաններ անպտուղ կը մնան թե՛ գավառներ և թե՛ Պոլիս»:[50] Ինքը, Սրվանձտյանցը, եղել է ժամանակի ընտիր ուսուցիչներից մեկը: Կ. Պոլսի վարժարանները հաճախ էին նրան ուսուցչության հրավեր ուղարկում: Ա. Արփիարյանի արտահայտությամբ, նա «փնտրուած» ուսուցիչ էր: Սակայն հայրենասեր գործիչը միշտ էլ հրաժարվում էր մայրաքաղաքի համեմատաբար հեշտ ու հանգիստ կյանքից: Նրան ձգում էին հայ գավառները: Սրվանձտյանցի ուսուցչական կարողությունների մասին են վկայում Խ. Մալումյանը[51] և Հ. Աճառյանը:[52]

Անձնվեր մանկավարժը ձեռնամուխ է լինում նաև մանուկների համար նոր դասագրքերի ստեղծմանն ու հրատարակությանը: 1886 թ. լույս է տեսնում երկու մասից բաղկացած

[50] Նույն տեղում, էջ 280:

[51] «Մշակ», 1892, N 145-146

[52] Հ. Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան,1967, էջ 100:

նրա «Նոր ընթերցարանը», որը «շատ տեղերն լավ ընդունելութիւն գտավ և շնորհակալութեան գրեր ալ ստացա ուսուցիչներեն»: Ընթերցարանի նախաբանում հեղինակը պարզում է իր նպատակադրումը. «Ընտել բառերով, պարզ ոճով ու զվարճալի եղանակով շինուած այս հայկական ընթերցարանը կհուսամ... կրթե ու սիրելի անե նոցա (հայ մանուկներին-Է.Կ.) Հայաստանի հայոց ընտանեկան կենցաղավարութիւն և հայրենի երկրին գեղեցկութիւն ու սովորութիւն, որոց նկարագրութիւն ըստ մասին կկարդա այստեղ»: Ուրեմն, մանկան ընթերցարանը պետք է լինի ոչ թե ավետարանը (գրաբար, թե աշխարհաբար) կամ սուրբ գրքերի պատմությունը, այլ առաջին հերթին մանուկը պետք է ծանոթանա հայրենի երկրի գեղեցկությանը: Մեծ կարևորություն ունի այբբենարանի որակը մանուկների միտքը կրթելու, դաստիարակելու համար: Դա դաստիարակության, ուսուցման հիմքն է, որն անհրաժեշտ է ամուր դնել. «Բուն այբեն սկսելու է արդեն ուղղութիւնը, որուն մեր ազգը կարևորութիւն չտար. և չտալով ալ կարող չինիր զինքն ուղղել. չուղղելով կարող չինիր յառաջ ընթանալ: Այո՛, ամեն բանը սկիզբեն, այբեն, մանուկեն, առաջին սրահեն ուղղելու ենք: Դասագրքեր պետք են մանուկներում պատշաճ, հասկնալի և սիրելի բառերով և առարկաներով»:[53] Դասագիրքը պետք է հուզի մանկան հոգին, խոսի նրա սրտից, նրան ծանոթ առարկաների մասին. «Յուրաքանչյուր գեղին, քաղաքին, գավառին տեղագրութիւնները, անոնց մոտ եղած լեռան, բլրին, ձորին, պրակին, վտակին, արտերում, մարգերում, շենքերում, բերդերուն և ավերակներուն անունները, տեղերն ու ձևերը ծանոթացնել մանկան»:[54] Դասագիրքը պետք է երեխային դաստիարակի հայրենասիրության ոգով. սեր դեպի ծնողները, դեպի հայրենիքը, մեր նախնիները: «Ասոնք ոչ միայն զուարճալի և պիտանի կը լինին ուսանողին, այլև նոր ու մեծ լույս կուտան մեր հայկական լեզուին, մեր ազգային հնագիտութեան և պատմութեան, որք լի են թիւր հասկացողութեամբ»:[55] Ման-

[53] «Գրոց և բրոց», Կ. Պոլիս.1910, էջ 14. (այսուհետև մեջբերումները նույն հրատարակությունից):
[54] Նույն տեղում, էջ 15:
[55] Նույն տեղում:

կանր հասկանալի լեզվով, «մանկտվոյն հետ մանկտի եղած» Սրվանձտյանցը «Նոր ընթերցարանում» գրել է այն առարկաների և թեմաների վերաբերյալ, որոնք «տեսանելի, լսելի և զգալի են» առավել հայ մանուկներին: Ընթերցարանի համեմատությունը ժամանակի այբբենարանների հետ ցույց է տալիս Սրվանձտյանցի կազմած դասագրքի առավելությունը մյուսների նկատմամբ: Տառաճանաչությունից հետո երեխան աստիճանաբար ծանոթանում է իրեն շրջապատող առարկաներին, ընտանի կենդանիներին, դրանց դերին, տարվա եղանակներին, դրանց կարևորությանը, արհեստներին, երկրի ընդերքին, դրա օգտագործմանը: Հետզհետե անցում կատարելով պարզից բարդը, դասագիրքը լայնացնում է երեխայի մտահորիզոնը, նրա մեջ զարգացնում ինքնուրույն դատելու ունակություն: «Նոր ընթերցարանի» գտած ջերմ ընդունելությունն էր պատճառը, որ 1870 թ. Խրիմյանը պատվիրում է իր սիրելի սանին. «Բանի մի դասագիրք պատրաստել պետք է և այն կուզեմ ձեր ձեռքով լինի և ձեր գրչով»:[56] Խրիմյանի և Սրվանձտյանցի նամակագրությունից իմանում ենք, որ վերջինս զբաղվել է նաև «Հայոց պատմություն» դասագիրք շարադրելով: Հայ ժողովրդի պատմությունը գրելը, մանավանդ սերնդին մեր ժողովրդի բազմադարյան գոյապայքարին ծանոթացնելը և ուսուցանելը եղել է ժամանակի հրամայական պահանջը: Այդ պատճառով էլ Խրիմյանը պատվիրում է Սրվանձտյանցին մանրամասն հաշվետվություն տալ իրեն պատմության դասագրքի և նրա շարադրանքի վիճակի մասին: Ըստ երևույթին, լուսավորիչ գործիչը ի վիճակի չեղավ վերջացնելու և տպագրության հանձնելու դասագիրքը. այդ մասին փաստաթղթերում այլևս տեղեկություն չենք գտնում: Ժամանակի և հանգամանքների բերումով Սրվանձտյանցն իր ունակությունները առավել օգտագործեց այլ ուղղությամբ և միայն ազատ ժամանակը տրամադրեց դասագրքերին ու գրականությանը:

---

56 ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., ր. 2, գ. 436:

* * *

*Գ. Սրվանձտյանցը պատասխանատվության մեծ զգացումով է մոտեցել գրականությանը՝ քաջ գիտակցելով ժամանակաշրջանի պահանջներն ու առաջադրած խնդիրները: Ըստ նրա, գրականությունը պետք է «ճառագայթի նման» լուսավորի մարդկանց մտքերը, մեծ դեր կատարի հայապահպանության համար մղվող պայքարում: Գրականությունը, Սրվանձտյանցի կարծիքով, պետք է ունենար որոշակի քաղաքական նպատակասլացություն: Հայրենանվեր գործիչը կոչ էր անում փոխել «Մասնաց սրինգների» կտրտված լարերը, դրանց վրայից սրբել հնության փոշին և հնչեցնել արդիական մեղեդիներ. ժողովրդին ծանոթացնել իր անցյալին, որպեսզի իմանա, թե որտեղից է եկել և ուր է գնում, ներշնչել նահապետ Հայկի օրինակով պայքարելու բոլոր ժամանակների բելերի դեմ՝ հանուն ազատության:*

*Սրվանձտյանցի առաջին գործերը «Անկումն Արշակունեաց հարստութեանց» և «Շուշան Շավարշանա» պիեսներն են, որոնք ժամանակակիցներին փոխադրելով դեպի մեր ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող անցյալը, չորրորդ և հինգերորդ դարերի օրինակով ոգեկոչում են պայքարի՝ հաղթելու անհուն վճռականությամբ: Այդ պիեսները բեմադրվել են Տարոնում և Վասպուրականում: Չնայած գեղարվեստական թերություններին, դրանք հաջողություն ունեցան, որովհետև քարոզում էին ժողովրդին. «Հրաշալի է արդարև մեռնելով հաղթել, կենալով քաջալերուել, մահով անմահանալ, զոհուելով փրկուել»: Վերամշակելով Եղիշեի պատմության դրվագներից մեկը, «Շուշան Շավարշանա» պիեսում հեղինակը հետապնդում էր մի նպատակ. միավորել ու «հայաբար» ապրելու ոգեկոչել ընդարմացած ժողովրդին: Սրվանձտյանցը խորապես գիտակցում էր այդ ստեղծագործության թերությունները: Պիեսի առաջաբանում նա խոստովանում էր, որ «Շուշան Շավարշանան» «արուեստով չէ գրված, ոչ ձևոց և ոճո ընտրութիւն և խտրութիւն է եղած»: Հեղինակը տարակուսում է նույնիսկ ստեղծագործության ժանրային անվան վերաբերյալ՝ դրամա է այն, թե՞ ողբերգություն:*

*Պիեսը բաղկացած է երեք մասից, որոնք փաստորեն գործողություններ չեն: Հաջորդում են երկխոսությունները: Ավելի գերակշռողը երկարաշունչ մենախոսություններն են, որոնցում գործող անձինք արտահայտում են իրենց տվայտանքները, փիլի-*

տափայում չարի ու բարու, առաքինության ու վատության, հայրենասիրության և դավաճանության, ժողովրդի դերի, ազատագրական շարժումների, ժողովրդին պահպանող գործոնների մասին: Հերոսները ոչ թե լիարյուն անձնավորություններ են, այլ հեղինակի գաղափարների խոսափողները: Նրանք իրարից չեն տարբերվում բնավորության առանձնահատկություններով: Նրանց տարբերանշանը հայրենիքի նկատմամբ ունեցած վերաբերմունքն է՝ հայրենասեր կամ հայրենադավ. գործում են միայն Վարդանի և Վասակի կողմնակիցները: Հեղինակի համար չկա մարդկային առավել բարձր զգացում, քան հայրենասիրությունը: Նրա նպատակը չի դառնում գրական լիարժեք կերպարներ ստեղծելը: Այդ բոլորը նա նախօրոք զգուշացնում է ընթերցողին. «Դերք և դերասանք թերի են և առանց կանոնի, նոյնպես և արարուածները. կապն ու հանգոյցը թոյլ են և բացերյաց. սիրահարի տեսարան երբեք չգար հանդիման: Կրնաս անշուշտ լեզուի և բառերուն ալ դատաստանը դատվիլ»:[57] Ինչպես տեսնում ենք, հեղինակն իր ստեղծագործության ամենից անաչառ քննադատն է և գնահատողը: Չնայած այդ գործը նա չէր համարում «թատերական բեմական բան մը», սակայն բեմադրվել է հաջողությամբ: Դրա գաղտնիքը սփռված արտահայտված գաղափարների մեջ էր: Բավականին սրամտափանց ակնարկով հեղինակը ընթերցողին ցույց է տալիս հինգերորդ դարի և իր ապրած ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական համանման վիճակը և Վարդանանց օրինակով ազատագրական պայքարի ոգեշնչում ժամանակակիցներին:

Իր ստեղծագործական ուղին Սրվանձտյանցը չշարունակեց «Շուշան Շավարշանայի» հետքերով: Նա մտածում էր ուժերը գործադրել այնպիսի բնագավառում, որտեղ ավելի շատ օգուտ կարող էր տալ: Տարբեր առիթներով նա գանգատվել է, որ հասարակական աշխատանքներն իրենից ավելի շատ ժամանակ են խլել, քան կարողացել է նվիրել գրական գործունեությանը: Բայց հենց այդ աշխատանքները, որ կատարել է Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում, մեծապես օժանդակել և առատ նյութ են մատակարարել նրան: Այդ այն ժամանակներն էին, երբ արևմտահայ գրականությունը սնվում և ուժ էր ստա-

---

57 «Շուշան Շավարշանա», Կ. Պոլիս, 1875, էջ 21-22:

նում սոսկ Կ. Պոլսի և Իզմիրի գաղթօջախներում: «Գրական գռեհկություն» էր համարվում, երբ մեկը խոսք էր բացում խրճիթներում ապրող գեղջուկի մասին: Դրան հակադրվելով մի հայ վարդապետ (իսկ վարդապետը պարտավոր էր լինել ավելի ավանդապաշտ, քան մյուսները) գրիչ է վերցնում ու նկարագրում այդ մոռացվածն ու արհամարհվածը: Գավառը, հայ գյուղացին իր տառապանքներով, հույզերով, հույսերով ու մտորումներով դառնում է գրականության նյութ: «Սրուանձտյանց եղավ այն ովստաւոր ճամփորդը, որը շրջեցավ քաղաքե-քաղաք, գյուղե-գյուղ, տեսնելու և զգալու մեր հայրենի աշխարհը մոտեն, լսելու մեր ժողովուրդը իր ամենեն մտերմիկ արտահայտութեան մեջ. ժողովելու անոր մեջ երկնուած և դարերու իմաստութեան կնիքը կրող հեքիաթները, առակները, հանելուկները, նկարագրելու անոր նիստն ու կացը, լացն ու ցնծությունը, մեկ խոսքով այն բոլորը զորս ժողովրդի մը Ֆոլկլոր կկոչենք»:[58] 1874 թ. լույս տեսավ Սրվանձտյանցի առաջին ժողովածուն՝ «Գրոց ու բրոցը»: Առաջաբանում նա «Գրոց ու բրոցը» ընծա էր համարում Հայաստանից, որի «լեռները, հովիտները, ձորերը, գետերը, շեները, ավերները, հողմերը, աստղերը, ամենքն ալ խորհրդավոր անուն մը ունեցած են և այդ ամեն մեկ անունը կպարունակի իւր մեջ անձի մը կամ անցքի մը պատմութիւն, թե առասպել համարուի այն առ այժմ, և թե իրական...»:[59] Ժողովածուն մի գողտրիկ փունջ էր հայ ժողովրդական ավանդությունների ու զրույցների, որոնք դարեր շարունակ պատմվելով և վերապատմվելով, եկել հասել էին XIX դար: Իր բազմադարյան գոյության ընթացքում բազմաթիվ արհավիրքների էր ենթարկվել հայ ժողովուրդը: Ավերվել էին շեն քաղաքներն ու գյուղերը, հրի ու սրի մատնվել նյութական և հոգևոր մշակույթի հուշարձաններ, բնակիչների հետ գերեվարվել էին նաև մագաղաթե մատյանները: Եթե մագաղաթները գերի էին ընկել, ազատ էր մնացել ժողովրդի միտքը: Մագաղաթներից առավել տոկուն էր «մատեան մը՝ բնակչաց բերանացի ավանդութիւնք, կամ վէպք

[58] «Էջեր հայ գրականութենեն», Հ. Ա., էջ 6:
[59] «Գրոց ու բրոց», էջ 4:

և զրույցք»: Ուրեմն, ժողովրդի պատմության լուսաբանման, նրա ազգային ինքնագիտակցության արթնացման, ինքնաճանաչման և բացահայտման առումով մեծ դեր ուներ խաղալու ժողովրդական բանահյուսությունը:

Անհրաժեշտ էր դիմել ժողովրդին, «վեպք ու զրոյցք» համարված բերանացի ավանդություններից ստեղծել Հայ ժողովրդի վաղնջական պատմությունը: Ահա բանահյուսությանը դիմելու առաջին դրդապատճառը:

Նկարագրելով Հայ ժողովրդի անցած փշեպսակ ուղին, երբ փորձեր են եղել «խլելու այս ազգի արմատը այդ արտեն, կամ փոխելու այն Հողի Հատկութիւնը, որ այլևս չբուսցնէ զՀայ և չերևի Հայութեան նշոյլ մը». Սրվանձտյանցը միաժամանակ ցույց է տալիս մեր ժողովրդի անսահման կենսունակությունը, ամենադժնի պայմաններում ծաղկելու և պտղաբերելու նրա ունակությունը: Այդ կենսունակության զարմանքի ամենամեծ բաժինը կապված է Հայրենի լեռնաշխարհի, Հարազատ Հողի, Հայրենական տան Հետ: Ժողովածուում Հեղինակն անդրադառնում է Հայ ժողովրդի խոսակցական լեզվի, մասնավորապես Տարոնի և Վասպուրականի բարբառներին: Համեմատելով գրական և գավառական լեզուները, Սրվանձտյանցը նշում է երկրորդի ճկունությունն ու Հարստությունը: Ապացուցման Համար բերում է բազմաթիվ փաստեր: Քննադատելով իր ժամանակի այն «գրագետներին, որոնք Հայոց լեզուն աղքատ էին Համարում նոր ժամանակների Հասկացությունները ու գաղափարներն արտահայտելու Համար, Սրվանձտյանցը մատնանշում է դեպի ժողովուրդը գնալու, նրանից ուսնելու և նրանով Հարստանալու ուղին: «Մենք կը շուարինք տեսնելով նավի մը կազմուածքը այնքան մասունքներն և տեսակներն, որոց բառարանը նավապետն ու նավաստիքն են...Գնա նաև Վանա Ափանց գյուղը, այն տեղի գեղացի նավավարներուն մոտիկ արա՝ և տե՛ս ու ափի՛ր բառեր»:[60] Հարուստ է նաև Հայ երկրագործի բառարանը. Հոտաղն ու մաճկալը գարնանը Հողը Հերկելու, ցանելու, ամռանը՝ Հնձելու, կալսելու, սայլով կրելու, աշնանը՝ ամբարելու, դիզելու ժամանակ երկրագործական գործիքների ինչ բազմազան անուններ են գործա-

[60] Նույն տեղում, էջ 16-17:

*ծում, որոնք բոլորն էլ հայերեն են: Հայերեն են նաև Հայոց դաշտերում, մարգագետիններում, լեռներում բուսած բազմատեսակ ծաղիկների, բանջարեղենների, ծառերի, բուսական աշխարհի այլ ներկայացուցիչների անունները, որոնց վրա հեղինակը հրավիրում է բառարանագետների ու բուսաբանների ուշադրությանը:*

*Ժողովածուում ամփոփված են Տարոնի և Վասպուրականի գավառների լեռների և հովիտների, շենների և ավերակների վերաբերյալ ժողովրդի մեջ պահպանված պատմա-առասպելական ավանդությունները, որոնք ունեն ճանաչողական և գեղարվեստական մեծ արժանիքներ: Դրանցից են՝ Ծովասարի և Բինգյոլի ծաղիկների ու աղբյուրների մասին պահպանված զրույցները, Օձ քաղաքի, Բելի ու նրա ուղտապանների, արալեզների, Սիփան սարի ավանդությունները, Շիրինի և Աղնավուրի, Կայենի ծառերի, Մշո դաշտի և հեթանոսական աստվածուհի Աստղիկի լեգենդները, Կաղ դևի, Կոնկա վանքի, Գայլ գետի, Սուրբ Թոնկի աղբյուրի ավանդապատումները և այլն: Հավաքելով և գրի առնելով ժողովրդական բանավոր ստեղծագործության այդ նմուշները, Սրվանձտյանցը միևնույն ժամանակ դառնում է դրանց առաջին գնահատողը, հանդես բերելով բանագիտական ակնառու ունակություններ: «Վեպերը, որը հորինուած են իբրև խաղ, աշուղի ոճով և եղանակով, կամ իբրև հեքիաթ, արձակ ասացուածքով...շատերն ալ կը պահեն իրենց մեջ ընտիր և բարձր գիւտ ու նիւթ, բանաստեղծութիւնը, դիցաբանութիւնը, կրօնական օրհներգութիւնը, սիրահարական տարփանաց բոցն ու անոր հետեւանքն եղած աղետն ու կսկիծը, որոնց նմանը մինչև այսօր միեւնոյն սերունդ մարդկութեան, անմոռանալի և բավական բացահայտ իմաստներով պահած ու շարունակած են իրենց մեջ»:*[61]

*«Գրոց ու բրոցը» նյութ է մատակարարում ոչ միայն բանագետներին, այլև մեծ հետաքրքրություն է ներկայացնում ազգագրության և հնագիտության համար: Առանձնակի ուշադրության են արժանի հայերի հեթանոսական ծեսերին և հավատալիքներին նվիրված ակնարկները, օձերի և վիշապների, հար-*

---

[61] *Նույն տեղում, էջ 24:*

սաննկան արտադրությունների, համբարման ձևի, վիճակահա-նության, Նավասարդի, վարդավառի նկարագրությունները: Հնա-գետների համար հետաքրքիր են Հայաստանի տարածքում գտնվող քարայրների մասին եղած դիտողությունները: Այդ այրե-րի ուսումնասիրությունը Սրվանձտյանցին բերում է այն եզրա-կացության, որ դրանց մի մասը գոյություն է ունեցել դեռևս նախնադարյան շրջանից և հին քարի դարի մարդու համար ծա-ռայել է իբրև կացարան, իսկ մյուս մասն արդյունք է միջնադա-րում կատարված «արշավանաց ու ասպատակութեանց», երբ տեղի բնակիչները իրենց «կոյքը և ստացուածքը՝ շատ անգամ ալ կանայք ու մանկտիք ապաստան դրած են հոն, ու իրենք դիմեր են ի ճակատամարտ»:[62] Իբրև ապացույց, Սրվանձտյանցը հենվում է հայ պատմիչներից քաղած վկայությունների վրա:

Մանրամասն տալով Տարոնի և Վասպուրականի գավառ-ների լեռների, դաշտերի, գետերի տեղագրությունը, նկարագ-րությունը, Սրվանձտյանցը մի ամբողջ ծրագիր է առաջարկում գիտնականներին, նշելով, որ յուրաքանչյուր գավառ «դատ-դատ անձանց գործ է ստորագրել, և դատ-դատ մատեան կազմել»: Նա իրավացիորեն նկատում է, որ Հայաստանում իրար են խառնվել հեթանոսականն ու քրիստոնեականը, մեհյանն ու տա-ճարը, դոհն ու մատաղը, կուռքն ու խաչքարը: Ավանդապահ ժողովուրդը չի թողել, որ անհետ կորչեն «հնոց զրոյցները, ծե-սերն ու արարողութեանց պատմութիւնները, առասպելները»: Հնագետների ու ազգագրագետների խնդիրն է զատել այդ բո-լորն իրարից, որոշել ամեն մեկի տեղն ու դերը: «Գրոց ու բրո-ցի» ամենամեծ արժանիքներից մեկն այն էր, որ նրան իբրև հավելված լույս տեսավ հայ ժողովրդական էպոսի՝ «Սասունցի Դավթի» առաջին պատումը «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» խորագրով: Հայ ժողովրդական էպոսի գոյության մասին իմացել են ժամանակի մտավորականները: Այն բերանացի պատմվել է ժողովրդի մեջ: Ստեղծված լինելով Սասունում, Տա-րոնում, այնուհետև այն պատմվել է Բաղեշի կողմերում, տա-րածվել Խլաթում և Բուլանըխում, այնտեղից էլ անցել հյուսի՝

[62] Նույն տեղում, էջ 58:

Արճեշ և Կաղզվան, ապա նաև Ալաշկերտ և Այրարատ: Ռշտունիքի, Շատախի, Մոկաց կողմերում էպոսն ավելի կենդանի է մնացել: Վանում կապվել է ՄՀերի դռան Հետ, Աբաղայի դաշտով անցել Պարսկահայք՝ Խոյի, Սալմաստի և Մակուի կողմերը, ուր ևս ծավալվում են վեպի գործողությունները: Իր մեջ պարունակած ազգային Հատկությունններով վեպը տարածվում է Հայ ժողովրդի բոլոր Հատվածներում և դառնում Համազգային:

Հանգամանքների բերումով անընդՀատ պաշտոնավարելով Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում, Սրվանձտյանցին ևս լուրեր են Հասնում Հայ ժողովրդական վեպի գոյության մասին: Նա երեք տարի շարունակ Հետամուտ է լինում «ձեռք բերելու», գրի առնելու ժողովրդական ստեղծագործության այդ գոՀարը, սակայն ամբողջական իմացողներ չկային: Համառ որոնումները տալիս են իրենց արդյունքը: 1873 թ. Հունիսին Մշո դաշտի Առնիստ գյուղի երեսփոխան Կրպոն ներկայանում է Գաբեգին Սրվանձտյանցին և պատրաստակամություն է Հայտնում՝ պատմելու իր իմացած պատումը: Կրպոյի Հաղորդած տվյալների Համաձայն, իր վարպետն իմացել է վեպը շատ ընդարձակ և պատմել է այն, մեջընդմեջ երգելով: Նա ունեցել է երկու ուշունցի աշակերտ, որոնք կատարյալ սովորել էին պատմությունը: Կրպոն իր մասին Հաղորդում էր, որ երկար ժամանակ պատմած չլինելու պատճառով շատ կտորներ մոռացել է: Սրվանձտյանցը երեք օր պաՀում, կաղդուրում է Կրպոյին, Հետո գրի առնում նրա պատմածը կատարյալ Հարազատությամբ: Այժմ, երբ գրի են առնված էպոսի մեկուկես Հարյուրից անցնող պատումները, Սրվանձտյանցի գրի առածն ունի իր ուրույն տեղը: Այն աչքի է ընկնում կատարելությամբ, գրառման Հարազատությամբ: Պատումի Համար գրված սեղմ առաջաբանը բացաՀայտում է Սրվանձտյանցի բանասիրական ունակությունները: Նա Հմտությամբ զատում է վեպում գոյություն ունեցող պատմական-իրական և առասպելական տարրերը: «Կը տեսնուին այս ասացուածքին մէջ այնպիսի կտորներ, որ պատմագրութեանց կը Համաձայնի, բայց և կտորներ ալ կան, որ բոլորովին ժամանակագրութեան, տեղեկագրութեան, և ամեն Հանգամանաց Հակա-

ռակ են»։[63] Նա իրավացիորեն զատում և տարբերակում է իրար խառնված նախաքրիստոնեական և քրիստոնեական տարրերը, գտնում, որ ճիշտ չէ Սանասարի և Աղրամելիքի ժամանակ Հայերին խաչապաշտ ներկայացնելը։ Միանգամայն իրավացիորեն ողջ զրույցը, առավել ևս Դավթի կյանքը նա համարում է միջին դարերին վերաբերող իրադարձություն։ Բարձր է Սրվանձտյանցի տված գնահատականը ժողովրդական վեպին. «Ամբողջ այս զրույցը նկարագիր է քաջության, ընտանության, բարեպաշտության և պարզ ու անխորամանկ հարաբերության Դավթին՝ իր սիրուհվոյն հետ, յուր ախոյանին հետ»։[64] Ուշադրության արժանի են Սրվանձտյանցի տված մեկնաբանությունները էպոսում հանդիպող աշխարհագրական անունների վերաբերյալ։ «Սասունցի Դավթին» նվիրված իր մեծարժեք աշխատության մեջ Մանուկ Աբեղյանը բազմիցս վկայակոչում է Սրվանձտյանցի բացատրությունները Սև Քարի, Ծովասարի, Մարութա սարի մասին։[65]

Գ. Սրվանձտյանցը բարձր է գնահատում ժողովրդական էպոսի կուռ ու կատարյալ ոճը, ժողովրդին հատուկ չափազանցությունները։ Դավթի «ուժի անսահմանությունը և տիեզերաց անհունությունը» ցույց տալու համար ժողովուրդը ասում է, թե Ջորջիկի ձեռքից խլած և դեն շպրտած գուրզը մինչև օրս էլ դեռ թռչում է։ Սրվանձտյանցը հետազոտողներից առաջինն էր, որ «Սասնա ծռեր» վեպը համարեց ժողովրդի, առավելապես գյուղացիության կյանքի արտացոլումը։ «Այս գրուածքի մեջ կը տեսնեն հետաքրքիրն՝ գեղջկական կյանքի հանդամանքները. Աբամելիքի մահվան համար Սասունցվոց սուգը. Քեռի Թորոսի ուխտը. «Հացն ու գինի, տերն կենդանի» երդումն, հպատակեցնելու համար թուրի տակեն անցնելու սովորությունը։ Դավթի և իր հորթարած ընկերին մտերմությունը»։[66] Սրվանձտյանցը շեշտը դնում է ժողովրդի մեջ արմատացած սովորույթների վրա և դրանց միջոցով ապացուցում , որ «Սասունցի Դավիթը» ոչ թե տերերի ու իշխանների կյանքի արտացոլումն է, այլ՝ «գեղջկական կեանքի հանդամանքները»։ Այդ թեզը հետագայում մշակ-

---

63 Նույն տեղում, էջ 82-83։
64 Նույն տեղում, էջ 83։
65 Մ. Աբեղյան, Երկեր, Հ. Ա, Երևան, 1966, էջ 333։
66 «Գրոց ու բրոց», էջ 84։

վեց, խորացվեց և ավելի գիտական ձևակերպում ստացավ Մանուկ Աբեղյանի կողմից. «Վեպը թեպետ և պատմում է Սասունի տերերի մասին, բայց գրեթե ոչ մի ազնվական բան չունի իր մեջ, այլ ազնվական և նույնիսկ թագավոր անվան տակ դուրս են գալիս մեր գյուղացիները: Այն ամբողջապես ռամկական, գեղջկական բնավորություն ունի: Հայ հասարակ ժողովրդի կյանքն ու հոգին ենք տեսնում այնտեղ, նրա նիստն ու կացը պարապմունքը, բարքերը և այլն»[67],-գրել է Աբեղյանը 1908 թ.: Ուշագրավ են Սրվանձտյանցի այն դիտողությունները, որոնք կապված են Մհերի և նրա անունը կրող դռան հետ: Փաստորեն նա Մհերին համարում է «աշխարհի բաղդը դարձնող ու ոսկի բաշխող չաստված մը, գուցե Մհերն ինքն Միհր մեծն լինի, և իր դուռը ուղղակի հարաւու հանդեպ կամ արեւու լինելով՝ պաշտելու պատշաճ»:[68] Հետագայում Կ. Մելիք-Օհանջանյանը «Միթրա-Միհրը «Սասնա ծռերի մեջ» աշխատությունում հաստատեց, զարգացրեց և խորացրեց այդ թեզը:[69]

Ժողովրդական էպոսի հետագա գրառողներից մի այլ հատկանիշով ևս տարբերվում է Գարեգին Սրվանձտյանցը: Մ. Աբեղյանը քննադատելով բանահավաքներին, իբրև թերություն է արձանագրում այն փաստը, որ վերջիններս չեն նշել, թե ումից են գրառել վեպը, որ վայրից էր բանասացը և այդ հանգամանքն ինչպես է ազդել պատմելաձևի վրա: Էպոսի առաջին պատումի հայտնաբերողը ոչ միայն մանրամասն գրում է Առնիստ գյուղի բնակիչ Կրպոյի, այլև նրա վարպետի և ուսուցչի երկու աշակերտների մասին: Նա մեծ հմտությամբ ցույց է տալիս նաև, որ բանասացի լեզվում օգտագործվում են Բաղեշի բարբառում հանդիպող բառեր: Դա պատճառաբանվում է այն հանգամանքով, որ Առնիստ գյուղը չնայած պատկանում է Մուշին, բայց ավելի մերձ է Բաղեշին, նույն լեզուն ունեն նաև Խութի և Ջուխուրա հայերը: Այդ բոլոր փաստերից ընթերցողը

---

[67] Մանուկ Աբեղյան, նշվ. երկր, էջ 479-480:
[68] «Գրոց ու բրոց», էջ 87:
[69] Կ. Մելիք-Օհանջանյան, «Միթրա-Միհրը «Սասնա ծռերի մեջ», տե՛ս «Գրական, բանասիրական հետազոտություններ», գիրք 1, Երևան, 1946, էջ 270-327:

Հստակ պատկերացում է կազմում էպոսի այդ պատումի տարածման վայրերի մասին:

Էպոսի առաջին պատումը մեծ խանդավառությամբ, հիացմունքով և զարմանքով ընդունվեց ժամանակի հայ մտավորականների կողմից: Պետերբուրգից և Մոսկվայից, Թիֆլիսից ու Վիեննայից, Պոլսից ու Զմյուռնիայից նրանք շտապեցին ողջունել հայրենասեր մտավորականի գիտական սխրանքը: Ժամանակի ականավոր մանկավարժ Սեդրակ Մանդինյանը, գիտակցելով էպոսի հայրենասիրական մեծ նշանակությունը մատաղ սերնդի դաստիարակման գործում, պատումը վեր է ածում արևմտահայերենի և մտցնում դասագրքերի մեջ «Ազգային դիւցազնական աշխարհ» խորագրով: Գրիգոր Խալաթյանը Պետերբուրգից Սրվանձտյանցին հայտնում է իր և Մկրտիչ Էմինի՝ ժողովրդական վեպի հանդեպ ունեցած անսահման հետաքրքրությունը, միևնույն ժամանակ հաղորդելով Էմինի պատրաստակամությունը՝ իր վրա վերցնել հրատարակչական բոլոր ծախսերը «Սասունցի Դավթի» նման արժեքավոր նյութեր տրամադրելու դեպքում: Նրանք հորդորում էին Սրվանձտյանցին որոնումները շարունակել Սանասարի, Ձենով Օհանի, Խոր Գուսանի մասին պատումներ հայտնաբերելու ուղղությամբ, երազում գտնել պատումի շարունակությունը: Միևնույն ժամանակ Խալաթյանն արտահայտում էր իր և ժամանակի մտավորականների բարձր գնահատականը «Սասունցի Դավթի» վերաբերյալ. «Արդեն ընդհանուր կարծիք է դարձել, որ «Դաւիթ Սասունցի» վեպն է հայ ժողովրդական գրականութեան ամենախսեմ ու գերազանց աւանդութիւններից մեկը. Նորա լեզուն՝ կորովի, ամփոփ, նորա ոճը՝ բարձր բանաստեղծական, նորա իմաստը՝ վերին աստիճան հարցասիրական, ուստի նա ամենայն իրաւամբ արդեն գրաւել է ուսումնասիրաց ուշադրութիւնը»:[70] Այդ առաջին պատումը Գր. Խալաթյանը թարգմանում է ռուսերեն և լույս ընծայում «Ժողովրդական Լուսավորության մինիստրության օրագրում»:[71] Էպոսի հայրենասիրական բովանդակությունը օտար ազգերին հաղորդակից դարձնելու, հայ ժողովրդական բանահյուսության այդ մեծարժեք

---

[70] «Համով-հոտով», էջ ԻԷ:

[71] "Журнал министерства народного просвещения", СПб., 1881, ноябрь, стр. 51-58.

ստեղծագործությունը մասսայականացնելու նպատակով Աբգար Հովհաննիսյանը այն թարգմանում է գերմաներեն: «Սասունցի Դավիթը» հետաքրքրում է նաև լեզվաբաններին՝ հայկական բարբառներն ուսումնասիրելու տեսանկյունից: Լեզվաբան Քերովբե Պատկանյանը այդ պատումը այլ նյութերի հետ լույս է ընծայում "Материалы для изучения армянских наречий, вып. II, мушский диалект, (СПб., 1875)" խորագրով ժողովածուում: Վերը նշված փաստերը հավաստում են Սրվանձտյանցի առաջին ժողովածուի աննախադեպ ընդունելությունը:[72]

Ոգևորված «Գրոց ու բրոցի» ջերմ ընդունելությամբ և վայելելով ժամանակի հայկական լուսավորական կենտրոնների բարոյական և նյութական աջակցությունը, նույն՝ 1874 թ. Սրվանձտյանցը հրատարակում է երկրորդ ժողովածուն՝ «Հնոց և նորոցը», որը հիմնականում կազմված է գրավոր աղբյուրներից: Գնահատելով Հայաստանի համարյա բոլոր վանքերում ցրված ձեռագիր մատյանները հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակաշրջանների լուսաբանման գործում, հանդես բերելով պատմաբանին հատուկ սրտացավություն մեր պատմության այդ սրբազան նշխարների հանդեպ, Սրվանձտյանցը ցանկություն է հայտնում. «Իցէ զի ընկերանային բանասերք ազգային կարողագոյնք, որոց գործ և նպատակ լինէր հավաքել և տպագրել տալ զանտիպ մնացեալ մատենագիրս, մեզանմանք միայնակ զի՞նչ մարթեն առնել...»:[73] Ձեռագիր մատյանների և հիշատակարանների նկատմամբ եղած ուշադրությունը և հոգատարությունը հատուկ էր Սրվանձտյանցին իր ողջ գործունեության ընթացքում: «Թորոս աղբարի» մեջ ևս նա անդրադառնում է այդ հարցին, առաջարկելով Կ. Պոլսում ստեղծել մի ընկերություն, որի նպատակը լինեը ձեռագրերի որոնումը, հավաքումը և հրատարակումը: Այդ նպատակով էլ էջմիածնի, Երուսաղեմի, Վեննետիկի,

---

[72] Կովկասյան հնագրագիտական հանձնաժողովին ևս մեծապես հետաքրքրել է Սրվանձտյանցի հայտնաբերած պատումը: Իր ակտերում (AKAK) հրապարակելու նպատակով հանձնաժողովը ամբողջությամբ թարգմանում է էպոսի առաջին պատումին կցված Սրվանձտյանցի առաջաբանը: Նախատեսված ծրագրով այն պետք է լույս տեսներ ակտերի 13-րդ հատորում (Վրաստանի ԿՊՊԱ, ֆ. 416, ց. 4, գ. 27):

[73] «Հնոց և նորոց», էջ 20-21:

Վիեննայի և Արմաշի ձեռագրատների կողքին նա առաջարկում էր Հաստատուն դարձնել Կ. Պոլսի Ղալաթիո մատենադարանը, որը մեծ գործ կարող էր կատարել գավառների Հետ Հարաբերություն պաՀպանելով և նույնիսկ Հեռացող գաղթականություններից ձեռագրեր Հայթայթելով:

Հայոց մատյաններն էլ նույն ճակատագիրն են ունեցել, ինչ Հայ ժողովուրդը: Դրանք էլ տեսել են գերություն ու գաղթականություն: Հայերը գաղթի ճանապարՀին Հազիվ ազատելով իրենց ու մերձավորի կյանքը, փրկել են նաև ձեռագիր մատյանները: Սրտի ցավով է Սրվանձտյանցը պատմում այն մասին, որ Լենկ-Թեմուրը ավարառությամբ Հափշտակել է բազմաթիվ Հայերեն ձեռագրեր: Եվ քանի որ Հայ ժողովրդի պատմությունը լի է բազմաթիվ լենկ-թեմուրներով, ուրեմն, պետք է պատկերացնել, թե ինչ է կատարվել նրա Հոգևոր մշակույթի գանձերի Հետ: Ուստի Սրվանձտյանցը «զուտեներերգեան Հրաշագործութեան» օգնությամբ աշխատում է դրանք փրկել ոչնչացումից, դրանց վրայից սրբել Հնության փոշին, դարձնել ժողովրդի սեփականությունը, քանի որ՝ «գիրք փակեալ կուռք են»:

«Հնոց և նորոց» ժողովածուն ունի աղբյուրագիտական մեծ նշանակություն: Ժողովածուն բաղկացած է Հետևյալ մասերից. Պատմութիւն վասն Դաւթի և Մովսէսի Խորենացւո, Թուղթ Դիոնիսիոսի, Ձեռագիր մատեանք, Բեշե Պոլո: Բեշե Պոլոյին կցված է Սրվանձտյանցի կողմից գրված մի սեղմ առաջաբան, ուր Հանգամանորեն պատմվում է այն ժամանակների մասին, երբ քուրդ ցեղապետները ստեղծել էին կենտրոնական կառավարությունից անկախ իրենց իշխանությունը և իբրև խափիրներ Հպատակեցրել էին տեղի Հայ ու քուրդ բնակչությանը և տուրք էին գանձում նրանցից: Մեծ էր այդ առաջաբանի ճանաչողական և պատմական արժեքը: Գր. Ալիշանյանի Հետ Գարեգին Սրվանձտյանցն այն գործիչների թվին է պատկանում, որոնց ստեղծագործությունները նյութ են տալիս խափիրության էության պարզելու Համար: Առաջաբանը պատմական Հավաստի աղբյուր է:

Հավանաբար ժողովածուում օգտագործված նյութերն են եղել պատճառը, որ Սրվանձտյանցն առաջաբանը գրել է գրաբար: Դրանից չի կարելի Հանգել այն եզրակացության, թե

Սրվանձտյանցը XIX դարի երկրորդ կեսին պաշտպանում էր գրաբարը: Նա համոզված աշխարհաբարական էր դեռևս «Արծուի Վասպուրականին» աշխատակցելու տարիներից, իսկ նրա խմբագրությամբ լույս տեսած «Արծուիկը» կանգնած էր աշխարհաբարի դիրքերում:

Գրաբարի և աշխարհաբարի միջև մղված պայքարում Սրվանձտյանցն առանց վարանելու կանգնում է աշխարհաբարի հաղթանակի համար մարտնչողների շարքում և հայտարարում. «Աշխարհաբարին կեանք և յառաջադիմութիւն»:[74] Միևնույն ժամանակ նա չէր պատկանում այն գործիչների թվին, որոնք ամբողջովին ժխտողական վերաբերմունք ունեին գրաբարի նկատմամբ: Նա քաջ գիտակցում էր, որ աշխարհաբարի զարգացումը պետք է ընթանա գրաբարից և գավառաբարբառներից վերցրած փոխառություններով: Այդ պատճառով էլ Սրվանձտյանցը գնահատում էր գրաբարի կատարած, կատարելիք դերը և նշում էր. «Գրաբարին միշտ հարգանք և անմահութիւն»:[75] Դա ոչ թե երկու հակառակ կարծիքների հաշտություն էր և միջին դիրքավորում, այլ պատմական վերաբերմունք հարցի նկատմամբ և արժեքների գնահատություն: Հետագայում լույս տեսած «Մանանա» ժողովածուում ևս Սրվանձտյանցն անդրադարձավ գրաբարի և աշխարհաբարի հարաբերության հարցերին: Խիստ հետաքրքիր են նրա դատողություններն ու կռահումները: Գրաբարի և ժողովրդական լեզվի հարաբերության հարցը շոշափելով, նա ուզում էր վճռել իր ժամանակի համար մեծ բարդություն ներկայացնող մի հարց. Հայ ժողովուրդն ունեցել է, արդյո՞ք, գիր և գրականություն մինչև Մեսրոպ Մաշտոցը և մինչև գրաբարը: Սրվանձտյանցն այդ հարցին տալիս է դրական պատասխան, սակայն չի կարողանում որոշակիորեն ասել, թե որն է եղել այդ գիրը: Նրա ուշադրությունն են գրավում Հայաստանի բաց երկնքի տակ սփռված հազարավոր թանգարանային նմուշներ, սեպագիր կամ բևեռագիր արձանագրություններ, որոնք մեր ժողովրդի նախամեսրոպյան գրի լուռ վկայություններն են: «Որովհետև մեր ժողովուրդն ավելի հին է, քան մեր գրաբարն է, ու-

[74] «Մեղու Հայաստանի», 1863, N 29, էջ 263:
[75] Նույն տեղում:

րեմն ժողովրդեան խօսած լեզուն աւելի մօտ է բեւեռագրի լեզուին»: Դրա համար էլ նա գիտնականների և լեզվաբանների ուշադրությունը հրավիրում է բևեռագրերը վերծանելու խնդրի վրա, որպեսզի «լուսավորութեան սեղանին վրա դրված տեսնեմ նաեւ Հայաստանի հին դրականութեան կնքեալ և փակեալ փառաց մատեանը, յորում ազգային եւ ընդհանուր հնութեան եւ պատմութեան գանձեր կան ծածկեալ, և զորս հայերը բանալու միայն կարող են»:[76] Ձեռնարկելով եվրոպական գիտնականների այդ ուղղությամբ կատարած աշխատանքը, հարգանքի տուրք մատուցելով հատկապես գիտնական Մորթմանին, Սրվանձտյանցը նրանց թերությունը բացատրում է Հայաստանից հեռու լինելով և բուն ժողովրդական լեզուն լավ չիմանալով: Այդ հարցերը Սրվանձտյանցի համար ունեին ոչ միայն տեսական նշանակություն, այլ նաև խիստ գործնական արժեք, սեպագրերի բանալին հնարավորություն էր տալու «հավիտենական մոխիրնեrէ, և մթութենէ սրբել մեր հայկական ազգի պատմութիւնը»: Ինչպես տեսնում ենք, նա ամեն ինչ ծառայեցնում էր նույն նպատակին: Ազգի պատմությունը, անցյալը լավ իմանալը օգտագործում էր իբրև ազգային ինքնության, գոյության իրավունքի կռվան:

Ոչ միայն այդ առումով, այլև նյութերի առատության, բազմազանության և գիտական մեկնաբանման տեսակետից խիստ ուշագրավ է 1876 թ. Կ. Պոլսում լույս տեսած Սրվանձտյանցի երրորդ ժողովածուն՝ «Մանանան»: Առաջաբանում նա հարգանքի տուրք է մատուցում Վռամշապուհ թագավորին, Սահակ Բագրատունուն, Խորենացուն, Մեծ Հացեկացուն, որոնք. «...արձակեցին...սրտի և խորհրդոց կապանքները. լեզու, պատմութիւն, կրօնք. երգեր աւանդեցին մեզ, որոնցմով ապրեցանք ու կ'ապրինք իբրեւ ազգ և իբրեւ ժողովուրդ»:[77] Խ. Աբովյանի նման «էրված ու կրակված սրտով», նրա գործի արևմտահայ շարունակողը չէր բավարարվում մի անգամ ասելուց. «Այո, հարկ է, որ մենք զմեզ քաջ ճանաչենք, մեր հայրերը ճանաչենք, մեր հայրենիքը ճանաչենք»: Նա գտնում էր, որ հայրենիքը ճա-

---

[76] «Մանանա», էջ 144:
[77] Նույն տեղում, էջ 33:

նաչելու ճանապարհը նաև «հողերու խավերը, օրերու խորերը, շենից վլատակներն ու ավերակները գրչով ու բրչով» պեղելն է:

Եթե «Գրոց ու բրոցը» բաժանված չէր մասերի և ամբողջ նյութը՝ առասպելները, զրույցները, ավանդությունները, Հայաստանի գավառների տեղագրությունները շաղախված էին Հեղինակի խոսքով, ապա այս ժողովածուն աչքի է ընկնում առավել եա գիտական դասակարգումով: «Մանանան» կազմված է հետևյալ բաժիններից. «Հայրենեաց համն ու հոտ», «Հայրենեաց վեպք և զրոյցք», «Երգք և նվագք հայրենեաց», «Հանելուկներ, առակներ և նորելուկներ», «Դիւթութիւնք և բժժանք», «Բժշկական», «Ժամանակագրականք», «Երաժշտական», «Հայրենեաց գավառական բառեր», «Բառարան», «Բուսոց անուններ», «Հայաստանի երկրագործութեան գործիքներ»:

Քանի որ Հեղինակի նպատակը ազգային ինքնաճանաչության և ինքնագիտակցության արթնացումն էր, ժողովածուի առաջին գլուխը՝ «Հայրենեաց համն ու հոտը», ներկայացնում էր Վան քաղաքի, Այգեստանի և մյուս թաղամասերի, պատմական հուշարձանների, փողոցների մանրամասն նկարագրությունը, արհեստներն ու արհեստավորները, ջրարաշխը և նրա կատարած աշխատանքը, Վանի հռչակավոր տառեխն ու նրա պատրաստման ձևերը, ժիր ու տնտես տանտիկինների եփած համեղ ճաշերն ու առտնին ամենօրյա հոգսերը, նրանց ծեսերը, հավատալիքները, երազներն ու մեկնությունները, օրհնանքներն ու անեծքները, հայրենիքից հեռացող պանդուխտները, մայրերի ու հարսների՝ նրանց ուղղած նամակների բազմազանությունը: Դժվար է գերագնահատել ազգագրության գլուխգործոց դարձած այդ բաժնի նշանակությունը առավել եա այն պատճառով, որ այդ կենսունակ և ստեղծագործ ժողովուրդը այլևս չի գտնվում իր պատմական հայրենիքում:

«Հայրենեաց վեպք և զրոյցք» բաժնին Սրվանձտյանցը կցել է սեղմ առաջաբան, ուր ժողովրդական վեպին ու զրույցներին, այլ խոսքով՝ հեքիաթներին տված գիտական գնահատականը փոքր-ինչ խորացրած ձևով ընդունվում է մինչև օրս: Նա բացատրում է, որ հին և միջին դարերում բանաստեղծը, նույնիսկ մեսրոպյան հայկական գիրը ծառայում էր հասարակության վերին շերտերին: Հասարակ ժողովրդի լայն զանգվածները «անհա-

ղորդ և անձեռնհաս» էին գրելում և կարդալուն: Սակայն ժողովրդի միտքը անգործ և անզգա չէր կարող մնալ. իր տեսածն ու լսածը նա պատմում էր, շարադրում, վիպասանում, երգում ու մրմնջում էր իր զգացած սերն ու թախիծը, երևակայությունն էլ նորն էր ավելացնում եղածի վրա, մի նոր բան էլ լսողն էր հավելում և այլոց հաղորդում, այդպես էլ ստեղծվում էին վեպեր ու զրույցներ: Սրվանձտյանցը նկատում է, որ ամեն մի հեքիաթից կարելի էր ստույգ որոշել նրա ասացողի պատկանելիությունը: Այդ բանը հնարավոր էր հեքիաթի բարբառի, բնակիչների տեղական սովորությունների ու կլիմայի, բուսական ու կենդանական աշխարհի նկարագրությամբ: «Ծով չունեցող գավառի մը վիպասանը ծովու վրա գաղափար չունենալով, երբեք դայն չգործածեր իր ասից մեջը. իսկ վաննցին իր տաղին, ողբին, խաղին և խոսքին մեջ հաճախ կը խառնե. մերթ գեղեցիկի մը աչքը ծովի կը նմանցնէ, մերթ հուզյալ սիրտը՝ ծովի ալեծուփին և այլն»:[78] Ըստ Սրվանձտյանցի, հեքիաթները հորինվել են իբրև բարոյական խրատներ՝ «քաջերի քաջությունը հոչակելու և օրինակ տալու» համար: Նա իրավացիորեն գտնում է, որ բոլոր հեքիաթներն ունեն մի ընդհանուր կարգ՝ ուղևորություն հեռավոր և անծանոթ աշխարհներ, դեպքեր, արկածներ, ընկերների կամ եղբայրների նենգություն և այլն: Դիպուկ ընդգծվում է, որ «սիրահարականը ամեն հեքիաթի աղն է», հեքիաթներն ունեն բավականին «հմուտ կապ և հանգույց», այնտեղ գործող անձեր են ոչ միայն գազաններն ու թռչունները, այլև բարի ու չար ոգիները, դևերը, անմահական ջուրն ու պտուղը: Պատմահայր Խորենացու աշխատությունում նշմարելով հին ժողովրդական վեպի ու զրույցի հետքերը, Սրվանձտյանցը սրաթափանցությամբ նկատում է, որ հնագույն ազգերի նախնական պատմությունը պետք է փնտրել նման առասպելների մեջ: «Մանանայում» Սրվանձտյանցը զետեղել է «Գառնիկ աղբեր», «Անխելք մարդ», «Բիւրապատիկ», «Անմահութեան խնձոր», «Երազատես», «Նահապետենց աղջիկ», «Հազարան բուլբուլ» և այլ հեքիաթները, որոնք հետագայում իրենց վրա գրավեցին Ղ. Աղայանի, Հ. Թու-

---

[78] Նույն տեղում, էջ 148-149:

մանյանի և ուրիշների ուշադրությունը և նրանց մշակմամբ զարդարեցին հայ մանկական գրականության էջերը:

«Մանանայի» մյուս բաժինը վերնագրված է «Երգք և նվագք Հայրենեաց»: Առաջինի նման սա ևս ունի համառոտ առաջաբան, ուր բանահավաք Սրվանձտյանցը մեզ է ներկայանում իբրև հմուտ բանագետ: Բավականին դիպուկ բնութագրելով մանավանդ հայ ժողովրդական աշխատանքային երգերը, Սրվանձտյանցը մատնանշում է, որ դրանք նույնքան հին են, որքան ժողովուրդն ինքը: Թե երկրագործական աշխատանքների պահին, թե առտնին հոգսերը հոգալիս, բուրդ ու բամբակ գզելիս, շալ ու կտավ գործելիս, վիշտն ու թախիծը, ծիծաղն ու ուրախությունը ժողովուրդն արտահայտել է երգերով:

Առանձնապես ուշագրավ են Սրվանձտյանցի դիտողությունները Գրիգոր Նարեկացու ոճի և տաղերի մասին: Համեմատելով Նարեկացու տաղերն իր հայրենի գավառի ժողովրդական երգերի հետ, Սրվանձտյանցը հանգում է այն եզրակացության, թե «Նարեկացվոյն ոճն ոչ թե իր հատկական անձնական, այլ հայրենի գաւառի տեղական ժողովրդեան ընդհանուր ոճն է»[79]: Նարեկացու «Սայլն այն իջանէր» տաղը նա համարում է ոչ թե տապանակի տեղափոխությունը Երուսաղեմ, այլ «Մշուշի հոտաղ եզնավարին սրբագնացուցեալ երգը»:[80] Այս բաժնում զետեղված են միջնադարյան մի քանի տաղեր և առավել արժեք ներկայացնող աշխարհիկ ժողովրդական երգեր՝ «Վորչիկներու երգ» (Սիրտս նման էր էնա փլած տներ), «Երգ ջինականու» (Լուսնակն անուշ հովն անուշ), «Երգ ի վերա կորեկին», «Ճնճուղիկ» (Կուտ ու կես կորեկ ունեմ) և այլ երգեր: Վերջին երեք երգը մշակվեցին Հ. Թումանյանի կողմից: Հետաքրքրություն են ներկայացնում համբարձման վիճակի խաղերը, հարսանյաց երգերը, կենցաղային կատակերգերը և այլն: Հիշյալ բաժնում է զետեղված նաև «Վանա պառավանց աղոթքը», որն իր մեջ ամբարում է ժողովրդական իմաստությունը, բնապաշտ և աշխատասեր ժողովրդի նվիրական իղձը. «Հացին էժնութիւն, մեռելին թանկութիւն, հայոց ճոչերաց խելք ու միաբանութիւն»:

---

[79] Նույն տեղում, էջ 238:
[80] Նույն տեղում, էջ 242:

Առանձին բաժին են կազմում առակներն ու Հանելուկները: Սա թեև սեղմ է և Համառոտ, բայց դարձյալ ուշագրավ՝ մանավանդ Հեղինակի դիտողությունների շնորհիվ: Առակներն ու առածները Համարելով Հայ ժողովրդի Հեղինակություն, որովՀետև լի են «Հայոց կյանքի Հանգամանքներով», Սրվանձտյանցը նկատում է, թե «Հայերն ալ իրենց Համար Եզովբոսներ և Լաֆոնթեններ ունեցեր են»:[81] Հանելուկների մասին խոսելիս, նշում է Ներսես ՇնորՀալու անունը, որն, ըստ Սրվանձտյանցի, վերցրել է ժողովրդի մեջ ասվող Հանելուկները և կանոնավորել: «Դիւթութիւնք և բժժանք» բաժինը Հետաքրքիր է ժողովրդական Հավատալիքների տեսանկյունից:

Ուշադրության է արժանի գավառական բարբառների բառարանը: Փաստորեն դրա մի մասն է բույսերի անունները կազմող բառարանը, որն իր մեջ ներառում է Վանա, Մշո և Արարատի բարբառները:

Սրվանձտյանցը մեծ սիրով է նկարագրել նաև ժամանակի երկրագործական գործիքները՝ արորը, սայլը, գութանը, մանրամասն թվարկելով դրանցից ամեն մեկի մասերը և անվանումները: Ինչպես տեսանք, իսկապես «Մանանան» Հարուստ է, բազմազան ու բազմաժանր ոչ միայն ժողովրդական ստեղծագործության, այլ նաև բանագիտական առումով, գիտական դասակարգումով: Սրվանձտյանցի տված գնաՀատականները մեծ մասամբ ճիշտ են և մինչև օրս պաՀպանել են իրենց ուժը:

Սրվանձտյանցի չորրորդ ժողովածուն՝ «Համով-Հոտովը», լույս տեսավ ավելի ուշ՝ 1884 թ.: Դա պետք է բացատրել այն Հանգամանքով, որ նա կլանված էր Հայ ժողովրդին Հուզող խնդիրներով. իր գրիչը նա փոխել էր ճանապարՀորդի ցուպի և մախաղի Հետ:

«Համով-Հոտովը» նվիրագործեց Սրվանձտյանցի Համբավը: Բուռն էր նրա ընդունելությունը, որովՀետև այնտեղ պատմվում է ձեռքով շոշափված, կենդանի Հայրենիքի, նրա Համ ու Հոտի մասին: Դա մի ջերմ կոչ էր՝ ուղղված Հայ պանդուխտներին ու գաղթականներին, մի Համակ նվիրական ցանկություն՝ բոլոր

---

[81] Նույն տեղում, էջ 309:

հայերին միավորված տեսնել պատմական Հայրենիքում: Հայրենի հողի ջերմ սիրահար հեղինակի համար ամեն մի լեռ և ավերակը, ամեն մի թիզ հողը ոչ միայն Հայրենի երկրի ֆիզիկական կերպարն էր, այլ նաև այդ հողում ապրող ժողովրդի «հազարամեա ապրումների կենդանի բուրվառը»:[82]

Յուրահատուկ են անգամ ժողովածուի գլուխների խորագրերը: Քանի որ «Համով-հոտովը» մայր Հայրենիքի համն ու հոտն էր տալու ընթերցողին, բաժինները ոչ թե վերնագրվում են գլուխ առաջին կամ երկրորդ, այլ՝ «ճաշակ առաջին», «ճաշակ երկրորդ» և այլն: Իսկ ամեն «ճաշակ» ուներ իր ինքնատիպ անունը: Առաջին «ճաշակի» խորագիրն է՝ «Քանի մը քաղցրութիւններ»: Իսկապես, ընթերցողի համար հաճելի անակնկալների մի շարք է այդ «ճաշակը», որ նկարագրում է Ակնից մինչև Վան ընկած ճանապարհը. «Անցա Կամախեն, Երզնկայեն, անցա Դերջանեն, Կարինեն, մտա Մշու սուրբ Կարապետը և Տարոնո դաշտեն՝ գիշերուան լուսնակով իջա Դատվանը, որ նստած է Վանա ծովու բերանը»:[83] Վանա «ծովը» նկարագրելուց հետո, բնության գեղեցկությանը հակադրվում է մարդկանց թշվառ կացությունը: Վանա գավառի «սովեալները» մրջյունի պես Աղբակից, Նորդուզից, Խոշաբից, Շատախից, Հայոց Ձորից, Գավաշից, Մոկսից, Հիզանից լցվել էին Դատվան, անցնելու դեպի հացառատ շրջանները, կորեկ կամ գարի հայթայթելու: Հայկական ամեն մի գյուղից անցնելիս հեղինակը նկարագրում է նրա աշխարհագրական դիրքը, լեռները, դաշտերը, գետերը, կլիման: Բայց այդ նկարագրություններով նա չի բավարարվում: Յուրաքանչյուր վայր ունի իր պատմական հուշարձանը, որևէ վանք կամ մատուռ, ուր գործել են հին դարերի մեր մեծերը: Ահա Նարեկա վանքը՝ Անանիա և Գրիգոր Նարեկացիների հիշատակներով լեցուն: Այդ վայրերը նկարագրելիս հեղինակի հուզմունքը հասնում է գագաթնակետին, վարակում ընթերցողին և անջնջելի մնում հիշողության մեջ: «Դու վշտացելոց մոտն ես, հուսաբեկելոց հույս կը ցուցնես, մոլորելոց՝ ճանապարհ. խավարելոց՝ լույս. կապելոց՝ արձակումն, տառապելոց՝

82 Հ. Օշական, նշվ. աշխ., էջ 322:
83 «Համով-հոտով», էջ 37:

հանգիստ. խռովերից՝ խաղաղություն. հիվանդաց՝ ապաքինություն...Գերեզման չկա քեզ համար. դու հոգիներու մեջ կը հանգչիս, անմահ ի մահկանացուս»[84],-այսպիսին է Գր. Նարեկացին և նրա «Մատյանին» տված գնահատականը: Ահա Ախթամարա Գագկաշեն տաճարը, Արծրունյաց բերդի մնացորդները, Հայոց Ձորը և այլն... մի անշուք, լռին մենաստան՝ Զաղար սբ. Նշան վանքը, որ հանգչում է անտապան, անարձան անհիշատակագիր Եղիշեն, նա, որ անմահացրեց V դարի հայ հերոսներին, «Վարդանն ու իր դարը»: Նույնիսկ լռիկ գերեզմանի նկարագրությունը Սրվանձտյանցի համար ծառայում է իբրև հայրենասիրության և ազատասիրության ուսուցման մի գործոն. «Ինչե՞ր կը քարոզե այս լռին գերեզմանը: Ի՞նչ ձայներ կուգան այս տապանաքարի տակեն... Գերեզման, որ իր չքնաղ մատնեին չափ վեմ լեզուով կը խոսի աղուն Եղիշե, ուր կը ննջե «անմահն Եղիշե»: Կարդացեք Եղիշեն...»:[85]

Վերոհիշյալ «Ծաղաևում» Սրվանձտյանցը մեծ վարպետությամբ նկարագրում է ժողովրդի ցավերն ու տառապանքները: Հունձքի ժամանակն է. կալերն են լցվել և ջինականները և նրանց պարտատերերը՝ «շեխն ու դավրիշ, վարդապետն ու երեց, շահնան ու քուրդ բեկն, Վանա սովեալն ու Բաղիշո չարչին, հարկահանն ու պարտապահանջը...ամենքն ալ այդ կալերու շուրջն առած իրենց բաժիններն կը կրեն»:[86] Ուշադրություն է գրավում մի հանգամանք. ժողովածուում հեղինակը հավասարապես արծարծում է երկու հարց՝ և՛ սոցիալական, և՛ ազգայինազատագրական: Նկարագրելով գյուղացու անմարդկային շահագործումը սեփական և այլազգի հարստահարիչներից, Սրվանձտյանցը աներկբայորեն կանգնում է շահագործվող գյուղացու պաշտպանության դիրքերում: Նույնիսկ բնության նկարագրությունը Սրվանձտյանցի գրչի տակ ստանում է սոցիալական երանգավորում:

---

[84] Նույն տեղում, էջ 50:
[85] Նույն տեղում, էջ 59:
[86] Նույն տեղում, էջ 52:

*Հայկական վայրերի անունները նա մեկնաբանում է Հենց այդ տեսանկյունից. Ախավանցը ժողովրդի ախերի, տառապանքների ու Հառաչանքների արձագանքն է: Արտոս յեոր-արտոս, թե՞ արտոսր.«Միթե՞ կարտասվին յերինք»: Սրվանձտյանցը պատմում է Վանի շրջակայքի գյուղերի մասին: Ամեն մի վայրում, ամեն մի ափիթով նա անդրադառնում է ժողովրդի վշտին ու տառապանքին, նրա կրած տանջանքին: «Մեղրկեր-ի՞նչ քաղցր անուն, բայց քաղցր չեն բնակչաց կեանքը. պարտքը մարեր է իրենց խանդն ու կրակը»:*

*Սրվանձտյանցը գովերգում է Հայ ժողովրդի նաՀապետին՝ «խայտակն ու քաջագանգուր Հայկին», որը չորս Հազար տարի առաջ «կը խոսեր Համայն մարդկային ազգաց առաջինն՝ ճառն ընդդեմ անիրաւողին, բռնաւորին և ստրկացնողին»: Եվ քանի որ Հայկը պայքարեց ընդդեմ բռնավորների Հանուն իր ժողովրդի ազատության, մի պայծառ աստղ «Հայոց ձորեն ցոլացավ յաստեղատուն» Հայկի պատկերով և անունով. իր ժողովրդի, ազգի ազատության Համար պայքարողը անմաՀանում է սերունդների Հիշողության մեջ:*

*Ուշագրավ են այդ «Ճաշակի» Սրվանձտյանցի տարակույսները, Հարցադրումները և պատասխանները: Ամեն մի վայր կամ վանք նկարագրելիս, երբ տալիս է դրա անունը, Հետեւում են նաև նրա պարզաբանումները: Սբ. Աստվածածնի վանքը կոչվում է նաև Կարմրվոր. դա շարժում է նրա Հետաքրքրությունը, նա տարակուսում է, «ներկյա՞լ է կարմել», թե Հայոց Հեթանոսական աստվածների՝ արամազդների և անաՀիտների Համար երգած երգերի ոսկեղեն բեկորները Հավաքել են մեր «Թարգմանիչները» և դրանցով Հորինել քրիստոնեական վսեմ շարականները՝ նվիրված սբ. Աստվածածնին՝ «մարգարտատեսիլ և ծիրանազգեաց Հրաշափառագույն կույս» և այլն: Ուրեմն, ըստ Սրվանձտյանցի, քրիստոնեական շարականների մեծ մասը ստեղծվել է Հեթանոսական Հենքի վրա: Հետաքրքրությամբ է ընկալվում նաև Վան բառի գործածության պարզաբանումը Հայերենում. ավան, Դատվան, Վանիկ, Ախավանց, Փշավանց, Հայկավանք, Ձորավանք, Շատվան, Ավանց, Նորովանց և այլ բառեր Համեմատելիս Սրվանձտյանցը եզրակացնում է, որ վան կամ*

վանք բառը հայերենում նշանակել է բնակության վայր, իջևան, օթևան կամ քաղաք:

Տիգրիսի ակունքները, Վանա ծովի դաշտիկ-լճերը՝ Սալա-հան գոլոն, Սիփանա Սուլթենն, Նազիկա և Խաչլուս լճերը նկարագրվում են իրենց գեղեցկություններով և դրանց մասին պատմվող ավանդություններով: Առանձնապես հետաքրքիր է Ահակ թռչունի լեգենդը, որն իր գողտրիկ մշակումը գտավ Հ. Թումանյանի կողմից «Պողոս- Պետրոս» ստեղծագործության մեջ, և Պառշ իշխանի Հավլունի թրի լեգենդը:

Երկրորդ «Ճաշակը» կոչվում է «Քանի մը տեսարաններ», այն բաժանված է մի քանի մասի: Առաջին մասում՝ «Վասպուրական և իր գավառները», Վանի մասին շատ համառոտ խոսելով հետո (քանի որ դրա մանրամասն տեղեկագրությունը տրված էր «Մանանայում»), անցնում է նրա շրջակա գյուղերի՝ Արտամետ, Շահբաղի, Ավանց, Ալյուր, Կյուանենց, Խառակոնիս, Ճանիկ, Էրմանց, որոնք հեռու են Վանից, կեսից մինչև 9 ժամ: Դրանից հետո Սրվանձտյանցը տեղագրում է Վասպուրականի գավառները՝ Բերկրին, Մահմուդին կամ Խոշաբը, Աղբակը կամ Հեքյարին, Կևեռը, Ջուլամերկը, Շատախը, Նորդուզ և Կավիկան միացյալ գավառները, Մոկսը, Մամռտանքը, Սպարկերտը, Հայոց Ձորը, Ռստանը, Գավաշը, Կեցան, Կարկառը, Կարճկանը, Ախլաթը, Ալջավազը կամ Արծկեն, Արճեշը (Բաշքերտուն): Հանգամանորեն տալիս է ամեն մի գավառի աշխարհագրական դիրքը, լեռները, գետերը, դաշտերը կլիման, վանքերը, ուսումնարանները, աշակերտների թիվը: Սրվանձտյանցը կազմել է նաև թվաբանական քուրդ ցեղերի անվանումների և թվաքանակի մանրամասն աղյուսակը: Քրդական ցեղերը բաժանված են երկու խմբի. առաջինի մեջ մտնում են այն ցեղերը, որոնք Մուսուլի և Տիգրանակերտի կողմերից գարնանը գալիս և մինչև խոր աշուն սփռվում են Մոկսի, Շատախի ու մերձակա գավառներում և իրենց անասունների սարերը, անգամ ձմեռվա ուտեստը բռնությամբ վերցնում հայ գյուղերից: Երկրորդ խմբի մեջ են մտնում այն ցեղերը, որոնք ապրում են Պարսկաստանի սահմանագլխին և ցանկացած ժամանակ ապաստանում Պարսկաստանի կամ Թուրքիայի սահմանը:

*Երկրորդ «ճաշակի» մյուս մասը նվիրված է Բուլանըխներին և Մանազկերտին, որոնց կազմի մեջ են Խնուս գավառը, Բաղեշ քաղաքը, Մոտկանը, Ներքին և Վերին Տատիկները, Գոզալդարան, Մշո դաշտը՝ Մուշ քաղաքի հետ: Այս «ճաշակը» փաստորեն ներկայացնում է Վասպուրականի և իր գավառների, Բուլանըխների և Մանազկերտի ամենամանրամասն ժողովրդագրական քարտեզը: Ոչ մի մանրուք չի վրիպում Սրվանձտյանցի աչքից. գյուղատնտեսության և գյուղացիության վիճակը, արհեստավորների արտադրանքը, բանահյուսական և ազգագրական նյութերը: Դրանք մեր առջև կենդանացնում են պատմական Հայաստանի մի զգալի տարածքում ապրող բնակչության շունչն ու ոգին:*

*Երրորդ «ճաշակը» նվիրված է ժողովրդական բանահյուսությանը՝ «Քանի մը հեքիաթներ»: Համառոտ կանխաբանում հեղինակը ընթերցողին է ներկայացնում այն դժվարությունները, որոնց հանդիպել է հեքիաթները գրի առնելիս: Ժողովուրդը սովորաբար խուսափել է վարդապետի կամ ընդհանրապես հոգևորականի պատմել հեքիաթներ ու առասպելներ՝ անվայել համարելով դրանք, ուստի նրա խնդիրքով գրի են առել հաղիվ գրի սևն ու սպիտակը ջոկող անձինք, որի հետևանքով շատ հաճախ գրառածը լինում էր խառնիխնձոր, անկանոն, կցկտուր, որը կարգի բերելը ծանր աշխատանք էր: Այս բաժնում ամփոփված են «Բաղիկան և Խան Բողու», «Զուլուխա», «Պզտիկ Միրզան և դև Գորգոչան», «Մովու աղջիկ», «Զվանով բախտի հասած», «Բախտավոր որսորդ», «Արծաթ մազեր, ոսկի ծամեր», «Իմաստուն ջուհակն», «Ճնճղուկ և երկու որբ» և այլ հեքիաթները: Սրանցից «Իմաստուն ջուհակն», «Դըժիկոն», «Օձամանուկ, Արեւամանուկ» և այլ հեքիաթներ Թումանյանի և Աղայանի մշակմամբ մտան հայ գրականության գանձարանը, իսկ «Դըժիկոն» համրահռչակ «Քաջ Նազար» հեքիաթի հիմքն է:*

*Չորրորդ «ճաշակն» ունի «Գեղջկական երգեր» խորագիրը: Այդ բաժնում իր արժանի տեղն է գրավում «Սարե Սիփանե» կամ «Սիա-Մանդոն և Խըջե-Զարե» ժողովրդական սիրավեպը: Դեռևս 1874 թ. «Գրոց ու բրոցում» Սրվանձտյանցը Սիփան սարի մասին տարածված լեգենդների ու զրույցների շարքում հիշատակում է «Սարե Սիփանե» լեգենդը և մի քանի խոսքով*

պատմում նրա բովանդակությունը: Տասը տարի անց նա Հաղորդում է, որ մեծ դժվարությամբ ձեռք է բերել այդ քրդերեն սիրավեպը, որ երգել են նաև քրդախոս Հայերը Սիա Մանդոյի կամ Հայի տղա սև Հարոյի և քրդի աղջիկ Խըջե-Ջարեի սիրո մասին: (Խըջե Ջարե նշանակում է Ջարեի աղջիկ: Ջարեն Զըռղանցի ցեղի մեծատուններից մեկն էր): «Քրդերը գտնուելով Հայոց հետ երկրացի և կենցաղակից, շատ նիւթ կընծայեն Հետաքրքիր եղողներուն՝ Հայոց կյանքեն. և որովհետեւ անգիր ժողովուրդ են քրդերը, ինչպես և անոնց չափ անգիր են նաև մեր լեռնադաշտացի Հայերը, ու տեղ-տեղ քրդախոս, բանահավաք մը կրնա պատուական վաստակներ ձեռք բերել նոյնիսկ քրդերեն Հորինուած երգեր ու վեպերը գրելով»:[87]

Այս սիրավեպը Սրվանձտյանցը գրի է առնում քրդերեն և մեծ Հմտությամբ թարգմանում Հայերեն՝ տալով ժողովրդական պատմելաձև:

Այս «Ճաշակում» են զետեղված նաև «Գովասանք ծաղկանց» և «Գովասանք բլբուլին ու վարդին» երգերը, որոնք Զարսանչակի Փերի գյուղի ձեռագրերից են վերցված: Սովոր շարք է «Ակնա ժողովրդային երգեր» բաժինը, ուր զետեղված նմուշները Հստակ պատկերացում են տալիս ակնեցիների զանազան ծեսերի, Հարսանիքների, սովորույթների և ավանդույթների մասին: Այդպիսին են «Հարսնառ գնացող կանայք առ Հարսն ասեն», «Օրոր», «Հովերով սեր» և այլն: Առանձնապես սրտառուչ են «Անտունի» վերնագրով պանդխտական երգերը, որոնք արտաՀայտում են ամուսնակարոտ Հարսների տվայտանքները, Հոգեկան տանջանքները, «ՄաՀերգը»՝ Ակնա Ապուչեխ և Կամրկապ գյուղերի կանանց երգը իրենց սիրելիների վրա: Կան նաև ժողովրդական պարերգեր: Սրվանձտյանցը մեծ Հուզմունքով է նկարագրում շատախցի ուխտավորների պարը Հոգվոց վանքի բակում: «Շատ քնքոյշ է գավառական ժողովրդական երգը, մանավանդ, երբ ընկիկներու ընրնով կերգվի և երբ կտրիճ երիտասարդներն և կարմիր Հարսներն խառն կպարեն, թեւ-թեւի, ծնկա-

87 Նույն տեղում, էջ 294:

*ծալ, մեջքածալ, գլխաճոճան: Մենք տեսանք այդ պարը շատախցի հայերով, Հոգւոց վանից տանիքը գիշերուան լուսնյակով...Զեմ կրնար պատմել այն տպավորութիւնը, զոր կրեցի այդ տեսարանին առջեւ»:*[88] *Այդ պարերգերից են «Մոկացի հայոց հարսանեաց պար», «Սիրողներ», «Հարո և Մայրո», «Սիրողի երգեր» երկխոսությունները և այլն: Այս գլխում իրենց արժանի տեղն ունեն նաև «Փոքրիկ երկրագործ» և «Ծույլ հնձողը» կատակ բանաստեղծությունները, որոնք հետագայում մշակվեցին Թումանյանի կողմից, «Հանդես թռչնոց» ժողովրդական կատակերգությունը, աղոթքներ, օրհնանքներ: Ժողովածուն եզրափակում է գավառական բառերի մի ստվար բառարան: Ինչպես տեսնում ենք «Մանանա» և «Համով-հոտով» ժողովածուներն ունեն որոշ կառուցվածքային նմանություն: Դրանք պարունակում են և՛ տեղագրություն, և՛ ժողովրդական ստեղծագործության տարբեր տեսակներ, որոնք չեն կրկնվում և աչքի են ընկնում թարմությամբ ու ինքնատիպությամբ:*

*Սրվանձտյանցի հրատարակած երեք ժողովածուները՝ «Գրոց ու բրոցը», «Մանանան», «Համով-հոտովը» փաստորեն հիմք դրեցին հայ ազգագրությանը և բանագիտությանը՝ գիտական առումով: Դրանք առաջին և հաջողված փորձերն էին հավաքված նյութի գիտական հետազոտման և համակարգման ուղղությամբ: Այդ ժողովածուներում, ինչպես տեսանք, Սրվանձտյանցը հանդես է գալիս իբրև խորագետ հետազոտող, գիտական հիմքերի վրա է դնում հայ բանահյուսության ուսումնասիրությունը:*

*Սրվանձտյանցի ստեղծագործությունների շարքում ուրույն տեղ է գրավում «Թորոս աղբար, Հայաստանի ճամփորդ» երկհատոր ժողովրդագրական աշխատությունը: Այս ստեղծագործության մեջ ամփոփված են հեղինակի 1878 և 1879 թթ. Արևմտյան Հայաստանի մի շարք նահանգները շրջագայելու ժամանակ ստացած տպավորությունները: Գիրքը նոթերի, վերհուշի, ակնարկի, տպավորության մի ինքնատիպ համաձուլվածք է: Ստեղծագործության առաջաբանում նա իր նպատակը համարում*

[88] *Նույն տեղում, էջ 334-335:*

է «ազգայնոց յառաջադիմութիւն և իրենց օգտակարութիւնը ցույց տալ է միայն. Հայը Հայուն ծանոթացնել, Հայը Հայուն սիրել տալ է բոլորովին իմ փափաքս և ջանքս»:[89] Այս աշխատության մեջ, ավելի քան իր մյուս ստեղծագործություններում, Սրվանձտյանցը կոչ է անում, հորդորում է Հայ ժողովրդի բոլոր խավերի ներկայացուցիչներին, որոնք հեռացել են մայր երկրից, վերադառնալ Հայաստան, չհնացնել պապերից ու հայրերից ժառանգություն ստացած երկիրը. Հայը Հայաստանի հողի վրա է իրեն կատարյալ մարդ զգում, «փորձեցեք և տեսեք», համոզում է նա:

Թորոս աղբարը այն թռչունն է, որին հանդիպել է հեղինակը Ներսես Շնորհալու ծննդավայր պատմական Ծոփքի Ծովք լճում: Մեծ հուզականություն ունի սգավոր Թորոս աղբարի նկարագրությունը: Նույնիսկ թռչունին դիմելիս Սրվանձտյանցը հարցնում է, թե ինչ է նրա որոնածը, գու՞ցե «Թորոսի սու՛րն վրիժուց...»:

Թորոս աղբարի ճշգագրությունների միջոցով ընթերցողը ծանոթանում է Հայաստանի անցյալին ու ներկային, հպարտանում իր ժողովրդի ստեղծագործական հանճարով, տարվում նրա բնության անզուգական գեղեցկությամբ: Հայրենապաշտ, անկեղծ ու անխարդախ սիրո արտահայտությունը հասնում է իր գագաթնակետին, երբ նկարագրում է Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը, նրա կատարած ժողովրդափրկիչ գործը, Եղիշեին ու նրա պատմությունը, Ներսես Շնորհալուն և նրա ծննդավայրը: Սակայն այդ սերը չի փարատում Սրվանձտյանցի աչքերը և անցյալի փառքին նա հակադրել է Հայի ներկայի վշտոտ կացությունը, զուրկ պետականությունից և քաղաքական իշխանությունից, օտարների ճնշող բռնակալության ներքո, հոշոտված, պառակտված, «կեղծ բարերարների և որսորդների ցանցը ընկած»: Սրվանձտյանցի սիրտը մորմոքում է, երբ նկարագրում է թուրք և քուրդ բեյերի շահատակությունները, երկրի անիշխանական վիճակը, կառավարական պաշտոնյաների կամայականությունները, կառավարության թողտվությունը և այդ բոլորի զոհին՝ Հայ գյուղացուն, որ ստիպված բռնում է պանդխտության ուղին:

[89] «Թորոս աղբար», Հ. 1, էջ ԺԱ:

Բազմաթիվ հարցեր է շոշափում Սրվանձտյանցն իր երկհատորանոց այդ գործի մեջ. նա բարձրացնում է արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման հարցերը, խարազանում կապիտալիստական պետություններին ու նրանց գործակալներին, քննադատության ուժեղ կրակն է ուղղում հայ հոգևորականության այն ներկայացուցիչների դեմ, որոնք եկեղեցում ամբարված ազգային հարստությունն օգտագործում էին անձնական նպատակների համար, ճաղկում ուսուցիչների տգիտությունը: Հնարավոր չէ մանրամասն թվարկել, թե ինչ հարցերի վրա է դարձնում իր ուշադրությունը Սրվանձտյանցը. մեծ էր նրա հետաքրքրությունների ոլորտը, ոչ մի մանրուք չի վրիպում նրա աչքից:

«Թորոս աղբարի» առաջին և երկրորդ հատորների հրատարակության միջև ընկած է հինգ տարի: Այդ տարիներն իրենց ազդեցությունն են թողել Սրվանձտյանցի հայացքների վրա: Հետաքրքիր է համեմատություն անցկացնել երկու հատորների եզրակացությունների միջև: Եվ առաջին, և երկրորդ հատորում նկարագրված է հայ ժողովրդի անտանելի կացությունը. բոլոր վայրերում նա գտնվում է կրկնակի լծի՝ ազգային և սոցիալական ճնշման տակ. ազգայինը, սակայն, հասնում է այնպիսի չափերի, որին չի կարող դիմանալ ոչ մի բանական արարած: Նա ցույց է տալիս, որ հայ գյուղացին չի ապրում, այլ սոսկ գոյություն է քարշ տալիս: Միջանկյալ արված նրա դիտողությունները, մեկ կամ երկու փոքրիկ նախադասությունները բնորոշում են Սրվանձտյանցի դիրքորոշումը. նա այլևս չի հանդուրժում հայ ժողովրդի համբերողականությունը: «Եթե այսպես ապրին, լավ է, որ չապրին»: Նրա ըմբոստ հոգին ընդվզում է այդ «ուրուական» վիճակի դեմ: Ճիշտ է, նա բացահայտ ապստամբության կոչ չի անում, բայց այդ դեպքում տրամաբանական հետևությունը մեկը կարող է լինել. նա ուզում է, որ իր ժողովուրդը ապրի, բազմանա և պտղաբերի, իսկ նման ձևով ապրելը մեռնելուց էլ վատթար է համարում և գովերգում է «գիտակցած մահը, որ անմահութիւն է»: Աշխատության երկրորդ հատորում ժողովրդի թշվառության նկարագրությունը բոլորովին չի փոխվել. դարձյալ պարտք, մուրհակ, պանդխտություն, բայց այդ բոլորի հետ կա մի հույս.«Մեզի բաւական է, որ կառավարու-

թիւնը տա այդ երկիրներում համար լավ կառավարիչ և արդար դատավոր, պաշտոնեայք՝ որք ժողովրդեան վիճակը հասկնան և համբերութեամբ ու քաղցրութեամբ վարվին անոնց հետ. ինչպես նաև խիստ անաչառ լինին հայտնի չարագործաց համար: Մնզի բավական է, եթե եղեալ օրենքն առանց թիւրելու ի գործ դրվին»:[90] Ինչպես տեսնում ենք, Սրվանձտյանցը ինչ-որ պատրանքներ ունի կառավարությունից. ոչ թե կառավարության հրահանգով են կատարվում այդ հարստահարությունները, այլ վատթար և ինքնագլուխ պաշտոնյաների միջոցով. բավական է նրանց փոխարեն ուղարկել արդարամիտ, արդարադատ պաշտոնյաներ և կարելի է «չարիքը բառնալ»: Մի կողմից սեփական աչքերով տեսնել Բ. Դռան ուղարկած կոմիսարների գործունեությունը, նրանց՝ ժողովրդի և եվրոպական պետությունների դեսպանների աչքին «թոզ փչելու» քաղաքականությունը, նրանց և թուրքական կանոնավոր բանակի հասցրած չարիքը գավառահայ ժողովրդին, մյուս կողմից, ինչ-որ պատրանքներ, թե կառավարությունը շնորհներ է խոստացել ժողովրդին և հայերը պարտավոր են «հուսալ և սպասել»:

Դեռևս առաջին ժողովածուում՝ «Գրոց ու բրոցում», Սրվանձտյանցը մեծ ջերմությամբ է խոսում Մամրկանց և Պալըդցոց քրդական ցեղերի մասին: «Թորոս աղբարում» Սրվանձտյանցը մանրամասն ուսումնասիրում է քրդական ցեղերի կյանքը, կենցաղը, սովորույթները, հոգևոր մշակույթը: Մեծ սիրով է արտահայտվում հասարակ քրդերի մասին, որոնց հյուրընկալ վրաններում բազմաթիվ անգամ ապաստան է գտել, պաշտպանվել ամռան տապից, խորշակից, աշնան քամուց և անձրևից: «Թորոս աղբարում» նա մտորում է, թե ո՞ր դարերից են սկսել Հայաստանում ապրել եզդիները: Միևնույն ժամանակ Սրվանձտյանցը նշում է, որ պատմական հանգամանքների բերումով ասորիների և հայերի մի մասը քրդացել են: Քրդերի մոտ նա բացահայտորեն նկատում է սոցիալական խիստ ընդգծված շերտավորում. ազնվականական դասը, որ «թոռուն կըսվին», որոնք ոչ զորք և ոչ տուրք են տալիս պետությանը, ունեն ծառայող

---

[90] «Թորոս աղբար», հ. 2, Կ. Պոլիս, 1884, էջ ԺԲ:

«վողամ» և «ղուլ», իսկ մյուս մասը ռայան է, որը տուրք և զորք է տալիս պետությանը և միանգամայն «ճորտ ու ստրուկ են թուրքերին»: Սրվանձտյանցի համակրանքը աներկբայորեն երկրագործ ռայա քրդերի կողմն է. «Այն քրդերը, որ գեղացի երկրագործ են, ոչ միայն անվնաս են Հայոց հետ և խիստ սիրով, այլեւ քան զհայերն առավել հարստահարեալ այն քանի տոմ բարբարոս քրդերեն, որոնք չիպրանցի թուրքներ կանվանուին»։[91] Քրդական բազմաթիվ ցեղերից առանձնացնում է մահմեդական «գըրըլբաշ», «չըրասոնդուրան», «զազա» ցեղերին: Դժգոհում է, որ մեր պատմական աղբյուրները լռում են նրանց Հայաստան գալու վերաբերյալ, մտորում, թե ո՞ր լեզվախմբին է պատկանում նրանց լեզուն և որ ցեղախմբին են պատկանում նրանք:[92] Կարևորն այն չէ, թե ճի՞շտ են արդյոք Սրվանձտյանցի կռահումներն այդ ցեղերի կազմավորման վերաբերյալ: Կարևորը նրա անխտրական վերաբերմունքն է այլազգի գյուղացիական զանգվածների հանդեպ:

Հատուկ ուշադրության են արժանի Սրվանձտյանցի ստեղծագործության ոճական առանձնահատկությունները: Նրա ոճը հենց իրենն է, սեփականը. նրա ոչ մի տողը չի կարելի շփոթել այլ հեղինակների հետ: Պարզ, հասկանալի, մատչելի, հյութեղ և ռեալիստական գրելաձևը ապահովեց նրա ժողովրդականությունը: Բավական է հիշել Նարեկա վանքի, Նփրատի, արևածագի և այլ նկարագրությունները, պարզ պատկերացում կազմելու նրա գյութող և առինքնող ոճի մասին: Դրա գաղտնիքը առավելապես այն է, որ նա գրելիքը անչափ մոտ ու հարազատ է իրեն, ապրում և շնչում է նրանով: Նա մարմնավորում, ոգի է տալիս, կենդանացնում դաշտն ու անտառը, ծառն ու ծաղիկը, գետն ու լեռը: Ալեկոծվում են Նփրատն ու Բայուն, արտասվում է Արտոս լեռը, բարձր է հնչում Ախավանից ջրերի արձագանքը: Սրվանձտյանցի ոճական այդ առանձնահատկությունները ժամանակին նշել է Ն. Օտյանը. «Ձեր ոճին մեջ՝ Հայոց կռապաշտական դարերուն մոգութիւնն ու գիւթութիւնը կա. Ձեր զգացումներն ու մտածութիւնները քրիստոնեական դարերու

[91] «Դիւան Հայոց պատմութեան», հ. ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 90:
[92] «Մանանա», էջ 138:

սրբությունն ու կուսությունն ունին: Գյլյացող առուներեն, խոնավ հողերեն, թութին ու տերևին մեջ սոսափող հովեն կքաղեք արտոսր և հառաչ...Դուք հոգի կտեսնեք ամեն բանի մեջ և եթե բան մը հոգի չունի՝ դուք հոգի կուտաք անոր»:[93] Սրվանձտյանցի գրելաձևը ըստ արժանվույն գնահատվել է նաև Մ. Մամուրյանի կողմից. «Ձնչին թղթի մը վրա կդրոշմեք միշտ այնպիսի զգացումներ և գաղափարներ, որ մարդ, որչափ երկար գրեք, կարճ կգտնե: Շահնուր (Մամուրյանի կեղծանունը-Է. Կ.) կարծեր, քիչ մը մեծամտությամբ, որ լավ գրող է, հիմակ «Գրոց ու բրոցին» հեղինակին աշակերտելու պետք կզգա...թող ամեն բան. սլաքներ սրել ուսանելու համար»:[94] Սակայն Սրվանձտյանցն իրեն չի համարել խսկական գրող և նշել է, որ ինքը նյութ է մատակարարում գրողներին: Նա հաճախ է զանգատվել, որ ժամանակ չունեցավ ամբողջովին նվիրվելու գրականությանը: Այդ հանգամանքն է նկատի ունեցել Մխիթարյան հայրերից Սիմեոն Երեմյանը, երբ գրել է. «Սրուանձտյանց, այդ համակրելի գրիչը չկրցավ իր միտքը բեղմնավոր ընել, քանի որ ստիպուած էր հովվական զավազանով իր հոտին հոգին մշակել, առաջնորդել և ցույց տալ երկնքի ճամփան, իր ամենեն բարձր կոչումը՝ այդ էր. գրականությունը ժամանակի հաճույք մ'էր, լավ հաճույք, զոր վայելած է միայն իր երկասիրութենանց և խմբագրական գործունեութեան առեն: Կան անձինք, որ պարագաներու բերմամբ գրականութեան տաճարին մեծ քուրմերեն չեն եղած. ատոնցմե է Սրուանձտյանցը և պատճառը իր ոչ անապատական ըլլալն է: Գրականությունը իրեն շատ պիտի նպաստեր, եթե միայն անապատական կեանք մ'ունենար, հեռի ժողովրդական հոգածություններեն»:[95] Սակայն Սրվանձտյանցի մեծությունը հենց նրանում է, ինչի մեջ նրա թուլությունն է տեսնում դիտնականը: Սրվանձտյանցը աննախադեպ ժողովրդականություն, հարգանք և սեր վայելեց այն պատճառով, որ իր ողջ կյանքը անցկացրեց ժողովրդի մեջ, եղավ նրա տրտունջների ու մրմունջների ամենօրյա

[93] «Լումա», 1897, գիրք Բ, էջ 333:
[94] ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., բ 2, գ. 678, էջ 20:
[95] «Բազմավեպ», 1912, N 2, էջ 51:

ականատեսն ու արձանագրողը, նրա հոգևոր գանձերը հայտնաբերողն ու վերստին իրեն վերադարձնողը:

Սփյուռքի հասարակական-գրական գործիչ Սեդրակ Ապանյանը Սրվանձտյանցի կատարած գործը համեմատում է Կոմիտասի գործի հետ. «Ինչ անգնահատելի ծառայութիւն որ մատոյց Կոմիտաս վարդապետ երաժշտութեան մարզին մեջ հայ գեղջուկ երգերու իր զմայլելի ծաղկաքաղով, նոյնը ըրած է Գարեգին եպ. Սրուանձտյանց գավառահայ գրականութեան տեսակետեն»:[96]

Գ. Սրվանձտյանցի լուսավորական, գրական, գիտական ողջ գործունեությունը եղավ իր ժողովրդին ծառայելու մի վսեմ օրինակ: Հակադրվելով տիրող մտայնությանը, ըստ որի ուսումը, գիրը և գրականությունը բարձր դասի մենաշնորհն էր, Սրվանձտյանցը աշխատեց լուսավորություն տարածել ժողովրդի ամենաստվար դասի՝ գյուղացիության մեջ: Ժողովրդին լուսավորելու ուժգին տենչով, ժամանակի հրամայական պահանջով նա դարձավ ուսուցիչ, խմբագիր, գրող, բանահավաք, բանագետ, ազգագրագիր: Նա եղավ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի գործի շարունակողը Արևմտյան Հայաստանում, անհամեմատ դժնի ու սարսափելի պայմաններում, երբ վտանգված էր ժողովրդի ֆիզիկական գոյությունն անգամ: Պետականությունից զուրկ հայ ժողովրդի համար լուսավորությունը հոգևոր հզոր զենք էր հայապահպանության համար մղվող պայքարում, մի աստիճան դեպի ազգային-ազատագրական շարժումները:

96 «Էջեր հայ գրականութենեն», հ. Ա, էջ 6:

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

*XIX դարի երկրորդ կեսը հայ ժողովրդի համար նշանավորվեց ազգային ազատագրական շարժումների վերելքով: Դրանք սուր ծայրով ուղղված էին սուլթանական բռնապետության դեմ, քանի որ հայ ժողովրդի մի ստվար հատվածը բնակվում էր Օսմանյան Թուրքիայի կազմի մեջ մտնող Արևմտյան Հայաստանի բնատարածքում, ուր ապահովված չէր քրիստոնյա բնակչության համար անձի և գույքի անձեռնմխելիությունը: Ահագնանում էր արևմտահայության ֆիզիկական գոյությանն սպառնացող վտանգը: «Սիստեմատիկ սպանութիւն և թալան, խմբական բռնի կրոնափոխութիւն, կուսազրկութիւն, յլկանք, առեւանգում և բռնաբարութիւն հրեշային չափերով, անարդար հարկահանութիւն, սրբապղծութեան ամենազազիր տեսակներ, հարստահարութիւն, գազանութիւններ և ամեն տեսակ անլուր բարբարոսութիւն ոչ թէ անհատական բացառիկ երեւոյթներ են եղել Տաճկահայաստանում հայերի վերաբերմամբ, այլ ամենօրյա համաճարակներ»[1],- գրում է Գյուտ Աղանյանցը «Դիւան Հայոց պատմութեան» ԺԳ հատորում: Այդ հատորում XIX դարի երկրորդ կեսին պատկանող պատմական վավերագրերի գերակշռող մասը Գ. Սրվանձտյանցի կամ էլ նրան ուղղված նամակներն են, որոնց բովանդակությունը գալիս է ապացուցելու հրատարկչի փոքրիկ առաջաբանի դրույթների ճշմարտությունը. այն, որ անմարդկային հարստահարությունները «կատարուել են դարեր շարունակ ոչ թէ պատահական աւազակների ձեռքով, ոչ, այլ իր իսկ՝ կառավարութեան նախամտածուած դիտաւորութեամբ, նրա գործակալների միջոցով և սրանց թելադրանքով ու խրախուսանքով»[2]: «Հարստահարութիւնները Տաճկահայաստանում» խորագիրը կրող հատորի այդ նյութերը միևնույն ժամանակ պարզում*

---

[1] *«Դիւան Հայոց պատմութեան», հ. ԺԳ, էջ Ա:*

[2] *Նույն տեղում:*

*են մի այլ հանգամանք, այն, որ 60-ական թվականներից սկսած, Գարեգին Սրվանձտյանցը հարել է իր ուսուցիչ Մկրտիչ Խրիմյանի ղեկավարած այն հոսանքին, որը չի հաշտվել ստեղծված կացության հետ և գավառահայության լեռնացած բողոքը խնդրագրերի ձևով ուղարկել է Բ. Դուռ, գործուն մասնակցություն ունեցել արևմտահայության հուզող խնդիրների լուծմանը, աշխատել իր գործունեությամբ գեթ սպեղանի դնել հարազատ ժողովրդի վերքերին:*

*Սրվանձտյանցի քաղաքական գործունեությունը կարելի է բաժանել երեք շրջանի. 1860-70-ական թվականներ՝ մինչև ռուս-թուրքական պատերազմը և Բեռլինի կոնգրեսը, 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի և Բեռլինի կոնգրեսի ժամանակաշրջանը և 1880-ական թվականներ:*

* * *

*Սրվանձտյանցի գործունեության սկիզբը՝ 1850-ական թվականների վերջը, համընկնում էր այն տարիներին, երբ հայ իրականության մեջ «փուռն վերելք էին ապրում ազգային-ազատագրական ոգորումները, երբ հասարակական լայն զանգվածներն սկսել էին տոգորվել ապագայի ռոմանտիկ երազանքներով»*[3]*:*

*Վասպուրականը Արևմտյան Հայաստանի ամենից հայաշատ, բայց և ամենից հարստահարված նահանգներից էր: Ազգային և սոցիալական ճնշումները Վասպուրականում և Տարոնում հասնում էին սարսափելի չափերի: Դանակը ոսկորին հասած ժողովուրդը տարերայնորեն ընդվզում էր և այդ ընդվզումները ստանում էին ձևավորված ազատագրական երանգ՝ հայրենասեր գործիչների մասնակցությամբ: Վարագա վանքում հաստատված Խրիմյանն ու նրա աշակերտները դրան ձեռնամուխ եղան իրենց «բանիւ և գրչով»: Նրանց ամենօրյա գործունեությունը և «Արծուի Վասպուրական» հանդեսում լույս տեսած հոդվածները քիչ դեր չխաղացին Վասպուրականի և ողջ հայության ազատագրական շարժումների գաղափարական նախապատրաստման գոր-*

---

[3] *Ա. Ղանալանյան, Հայ բանահյուսության մեջ երախտավորը, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, N 1, էջ 18:*

ծում: Սրվանձտյանցի գործունեության փայլուն մասն է կազմում այն աշխատանքը, որ նա կատարեց իբրև «Արծուի Վասպուրականի» փոխխմբագիր և «Արծուիկ Տարօնոյի» խմբագիր: Վասպուրականում և Տարոնում լույս տեսած այդ պարբերականներում նա անվարան պաշտպանում էր ազգային-ազատագրական գաղափարներ, պայքար մղում սնփական և այլազգի հարստահարիչների դեմ: «Արծուի Վասպուրականում» լույս տեսած Սրվանձտյանցի առաջին հոդվածները արտահայտում են երիտասարդ գործչի լուրջ խորհրդածությունները հայրենիքի և նրա ապագայի վերաբերյալ: «Շիրիմք նախնեաց»[4] հոդվածում հեղինակը բացահայտում է այն կապը, որ գոյություն ունի ժողովրդի կամ ազգի անցյալի և ներկայի միջև: Այն ազգը, որն ունի իր ինքնության հավաստող պատմական վկայություններ, հեշտությամբ տեղի չի տալիս բռնակալների առջև. նա պայքարում է իր ապագայի համար: «...Նախնեաց յիշատակներ այնչափ մեծ արգիւնք ունեն, որ ազգութիւն անոնւ հաստատ կմնա, ազգաց մեռելութիւն անոնւ կկենդանանա, նահատակաց հոգիք անոնւ կզօրանան և հայրենեաց վերանորոգութիւն այն տեղեն կյառաջանա: Ասոր համար, շատ բարբարոս ու խորամանկ բռնաւորներ երբոր ազգ մը բնաջինջ առնել կամ ազգութիւն ուրանալ տալ ուզէին, նախ այն ազգի մէջ եղեալ գրքերը կայրեին, կարդացողներ կսպանեին, նախնեաց շիրիմներ կքանդեին և այն ազգի դիւցազանց, նահապետաց, թագաւորաց և քաջաց պատուական ոսկորներ կ'փշրեին կամ կ'վառեին»[5]: «Արծուի» «արժանընտիր» աշակերտը երիտասարդական ավյունով ու խանդավառությամբ հայրենասիրություն էր քարոզում իր հայրենակիցներին, այն համարելով «գերյարգո առաքինութիւն և իսկական բարեաց բուն արմատ»[6]: Պատկերավոր արտահայտություններով նա նկարագրում էր ժամանակի Հայաստանի բաժան-բաժան վիճակը, որը միամտորեն բացատրում է սոսկ անմիաբանության և ճշմարիտ հայրենասիրության բացակայությամբ[7]: Այդ հողի վրա էլ նա քննադատում է հայրենիքի հասկացության երկու խեղաթյուրում-

[4] «Արծուի Վասպուրական», 1861, N 2, էջ 56-64:
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում, N 3, էջ 87:
[7] Նույն տեղում:

ները: Նա ձաղկում է առևտրա-վաշխառուական բուրժուազիայի ներկայացուցիչներին, որոնք հանդես էին գալիս ընդհանրապես հայրենիքի գաղափարի ժխտումով: Ի՞նչ հայրենիք, ի՞նչ ազգ. «որտեղ հաց, այնտեղ կաց»: Դատափետելով այդ գաղափարների ջատագովներին, Սրվանձտյանցը նշում է նրանց վնասակար ազդեցությունը համազգային շահերի համար. «Ահա մեր հայրենիք, ուր բաղդի տեր եղած ենք, ուր կալուածներ ու ժառանգութիւններ ստացած ենք… Այս ասելով անխիղճ սրտիւ քանիսն էլ միամիտներէն իրենց հետ ձգելով յառաջ կտանեն իրենց նպատակ»[8]: Հայրենիքի գաղափարի երկրորդ խեղաթյուրումը գավառասիրությունն է, այսպես կոչված տեղական հայրենասիրությունը. դարձյալ ետին պլան են մղվում համազգային, համահայկական խնդիրները. «Ես Կարին քաղաքացի լինելով պարտիմ միայն իմ հայրենեաց, այսինքն Կարնո ազգայնաց յառաջադիմութեան օգնել. Խարբերդցին տկար և աղքատ ժողովուրդ, ես նորա օգնելու չեմ պարտ, ահա ես միայն իմ հայրենիք Կարին լուսավորելու համար իմ հայրենասիրութեան պարտքս վճարեցի»[9]: Պատմությունից վերցրած փաստերով Սրվանձտյանցն ապացուցում է նաև այդ կարծիքի արատավոր լինելը: Այս երկու տեսակետներն էլ նա իրավացիորեն համարում է «միևնույն աղբյուրե ջուր խմած»: Իրապես, դրանք նույն մեդալի երկու երեսներն էին. Հայրենասիրության վերամբարձ խոսքերով քողարկված այդ երկու տեսակետների կրողներն էլ վնաս էին հասցնում հայրենիքին և հայրենասեր գործիչներին: Մի հայացք նետելով հայոց պատմության քառուղիներին, Սրվանձտյանցը դատապարտության իր խոսքն է ուղղում ազգի աշխարհիկ և հոգևոր պետերին, որոնց անմիաբանության պատճառով «խեղճ ժողովուրդը կվտանգի»: Գտնելով, որ «հայրենեաց բարգավաճութեան մեկ հատիկ հնարք է միութիւն, և ավերման՝ անմիաբանութիւն», Սրվանձտյանցը կոչ է անում իր ժամանակակիցներին չխնայել ոչ մի ջանք և միջոց Հայաստանի միավորման համար: Ի՞նչ դեղատոմս է առաջարկում հեղինակը, ի՞նչ է պահանջում իսկական հայրենասիրությունը. «Մեր կտրտած երակներ իրարու հետ հոգելու

[8] Նույն տեղում, էջ 92-93:
[9] Նույն տեղում:

համար անխտրութիւն պէտք է ունենայ հայրենասէրն. և ճանաչելով, որ բուն հայրենիք կկայանայ այն տեղին վրայ, ուր մեր դիւցազանց և սրբազան հարց յիշատակներն են. ահա այն տեղն է մեր սիրտ, ո՛ հայրենասէրք, մեր ազգութեան վիրաւոր սիրտը այնտեղ նեղութեան և ցաւոց ի ներքո կ'հեծէ, կ'մորմոքի»[10]: Պարզվում է հեղինակի բուն միտքը. հայրենիքի սիրտը այն ժողովուրդն է, որը հանձն առնելով ամեն տեսակի կեղեքումներ ու հարստահարություն, ապրում է հայրենի երկրում և չի մտածում գաղթի կամ պանդխտության մասին: Այդ ժողովուրդն է, որ պահել, պահպանել է «ազգի միութեան քայքայուած հիմունքը», բայց նա «դժբախտ է, կարօտ և անտանելի վիճակի մէջ»: Սրվանձտյանցը կոչ է անում հայ հարուստներին «օգնել տնանկին». նա միամտորեն կարծում է, որ հարուստների օգնությամբ հայրենիքը կամ ազգը կարելի է լուսավորել[11]: Այստեղ կարևորն այն չէ, որ սակավին երիտասարդ գործիչը պատրանքներ ունի, թե հարուստները հայրենասիրությունից դրդված կօգնեն աղքատներին, կարևորը նրա հայացքն է ժողովրդի վերաբերյալ: Դեռևս գործունեության առաջին փուլում Սրվանձտյանցի հայացքներում ընդգծվում է դեմոկրատական դիրքորոշումը ժողովրդի և նրա շահերի նկատմամբ:

Սրվանձտյանցի հոդվածներն աստիճանաբար ավելի ռեալիստորեն են վերարտադրում հայ գյուղացու իրավիճակը, սովորեցնում նրան պայքարել արատավորված պատվի և ոտնակոխ եղած իրավունքի պաշտպանության համար:

1862 թ. ապստամբում է Զեյթունը: Ժողովուրդը ոտքի է կանգնում պաշտպանելու իր ազատությունը, մարդկային արժանապատվությունը: Զեյթունի հերոսամարտերից քիչ անց «Արծուի Վասպուրականում» լույս է տեսնում «Սկսենք մեր գործ, նորէն սկսենք» հոդվածը, ողջ հայության պայքարի հրավիրող, չհուսահատվելու հորդորող և գալիք մարտերին պատրաստ լինելու կոչը: Այն Զեյթունի ապստամբության անմիջական արձագանքն էր: Հոդվածը նշանակալից է Սրվանձտյանցի ողջ գործունեության տեսանկյունից: Պարզ ու մատչելի լեզվով հեղինակը կարծես

---

10 Նույն տեղում, էջ 93:

11 Նույն տեղում:

գրույցի է բռնվում հայ գյուղացու հետ. «Էսօր վաղ չասենք... երկնից քամին անպակաս է... մարդ է, կինկնինք կանգնենք, ինչի՞ կհուսահատինք. ինչի՞ կթուլանանք»[12]: Հեղինակը սրաթափանց ակնարկով հասկացնում է հայ ազատամարտի մասնակիցներին, որ չհուսահատվեն ապստամբության պարտությունից, թողնեն լացն ու արցունքը («լացը հների բաժինն է») և նորից սկսեն գործը: Երիտասարդ Սրվանձտյանցը գիտի, որ ժողովրդի ազատագրության համար պայքարողը կարող է լինել հայ գյուղացիությունը և նրան է ուղղում իր խոսքը: Կյանքը հավերժ պայքար է հնի և նորի միջև, այդ պայքարում հաղթողը անպայման պետք է լինի նորը: Հեղինակը ազգի ազատության համար մարտնչողներին համարում է նոր սերունդ և նրանց ներշնչում է հաղթելու վճռականություն: «Կոխն ու կոխուիր, զարկ ու զարկուիր, ինկար վեր կանգնիր, անշուշտ կյաղթես, մեռնիս էլ կյաղթես. վերջապէս կյաղթես, վասնզի նոր ես ու լուսաւոր ես, բարի ես, ճշմարիտ ես»: Ինչպես «Հայրենասիրութիւն և Հայրենիք», այնպես էլ այս հոդվածում Սրվանձտյանցը միաբանության ու միասնության կոչ է անում իր հայրենակիցներին: Այդ կոչը նա մատուցում է իբրև աստվածային պատգամ, որպեսզի ժողովուրդը հեշտությամբ ընկալի և կատարի այն: «Կպատուիրէ (աստուած) մեզ միաբան լինել, միաբան խորհել, միաբան մեռնել, միաբան ապրել: Միանանք մէք ուրեմն եղբարք. զօրութիւն ի միութիւն և յաղթութիւն ի զօրութիւն»: Հեղինակը գտնում է, որ եկել է այն բարեպատեհ ժամանակը, երբ ամեն մի ազգ կարող է պայքարել իր ազատության համար. նրա ականջին հնչում են արևմուտքից և հյուսիսից եկող հեղափոխության գոռ հնչյունները. « Են դէհ մի կռիվ կա. կլսե՞ք նախանձաւոր ահաւոր ձայներ. ձայն արեւմուտքից, ձայն հիւսիսից, ձայն և ամէն կողմից. մի սարսափիք, նոքա մեզ քաջութիւն թող տան. կուգան դեպի մեզ, մենք հավ չենք, մենք էլ մարդ և մարդու զաւակ ենք, հայ և հայու ժառանգ ենք»: Սակայն ո՞վ պետք է պայքարի ժողովրդի ազատության համար. ոչ զառամյալ ծերերը, ոչ էլ անհամբեր մանուկները. պայքարի հիմնական ուժը պետք է լինի հայ երիտասարդությունը՝ թևերի վրա «ազատականու-

[12] «Արծուի Վասպուրական», 1862-63, N 1, էջ 9:

թիւն բևեռած». նա պետք է ընթանա «նահատակութեան շավ-ղով» և, ըստ Սրվանձտյանցի, դա ամենաիրավ ճանապարհն է: Հեղինակը կոչ է անում չվախենալ մրրկոտ երկնքից և ոտքի ա-ռաջ լարված որոգայթից. «որոգայթները խորտակիր,որ թռչես ու անցնես»:

Այդ նույն ժամանակ Վարագա խումբն իր ուսուցչապետով, կարող աշակերտներով ամենօրյա աշխատանք են կատարում գյուղացիության լայն շրջաններում: Լույս տեսած պարբերականի ամեն մի համարին զուգակցվում են Խրիմյանի և նրա սաների բանավոր քարոզները:

Չնայած արխիվային վկայությունների բացակայությանը, կարծում ենք, որ 1862-1863 թթ. Վանի և Վասպուրականի ժո-ղովրդական հուզումների մեջ իր մասն է ունեցել նաև Վարագա խումբը, մանավանդ, որ իր գործունեությամբ նա արդեն վաս-տակել էր տեղի մեծահարուստների և կառավարական պաշտոն-յաների թշնամությունը:

1862 թ. Սրվանձտյանցը Խրիմյանի հետ մեկնեց Տարոն, ուր նրա առաջ բացվեց գործունեության լայն ասպարեզ: Այս-տեղ նա տեսնում է նույն ճնշումներն ու կեղեքումները. սահմա-նադրությունը, թաղական խորհուրդները ոչնչով չեն բարելավել տարոնցիների կյանքը: Սահմռկեցուցիչ պատկերները հաջորդում են միմյանց. ամեն օր հարյուրավոր երիտասարդներ հրաժեշտ են տալիս կյանքին, ավելի ստվար մասը դիմում է զանգվածա-յին գաղթի կամ պանդխտության: Սրվանձտյանցի խմբագրութ-յամբ լույս տեսնող «Արծուիկ Տարօնոյ» ճակատին դրված «Թռուցեալ թեւոք Վասպուրական Արծուոյն» նշանակում էր, որ աշակերտը հայտարարում էր ուսուցչի սկզբունքներին հավատա-րիմ լինելու մասին: Թերթի առաջին համարում խմբագրի ստո-րագրությամբ լույս տեսած առաջնորդողում շարադրված են այն խնդիրները, որոնք նպատակ է դրել իրականացնել այդ փոքրա-ծավալ թերթը: Թերթը կոչված էր Հայաստանից ավետիսներ, զուժեր և պատգամներ հաղորդել պանդուխտ հայրենակարոտ հայերին: Որն է «Արծուիկի» հավատամքը. «Քո ճանապարհ ճշմարտութիւն լինի, քո եղանակ բարեխառն խոհեմութիւն, քո ընթացք զգուշութիւն, քո շունչն ազատութիւն, քո բարբառ՝

հայրենասիրութիւն»[13]: Նկարագրելով Տարոնի գյուղացիության կրած ահավոր տառապանքները, Սրվանձտյանցը ակնհայտորեն դատապարտում է նրա հնազանդությունը: «Արծուիկը» ծաղրում է բոլոր նրանց, ովքեր դեմ էին ըմբոստացման, ազատագրական շարժումներին և քարոզում էին հեզություն և համբերություն[14]: Հետաքրքիր է «Մեր վիճակի վրա յա՞նք, թե ծծղանք» հոդվածը, որը դատապարտում էր ստրկամիտ, ամեն տեսակի անարգանքներ հանդուրժող մարդուն: Դրան խմբագիրը հակադրում է ըմբոստանալու, ոտքի ելնելու, չհնազանդվելու իր կոչը. «Կպարծենա՞ս, թե միամիտ իբրև զաղաւնի ես, մեկ աչքդ պակաս է. Աւետարանի հայ, խորագետ ալ եղիր. օձերու կհանդիպիս, կխայթեն զքեզ: Մարդ պէտք է առիւծ լինի, գայլերէն չաղթուելու համար, գառ լինի իր նրամի հետ վարուելու համար»[15]: Դեռևս պատրանքներ ունեցող գործիչը կարծում է, որ նույն հոտում, այսինքն հայ ժողովրդի մեջ, անհրաժեշտ է գառ լինել, սակայն կարճ է տևում այդ մտայնությունը: Խմբագիրը ձաղկում է Կ. Պոլսի Ազգային վարչության ու Ազգային ժողովում ժամանակ վատնող էֆենդիներին, որոնք հանգստությամբ ընդունում են կառավարության՝ Վանը, Մուշը իբրև Քրդիստան ներկայացնելու միտումը. փոքր-ինչ հետո ամբողջ Հայաստանը կկոչվի Քուրդիստան, այլևս ո՞ւմ համար են ժողովն ու վարչությունը: «Արծուիկի» էջերում հականե-հանվանե ձաղկվում են հայ մեծահարուստները, վամպիր հոգևորականները, որոնք դաշնակցած կառավարության պաշտոնյաների հետ, յուրացնում են հայ գյուղացու քրտինքի արդյունքը: Այդ բոլորը չի վրիպում կառավարության աչքից և 1864 թ. ժամանակավորապես փակվում է թերթը: Դրա մասին ժամանակի պարբերականներից մեկում կարդում ենք. «Խրիմեանի համար սոսկալի մատնութիւններ եղան, որոնք միայն Խրիմեանի չէին վերաբերեր, այլ ընդհանուր ազգին... Արծուիկ թերթին մատնութիւնը ու անոր խափանումը, տպարանի գոցուիլը և վարժարանի ցրուիլը դեռ մոռցուած չեն. ասոնք փո՞քր հանցանքներ են... և նոյնիսկ Սահմանադրութեան դեմ

---

[13] «Արծուիկ Տարօնոյ», 1863, N 1:

[14] Տե՛ս Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955, էջ 248:

[15] «Արծուիկ Տարօնոյ», 1863, N 2:

աքացի հարուած»[16]: Վերը նշված մատնությունը վերաբերում էր ոչ միայն Խրիմյանին, այլ Սրվանձտյանցին, նա էր թերթի խմբագիրը, վարժարանի տնօրենը: Սակայն դա չի ընդհատում Սրվանձտյանցի գործունեությունը: Կ. Պոլսի «Ժամանակից» հնչում է նրա ահազանգը Ազգային վարչության ականջին. «Տարօնոյ Արծուիկ՝ ես թէեւ թեւաթափ թեւակապ եղած, բայց ողոսկերով տեղս հասած առ ձեզ գոյժ կհարկանեմ. Հորս գուժարերն եմ: Մուշը մշակ, Տարօնը տարան, անոր բնակիչներ յետզյետէ փախան... Շատերն անօթութենէ մեռան... վերջին գուժարերին կսպասե՞ք, որ դա ալ գուժէ, թէ ահա Տարօնոյ տունը ամբողջ փլաւ և իր որդիքը տակը մնալով ողջ-ողջ մտան գերեզման»[17]: Մի քանի ամիս Կ. Պոլսում գործելով, Խրիմյանը և Սրվանձտյանցը արդարանում են և նորից սկսվում է թերթի հրատարակությունը: Թերթի առժամանակյա խափանումը չէր վհատեցրել Սրվանձտյանցին. նույն ուժգնությամբ հնչում են նրա կոչերն ու հորդորները: Թերթի հրատարակության մեկ տարին լրանալու կապակցությամբ գրած առաջնորդողում հայրենասեր գործիչը պատմում է «Արծուիկի» «գլորած մեծամեծ քարերի մասին», նշում է, որ «Արծուիկը» երբեմն «բզկտուել է, թափուել են փետուրները», բայց դեռևս կենդանի է և ազատ: «Արծուիկի» էջերում է տպվում Սրվանձտյանցի գրչին պատկանող տարոնցիների ողբալասան աղերսը՝ ուղղված Ազգային վարչությանը. «ալ դանակը մեր ոսկորին հասած է»: Համերաշխվելով այդ հոդվածի հետ, Հարություն Սվաճյանը այն արտատպում է «Մեղվում»: Կ. Պոլսի հայությունը հաղորդակցվում է հայ գավառի կյանքի իրական պատկերին: Մատնությունից խուսափելու համար թերթը հաճախ է դիմում եզովպոսյան լեզվին. «Ով մարդ, դուն քեզի օգնէ, որ աստուած ալ օգնէ»:... Աղուես քուն եղած ժամանակ կարող չէ հավ որսալ. մարդ երազի մէջ չի կարող հաց վաստակել. երկար քնանալու տեղը գերեզմանն է»: «Բաւ է թմրութիւն, ժամ է առաքինանալ, իմաստնանալ»[18]: Այս գրավոր նյութերին զուգակցվում է

---

16 «Ժամանակ», 1864, N 47, էջ 168:
17 Նույն տեղում, N 27, էջ 8:
18 «Արծուիկ Տարօնոյ», 1863, N 3:

Սրվանձտյանցի ամենօրյա եռանդուն աշխատանքը: Նա շրջում է Տարոնի բոլոր գյուղերը, զրուցում գյուղացիների հետ, ոգեշնչում նրանց, մեկ առ մեկ արձանագրում գյուղացիների կրած զրկանքները: Սրվանձտյանցի նախաձեռնությամբ կազմվում և Բ. Դուռ են ուղարկվում բողոքի հանրագրեր: Կառավարությունը ցանկանում է վարագուրել իր պաշտոնյաների կատարած չարաշահումները և հարստահարությունները վերագրել միայն քրդերին: Սրվանձտյանցը պատասխանում է. «Քրդերու վնաս ի քաղաք պետութեան կրողորենք, բայց քաղքեն ընդունուած վնասը որի բողոքենք... օրըստօրէ հրաման կուգա, հարուած կուգա մեզ վրա, կխլէն զհարըն ու զարին մեր ձեռքէն. իրր թէ փարայով. տասնէն մեկը հազիվ հաշուելով. ճանապարհներու ձիները մեր քանալով, բեռներ մեր քամակով կրելով և մեր տավարներ անօթի պահելով մեռցնելով...»[19]: Այդ աշխույժ գործունեությունը երկար չի տևում: 1865 թ. Տարոնի ցեցերը և խավարամոլ հոգևորականները (մասնավորապես Մամիկոնյան Վարդան աղան և սբ. Կարապետի միաբանությունը) ծանր ամբաստանում են Խրիմյանին և նրա գործակիցներին՝ ներկայացնելով իբրև Օսմանյան կայսրության թշնամիներ[20]: Բ. Դուռը պատրիարքից պահանջում է հեռացնել Խրիմյանին առաջնորդական պաշտոնից: Ընդմիշտ փակվում է «Արծուիկը», փակվում են վարժարանները: Խրիմյանը և Սրվանձտյանցը կրկին մեկնում են Պոլիս:

1863 թ. հեղափոխականորեն տրամադրված արևմտահայ երիտասարդներից մեկը՝ Պաղտասար Նորատունկյանը, Հռոմից նամակ է գրում Մ. Խրիմյանին, առաջարկելով ստեղծել մի կազմակերպություն, որի նպատակը պետք է լիներ Հայաստանի «շղթաների խորտակումը»: Այդ կազմակերպությունը պետք է երկար տարիներ գաղտնի աշխատանք ծավալեր Հայաստանի ազատագրության համար: Սակայն նամակագիրը ծողովրդական յայն նյութների փոխարեն առաջարկում էր նեղ գավառական գործելակերպ[21]: Գործունեության հստակ ուղենիշ դեռևս չունեցող Խրիմյանին և նրա աշակերտին հետաքրքրում էին նման ա-

---

[19] Նույն տեղում:

[20] Մատենադարան, ձեռ. N 4177, էջ 53. տե՛ս նաև Խ. Մալումեան, Մ. Խրիմեան, Թիֆլիս, 1892, էջ 56-62:

[21] Տե՛ս «Դիւան հայոց պատմութեան», հ. ԺԳ, էջ 55-59:

առաջարկները: Այն փաստը, որ այս նամակը պահվում է Սրվանձտյանցի արխիվում, ցույց է տալիս, որ Հայաստանի ազատագրության ուղիներ որոնելիս Խրիմյանը և Սրվանձտյանցը համախոհներ են եղել:

1867 թ. Սրվանձտյանցի կուսակրոնության ընդունելը ավելի է դյուրացնում հասարակական գործունեությամբ զբաղվելու նրա հնարավորությունները: Վարչական ունակություններ ունեցող Սրվանձտյանցը հայտնվում է մերթ Վարագում, ուր, Խրիմյանի արտահայտությամբ, «արծիվյանների խումբը հաշտվում է», օգնում է նրանց, մերթ գործում է Կարինում քաղաքային վարժարանների լիազոր տեսչի պաշտոնով, մեծահասակներին ոգևորում ազգային պատմության դասերով, մերթ էլ վարում է ս. Կարապետ վանքի վանահայրության փոխանորդի պաշտոնը: Ամենուրեք նա հանդես է գալիս իբրև ժողովրդի շահերի ջերմ պաշտպան, պայքարում կառավարական պաշտոնյաների դեմ, Կ. Պոլսի ազգային լրագրերին հաղորդում գավառում կատարվող իրադարձությունների ճշմարտացի պատկերը: «Մանզումեի էֆքիարում» հնչում են Սիրքանա եկեղեցու սրբապղծության, Վարդոյի և Հովհաննավանքի կողոպտման ահազանգերը. միևնույն ժամանակ նրա սթափ աչքը տեսնում է, որ ճիշտ է, այդ չարիքները կատարում են քրդերը, սակայն նրանք փաստորեն գործիք են կառավարության ձեռքում: Մի նամակում Սրվանձտյանցը զգուշացնում է Խրիմյանին, որ եթե ինքը գովի մյութեսարիֆին կամ փաշային, դրան չպետք է հավատալ, այդ բանը նա անում է իբրև դիվանագիտական քայլ. «Դու մի հաւատար իմ նախորդ տեղեկագրիս մէջ գրուած փաշային և քանի անձանց գովեստները հիւսելու, այնպէս պէտք էր գրել, բայց հասկացողը կհասկնար այն բառերէն, որ քովը գրած եմ, թէ «կուզեմ գովել» և թէ «փոսստացած եմ գովել»[22]:

Սրվանձտյանցի այդ շրջանի ամենաաչքի ընկնող գործերից է «Մշեցւոց վրայ ընդհանուր տեսութիւն մը»[23] ընդարձակ հոդվածաշարը, որը գրվել է Խրիմյանի խորհրդով: Հոդվածաշարը նկարագրում էր հայ ժողովրդի տառապանքները, մերկացնում

---

22 Նույն տեղում, էջ 110-111:

23 «Մանզումեի էֆքիար», 1869, N 892, 895, 898, 902, 918, 921, 923:

*Մուշի պետական պաշտոնյաների գործունեությունը: Թվարկելով Տարոնի հայության կրած հարստահարությունների բազմաթիվ դեպքեր, վարպետ գրչով նկարագրելով հայ ժողովրդի անլուր տառապանքները, Սրվանձտյանցը անարգանքի սյունին էր գամում համակերպություն և հնազանդություն քարոզող հայ հոգևորականության ներկայացուցիչներին, որոնք ասում էին. «Քրիստոս մեզ համար ասեր է, եթէ ով հարկանէ զծնոտ քո, դարձո նմա և զմիւսն և որ կամէ հանել զշապիկ քո՝ թող նմա և զբաճկոն քո… ի՞նչ անենք, Քրիստոս մեզ հրաման չէ տվեր, որ մեր զարնողին զարնենք, մեզ զատողին զատենք»: Սրվանձտյանցը չարին չարով չհակառակվելու քրիստոնեական համակերպության քարոզի փոխարեն «նահատակութեան հանդէսի» է հրավիրում հայ շինականին. «Մշեցի հայն եթե հայ լինէր և մարդ, ինչո՞ւ պիտի ստացվածքը, իր տունը և կալուածքը, իր կինն ու զաւակը. իր գոյքը և կեանքը թողուր նվաճուիլ քրդերու և գէշ մարդերու անիրաւ ձեռաց ու կամաց ներքեւ, նաեւ մինչեւ անգամ իր հոգին ալ վերջին ստրկութեամբ եւ վատութեամբ թողով, որ բռնաբարէն, ծառայեցնէն ու նախատէն. սոքա կարծես ոչ բանականութեան մէջ խորհուրդ, ոչ քաղաքականութեան մէջ պատիւ, ոչ բարոյականութեան մէջ շնորհք և … ոչ հոգւո ու կամքին մէջ ազատականութիւն ունին, ինչպէս իրենց արդի անտարբեր վիճակը կապացուցանի»[24]: Այս հոդվածում նա կոչ է անում իր հայրենակիցներին. «Մահը աչք առնել և չթողուլ թշնամւոյն ուզածն ընելու, այնինչ կմեռնին և կսպանուին ամէն ժամանակ շատերը. բայց զուր տեղը, ոչ իրենց կեանքը նշանաւոր լինելով և ոչ իրենց մահը պատուաւոր ու արդիւնաւոր»[25]:*

*Հոդվածաշարի առաջացրած աղմուկը պոլսահայության և օսմանյան կառավարող շրջաններում այնքան մեծ էր, որ վեզիր Ալի փաշան հրամայում է թարգմանել հոդվածը թուրքերեն և առաքել Կարնո կուսակալին, որպեսզի վերջինս ծանոթանա հոդվածի բովանդակությանը և տեղեկություն հաղորդի հոդվածաշարի ու հարստահարության նկարագրության ճշմարտացիության մասին: Կուսակալը ստիպված պատասխանում է, որ հոդվածը*

---

*[24] Նույն տեղում, N 921:*
*[25] Նույն տեղում:*

*համապատասխանում է իրականությանը և, հարստահարություն-ների ցուցակը նույնիսկ թերի է: Այդ պատասխանն ստանալուն պես Ալի փաշան կուսակալ Իսմայիլ փաշային հրամայում է ան-հապաղ գտնել և բանտարկել Հովհաննավանքի կողոպտիչներին, անձամբ այցելել Մշո մյութեսարիֆությունը, կալանավորել Հաս-նանցի և Ջիպրանցի թոռուն կոչվող քուրդ ավազակներին և մյուս բոլոր ոճրագործներին: Իբրև քննիչ Մուշ են մեկնում Օս-ման պեյն ու Ազգային ժողովի անդամ Խորասանյան Դանիել է-ֆենդին: Իհարկե, Ալի փաշայի նման գործելակերպը հետա-պնդում էր ոչ թե արդարություն հաստատելու, այլ եվրոպական պետությունների դեսպաններին հանգստացնելու նպատակ:*

*Այսպիսով, 60-ական թվականներից սկսած իր անզիջում և սկզբունքային պայքարի համար արդեն երկրորդ անգամ Սրվանձտյանցի անունը հոլովվում էր կառավարող շրջաններում և արժանանում անվստահության ու դժգոհության:*

*Սրվանձտյանցի 1862-1869 թթ. գործունեության շրջանը բուռն էր ու փոթորկոտ: Նա ամենօրյա շփման մեջ էր ժո-ղովրդի, գյուղացիության հոծ զանգվածների հետ: Թուրք փաշա-ների ու քուրդ բեկերի հարստահարություններից պաշտպանվե-լու, իրենց հազարավոր ցավերին դարման խնդրելու համար Տա-րոնի հայերը «թռչնոց երամի նման թափվում էին Գ. Սրվանձտյանցի վրա»,- գրում է Վ. Պարսամյանը Սրվանձտյանցի տարոնյան շրջանի գործունեության մասին[26]:*

*Խրիմյանը բարձր գնահատական է տվել Սրվանձտյանցի տարոնյան շրջանի գործունեությանը: «Դուն աշխատավոր մեծ մշակ... ես Տարոնո աշխարհին մէջ. դուն այնչափ գործեր ես, որ Հայրիկ քանի մի տարուա մեջ չգործեց»[27],- գրել է Խրիմյանը 1863 թ. դեկտեմբերին:*

*Ընտրվելով Կ. Պոլսի պատրիարք, Խրիմյանը գավառից մայ-րաքաղաք է տանում արևմտահայության ցավերին դարման գտնելու իր անհուն ցանկությունը, աշակերտը՝ «մարտադիր զինվորը», մնում է գավառում գիշեր ու զոր գործելու մեծ ե-ռանդով ու պատրաստակամությամբ: Լայն էր Սրվանձտյանցի*

---

*26 Վ. Պարսամյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1967, էջ 310:*
*27 «Դիւան Հայոց պատմութեան», հ. ԺԳ, էջ 142:*

*գործունեության ոլորտը այդ տարիներին. նա Վարագա և սբ. Կարապետի վանքերի վանահայրության փոխանորդն էր: Սրվանձտյանցի անընդհատ հրաժարականներին Խրիմյանը պատասխանում էր կտրուկ մերժումով. «Եթէ Հայրիկի ովստին մէջ երկու հատ Գարեգին վարդապետ ըլլար, անշուշտ, դձեզ ազատ կթողնէի, բայց միայն եք. պէտք է տանիք ձեր առաքելութեան պաշտօնը մինչև աստուած ուրիշ Գարեգին մի հանէ, կամ թողնիկ ծնիք ...Ոտքիդ մէկը սբ. Կարապետ կապած է, մէկն ալ ի Վարագ. Մուշ և Վասպուրական աշխարհ քո առաջադիմութեան ասպարէզ պէտք է լինեն»*[28]*: Վանահայրության փոխանորդը սոսկ հոգևոր խնդիրներով չպետք է զբաղվեր. նրան պետք է մտահոգեին այլ հարցեր ևս. նա պետք է կարգավորեր ժողովրդի և կառավարության փոխհարաբերությունը, հայրենյաց թշվառությունը հաներ լույս աշխարհ, բողոքագրերի ձևով մատուցեր կառավարությանը, ցույց տալու, թե «փր հպատակաց աղետները ո՞ւր հասած են»:*

*Սրվանձտյանցը դրսևորում է կազմակերպչական-վարչական գործչի մեծ ունակություն: Նրա անմիջական միջամտությամբ Բ. Դուռ ուղարկված ազդու բողոքագրերի շնորհիվ հաճախ պաշտոնանկ են արվում օսմանյան կառավարության այն պաշտոնյաները, որոնք չափից ավելի չարաշահում են իրենց պաշտոնը: Շրջահայացության շնորհիվ Սրվանձտյանցին հաջողվում է պաշտպանել հայ առաջադեմ գործիչներին, որոնց շուրջը կառավարական պաշտոնյաները դավեր են նյութում: Պատրիարք Խրիմյանը բարձր է գնահատում իր աշակերտի այդ ունակությունները և գավառների գործերը կարգավորելու համար հաճախ է դիմում նրա օգնությանը: «Ծիր վարդապետ, գիրս ստանալուն պես կարդա, և էջ ճէպով ի Մուշ, Աղվաննեանին դեմը դավաճանութիւն մի կա միւթեսարիֆին և իւր կամակից կողմէն. այդ դավաճանութիւնը ամէն ճիգ թափե որ ցրես... ամէն կերպ համոզանքներ ի գործ դնելով ջանացիր այդ աղուես որսալ, թերևս անցնի դավաճանութեան վտանգը, ապա թէ ոչ, Աղվանեան զոհ*

[28] *ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., բ. 2, գ. 449:*

պիտի երթա: ... Ուստի դուք ձեր արուեստ ի գործ դրեք, բուն տեղէն խորտակեցէք այդ դաւաճանութեան շէնքը»[29]:

Սրվանձտյանցի այդ շրջանի գործունեության գնահատականը կարող է համարվել ժամանակի գործիչներից մեկի՝ Պողոս Թումայանի նամակը. «Հաշտենց գավառ և Վարդո հանդարտ են հիմա, նոյնպես և դաշտ, հարկ չեմ համարիր ձեզ ըսել, թէ ասիկա ձեր ազգասիրութեան շնորհն է: ... Մեծապէս ուրախ ենք, որ ձեր ազգասիրական գործեր յաջողեալ կպսակուին. կմաղթենք, որ երկինք ձեզ առաւել եւս կարողութիւն և միշտ հաջողութիւն պարգևէ»[30]:

1871-ի վերջում պատրիարքարանի կողմից Սրվանձտյանցը նշանակվում է սահմանադրության գործադիր Վասպուրականում: Ահա թե ինչ էր հրահանգում պատրիարքը Վան մեկնած իր սանին. «Կողբաս Վանայ ժողովրդոց ոտքով և անհոգ հոգին: Քանի որ հոգ էք, քակեցէք այդ մեռածներուն ստրկութեան պատանքը. բնաւ դուլ ու դադար մի տաք ձեզ. հասեք ի վերա ժամու և տարաժամու. Հոգի տուք, ոգեւորեցէք այդ անհոգի դիակները... վերցուցէք դոցա աչքի թանձրապատար կեղեւներ»[31]:

Սահմանադրության գործադիրը, ըստ սահմանադրության, պետք է լիներ վիճակի առաջնորդը: Այլ անձնավորության ուղարկել իբրև սահմանադրության գործադիր, նշանակում էր դնել առաջնորդի հեռացման հարցը: Այդ օրերին Վանի առաջնորդն էր Պողոս Մելիքյանը: Սրվանձտյանցը առանց երկնչելու մեկնում է Վան, ձեռնոց նետելով այդ «Հայանուն շեյխին»: Ուժգնությամբ բորբոքվում է պողոսյան և ապողոսյան պայքարը: Սրվանձտյանցը դառնում է ապողոսյանների պարագլուխը: Այդ պայքարը փաստորեն ներկայացնում էր դեմոկրատական ուժերի և կղերա-աղայական խմբակցությունների սուր ներհակությունների արտացոլում: Պողոս վարդապետը երդվյալ հակասահմանադրական էր, որովհետև, ինչպես հայտնի է, թեմական «առաջնորդները կատարում էին դատաստանական եկամտաբեր ատյանների դեր, որից պիտի զրկվեին, եթե երկրում հաստատվեր

---

[29] Նույն տեղում, կ. 425:

[30] Նույն տեղում, գ. 321:

[31] Նույն տեղում, գ. 559:

*իրավական կարգ ու սարք: Ռեակցիոն կղերի հետ կապված աղայական-ֆեոդալական դասը եւ դրական սպասելիքներ չուներ վարչական-քաղաքական ռեֆորմներից, որոնց հետեւանքով պիտի զրկվեր պետական եկամուտների՝ հարկերի և տուրքերի. շահարկումից: Այս պատճառով է ահա, որ գավառահայ ռեակցիոն կղերը. գլուխ ունենալով Պողոսին, դաշն է կնքում հայ չորպաջիների և քյուրդ շեյխերի ու դերեբեյիների հետ՝ կատաղորեն դիմակայելով գավառային բողոքարկումներին և ազգային-լուսավորական ջանքերին»[32]: Այդ պայքարը հարատեւում է 1860-1872 թ. վերջը:*

*Պողոս վարդապետ (ապա եպիսկոպոս) Մելիքյանը քսան տարի շարունակ, դեռևս Գաբրիել արքեպիսկոպոս Շիրոյանի փոխանորդը եղած օրերից, հայտնի էր իր գործած ապօրինություններով ու չարաշահումներով: Տակավին 1860 թ.,երբ Մ. Նալբանդյանը գտնվում էր Կ. Պոլսում, Ազգային ժողովը մայրաքաղաք է կանչում Պողոս վարդապետին՝ նրա վրա եղած ծանր մեղադրանքները քննելու: Պողոսը փախչում է դատն ավարտելուց առաջ, իսկ Կրոնական ժողովը վճիռ է հանում՝ արգելել վարդապետին հոգևոր պաշտոն վարել մինչև արդարանալը: Ազգային ժողովն անկարող է գտնվում իրեն ենթակա մի հոգևորականի պատժելու գործում: Անզոր Կրոնական ժողովը նամակով հայտնում է վեհափառին, որ «յիշեալ վարդապետը կերպով մը եպիսկոպոսութեան աստիճան ձեռք բերելու փորձ չընէ»[33]: «Մեղուն» պահանջում է զրկել Պողոսին հոգևորական վեղարից: Նալբանդյանի կրքոտ և սկզբունքային բնավորությանն անհարիր էր Կրոնական ժողովի կիսատ-պռատ որոշումը: Նա պահանջում էր քաղաքացիական պատասխանատվության ենթարկել հանցագործին և դատել՝ քրեական ոճրագործությունների համար: Նա նորմալ չէր համարում իրերի այն վիճակը, երբ հոգևորականին դատողը դարձյալ հոգևորականն էր:*

*Պողոս վարդապետին հաջողվում է Տրապիզոնով անցնել Վան և, հակառակ վարչության կամքի, նորից ձեռքը վերցնել առաջնորդությունը: Անցնում է եւ տասը տարի: Վասպուրակա-*

---

[32] *Աշ. Հովհաննիսյան. նշվ. աշխ.,էջ 374:*

[33] *«Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», Կ. Պոլիս, 1860-1874, էջ 39:*

նում սահմանադրության գործադրիչ նշանակված Սրվանձտյանցը անհաշտ պայքար է սկսում Պողոսի դեմ: Խրիմյանին ուղղված նամակ-հաշվետվությունում նա նկարագրում է Պողոսի գործած ողջ չարիքները, նրա կապը քուրդ ցեղապետների, Հայ վաշխառուներ Մարության, Պանիրյանի, Իսաջանյանի հետ: «Հերիք եղեւ, մեր Հայրենեաց Հողին փառեց դա»,- բացականչում է Սրվանձտյանցը և խնդիր դնում Խրիմյանի առջև «այդ խոչընդոտ քարը վերցնելու, զայն գլորելու»: Սրվանձտյանցն ուսուցչին ներկայացնում է Պողոսին Վանից հեռացնելու իր ծրագիրը: Նա քննադատում է պատրիարքին հանդուրժողականության, տատանվող քաղաքականության համար: «Հանկարծ Ձեր գթութիւնը կշարժի ի վերա այնչափ չարեաց և տառապանաց՝ զոր հասուցած է Պողոսն իր ագահութեամբ և փառասիրութեամբ այս մեծ աշխարհին. այս բազմաթիվ ժողովրդեան մտաւորական և քաղաքական և Հոգեւոր կեանքին. ի վերայ այս վիշապացեալ անձին գթութիւն կցուցնեք»[34]: Սրվանձտյանցը բացատրում է Խրիմյանին, որ Պողոսին պետք է աքսորել Բ. Դռան թագրիրով, նա պետք է դատվի իր կատարած ոճիրների համար պետության օրգանների կողմից իբրև քրեական հանցագործ: Ժամանակակիցների հիշողության մեջ թարմ է մնում կրքոտ մարտնչող Սրվանձտյանցի կերպարը, այդ «պլուզ քաջամարտիկը», որը «հաղթանակ տնկեց հին հսկայի դեմ»: Այդ հաղթանակի համար Սրվանձտյանցը գովեստներ է ստանում և՛ Խրիմյանից, և՛ Երեմիա Տեվկանցից: Վերջինս գովաբանում է իր հայրենակցին «մեծ և դժվարակիրճիմն պաշտոնում»[35] «կարծեցեալ հսկաներից առավել հսկայանալու համար»[36]:

Սրվանձտյանցի կրքոտ և սկզբունքային պայքարի պատճառով Պողոսյանները լուրեր են տարածում, որ մահափորձ պետք է կազմակերպեն նրա դեմ, որպեսզի հուսահատվի և հեռանա, ինչպես մինչ այդ պատահել էր Եղիազար վարդապետի հետ: Թե Գրիգորիս Աղվանյանը («որը կվախենա այդ կրակին մոտենալ»), թե Երեմիա Տեվկանցը («որը կվախենա անպատիվ ըլլալ») չեն համարձակվում գալ Վան և շարունակել Սրվանձտյանցի պայ-

[34] ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., ց. 2, գ. 30:
[35] Նույն տեղում, գ. 190:
[36] Նույն տեղում, գ. 191:

տոնավարությունը, որպեսզի վերջինս մեկնի Մուշ՝ այնտեղի գործերը կարգավորելու: Միայն 1872 թ. սեպտեմբերին, այն ժամանակ, երբ արդեն Պողոսը Բ. Դռան հրամանով աքսորվել էր, Գրիգորիս Աղվանյանը առաջնորդական փոխանորդի պաշտոնով գալիս է Վան[37]:

Մ. Խրիմյանի և ուրիշ վանեցիների նամակները հաստատում են, թե ինչ հարգանքի և վստահության է արժանացել Սրվանձտյանցը Վանում: Խրիմյանը նամակներով անընդհատ համոզում էր իր սանին՝ Պողոսին հեռացնելուց հետո մնալ Վանում իբրև առաջնորդական փոխանորդ և մերժում էր նրա ներկայացրած Գրիգորիս Աղվանյանի և Երեմիա Տեկյանցի թեկնածությունները. «վասնզի այս երկուքին վրայ ալ կատարեալ վստահութիւն չունիմ. զի մեկը խարդավանոք կվարե, միւսն թէպէտ պարզ ու պարկեշտ եկեղեցական մի է, սակայն վեհանձնութիւն մնացուցած է իւր փոքրոցի կծծիութեամբ»[38]: Իսկ Գր. Աղվանյանի պաշտոնավարության ժամանակ ողջ Վանը զգում էր նրա և Սրվանձտյանցի տարբերությունը, հիշում վերջինիս ջջահայացությունը, հնարամտությունը. «Հայր Աղվաննանը իւր դանդաղկոտ մտաց և շարժմանց համար ապողոսեաններուն ալ շատ սիրելի չէ. ամէնքն ալ բերանալիր կգոչեն. ահ, ո՞ւր է մեր ժիր, քաջահնար, ճարտար ու վառվռուն պզտիկ վարդապետը»[39]:

Պողոսյան-ապողոսյան պայքարը դրանով չի վերջանում: Պողոսի կողմնակիցներն իրենց պարագլխին աքսորելուց հետո էլ վայր չեն դնում զենքերը և աշխատում են նրան ետ բերել:

---

[37] Հ. Երամյանը այդ մասին գրում է. «Աղվանյան, սակայն, իր տոհմիկ ծագման շնորհիվ՝ հարստութեան, շրջանակի ու ազդեցութեան տէր անձնավորութիւն մը լինելով, Խրիմեան ի վերջո անոր պիտի վստահէր շատ ծանր ու պատասխանատու մի այլ պաշտոն 1871-ին՝ Սրվանձտեանցի անհաջողութիւնեն յետոյ» (Հ. Երամյան, նշվ. աշխ., էջ 80): Սակայն, ինչպես վկայում են փաստաթղթերն ու արխիվային վավերագրերը (ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., բ. 2, գ. 1-70, 369-560), Սրվանձտյանցը Վանում չմատնվեց անհաջողության, այլ մինչև վերջ տարավ իր պայքարը և միայն Պողոսին հեռացնելուց հետո, 1872 թ. սեպտեմբերին և ոչ թե 1871 թ. վերջերին, ինչպես սխալմամբ գտնում է Հ. Երամյանը, մեկնեց Մուշ:

[38] ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., բ. 2, գ. 466:

[39] Նույն տեղում, գ. 312:

Սրվանձտյանցը ևս չի դադարում պայքարելուց: 1874 թ. Կ. Պոլսում հրատարակվում է մի գրքույկ «Ամբաստանութիւն Վանա Պօղոս վարդապետին վերայ» խորագրով: Գրքույկի վրա նշված չէր հեղինակի ինքնությունը: Այն իր մեջ պարունակում էր Պողոս Մելիքյանի բոլոր հանցանքների և չարագործությունների թվարկումը դեռևս 60-ական թվականներից: Կարծում ենք, որ դրա հեղինակների մեջ էր նաև Սրվանձտյանցը կամ հենց ինքն էր հեղինակը: Որպես ապացույց կարող ենք բերել հետևյալ փաստերը: Դեռևս 1872 թ. Խրիմյանը գրում էր իր աշակերտին. «Անշուշտ դուք անտարբեր նստած չէք, երբոր Պողոսի կուսակիցները բազմադիմի գանգատներ գրած են և Պողոսը պաշտպանելու համար ամեն միջոցը ի գործ դրած են, դուք ևս Պողոսի 15 տարուան բրած վնասները ի գիր առնելով հարուստ տեղեկագիր մի շինեցէք և գրկեցէք վեհափառին յատուկ պատգամաւորի մի ձեռօք»[40]: Չենք տարակուսում, որ Սրվանձտյանցը կատարեց իր ուսուցչի և պատրիարքի հանձնարարությունը, նկատի առնելով նաև այն հանգամանքը, որ մինչ այդ էլ նա իր հոդվածների մեծ մասը գրում էր Խրիմյանի խորհրդով: Որ այդ տեղեկագիրն էլ հիմք է հանդիսացել «Ամբաստանութեան» համար, ապացուցում է գրվածքի ոճը, նրա եզրակացությունը, նաև այն հանգամանքը, որ այդ ժամանակ Սրվանձտյանցը գտնվում էր Կ. Պոլսում: Հեղինակները Ազգային վարչությանը գրում են. «Պողոս վարդապետի պաշտպանողներուն մենք կ'առաջարկեմք, որ Պոլիս բերել տալով, նշանավոր պաշտոն մը տրվի անոր, վասն զի այդպիսեաց արժանավայելչութիւնք Պօլսո մէջ աւելի լավ կճանչցուին: Ափսոս չէ՞ նա ի Վան դառնա: Զրկանք մ'է այդ՝ անոր արժանապատվութեան, երբ իրմէն պակաս եղողները հոս բարձր պաշտոններու վրա կը գտնուին. նա հոն շարունակ կ'ամբաստանուի»[41]: Նրանք շռնդալից ապտակներ են հասցնում Ազգային վարչության անդամներին, բացահայտորեն նշելով նրանց և Պողոսի համախոհ և համամիտ լինելը: Նույն բանն էր առաջարկում Սրվանձտյանցը Խրիմյանին ուղղած իր նամակներում: Հետաքրքիր են գրքույկի վերջին էջերը, ուր հեղինակները

---

[40] «Դիւան հայոց պատմութեան», հ. ԺԳ, էջ 247:

[41] «Ամբաստանութիւն Վանա Պօղոս վարդապետին վերայ», Կ. Պօլիս, 1874, էջ 8:

*զգուշացնում են Ազգային վարչությանը Պողոսին Վան վերադարձնելու դեպքում «դիմել բարձրագոյն կառավարութեան ներկայացնելու մեր այս կենաց և մահու խնդիրը»: Ինչպես տեսնում ենք, այս առաջարկությունը համընկնում է Սրվանձտյանցի կարծիքին:*

*Հայ դեմոկրատ գրողներից Րաֆֆին ժամանակին անդրադարձել է այդ գրքույկին: Քննության առնելով «Ամբաստանութիւնը», մեղադրելով Պողոսին իր գործած ոճիրների համար, նա հրավիրում է Կ. Պոլսի Ազգային վարչության ուշադրությունը, որ չարհամարհի «ժողովրդի ձայնին, որպէս ճշմարտութեան ձայնին, ի նկատի ունենալով այն սարսափելի հետևանքն, որ կարող է ծագել այդպիսի դէպքերից»[42]:*

*Նույն ժամանակահատվածում Կ. Պոլսում լույս է տեսնում մի այլ գրքույկ՝ «Խրիմեան և գործք իւր, հերքումն ամբաստանագրի Պօղոս վարդապետի»: Այն հրատարակվել էր դարձյալ առանց հեղինակի անվան: Գրքույկի խոսուն վերնագիրն արդեն ասում էր, թե ինչ նպատակով էր լույս տեսել այդ «Հերքումը»: Պողոսի կողմնակից մեծամեծները, կղերա-աղայական հետադեմ ուժերը ոտքի էին ելել պաշտպանելու իրենց պարագլուխներից մեկին: Գրքույկի անանուն հեղինակները ամենից ուժեղ հարձակումներ էին գործում Խրիմյանի, Սրվանձտյանցի և Այվազյանի վրա: Հեղինակները շատ լավ գիտեին «Ամբաստանութիւնը» գրողներին և հարվածներն ուղղում էին ճիշտ նպատակակետին:*

*Սրվանձտյանցի Վանում եղած տարիները պողոսյան-սպոդոսյան պայքարից բացի, հարուստ էին այլ իրադարձություններով: Հարստահարություններից, անլուր տառապանքներից և ֆիզիկական բնաջնջման սպառնալիքից հուսահատված Վանի բնակչությունը ստեղծել էր առաջին գաղտնի կազմակերպությունը՝ «Միութիւն ի փրկութիւնը»[43]:*

*«Միութեան» հրատարակած կոչում ասվում էր. «Կամ պէտք է մեռնել ու չտեսնել այս սարսափելի վիճակը, և կամ*

---

[42] *Րաֆֆի. Երկերի ժողովածու, հ. 9, էջ 76:*

[43] *«Դիւան Հայոց պատմութեան», հ. ԺԴ, էջ 269-270: Ս. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ, էջ 169-171: Վ. Պարսամյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 314, Ռ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 83-87:*

վերակենդանութիւն ստանալ ի ծոց Հայրենեաց: Ալ ի՞նչ կսպասենք. կեանք չունինք, մահէ կվախնանք, ստացվածքնիս ու վաստակնիս մերը չէ. եկեղեցիք ունինք ամէն օր Հալածանց մէջ է, ու կնախատուի: Ջասոնք Հերիք սեպելով՝ պահ մը արթննանք... Փրկութեան միջոց փնտրենք, ապա թէ ոչ կորուստ մերձ է իսպառ»: Կոչը շուտով տարածվեց Վանի շրջակայքում: «Միութեանը» Հարեցին մի շարք գյուղական Համայնքները: «Դիւան Հայոց պատմութեան» ԺԳ Հատորում Հրատարակված են Անգղ, Հորոտենց, Խեքքեղ, Հնոստան, Նոր գյուղ, Հառեղ գյուղերի Հասարակության ներկայացուցիչների դիմումները կազմակերպության մեջ ընդունվելու Համար[44]:

Սրվանձտյանցին Հայտնի էր կազմակերպության գոյությունը: Գյուտ Աղանյանցի Հրատարակած փաստաթղթերը վկայում են, որ «Միութեան» կոչի վրա կան ուղղումներ Սրվանձտյանցի ձեռագրով: Իսկ Սրվանձտյանցի՝ Խրիմյանին գրած նամակից իմանում ենք, որ այդ ուղղումները վերաբերում են ռուսադավանության ընդունելուն, որը Հայրենասեր գործիչը Համարել է «պակասամիտ» անձանց ձեռնարկություն և ըստ երևույթին, նրա ջանքերի արդյունքն էր այն, որ քիչ ուշ «Միութեան» ներկայացուցիչների՝ Նշան Շիրվանյանի (նա Սրվանձտյանցի մանկության և ուսումնառության ընկերն էր) և Հակոբ Կայոյանի կողմից Կովկասի փոխարքային ու Երևանի նաՀանգապետին ուղղված խնդրագրերում բացակայում է ուղղափառության ընդունելու ցանկության արտաՀայտումը:

Գաղտնի կազմակերպության գոյությունը Հայտնի էր նաև Պողոս Մելիքյանին, որը թուրք կառավարության ներկայացուցիչների մոտ բարձրաձայն աղաղակում էր՝ «Միանամ Խրիմեան. Ջեյթնը ապստամբեցուց թագավորի դէմ, այնքան արիւն թափել տուեց: Մուշը պիտի ապստամբեցնել, նոյնպէս ըրավ և Թիֆլիսը: Ստամբոլ որքան խռովութիւն կա ազգին մէջ, խիանաթութիւն կա տերութեան դէմ, Հեղինակ Խրիմեանն է, Վանա մէջ գիր կգրէ, բոլոր վանեցիք Ռուսիո Հպատակ ըլլալ կՀորդորե, երբ ես իրեն չեմ Համաձայնիր, զիս այսպէս կՀալածէ... Հանիմ ես Պայազիտ, Հեռագրեմ սետրեզէմին, վալիին, թագաւորին, աղ-

[44] «Դիւան Հայոց պատմութեան», Հ. ԺԳ, էջ 271:

գի վարչութեան. ես զինք ձգեմ խորխորատ, և դատ ալ պիտի պահանջեմ...»[45]: Փաստորեն այս խոսքերով Պողոս Մելիքյանը օսմանյան կառավարությանն էր մատնում Հայոց պատրիարքին: Բայց մատնությունը դրանով չէր սահմանափակվում: Նրա ծայրը հասնում էր մինչև Խրիմյանի մտերիմները և աշակերտները: Այդ առթիվ Խրիմյանն զգուշացնում էր Սրվանձտյանցին. «Պօղոսը յուր բարեկամաց ձեռօք կպնդէ Կարին գալու. յուր ներքին մտադրութիւնն այն է, որ դատ բանայ. թերևս բավական մարդիկ մատնէ, ընդ որս գուցէ և զձեզ»[46]: 1871-72 թթ. Վանում գտնվում էր ոչ թե Խրիմյանը, այլ Սրվանձտյանցը, և քաղաքի բոլոր դեպքերը կապված էին նրա հետ. դրա համար էլ մատնությունները վերաբերում էին անմիջապես Սրվանձտյանցին: Այդ նկատի ուներ Խրիմյանը, երբ գրում էր իր աշակերտին. «Նահատակութեան ասպարէզին մէջ դքեզ դանակոծող անձանց թիվը հետզհետէ կշատցունիք. սիրտ առ աստված, կզորանաս, հաղթութիւնը քեզ պիտի լինի»[47]:

Պողոսի կողմնակիցները կանգ չեն առնում ոչ մի միջոցի առաջ Կ. Պոլսի Հայոց պատրիարքին ու նրա սանին պետական դավաճանության մեջ մեղադրելու գործում: Այդ նպատակի իրականացման համար պողոսյան թևին պատկանող Մ. Իսաջանյանը գողանում է Խրիմյանի նամակը՝ ուղղված վանեցի Ագրիպասյանին, ուր նա հրահանգում էր «առաւել աշխատել երիտասարդութիւնը շարժելու»: Այդ մտքերը Իսաջանյանը հաղորդում է կառավարությանը, հայտնելով, թե Խրիմյանն է Վանի խռովությունների ու հուզումների պատճառը: Հարցը վճռելու համար հավաքվում է Վանի խառն Ազգային ժողովը, որը դատապարտում է Իսաջանյանին նամակին սխալ մեկնություն տալու համար: Գործի հաջող ավարտի համար Գր. Ազվանյանը նամակով շնորհավորում է Գ. Սրվանձտյանցին[48]: Այդ նույն ժամանակ է, որ Խրիմյանն անընդհատ հրահանգներ էր տալիս Սրվանձտյանցին ժողովրդի մեջ բացատրական լայն աշխատանքներ կատարելու:

---

45 Նույն տեղում, էջ 444:
46 ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., բ. 2, վ. 478:
47 Նույն տեղում, գ. 422:
48 Մատենադարան, արխիվ, կաթողիկոսական դիվանի ֆ., թղթ. 219, վավ. 184:

«Քարոզէ ժամանակին պահանջած յառաջադիմութիւնը, քարոզելով համոզելով յաղթահարէ հնութեան նախապաշարմունքը... Խօսիր հայրենեաց աղետներու դարմանին համար, խօսիր ազգօգուտ ձեռնարկութեան համար, խօսիր որ միաբան ու զօրանան, խօսիր որ ազգը և ժողովուրդը սիրեն... Երիտասարդաց խումբը դեպ յուսումնասիրութիւն հայրենասիրութեան վառէ: Բորբոքէ այն կրակով, զոր սրտիդ մէջը ունիս. «Հուր եկի արկանել» ասա և կրակ տուր, մինչև կարենաս հալել այդ երկրի յավիտենական սառերը»[59]: Տարակույս չի հարուցում այն հանգամանքը, որ «Հայրենեաց աղետների դարմանը» և «ազգօգուտ ձեռնարկությունները» վերաբերում են հայ ժողովրդի օսմանյան լծից ազատագրվելուն և գաղտնի կազմակերպությունների ստեղծմանը: Միևնույն ժամանակ Խրիմյանը զգուշացնում էր Սրվանձտյանցին չձեռնարկել անխոհեմ քայլեր, «զօրք ու զօրապետներ պատրաստ պահել» և սպասել «պատեհ ժամանակի»:

1873 թ. Խրիմյանը հրաժարական է տալիս պատրիարքությունից և մնում Կ. Պոլսում իբրև քարոզիչ ու Ազգային ժողովի անդամ: Այդ շրջանում համեմատաբար նեղանում է նաև Սրվանձտյանցի գործունեության ասպարեզը: Նա ևս մեկնում է Կ. Պոլիս և նվիրվում գրական աշխատանքի, իր ստեղծագործություններում մշտապես արծարծելով հայ ժողովրդի ազատագրության գաղափարները:

Այսպիսով, 1860-70-ական թվականներին, մինչև ռուս-թուրքական պատերազմը Սրվանձտյանցը գործում էր իր ուսուցչի հետ: Նրա գործունեության ուղիները հաճախ պայմանավորվում էին Խրիմյանի գրաված հասարակական դիրքով: Նրանք ժողովրդի մեջ նախապատրաստական մեծ աշխատանք էին կատարում գալիք մարտերի համար: Խրիմյանի պատրիարքության շրջանում և դրանից հետո էլ Սրվանձտյանցի կազմած և ուղարկած տեղեկագրերով ու հանրագրերով ողողվել էր Բ. Դուռը և պատրիարքարանը: Սակայն Բ. Դուռը մշտապես խաբում էր հայ գործիչներին, հենվելով հայերի տեղեկագրերի վրա, ազատում էր քուրդ դերեբեյներին, հնազանդեցնում նրանց, հետո էլ արձակում և ազատություն տալիս իրենց վայրագությունների մեջ: Հայ

---

[59] ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., բ. 2, գ. 451:

գործիչները երբեմն պատրանքներ և ակնկալություններ էին ունենում սուլթանի «փարեխնամ կառավարությունից», նրա գործողությունները երբեմն վերագրում էին կարգ ու կանոնի հաստատման: Բայց ականատես լինելով գավառահայության օրըստօրե վատթարացող վիճակին, նրանք կոչ են անում դիմել ինքնապաշտպանության, ոտքի կանգնել և պատրաստ լինել դիմադրելու:

* * *

1870-ական թվականների վերջերին հայ ժողովրդի ազատագրական շարժումները մտնում են նոր փուլ: 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմը, բալկանյան ժողովուրդների ապստամբությունները ոգևորում են հայերին և բորբոքում հայության սրտում անթեղված կայծերը: Ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո, որպես Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ կետ, միջազգային դիվանագիտության ասպարեզ է մտնում հայկական հարցը: Հայկական հարցի արծարծումը բորբոքեց հայ ժողովրդի ազատագրության ձգտումը: Հասարակական և քաղաքական գործիչները սկսեցին եռանդուն աշխատանք կատարել այդ ուղղությամբ:

Անգործ չէր և Գարեգին Սրվանձտյանցը: Հայոց պատրիարքարանի կողմից իրեն ընձեռած հնարավորության շնորհիվ նա շրջում էր Արևմտյան Հայաստանի նահանգները, մոտիկից ծանոթանում հայ գավառին, կատարում պատրիարքի հանձնարարությունը, սերտ կապեր հաստատում գավառի հայության, նրա բանիմաց ներկայացուցիչների հետ: Մինչ այդ նա լավ ճանաչում էր Տարոնն ու Վասպուրականը, այժմ նրան հաջողվում է լինել ողջ Արևմտյան Հայաստանում: Նա տեսնում է տառապող, օրըստօրե հյուծվող ու սպառվող ժողովրդին: Սրվանձտյանցը նկարագրում է տարբեր վայրերի հայ բնակչության իրավիճակը. «Չիլլի հայք ամբողջ թուրքերէն կը խօսին. երբէք հայերէն չգիտեն. այնչափ կը զարհուրին տաճիկներէն և կատարելապէս ստրուկ են անոնց առջև... Ազգութեան ոգին մեռած էր, և ժամանակ դեռ չէր կրցեր զարթուցանել զանոնք, կեանքի ճառագայթ մը երբէք ծագած չէր հոս... Չիլլի թուրքեր... նախատա-

նօք կը վարուին Հայոց Հետ, մարդու տեղ չեն դնէր. կը զրկեն, կը խլեն, կը Հալածեն, կը ծեծեն, և Հայք խոՀեմութիւն կը Համարեն կրել և լռել, որպէսզի կարող լինին ապրել, եթէ ապրել էր այս»[50]: Նոյն վիճակն էր տիրում Սեբաստիայում. Հարուստները վախենում էին իրենց Հարուստ լինելը ցույց տալ, ապրում էին Հին տների մեջ, թաքցնում իրենց դրամները. «Գրեթէ քաղաքական Հրապարակի վրայ պայծառ և փայլուն Հայ մը չունի Սեւաստ: Քաղաքիս թուրքաց մոլեռանդութիւնը և աններողութիւնն այնչափ է, որ կրնան Հայ մը ձիէն վար առնել, շուկայի և փողոցներուն մէջ անտեղի պատճառով մը, կամ, ի՞նչ պէտք է պատճառ, մի՞թէ Հայ լինելն բաւական պատճառ չէ՞, կը քաշեն կը զանակոծեն. եթէ Թուրք մը բան գնած է Հայէ մը, իրաւունք չունի Հայն ստակ պաՀանջելու, եթէ վճարէ Թուրքն՝ շնորՀ մ'է, եթէ ոչ, իր իրաւունքն է»[51]: Տյուրիկը իր գյուղերով Հարստահարվում է դըրջանցի քուրդ աշիրաթից, գըզըլպաշ խոշկերցի աշիրաթից: Նրանց պաշտպաններն են «քաղաքի թուրք աղաները»:

Զարանջակի Հողային Հարստահարության խնդիրը Հայտնի է ողջ Հայությանը: Բ. Դռանը և Հայոց պատրիարքարանին Հղած բողոքագրերից ավելի վատթարացել է նրանց վիճակը. պաշտպաններ չկան և ժողովուրդը մնացել է բռնավորի ողորմածությանը: «Մեր խնդիրը Հարուցանելէն առաջ սակլի քիչ չարիք կը կրեինք, կըսեին, այժմ տասնապատիկ ծանրացած է մեր դատն ու զրկանքն, մեր կնիկները և մեր աղջիկները մերը չեն, էմլաքի տուրքը մենք կուտանք՝ կալվածն աղայինն է, Հողային տուրքը մենք կուտանք՝ Հողն աղայինն է, եզն ու քրտինքը մեր՝ արդիւնքն աղայինն է: Աշխարհիս երեսը թռչունն ու մրջյունը իրենց բույն մը ունին: Զարանճացցի ժողովուրդն տուն ու Հող չունի... Ալ մեր ինչո՞ւն Համար է պատրիարքը, ինչո՞ւ առաջնորդ, ինչո՞ւ Համար էկեր ես դու Հոս»[52],- գանգատված բողոքում է ժողովուրդը Սրվանձտյանցին: Վերջինս վրդովված նշում է, որ ոչ մի նշանակություն չեն ունենում կառավարությանը Հղած բողո-

[50] «Թորոս աղբար», Հ. 1, էջ 74:
[51] Նույն տեղում, էջ 162-163:
[52] «Թորոս աղբար», Հ. 2, էջ 127-128:

քագրերը և որ բողոքողի վիճակն ավելի է վատթարանում[53]: Բազմաթիվ են օրինակները: Երկհատորանոց «Թորոս աղբար», պատրիարքարանին ուղղված տեղեկագիր նամակները լի են հայ ժողովրդի անսահման տառապանքների նկարագրությամբ: Սրվանձտյանցն ընդվզում է, չի համակերպվում այդ վիճակի հետ: Իր ժողովրդին սիրող գործիչը դառնացած բացականչում է. «Եթէ այսպէս ապրին, լավ է, որ չապրին»[54]:

Այդ ճանապարհորդությունների ընթացքում Սրվանձտյանցը ջերմությամբ արձանագրում է, որ նոր սերնդի ներկայացուցիչների մեջ կան մարդիկ, որոնք չեն հաշտվում նման կացության հետ. «Կան նորահասներ ալ, որ չհանդուրժելով կը փոխարինեն կամ կը հալածեն այդ բղեղները»[55]: Սրվանձտյանցը գորովանքով է պատմում բենկացի հայերի մասին, որոնք «իրենց քաջութեամբ ոչ միայն ազատ կ'ապրին, այլեւ կը սարսափեցնէն քրդերը... Բենկացի հայեր՝ հարուստ, քաղաքակիրթ և քաջարի են. և եթէ իրարու հետ միութիւն պահէն, իրար սիրէն ու հարգէն, անհամեմատ են բոլոր Հայաստանի Հայոց մէջ, որոց օրինակ ալ կրնան լինիլ»[56]: Ինչպես տեսնում ենք, Սրվանձտյանցն առաջարկում է իր դեղատոմսը՝ քաջարի ու միասնական լինել: Միայն այդ ուղիներով է հնարավոր քիչ թե շատ տանելի վիճակ ստեղծել ժողովրդի համար: Անտարակույս է, որ գավառահայ առաջադիմական հասարակական գործիչները ազատագրական շարժման ուղին են բռնում գավառներում տեղի ունեցող հարստահարությունների, իրավազրկությունների և բռնությունների ազդեցության տակ:

Բեռլինի կոնգրեսի արդյունքները հիասթափեցրին հայ ժողովրդին, չբավարարեցին նրա սպասելիքները: Եվրոպական դիվանագիտության օգնությամբ ազատագրվել ցանկացող հայ գործիչները տեսան, որ զուր էին իրենց հույսերը: Սրվանձտյանցը, որ դեռևս 1874 թ. գրում էր՝ «Հայեր, դուք եք ձեր ապաւեն, օտարէն չհուսաք բնաւ», այժմ ավելի համոզված էր այդ բանում: Դրա համար էլ նա գավառից հաղորդում է պատրիարքա-

[53] «Թորոս աղբար», հ. 1, էջ 284-286:
[54] Նույն տեղում, էջ 318:
[55] Նույն տեղում, էջ 163:
[56] Նույն տեղում, էջ 239-240:

բանին. «Իմ սկզբունքս էր քարոզել, թէ օտարէն պէտք չէ բան հուսալ, ջանանք մենք զմեզ հոգալ, պատրաստուիլ և ցոյց տալ ազգաց, թէ մենք ալ ազգ մի ենք. մեր պատմութեան և մեր հայրենեաց արժանիքը մեր վրայ ցուցնել... գիտութեամբ զօրանալ, միութեամբ զինանալ, գործել և պահպանել մենք զմեզ, պատրաստել մայրեր, հասցունել այրեր, կազմել ընկերութիւններ, չխնայել ոտին լուման, զրկել զիրենք և տալ այս նպատակին համար: Այս է մեր միակ փրկութեան ճամփան, և ահա այս էր իմ առաքելութեան աւետարանը»[57]: Բազմիցս քննադատելով եվրոպական միսիոներներին, նրանց պառակտողական, հայորսական ու հայակուլ գործունեությունը, «Թորոս աղբարի» հեղինակը սովորեցնում է հայ շինականին, որ այդ բողոքական և կաթոլիկ եպիսկոպոսներին ու երեցներին հետաքրքրում է միայն իրենց շահը, նրանք հայ ժողովրդին դնում են պարարտ երեների տեղ, և ցանկանում են հայերի միությունը պառակտելով, մեծացնել իրենց տիրույթները: Սրվանձտյանցի սթափ աչքը տեսնում է, որ ոչ Անգլիան և ոչ էլ մյուս պետությունները շահագրգռված չեն հայերի ազատագրությամբ:

Հայկական հարցի լուծումը կապել բուն Հայաստանի հետ, ըստ Սրվանձտյանցի, նշանակում էր շուտափույթ կանգնեցնել գաղթականությունը և պանդխտությունը: Իր գործունեության հենց սկզբից Սրվանձտյանցին մեծապես հուզել է հայ ժողովրդի հավաքականությանն սպառնացող ամենամեծ վտանգներից մեկը՝ պանդխտությունը և առավելապես գաղթականությունը: Ահազանգելով, որ Մուշն ու Տարոնը դատարկվում են հայ բնակչությունից, դեռևս 60-ական թվականներին Տարոնի «Արծվիկը» դառնում է պանդխտության դեմ պայքարողների դրոշակակիրը: Սրվանձտյանցը ներկայացնում է կառավարական պաշտոնյաների գործողությունները, որոնք գործում էին Հայաստանը առանց հայերի տեսնելու քաղաքականությամբ: Նա զայրույթով է խոսում տեղական կառավարական պաշտոնյաներից մեկի մասին, որը դրդապատճառներ է ստեղծում հայերի գաղթի համար. «Թողե՛ք, թող երթան, երկրի շէնութիւնը ատոնց վերա չէ...»[58]:

---

[57] «Փորձ», 1879, N 4, էջ 166:
[58] «Մանզումէի էֆքիար», 1869, N 895:

Մորմոքով էր պատմում Սրվանձտյանցը, որ երկիրը դատարկվում էր աշխատող ձեռքերից՝ երիտասարդներից, որոնք հեռանում էին Կ. Պոլիս, Իզմիր, Ադանա, Եգիպտոս: Արտերը մնում էին անմշակ, հողերը բռնագրավվում կամ գրավ էին դրվում պարտքի դիմաց: Հարսներն ամուսին ունենալով մնում էին որբևայրի, երեխաները չէին տեսնում իրենց հայրերին, իսկ որդեկարոտ հայրերը իրենց կյանքն էին մաշում Կ. Պոլսում կամ Իզմիրում՝ բեռնակրությամբ կամ աղբ թափելով: Պանդխտությունը որպես ազգային չարիք իր ժամանակին դատափետել է Միքայել Նալբանդյանը, իբրև պանդխտության դարման նա առաջարկում էր երկրում զարգացնել երկրագործությունը: Պանդխտության դեմ պայքարել են նաև այնպիսի ժողովրդական գործիչներ, ինչպիսիք են Մ. Մամուրյանը, Մ. Խրիմյանը, Րաֆֆին: Սրվանձտյանցը լիովին համակարծիք է այդ գործիչներին: Արևելյան և Արևմտյան Հայաստանի առաջադեմ հասարակական գործիչները դեմ էին արևմտահայության գաղթին և պանդխտությանը, թեկուզև այն դեպքում, երբ գաղթում էին Արևելյան Հայաստան: Զանգվածային գաղթերը 1878 թ. ռուս-թուրքական պատերազմից հետո դիտվում էին իբրև Հայաստանը ամայացնող և հայկական հարցի հիմունքները մեռցնող քայլ[59]: Այն տարիներին, երբ Արևմտյան Հայաստանում Սրվանձտյանցը պայքարում էր գաղթականության դեմ, նույն ժամանակ Րաֆֆին «Մշակում» հանդես էր գալիս պանդխտությունն ու գաղթականությունը քննադատող հոդվածներով և մերկացնում Կ. Պոլսի Ազգային ժողովի այդ ուղղությամբ կիրառած կիսատ-պռատ միջոցառումները: «Նամակ Կ. Պոլսից», «Թյուրքիա», «Գժառուն» հոդվածներում Րաֆֆին քննադատում էր Ազգային ժողովին, որը արմատական միջոցառումների փոխարեն որոշում է ընդունում թույլ չտալ պանդուխտներին չորս տարուց ավելի մնալ հայրենիքից հեռու: Առանձնապես ցասումնալից էր Րաֆֆին, երբ քննադատում էր Տերենցին «Արեւմտեան մամուլում» լույս տեսած նրա մի հոդվածի համար՝ նվիրված գաղթականության խնդրին[60]: Տերենցը մեղադրում էր հայ ժողովրդին, որ նա

[59] Ղ. Զարրգ, նշվ. աշխ., էջ 396-398:
[60] Րաֆֆի, նշվ. ժող., էջ 192:

կորցրել է իր «շարժուելու սովորութիւնը», չի ուզում ընդարձակել «իր հորիզոնը», սպասում է, որ «սրի ու սովի խարազանը» ստիպի, որ հեռու աշխարհներում որոնի հաց, հարստություն և մինչև անգամ երջանկություն: Այս կարծիքի մերժումը Րաֆֆու կողմից համահունչ էր Սրվանձտյանցի վաղ շրջանի գրած «Հայրենասիրութիւն և հայրենիք» հոդվածին, ուր նա ձաղկում էր հեռու և ապահով վայրերը հայրենիք համարողներին:

Իր ողջ պրակտիկ գործունեության ընթացքում և գրական ստեղծագործություններում Սրվանձտյանցը պայքար մղեց պանդխտության ու գաղթականության դեմ: Պատրիարք Ներսես Վարժապետյանը քաջ ծանոթ լինելով նրա ընդունակություններին և խոսքի ազդեցությանը, ռուս-թուրքական պատերազմից հետո նրան ուղարկեց Կարին՝ կանխելու Բարձր Հայքի ժողովրդի մեծ տեղաշարժը, համոզելու ժողովրդին հաստատ մնալու հայրենի «շենից և ավերակաց վրայ»: Սրվանձտյանցի գրչի տակ մարմին ու կյանք են առնում Հայաստանի գետերն ու լճերը, լեռներն ու անտառները: Դրանք տրտմում ու արտասվում են, որ գաղթական հայերը զվարճանում են Բոսֆորով ու Ոսկեղջյուրով, «Հայ Տելեմաքները» գեղերում են Մարմարայի ափերին, պաշտում են Դանուբը, Նեղոսը, Սենան ու Նևան, իսկ Եփրատը որբ է մնացել, գեղջուկ, տխուր ու ողորմելի[61]: Իր շրջագայությունների ընթացքում Սրվանձտյանցը քարոզում էր չլքել հայրենի եզերքը, չհեռանալ օտար երկրներ: Գեղարվեստական հնարանքներով ու այլաբանություններով նա համոզում էր ժողովրդին. «Մարդը իր բուսած հողին վրա կհաստունանա, մանուկն իր մորը ջերմիկ ծոցը կը պարզանա»[62]: Ամեն մի ժողովրդի գոյությունը պայմանավորված է նրա ապրած միջավայրով, շրջապատող բնությամբ ու լեռներով. փոխվում են դրանք, փոխվում են նաև այդ ժողովրդի որակական հատկանիշները: Նա հորդորում էր հայրենակիցներին ետ կանգնել գաղթելու մտքից, մնալ, պայքարել, հաղթել և շենացնել նախահայրերից ժառանգություն մնացած հայրենիքը: Եվ հայկական հարցի արմատական լուծումը նա կապում էր ոչ թե մեծ տերությունների

---

61 «Թորոս աղբար», հ. 2, էջ 172:

62 Նույն տեղում, էջ ԺԸ:

բարի կամքի, այլ հենց ժողովրդի ինքնօգնության, նրա «վարող որդիների» ներկայության հետ: Վճռականապես պետք է վերացնել պանդխտությունն ու գաղթականությունը: Հայ գաղթօջախներում, մասնավորապես Իզմիրում, Կ. Պոլսում և այլ վայրերում կենտրոնացած ականավոր գործիչները, բժիշկները, իրավաբանները, վարդապետները պետք է մեկնեն Հայաստան և ընդհանուր ուժերով ձեռնամուխ լինեն նրա վերաշինության մեծ գործին. «Հայաստանի մէջն է բուն Հայկական խնդիրը և մեր Պոլիսի մէջ կորոնենք զայն»: Այս հակիրճ նախադասությունը հետագայում դառնում է առաջադեմ գործիչների գործունեության նշանաբանը և նպատակակետը: Իսկ, ըստ Սրվանձտյանցի, դա առաջին հերթին նշանակում էր, որ հայ ժողովրդի ազատագրության համար պետք է բախել ոչ թե եվրոպական պետությունների դռները, այլ հույսը դնել ժողովրդի կենսական ուժերի վրա, ոգեկոչել նրա ապրելու և հարատևելու մեծ ցանկությունը, նախապատրաստել նրան գալիք գոտեմարտերին:

Երկու անգամ Սրվանձտյանցը համարյա ոտքով շրջել է Արևմտյան Հայաստանի հայաբնակ նահանգները: 1878 թ. ապրիլի 26-ին սկսվում է նրա առաջին շրջագայությունը: Հեշտ չէր պատերազմի արհավիրքներից անմիջապես հետո շրջել Արևմտյան Հայաստանում ու նրա հարակից շրջաններում, երբ մոլեռանդ ցեղերի քարոզներով հրահրված մահմեդական ամբոխը դեռ չէր հանդարտվել, երբ օդը լի էր պատերազմի մրրիկներով: «Երբէք պատճառ մը չունիմ դժգոհելու վասն զի յոժարութեամբ գնացի, յոժարութեամբ շրջեցա, յոժարութեամբ գործեցի: Ոչ երկրին անշխանութեան օրերը, ոչ Ջերքեզն ու Քուրդը, ոչ լեռներն ու ձորեր, ոչ արեւն ու անհանգիստ ուղիներ չկրցան վհատացնել զիս: Բրդաց վրաններու տակը և բացօթյա վայրեր իջեւանեցա, ասիական ուղեւորի մը կրելիք ամենն ալ կրեցի, բայց երբէք ցավ չզգացի, վասն զի սիրով գնացի... Հայ եղողը՝ Հայաստանի հողոյն վրա ինքզինքը կը ճանաչե, ինքզինքը վեհ և կենդանի կը գտնե, փորձեցէք և տեսէք»[63]: Գնահատելով Սրվանձտյանցի՝ ճանապարհորդությունների ընթացքում ծավալած գործունեությունը, Մամուրյանը նրան գրում էր. «Մենք վստահ

---

63 «Թորոս աղբար», հ. 1, էջ ԺԳ-ԺԴ:

ենք, որ Ձեզի պէս արթուն և հմուտ ու հայրենասէր հովիւներու ջանքն ու տքնութիւնը դեղ ու դարման պիտի բերեն Հայաստանի ցաւերուն, զորս կզգանք, թէև դժբախտաբար հեռու կը գտնուինք»[64]:

Երկրորդ անգամ Սրվանձտյանցը գավառներ մեկնեց 1879 թ. ապրիլի 30-ին՝ Բ. Դռան կողմից կոմիսներ նշանակված Արեգին փաշայի հետ, ունենալով բարենորոգումների որոշակի ծրագրեր, որոնք նա մտադիր էր ներկայացնել գավառական ժողովներին և տեղական կառավարության մարմիններին:

Արեգին փաշան սկզբում ձեռնարկեց ակտիվ գործողություններ: Նա աքսորեց 60 աղաների, քուրդ ռազմական ավագանու ներկայացուցիչների, որոնք հայտնի էին իրենց եղեռնագործություններով: Սակայն դրանով էլ սահմանափակվեցին նրա գործողությունները: Սրվանձտյանցը գովեստով խոսելով Արեգին փաշայի սկզբնական եռանդուն քայլերի մասին, միևնույն ժամանակ մերկացնում է Բ. Դռան ճարպիկ խաղը: Բ. Դռան կողմից բարենորոգումների իրագործման անվան տակ հայկական նահանգներ ուղարկված կոմիսները, իրենց գործունեությամբ հաճախ ոչ թե հարթում, այլ ավելի էին վատթարացնում տարբեր ազգերի հարաբերությունները: Գ. Սրվանձտյանցը պատմում է, որ կոմիսների այցելության ժամանակ շատ խնդրատուներ են գալիս, անթիվ ու անհամար բողոքագրեր ներկայացնում: Բազմազան են այդ բողոքները. սպանություններ, անասունի և ստացվածքի հափշտակություն, կեղեքումներ՝ թուրք աղաներից ու քուրդ բեյերից, պաշտոնյաներից, զորականներից և ոստիկաններից: Բողոքներն ուղղված են նաև հարկերի ու տուրքերի ապօրինի գանձման, հարկահավաքների դաժանության դեմ: Սրվանձտյանցը մեկ առ մեկ թվարկում է ռուս-թուրքական պատերազմի տարիներին և հետո չարագործություն կատարած գլխավոր անձանց, որոնք պատժվելու փոխարեն ընտրվել են սլահաթի անդամ: «Մեղապարտաց կամ չարագործաց գլխավորներն են Խուլփա Թելոն, Հռչակավոր Ֆեթահ պեյ, Ապտուլլահ պեյ և Ռեշիտ աղան. Ռշկոթան ըսված վրանարնակ քրդաց աղաներ: Ասոնք լերանց գայլեր են, իսկ քաղաքացի և քաղաքա-

[64] ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., բ. 2, գ. 678, էջ 90:

կան պաշտոնատար չարերը, որք գոմի մեջը համարձակ ոչխարները մորթող ուտողներ են, անոնք այսօր սլահաթի անդամ են»[65]:

Բողոքելու եկած ժողովուրդը գտնվում է աննկարելի վիճակի մեջ. չի կարողանում հետ դառնալ տուն, որովհետև փախչում է չարագործների աղգատահմի վրեժխնդրութիւնից. գարնան վարի ու հունձքի օրերին, անօթի և անգործ ժողովուրդը դատապարտված է «մնալ և սպասել կոմիսերի գալստեան»: «Ահա կոմիսերի առաջին բարիքը, դեռ ապահովութիւնը չհաստատուած, դեռ բարեկարգութեան հանրական ու հիմնական պիտոյքը չակսած, հրավիրած է ժողովուրդը բողոքներ տալու և այսպես վտանգաւոր դիրքի մէջ դրած զանոնք: Տեղ-տեղ զորքեր դրած է, որոց չարիքը այնքան է, որ ժողովուրդը կաղաղակէ. «Թողէք զմեզ մեր նեղիչ քրդաց ձեռքը և ձեր պաշտպանութիւնը պէտք չէ մեզի»[66]: Սրվանձտյանցը մերկացնում է այդ բարենորոգումները, որ իբր թե կատարում է կոմիսերը. տեղական ընդհանուր ժողովը սեփական հայեցողությամբ կազմվել է այն թուրքերից, որոնք բոլորն էլ անցյալում եղել էին հանցավոր: Ահա, թե ինչպես է իրագործում բարենորոգումները օսմանյան կառավարությունը:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Սրվանձտյանցի կազմած վիճակագրությունները և պատրիարքարանին ուղղած տեղեկագիր նամակները: Ջարսանջակի, Բալուի, Զմշկածագի վիճակագրությունները կազմելիս, նա ամենուրեք նշում է ժողովրդի՝ կառավարության նկատմամբ ունեցած բացասական վերաբերմունքը. «Կննգուին կառավարութենէն, որ փոխանակ աղաներէն զիրենք պաշտպանելու կամ բարձր իշխանութենէն ժողովրդեան իրաւանց համար եկած հրամանագրեր գործադրելու, ընդհակառակը ինքը եա կը կեղեքե և կը հարստահարե: Իսկ զաւթիաներէն կրածները խիստ շատ են, որք կը քաջալերուին կառավարութենէն»[67]: Իր մանրազնին ուսումնասիրություններից Սրվանձտյանցը հանգում է այն եզրակացության, որ ժողովրդի

---

[65] ԳԱԹ. Թ. Ազատյանի ֆ., բ. 12, գ. 10525, տե՛ս նաև «Բանբեր Հայաստանի արխիվների», 1973, N 3, էջ 121-124:
[66] Նույն տեղում:
[67] ԳԱԹ. Թ. Ազատյանի ֆ., բ. 3, գ. 54:

կրած հարստահարությունների և թշվառությունների աղբյուրները մի քանիսն են. առաջինը, ըստ նրա, դատավորները և դատարաններն են՝ դատիները և թեմնիկի հազուգի ատյանները, որոնք ազատում ու արդարացնում են ավազակին և եղեռնագործին՝ «սուտի տուր և կազատիս»: «Ժողովուրդը՝ կամ իր վնասէն անցնելու է, կամ ծանր կաշառքով իր իրաւունքը գնելու է... Ահա ասոնց հետևանքն եղած է, որ ժողովուրդն անհատաբար վնասուելով՝ չը դիմեր շատ անգամ և չը բողոքեր տեղական կառավարութեան»[68]: Երկրորդ աղբյուրը ցեղծման մուհասսըլեճին է, որը հարկերը և տուրքերը գանձում է դրամով և երբ «փողն մարդու մը շահը կորեր ու պարտք ընելու վարկը չէ մնացեր. գոյքն ու կարասիքը կհանուի ի վաճառ և կվճարուի հարկը»: Երրորդ աղբյուրը, ըստ Սրվանձտյանցի, ոստիկանությունն է, որն իր ձեռքի տակ ունենալով բանտերի տեսչությունը և չարագործներին կալանավորելու արտոնությունը, նրանց հնարավորություն է ընձեռում խուսափել պատժից և ավարներն էլ պահում է իր մոտ: «Ահա այս երեք աղբիւրներէն կկազմուի այնքան հարստահարութեանց, ըլկանաց և զրկանաց ծովը, որոց մէջ կը ծփա ժողովուրդը»[69]: Եթե ընդհանրացնելու լինենք, ապա կստացվի, որ ժողովրդի թշվառության աղբյուրներն են՝ դատարան, դատավոր, հարկահավաք և հարկ սահմանող մարմիններ, ոստիկանություն, այսինքն՝ օսմանյան պետության երեք հիմնական սյուները: Ուրեմն, փաստորեն ժողովրդի բուն թշվառությունը բխում է օսմանյան պետության քաղաքականությունից, ահա թե ինչի է հանգեցնում Գ. Սրվանձտյանցի տեղեկագիրը: Սրվանձտյանցը ցույց է տալիս, որ այդ պաշտոնական անձինք ուղղակի նշանակվում են Բ. Դռան կողմից, համապատասխան հրահանգներ ստանում մայրաքաղաքից: Զինված պետական քաղաքականության ծրագրով՝ նրանք ծծում են ժողովրդի արյունը: «Անշուշտ գիտեք, թե դատին, մուհասսըլեճին և զապթիեն անկախ են և ուղղակի կընտրուին Կ. Պոլսէն և իրենց յատուկ կեդրոններէն: Այսպէս են նաև գայմագամներու և մյուդիրներու վիճակն, որոց մէջ կարի հազվագիւտ են օրենսգէտ և մարդու

68 «Փորձ», 1879, N 4, էջ 167:
69 Նույն տեղում, էջ 168:

պէս անձինք. շատերը, մանավանդ թէ մարդ կհամարձակուի ըսել, ամէնքն ալ առհասարակ կամ անպիտան կամ վնասակար են. ասոնք ալ ուղղակի Պօլսեն կնշանակուին ու կղրկուին: Այնպիսի նայիպներու, մուհասեպեճիներու, գայմագամներու և մյուդիրներու պատահեցա, որք կխոստովանին, թէ իրենք գայըրմիշ ընելու համար միայն ղրկուած են հոն և իրենց տերանց ու խնամակալաց անուններն ալ կուտային»[70]: Կառավարության տեղական մարմինները զբաղվում են ոչ թե ժողովրդի իրավունքների պաշտպանությամբ, այլ միայն «զօրաց զախրէ հայթայթելու, հարկերն ու խանանները հավաքել տալու»: Սրվանձտյանցը բացահայտորեն բողոքում է կառավարությունից. իր դժգոհությունն արտահայտում նրա քաղաքականության նկատմամբ, իշխանության գոյության իմաստը տեսնելով միայն հարկեր հավաքելու մեջ: Նման իրավիճակում պարզ է ժողովրդի և երկրի դրությունը. «Երկիրը ձգուած է իր բաղդին և եղած է խաղալիք զօրաւորին և ննենգաւորին»[71]: Զորքերը, որոնք պետք է պայքարեին չարագործների և ավազակների դեմ, օրինավորության և հեկողության անվան տակ նստած են ժողովրդի վզին. նրանց կարիքը հոգում է ժողովուրդը: Իրականության այս ծանր պատկերները Սրվանձտյանցը նկարագրում է պատրիարքարանին, ասում, որ չպետք է հավատալ կառավարության խոստումներին և անիրականանալի ցնորք են բարենորոգումների ծրագրերը: Իսկ գավառահայ ժողովրդի վիճակը օրըստօրե վատթարանում է: Գ. Սրվանձտյանցը նորից մտորում է ազատագրական պայքարի մասին: Նա խիստ կերպով զգում է գործիմաց, հայրենասեր անձանց կարիքը: «Մարդ պիտի հօս, մարդ, որ առաջնորդե այս երկրի ժողովրդեան, որ ի լոյս ածէ ի խաւարի և յանդունդս ծածկեալ ազգային թանգերը և զարթուցանէ բնակչաց սիրտը, վարէ Դերսիմի քաջերը, որոնք մոտիկ-մոտիկ մարդ կորոնին, հայ կորոնին և գիտե՞ս թէ ինչու. ճիշտ մեր ինչին համար»[72]: Տարակույս չի առաջացնում այն, որ Սրվանձտյանցի հույսը ինքը ժողովուրդն էր և նրա ծոցից դուրս եկած ղեկավարները, որոնք կկարողանային առաջնորդել ժողովրդին, բորբոքել «հայոց ազա-

[70] Նույն տեղում, էջ 168:
[71] Նույն տեղում, էջ 169:
[72] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., ր. 12, գ. 10524:

տուլթեան Հին կայծերը»: 1878-1879 թթ. նրան խիստ հետաքրքրում էին ապստամբած Զեյթունում կատարվող իրադարձությունները: Նա սրտի կսկիծով և ցավով է արձանագրում կառավարության որոշումը Սասունում զորանոց կառուցելու մասին: Նման զորանոցներ կառուցվեցին նաև Զեյթունում: Դրանք այն վայրերն էին, ուր հայերը պահպանել էին համեմատաբար կիսանկախ գոյություն: Կառավարության կառուցած այդ զորանոցները հետապնդում էին հայերի ազատագրական ձգտումները հենց բնում խեղդելու նպատակ. «Մեր Սասնո լեռները զորանոց շինել որոշեցին ամենեն ամուր տեղերը և Տերսիմը պիտի կործանեն. կը հիշե՞ք մեր պաղափարները այս լերանց և քրդաց մասին»[73]: Այս մեջբերումը նոր լույս է սփռում Սրվանձտյանցի հայացքների էվոլյուցիայի վրա: 60-ական թվականներին նա «Արծուիկ Տարօնոյում» բողոքում էր քրդերի հարստահարությունների դեմ, երբեմն ի դեմս թուրք զորահրամանատարների տեսնելով կարգ ու կանոն հաստատողների: Սակայն պետք է նշել նաև այն, որ նույն այդ ժամանակ էլ Սրվանձտյանցի մոտ հստակ տարբերակում կար քուրդ հարստահարող ցեղապետերի և հասարակ ժողովրդի նկատմամբ: Նա ընդգծված համակրանքով էր արտահայտվում խեղճ, երկրագործ քրդերի մասին և նշում, որ նրանք հայերի հետ միասին շահագործվում են քուրդ ավագանու կողմից: Դեռևս 1869 թ. նա առաջարկում էր քուրդ ռազմական ավագանին կտրել ժողովրդից, իսկ ժողովրդին սովորեցնել նստակյաց կյանքի. «Փշրելու է ատոնց ձեռքի մահացու նիզակը, փոխարենը արդարավաստակ մաճը դնելու է անոնց ափի մեջ, կործանելու է այն սև-սև վրանները, որոնցմով լեռն լեռ կքշին գայլերու երամի պես. հաստատելու է զիրենք գյուղերու մեջ, գերաններու տակ, իջեցնելու է զանոնք այն ամեհի նժույգներեն և եզ վարել տալու է»[74]: 80-ական թվականներին Սրվանձտյանցը ձգտում էր, որ հայ ժողովրդի ազատագրական շարժումները չմեկուսանան օսմանյան կայսրության կազմի մեջ մտնող մյուս ժողովուրդների ազատագրական շարժումներից: «Բեզե Պոլո» հուշապատումի մեջ նրա ուշադրությունը գրավել

---

[73] Նույն տեղում, գ. 10527, տե՛ս նաև «Բանբեր Հայաստանի արխիվների», 1973, N 3, էջ 128:

[74] «Մանզումեի էֆքիար», 1869, N 895:

էր այն հանգամանքը, որ հայերը և եզդիները միասին են պայքարում մարական զորքերի դեմ: Համատեղ պայքարի գաղափարն է արտահայտված նաև Սրվանձտյանցի նամակներում՝ ուղղված պատրիարքական փոխանորդ Հովհաննես քահանա Մկրյանին:

1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ քրդերի մի մասը հրաժարվեց հարկ և զորք տալ կառավարությանը: Ապստամբեցին Դերսիմի քրդերը: Կատաղի մարտեր տեղի ունեցան թուրքական չորրորդ բանակի զորամասերի և դերսիմցիների միջև: Քրդերն ու հայերը կռվում էին միացյալ ուժերով. սակայն անհավասար պայքարում պարտություն կրեցին[75]: Սրվանձտյանցի խոսքերը, որ անհրաժեշտ են գործիչներ, որպեսզի առաջնորդեն Դերսիմի քաջերին, նրա ափսոսանքը՝ Դերսիմը կործանելու համար, վերաբերում են այդ իրադարձություններին և իրենց մեջ պարունակում են հայ-քրդական համատեղ պայքարի անհրաժեշտության գաղափարներ: Իր մի նամակում Սրվանձտյանցը հաղորդում է, որ թուրքական չորրորդ բանակի հրամանատար Տերվիշ փաշան Բաբերդի, Երզնկայի, Քեմախի, Ակնի և Արաբկիրի հայ բնակչությանը առաջարկել էր հանրագիր ստորագրել, թե Դերսիմի քրդերը երկրի հարստահարիչներն են և ուժով ցսպելու համար հայերը պարտավոր են «նպաստաւոր լինել տէրութեան բանակին»: «Տերվիշ փաշան յատուկ պատվերներ առած էր հայոց, որ Տերսիմի քրդերու հետ տեսութիւն չըներն, առուտուր չըներն, հիւր չըներն,և այլն, մենք հասկացուցինք սակայն ասոր հակառակը և համոզեցինք թե՝ եթէ քրդերը ձեզ վնասած են, քաղաքական և զինուորական պաշտոնէից թոյլտուութեամբ ու թելադրութեամբ րրած են. գանգտեմը ասոնց դէմ ու համոզուեցան»[76]:

Հովհաննես Մկրյանին գրած նամակներում Սրվանձտյանցը խոսում է տարբեր ազգերի մեջ պառակտում սերմանելու կառավարության քաղաքականության մասին: Այդ առիթով էլ նա զայրույթով է խոսում գավառական այն առաջնորդների մասին (մասնավորապես Տիգրանակերտի և Խարբերդի), որոնք երկու

75 Վ. Պարսամյան. Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 291:
76 ԳԱԹ, Թ. Աղասյանի ֆ., բ. 12, գ. 10524, 10525:

հարեւան ժողովուրդներին իրար հետ համերաշխութիւն քարոզելու փոխարէն «քիւրդն ու հայը թշնամի կըլնեն, կառավարութեան առջև հայը պաշտպանել չեն կրնար. մնաս մնասոց վրայ կկրէ ժողովուրդը և քիւրդը կլինի դանակը՝ հայն անոր առջև դրուած միս»[77]:

Ջանալով վերացնել հայերի և քրդերի միջև եղած հակառակության ոգին, Սրվանձտյանցն աշխատում է միաժամանակ Տիգրանակերտում բարենորոգումների ծրագիրը ներկայացնել կոմիսերին իբրև հայերի, ասորիների և քրդական քիղանի ցեղերի միացյալ ծրագիր, ուր պետք է նշվեին երկրի բարենորոգման պետքերն ու դարմանները: Հայ-քրդական զինակցության օգտին էր արտահայտվում նաև քուրդ խաների մի մասը, որոնց մեջ ուժեղ էին կենտրոնախույս ձգտումները և աշխատում էին ստեղծել քրդական անկախ իշխանություն: Գարայնիի խան քուրդ Հյուսեին աղան հայ գործիչների հետ զրուցելիս նշում էր, որ քրդերը երախտապարտ են հայերին սովի տարիներին իրենց ցույց տված օգնության համար, ապա գտնում, որ պետք է ամրապնդել երկու ժողովուրդների կապը: «Հայերը յուրեանց յոյսը պէտք է դնեն գլխաւորապէս յուրեանց վրայ և հետևաբար քրդերի և ասորիների վրայ, դա մի բնական դաշնակցութիւն է, որովհետև հայոց խնդիրը,- ասում էր Հյուսեին խանը,- միևնոյն քրդերի և ասորիների խնդիրն է, որքան որ հայերը քրդերի եւ ասորիների զարգացման համար աշխատեն, այնքան էլ իրեանց գործին կօգնեն»[78]: Ե՛վ Խրիմյանը, և՛ Սրվանձտյանցը խիստ զգում էին հայ-քրդական հարաբերությունները բարելավելու անհրաժեշտությունը: Այդ բանը գիտենալով է, որ Գ. Նորատունկյանը գրում էր Սրվանձտյանցին. «Հայոց համար ամենակարեւոր խնդիր կնկատեմ քուրդերու հետ ծանօթանալու եւ յարաբերութիւն հաստատելու միջոցները գտնելն եւ մտերմաբար ձեր մասնաւոր ուշադրութեան ենթարկելով այս գաղափարս, կհարցնեմ թէ արդեօք լաւագոյն և օգտակար չըլլար, եթէ սուրբ հայրիկ դձեզ յուր կողմէ անոնց մէջ ղրկէ մի անգամ ա-

---

[77] Նույն տեղում, գ. 10526, տե՛ս նաև «Բանբեր Հայաստանի արխիվների», 1973, N 3, էջ 126:

[78] Ա. Թոխմախյան, Մասիս լեռների հարավային ստորոտները, Թիֆլիս, 1882, էջ 53-57:

ռաքելութեան և ձեր աշխատութեամբ մի տեղեկագիր դուրս ելնէ քրդաց վիճակագրութեան»: Նորատունկյանը համոզված էր, որ հայերի և քրդերի հաղորդակցությունից և միաբանությունից կարելի է ստանալ շոշափելի օգուտներ, քանի որ քրդերը «մարմին մը կկազմեն ցեղով և զենքով. Հայքս ալ ազգով ու յոյսով... եվրոպական դիվանագիտութիւնը կպատուէ նախ զէնք ի ձեռին ունեցողը, ապա լուսաւորեալը»[79]:

Սակայն հայ գործիչների հայ-քրդական միություն ստեղծելու ջանքերը չտվեցին ցանկալի արդյունք: Թուրքական կառավարությունը բավականին հմտությամբ օգտագործեց հայերի և քրդերի միջև եղած որոշ ներհակությունները, սիրաշահելով իր կողմը գրավեց քրդական վերնախավին, իսկ հետագայում սուլթան Համիդի հրամանով քուրդ հրոսակներից կազմված «Համիդիե» գնդերը դարձրեց հայերի ցեղասպանության գործիքներից մեկը:

* * *

Հայ ժողովրդի ազատագրական շարժումները 80-ական թվականներին թևակոխում են նոր շրջան: Եվրոպական դիվանագիտությունից հիասթափված առաջադեմ գործիչները զգում են ժողովրդի իրավիճակի օրըստօրե վատթարացումը: Նրանք սկսում են քարոզել ժողովրդին «օտարից բան չհուսալ բնաւ»: Բեռլինից վերադարձած Խրիմյանը Կ. Պոլսից Հայաստան մեկնող պանդուխտներին հիշեցնում էր «երկաթե շերեփի» պատմությունը, նշում Զեյթունի երկաթահանքերից հրացաններ ձուլելու անհրաժեշտությունը: 1879-ին Խրիմյանն ընտրվում է Վասպուրականի թեմական առաջնորդ և երկար տարիների բացակայությունից հետո վերադառնում Վան: Հայաշատ այդ կենտրոնը ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո ապրում էր հոգևոր-մշակութային վերածնության բուռն կյանքով: Վանի շուկայի հրդեհը պատերազմից առաջ, քրդերի խժդժությունները պատերազմի ժամանակ տեղի հայերի, առանձնապես երիտասարդության մեջ ուժեղացրել էին ըմբոստության ոգին: Խրիմյանի

[79] Տե՛ս «Դիւան հայոց պատմութեան», հ. ԺԳ, էջ 345-346:

ներկայությունը առավել թափ հաղորդեց ոգևորությանը[80]: Նրա «Վանգոյժը», «Հայ գոյժը», Կ. Պոլսի եկեղեցիներում կարդացած կրակոտ քարոզների լուրը հասել էր Վան և ոգևորել բոլորին: Ընդգավառը հասնելուն պես Խրիմյանը Վանից, Վարժապետյանը՝ Կ. Պոլսից հրավեր նամակ և կոնդակ են հղում «Վասպուրականի փառատակարեկ ճետին»: Սրվանձտյանցը ևս շտապում է Վան:

Վանում 80-ական թվականներին գործում էին մի քանի խմբավորումներ. Կ. Պոլսի «Արարատեան միացեալ ընկերութեան» ջանքերով 1876 թ. բացված Վարժապետանոցի շուրջը համախմբված ուսուցիչները տեսուչ Մկրտիչ Փորթուգալյանի ղեկավարությամբ, Վանի ռուսական փոխհյուպատոս Կամսարականը և նրա համախոհները, նորընտիր առաջնորդ Խրիմյանը և նրա կողմնակիցները, Վանի նախկին հոգևոր առաջնորդ Պողոս Մելիքյանի խումբը՝ պողոսյանները: Սկզբունքային տարաձայնություններ կային մի կողմից պողոսյանների, մյուս կողմից մնացած խմբավորումների միջև: Պողոսյանները վարում էին հակաժողովրդական քաղաքականություն: Նրանց շուրջը համախմբված էին առևտրավաշխառուական դասի ներկայացուցիչներ Պանիրյանը, Բաջանյանը, Մարությանը: Նրանք թուրք և քուրդ աղաների հետ կեղեքում էին ժողովրդին, միաժամանակ հնազանդություն քարոզում, պահանջում համակերպվել տիրող կարգերին, չմտածել պայքարի մասին: Պողոսյանները դեմ էին ազգային-ազատագրական պայքարին: Մյուս խմբավորումները երբեմն համերաշխվում էին իրենց գործունեության մեջ, երբեմն հեռանում: Տակտիկական որոշ տարաձայնություններ ունենալով հանդերձ, ազգային-ազատագրական պայքարի հարցում նրանք ունեին դրական կողմնորոշում:

Խրիմյանն իր առաջնորդության չորս տարիների ընթացքում Վասպուրականը ղեկավարեց փոխանորդների օգնությամբ: Առաջինը Սրվանձտյանցն էր, որի ներկայությունից օգտվելով, ուսուցիչը ողջ ուշադրությունը նվիրեց «Սովելոց Հանձնաժողովի» նախագահի պարտականությունների կատարմանը, իսկ «Սրվանձտեանց առաջնորդական փոխանորդի հանգամանքով

[80] Գ. Գյուզալյան, Խրիմյան Հայրիկ (Գաղափարների աշխարհը), Պեյրութ, 1962, էջ 58, 59. տե՛ս նաև Հ. Ճանիկեան, Յիշատակներ Հայկական ճգնաժամին, մասն Ա., Կ. Պոլիս, 1913, էջ 7, 49, 50:

կվարեր ազգային գործերը»[81]: «Սրուանձտեանց, որ այնքան լավ կճանչնար գավառը իր վարած զանազան պաշտոններում շնորհիվ, աւելի քան երկու տարի մեծ ձեռնհասութեամբ վարեց Վանա թեմի ազգային գործերը, վերակազմելով քաղաքական և կրոնական ժողովները պողոսեան և ապողոսեան խառն տարրերէ. կրթական գործին ևս մեծ մղում տուավ, մինչ Խրիմեան, առաջնորդի հանգամանքով, կմնար սոսկ իբրև վերին հսկող»[82]:

Քաջատեղյակությունը նահանգին և վարչական ունակությունները հնարավորություն են տալիս Սրվանձտյանցին հմտորեն վարել Վասպուրականի ազգային գործերը: Նրան հաջողվում է այնպիսի անկախ դիրք ձեռք բերել Վանի մեջլիսում, որ գրգռում է նահանգապետի զայրույթը[83]:

Այդ տարիները Վանի համար լի էին փոթորկոտ իրադարձություններով: Ժողովրդի մեջ տեղի էին ունենում հուզումներ և խմորումներ: Դեռևս պատերազմի տարիներին կազմակերպվել էր «Սև խաչ» գաղտնի ընկերությունը, որը հետապնդում էր ազատագրական նպատակներ: Կազմակերպությունը պետք է սև խաչ դներ (այսինքն՝ սպաներ) այն անձնավորությունների վրա, որոնք կխոչընդոտեին իրենց գործունեությանը: Ընկերության ծրագիրը չի հրատարակվել զգուշության նկատառումներով, այդ պատճառով էլ չի հասել ուսումնասիրողներին: Հիշյալ գաղտնի ընկերությունից բացի, Մկրտիչ Փորթուգալյանի համախոհները Վանում ունեին մի ակումբ, որը նշանակալի աշխատանք էր կատարում ժողովրդի ինքնագիտակցության արթնացման գործում[84]: Այդ գործը կարող էր շարունակվել երկար, եթե շարժման ղեկավարները չբռնեին անտեղի աղմկարարության և ցուցամոլության ուղին: «Հայրենասիրական այդ կազմակերպությունների առաջընթացի ուղեծիրը, իրենց անմիտ ու անհեռատես գործունեությամբ հաճախ մթնեցնում էին նաև նրանց ղեկավարները»[85]: Ցուցամոլության բարձրակետը հանդիսացավ 1880 թ.

---

81 Հ. Երամեան, նշվ. աշխ., էջ 125:

82 Նույն տեղում, էջ 127, տե՛ս նաև Ա. Թերզիպաշեան, նշվ. աշխ., էջ 58:

83 «Տարազ», 1892, N 47, էջ 605:

84 Ա. Թերզիպաշեան, նշվ. աշխ., էջ 57:

85 Բ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 220:

Մ. Փորթուգալյանի մի բանախոսությունը՝ «Ժամանակը հասել է, հայեր, ինչ ընենք» թեմայով, որի հայտարարությունն ինքնին գրավեց կառավարության ուշադրությունը: Սրվանձտյանցը լավատեղյակ էր գաղտնի կազմակերպության գոյությանը: Լինելով հեռատես, սրաթափանց և զգույշ, նա գտնում էր, որ ժողովուրդը դեռևս պատրաստ չէ կառավարության դեմ բացահայտ շարժումների. անհրաժեշտ է գաղտնի, երկարատև և համառ կազմակերպչական աշխատանք:

Բանախոսությունից հետո կառավարությունը ձերբակալում է Փորթուգալյանին և արգելում ակումբի հետագա գործունեությունը: Փորթուգալյանի մտերիմները խնդրում են Սրվանձտյանցին միջամտել և ազատել Վարժապետանոցի տեսչին: Սրվանձտյանցը հրաժարվում է բացահայտ նրան պաշտպանել, նրա եղույթը հանուր ազգին չվերագրելու համար, միայն խոստանում է կողմնակի ուղիներով արձակել տալ Փորթուգալյանին և կատարում է խոստումը: Սակայն շուտով սկսվում է Փորթուգալյանի և նրա համախոհների խուլ հակառակությունը Սրվանձտյանցի նկատմամբ, որը վերածվում է բացահայտ թշնամանքի: «Մեկ, երկու երեսփոխաններ մինչև իսկ ժողովի ընթացքին զայն իբրև մատնիչ ամբաստանելու չափ յառաջ գնացին, ակնարկելով Փորթուգալեանի ծանոթ պարագան»[86]: Ինչպես երևում է Փորթուգալյանի «Մշակում» հրատարակած նամակներից[87], նրա և իր համախոհների հակակրանքը Սրվանձտյանցի հանդեպ առաջացել էր այն հողի վրա, որ նրանք կարծում էին, թե Վանի առաջնորդական փոխանորդն է եղել Վարժապետանոցի փակման պատճառը: Մինչդեռ փաստաթղթերը վկայում են հակառակը: Ներսես Վարժապետյանի պաշտոնական գրությունից իմանում ենք, որ Սրվանձտյանցը նահանգապետի մոտ հանդես է եկել Փորթուգալյանի պաշտպանությամբ. «Ընկալա յուլիսի 28 ամսաթուով Ձեր ուղարկած նամակն, ինչպէս օրինակներն այն թագրիրներու զորս մատուցած էք գաւառիդ Վսեմափայլ կուսակալին ի պաշտպանութիւն պ. Փորթուգալեանի և վարժարանաց Միացեալ ընկերութեանց: Սոյն խնդրոյն մէջ Ձեր բռնած ընթացքը գոհա-

---

86 Հ. Երամեան, նշվ. աշխ., էջ 131:
87 «Մշակ». 1881, N 114, 124, 240, 1882, N 19, 1883, N 55, 69:

ցուցիչ և Ձեր Թագրիրներն օրինավոր գտանք և միանգամայն պատշաճ դատեցինք Հաղորդել անոնց պատճենն Միացեալ ընկերութեանց տնօրէն ժողովոյ, որպէսզի տեղեկանա, թէ որքան անտեղի և անհիմն են այն զրոյցներն, որ Ձեզ Թշնամի ցոյց տալ կուզեն Միացեալ ընկերութեանց»[88]:

Գ. Սրվանձտյանցի գործունեության ողջ ուղին վկայում է, որ նա չէր կրող դեմ լինել ազատագրական նպատակներ հետապնդող կազմակերպությունների գոյությանը: Նա դեմ էր անխոհեմ և անհարկի ցույցերին, ոչ միայն ունեցածը, այլ նաև չունեցածը ցուցադրելուն: Այդպիսի ցույցերից էին 1881 թ. սահմանադրության տարեդարձի տոնակատարությունները Վանում, որի ժամանակ «Սև խաչ» գաղտնի ընկերության անդամները զինվորական համազգեստով (սպաների, ենթասպաների, տասնապետների և շարքային զինվորների), զենքով ու դրոշակով Վարագում կազմակերպեցին զորահանդես, զինավարժություն, իսկ վերադարձի ճանապարհին թափորն անցավ Խրիմյանի և Վանի ռուսական հյուպատոս Կոստանդին Կամսարականի տների մոտով և իրենց խանդավառությունն արտահայտեց նրանց նկատմամբ: «Ազգային սահմանադրութեան տոնակատարութիւնները շատ վրանրաց էին, տասը հազար մարդով կերթայինք Վարագ, ազգային դրոշակներ պարզած, հայրենասիրական երգեր երգելով»,- գրում էր հետագայում Փ. Թերլեմեզյանը[89]:

Վանի նահանգապետ Հասան փաշան այդ ցույցի համար պատասխան է պահանջում Խրիմյանից, իսկ վերջինս Վարագից Սրվանձտյանցի վրա է դնում այդ պարտականությունը: Սրվանձտյանցը, որ ցույցից դժգոհ էր, հրաժարվում է Խրիմյանի հանձնարարությունը կատարել: Այդ դեպքը սառնություն է մտցնում ուսուցչի և աշակերտի փոխհարաբերության մեջ, որը գնալով հետագայում ավելի է խորանում:

Սրվանձտյանցը մեր այն սակավաթիվ հոգևորականներից էր, որ շատ լավ էր ճանաչում արևմտահայ գավառը և ժողովրդին: Նրա աչքի առաջ օրըստօրե վատթարանում էր հայ ժողովրդի վիճակը: Նա տեսնում էր, որ Բեռլինի կոնգրեսից հե-

---

88 ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., բ. 2, գ. 931:

89 Բ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 220:

տր օսմանյան կառավարության բարենորոգումների խոստումները դառնում են հայ գյուղացու հողազրկման պրոցես և ֆիզիկական բնաջնջման սպառնալիք: Կառավարության դեմ ոտքի կանգնելու համար նա պահանջում էր երկարատև, համառ և լուրջ նախապատրաստական աշխատանք. «պատրաստել մայրեր, հասցնել այրեր, կազմել ընկերություններ, չխնայել նույն լուման, գրկել զիրենք և տալ այս նպատակին համար»: 70-ական թվականներին Խրիմյանն էր զգուշացնում իր սանին ժամանակավրեպ ելույթի համար. այժմ սանն էր զգուշացնում ուսուցչին և խոհեմություն ու շրջահայեցություն քարոզում: Զգուշության այդ կոչերը ժամանակի լիբերալ գործիչների կողմից գնահատվեցին իբրև դավաճանություն և մատնություն: 80-ական թվականների «Մասիսը» և «Մշակը» լի են Վանի այդ ժամանակաշրջանի իրադարձությունների մեկնաբանությամբ: «Մշակը» ողողված էր Վանից ուղարկված նամակներով, ուր պատմվում էր Սրվանձտյանցի «մատնությունների» մասին: Հոդվածների մեծ մասը ստորագրված են «Հրանտ» կամ «Մ. Փ.» ծածկանուններով, որոնցով հանդես եկողը Մկրտիչ Փորթուգալյանն է, որի նամակները աչքի չեն ընկնում իրենց անաչառությամբ:

Այդ ժամանակամիջոցում Վանում ծավալած իրենց ազգային-քաղաքական գործունեության համար Խրիմյանն ու Սրվանձտյանցը կառավարության կողմից համարվում են անբարեհույս: Ժողովրդին գրգռելու և հրահրելու համար Բ. Դուռը պատրիարքից պահանջում է Վանից ետ կանչել թե ուսուցչին, թե աշակերտին:

Սրվանձտյանցն ապրում է հոգեկան խոր ճգնաժամ. իր հայրենասիրական գործունեության համար Բ. Դռան կողմից համարվում է անբարեհույս, իսկ ազգային «ձախ» գործիչների կողմից նշավակվում դավաճան պիտակով: Այդ պատճառով նա մի քանի անգամ հրաժարական է ներկայացնում պատրիարքին՝ Վանի առաջնորդական փոխանորդի պաշտոնը թողնելու համար: Պատրիարքի պատասխանները միշտ բացասական էին. «Ազգային վարչությունը երբեք չկրնար ընդունիլ ձեր հրաժեշտ Վանա առաջնորդական փոխանորդի պաշտոնէն, վասնզի... ձեր ազգասիրութեան վերայ վստահ է և վասնզի ձեր ներկայութիւնը Վանա մէջ իբր բացարձակ հարկ նկատած է»:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Սրվանձտյանցի և Խրիմյանի նամակագրությունը: ԳԱԹ-ում պահված աշակերտի 60 և ուսուցչի 200 նամակներում աննշան ստվեր անգամ չկա նրանց միջև եղած ներհակության: Հատուկ ուշադրության է արժանի Սրվանձտյանցի 1881 թ. հուլիսի 27-ի նամակը: (Դրանք այն օրերն էին, երբ մամուլի էջերը լեցուն էին Խրիմյանի և Սրվանձտյանցի միջև եղած հակասությունների նկարագրությամբ): Այդ նամակով Սրվանձտյանցը հրաժարվում է Վանի առաջնորդական փոխանորդի պաշտոնից. «Եթէ մնամ ու ծառայեմ Վանայ մէջը, կըամբաստիմ ոմանց հայրենակցացս իբրև Վանայ առաջնորդութեան յետամուտ: Եթէ պնդիմ հրաժարելու վրայ, շատերը, ինչպէս նաև կեդրոնական վարչութենէն իբրև հայրենեաց ծառայելէ խուսս տուող և գաւառի գործոց պատասխանատու կնկատուիմ: Ահա իմ դժուարին կացութիւնս. ուստի որդիական վստահութեամբ ձեր հայրական գիրկը կիյնամ. դուք գիտէք իմ հնազանդութիւնս առ Ձեզ, իմ անձնուիրութիւնս առ Հայրենիս և իմ պարտաճանաչութիւնը առ ազգային կեդրոնական բարձր իշխանութիւնը. հաճեցէք, կաղաչիմ. տնօրինել տալու ինձ համար պատշաճ միջոց մը, որով... ղաղարեալ համարուիմ Վանա առաջնորդական փոխանորդի պաշտոնութենէս: ... Անկարկներէ անգամ կարի կզգուշանամ Ս. Հայրիկ, կզգուշանամ, որպէսզի կայծ մը չթողի ժողովրդեան կամ ժողովոյ մէջ, և այն իմ առթիվ, որո բորբոք տուողներ պատրաստ են. ես հայրենեացս համար մանաւանդ այս օրերը «Միութիւն, խաղաղութիւն, ներքին բարեկարգութիւն, զոհողութիւնը» առաջին պէտք և շահ կճանչնամ և կկարծեմ,թէ այն օրը հասած է, որ հայրենասէր հայն զգենլով իր փառքն ու զօրութիւնը, իր զարդն ու զրահը, ելնէ հրապարակը, ձգէ զինքն բացուած խորխորատին մէջ այն Կորղիոս Հռովմայեցւոյն նման և իւր անձին զոհողութեամբ փակէ Հայրենեաց պատռուածքը»[90]:

Այս նամակով Սրվանձտյանցը հրաժարական է տալիս և հեռանում Բաղեշ, այնտեղից էլ Կ. Պոլիս: Ճանապարհին նրան է հասնում Խրիմյանի ամոքող նամակը, ուր հայտնվում է այն միտքը, թե Սրվանձտյանցի ներկայությունը տվյալ պարագանե-

[90] ԳԱԹ. Սրվանձտյանցի ֆ., բ. 2, գ. 58:

րում անհրաժեշտ է նաև Կ. Պոլսում: «Հայրենիք չէր զձեզ վշտացնող, այլ մի քանի ձեռք, որ խորամանկներու ձեռք գործիքներ էին... Այդ ամէնն անցան ու գնացին, դարձեալ դուք Հայրենիքին եք և Հայրենիք ձեր»[91]: Խրիմյանը խորհուրդ է տալիս իր սանին խորհել Հայրենիքի «ներքին և արտաքին վերքերի դարմանի» համար: Եթէ Խրիմյանն իմանար, որ իրենք գտնվում են հակառակ բանակներում, այդպիսի խորհուրդ չէր տա: Խրիմյանը Գյուտ Աղանյանցին գրած մի նամակում հանդես է գալիս Սրվանձտյանցի պաշտպանությամբ: Նա դատապարտում է «Մասիսի» էջերում լույս տեսած Սրվանձտյանցին անվանարկող նամակները և խորհուրդ է տալիս խմբագրին ստուգել փաստերը և հետո միայն տպագրել հոդվածները: «Այդպիսի մարդիկ (ակնարկում է հոդվածագրին- Է. Կ.) շատ անգամ իբրև մարդ կխալին իրենց դատաստանի մէջ: Գարեգին վարդապետը իր այս պաշտոնը լուրջ սրտի մտօք կատարեր է իր պարտականութիւններ. այս մասին կարող եք ստույգ տեղեկանալ պատրիարքին գրված տեղեկագրերէն և հասկանալ անոր Գարեգին վարդապետի գործերը, զորս Վասպուրականի նկատմամբ կգրէ կեդրոնական վարչութիւն»[92]: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ, երբ 1883 թ. Բ. Դուռն հրամանով Կ. Պոլիս են կանչում Խրիմյանին, ուսուցիչն իր առաջին ահազանգը հնչեցնում է սիրելի սանի ականջին, առաջարկելով շտապ տեսնվել Գ. Նորատունկյանի, «զանձուց նախարարի» և այլոց հետ, միջոցներ խորհել իր համար, «զի սա կենաց և մահու խնդիր է»:

Սրվանձտյանցի Վանից հեռանալուն հաջորդում է Խրիմյանի հեռացումը: Օսմանյան կառավարությունը քողարկված և նուրբ միջոցներով ազատվում է իր համար վտանգավոր և մեծ ժողովրդականություն վայելող գործիչներից: Նրանց փոխարինում է տաս տարի առաջ մեծ դժվարությամբ արտաքսված Պողոս Մելիքյանը: Սակայն ազգային ուժգին զարթոնք ապրող Վանի հայությունը չէր կարող հաշտվել նման կացության հետ: Պատրիարքարանին ուղղված խնդրագրերում վանեցիները պահանջում են Սրվանձտյանցի վերադարձը Վան[93]: Պողոս Մելիքյանի մատ-

---

91 Նույն տեղում, դ. 501:
92 ԳԱԹ, Գ. Աղանյանցի ֆ., դ. 539:
93 ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., բ. 2, դ. 174, 615:

նությունների պատճառով Վանում կատարված դանզվածային ձերբակալությունները վանեցիներին կրկին անգամ հիշեցնում են Սրվանձտյանցի հնարամտությունը և շրջահայացությունը: Վանի ազգային գործիչ Հովսեփ Ճանիկյանը այդ իրադարձությունների մասին Սրվանձտյանցին գրում է. «Ասոնք ամենը իհարկէ տեղի կունենան առ ի չգոյն ազգային օրինաւոր ներկայացուցչի... Անոնք, որ մտածել գիտեն քիչ շատ, կրնան յիշել Փորթուգալեանի տենդոտ օրերն ու ձեր սրբազնութեան պաշտոնավարութիւնը ի Վան»[94]:

Սրվանձտյանցի այդ շրջանի գործունեությունը գնահատում է Մ. Մամուրյանը: Պախարակելով առանձին հոգևորականների անհեռատեսությունը, ընդգծելով Սրվանձտյանցի զգուշությունն ու շրջահայացությունը, Մամուրյանը գրում է. «Երբէք, ըստ իս հայութիւնը նիւթապէս և բարոյապէս այսքան վար ընկած չուներ, երբէք ի շնորհս Շնորհալոյն (ակնարկում է Ն. Վարժապետյանին - է. Կ.) այսքան տառապանք կրած չուներ հայ ժողովուրդն և նմէ Ձեզի պէս մի քանի արժուն, բանիբուն և հայրենասէր հովիվներ ալ չգտնուին, ես, որ ընդհանրապէս հակակիր եմ հայ եկեղեցականութեան, պիտի ըսեի կորած է ազգը»[95]:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում 1883 թ. նոյեմբերի 1-ին գրած Սրվանձտյանցի նամակը Մամուրյանին, ուր արտահայտված են նրա մտորումները Սան-Ստեֆանոյի 16 և Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածների ու հայ գործիչների՝ դրանց նկատմամբ ունեցած սին հույսերի մասին: Առանց անունները տալու, նամակի հեղինակը քննադատում է հայ բարձրաստիճան հոգևորականությանը (պատրիարքին և քաղաքական ու դիվանագիտական կյանքի ասպարեզ նետված անվանի եպիսկոպոսներին), քաղաքական գործիչներին: «Ի՞նչ հարկ անուններր գրել... քանի անձնանուէրների տեսանք, որք այսօր շահու և փառաց նոփրեալ են: Անձնանուէրներ և հայրենասերներ՝ որք հայկական խնդրոյն մէջը անձնական շահու և փառաց վերերը խաղացին, որ սովկոց զումարներէն իրենց անձանց բաժիններն առացան և

---

94 Նույն տեղում, գ. 615:

95 Նույն տեղում, գ. 668, էջ 96:

անունին գթած հռչակեցին: Որ վարժարաններ բացին՝ և իրենց ազգականները շահեցուցին, ու հանգանակութեամբ ազգը կողոպտեցին և ապա վարժարանաց դռները փակեցին՝ մեղքն ու վնասը ձգելով ազգին: Միսը կաթողիկոս մը տնկեցին և անոր դառն պտուղները կը կերցնեն ազգին: Սուրբ Սիոնի փառքը պատրիարքին, պարտքը կդնեն ազգի պարանոցին: Հայաստանի մեծամեծ վիճակները այնպիսի անձինք առաջնորդ կացուցին, և այնպիսի նուիրակներ ու հրահանգներ ղրկեցին, որոց շնորհիվ թեմերը անհովիվ և ժողովուրդը ծանրապէս ճնշմանց ու զրկանաց մատնեցին...»[96]:

80-ական թվականներին մոլեգնող սուլթանական ռեակցիայի պայմաններում մթնոլորտը գնալով շիկանում էր: Գավառներից ետ են կանչվում գործունյա առաջնորդները և դատապարտվում Կ. Պոլսում մնալուն: Անբարեհույս տարր համարելով, կառավարությունը Մուշից ետ է կանչում «Թռչնիկ Պնդասեանի» նախկին խմբագիր Գրիգորիս Ալեաթճյանին: Խրիմյանն ու Սրվանձտյանցն արդեն հեռացվել էին Վասպուրականից:

1884 թ. Գ. Սրվանձտյանցն ուղարկվում է Տրապիզոն իբրև Պոնտոսի թեմի առաջնորդ: Նույնիսկ Ռուսաստանում ապրող հայերից նա նամակներ է ստանում, ուր հայտնվում է այն միտքը, թե Սրվանձտյանցի ներկայությունն անհրաժեշտ է Տարոնում, Մուշում: Գեղամ Կարապետյանը, Միսաք Թիմուրյանը իրենց նամակներով, ժողովուրդը մի քանի հանրագրերով խնդրում են Սրվանձտյանցին լինել Տարոնի հոգևոր առաջնորդ[97], իսկ Հովհաննես Սանթուրճյանը խնդրում է «երթալ ի Վան իր հանրածանօթ վարչական և հաշտարար ձիրքերով փրկել Վանա տառապեալ հայութիւն իր այլևս անտանելի դառն կացութենէն»[98]: 1886 թ. Գ. Սրվանձտյանցը ձեռնադրվում է եպիսկոպոս և 1887 թ. մեկնում Տարոն: Տարոնում նա մնում է միայն 8-9 ամիս: Նրա եռանդուն գործունեությունը դարձյալ իր վրա է հրավիրում օսմանյան կառավարության ուշադրությունը: Տարոնի պատմությունն ուսումնասիրողները նշում են, որ Սրվանձտյանցի վրա խիստ հսկողություն սահմանվեց: Սրվանձտյանցը պատմում

---

96 «Դիւան Հայոց պատմութեան», հ. ԺԳ, էջ 452-454:
97 ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., ք. 2, գ. 1055, 1056, 1058:
98 Նույն տեղում, գ. 962:

*է, որ իր աշխատանքը Մուշում «կարի տաժանելի էր, և ծանր, և խառն»: Կառավարության գործակալները Բ. Դուռ են հաղորդում ամեն մի մանրամասնություն: «Քաղաքական կառավարութեան աչքն ու ձեռքն ալ այնտեղ այլ իմն կնկատէ հայոմ կեանքը»[99]: 1887 թ. վերջին Սրվանձտյանցը դարձյալ Տրապիզոնում է, ուր նա մնում է մինչև 1888 թ. կեսերը: Չնայած Տրապիզոնը համարվել է համեմատաբար հանգիստ առաջնորդություն, սակայն ինչպես Օսմանյան կայսրության յուրաքանչյուր անկյունում, այնպես էլ այստեղ կատարվում են անթիվ ու անհամար ապօրինություններ, սարսափելի հարստահարություններ: Գյուղացիների սոցիալական հուզումները այստեղ ես ունենում էին խիստ ազգային-ազատագրական երանգավորում, քանի որ շահագործողի դերում հանդես եկողը մեծ մասամբ թուրք պաշտոնեությունն էր և քուրդ դերեբեյությունը, իսկ շահագործվողը՝ հայ գյուղացին: Որդուի գավառի Ջավուշլար գյուղում գյուղացիներն այլևս չկարողանալով տանել հարկային ծանր բեռը, Բ. Դռան պաշտոնյաների կամայականությունները, ապստամբում են ողջ գյուղով: Գյուղացիների մեծ մասը բանտարկվում է: Այդ ամենի նկատմամբ Սրվանձտյանցը չէր կարող անտարբեր մնալ: Նրա միջնորդությամբ քննիչ է գալիս պարզելու գյուղացիների բողոքների պատճառը: Ինչպես պետք էր սպասել, քննիչ Հաճի Տերվիշ աղան բռնում է հարկահանների և գայմագամի կողմը: Նրանք ստիպում են հայ և հույն քահանաներին ստորագրել մի արձանագրություն, ուր մեղադրվում էր գյուղի հասարակությունը: Վերջիններս հրաժարվում են նման փաստաթուղթ ստորագրելուց[100]: Գուղացիների շահերի պաշտպանությամբ հանդես եկող Սրվանձտյանցի դեմ տեղական իշխանության ու նրա կամակատարների կողմից դավեր են լարվում. շուտով նրան Բ. Դռան պահանջով պատրիարքարանը կանչում է Կ. Պոլիս և այլևս թույլ չի տալիս վերադառնալ գավառ: Գավառներից նա էլին կանչված այն հայ հոգևորականները, որոնք աչքի էին ընկնում իրենց ժողովրդանվեր գործունեությամբ: Կ. Պոլսում էին Մկրտիչ Խրիմյանը, Գրիգորիս Ալեաթճյանը, Մաղաքիա Օրմանյանը:*

---

*[99] ԳԱԹ, Գր. Խալաթյանի ֆ., ց. 5, գ. 780:*
*[100] ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., ց. 2, գ. 128, 588, 589, 590:*

Նրանց միացավ նաև Սրվանձտյանցը: Գավառ վերադառնալուց հույսը կտրած Սրվանձտյանցը գրում է. «Ազգային ընթացքը չէ ուղղուած տակավին, դեռ թանձր ամպեր չեն փարատած...»: Սրվանձտյանցը Կ. Պոլսում ևս չի դադարում գործելուց:

Աշըգյանի պատրիարքության տենդոտ օրերն էին: Ժողովրդական հայտնի հուզումները Կ. Պոլսում, Գում-Գափուի ցույցը շիկացնում են իրադրությունը: Սրվանձտյանցը Ազգային ժողովի անդամ այն փոքրաթիվ եկեղեցականներից էր, որոնք հավատարիմ մնացին ժողովրդի շահերին: Ժողովուրդը, Ազգային ժողովը պահանջում են պատրիարքի հրաժարականը: Բարձրաստիճան եկեղեցականներից կազմված ժողովը տեղեկագիր է կազմում և ներկայացնում Բ. Դուռ, պահանջելով պատրիարքի պաշտոնանկությունը, Կ. Պոլիս կանչված հոգևոր առաջնորդների վերադարձը հայ գավառներ[101]: Հետաքրքիր է այն փաստը, որ այդ տեղեկագիրը հրաժարվում են ստորագրել Կրոնական ժողովի 9 եպիսկոպոսներից 5-ը՝ Արիստակես Դերձակյանը, Գրիգորիս Հովհաննիսյանը, Վահրամ Մանկունին, Մելքիսեդեկ Մուրադյանը և Սիմոն Սեֆերյանը: Տեղեկագիրը կազմում և ստորագրում են Մկրտիչ Խրիմյանը, Մաթևոս Իզմիրլյանը, Գրիգորիս Ալեաթճյանը և Գարեգին Սրվանձտյանցը[102]: Այդ հանդգնության համար հայրենասեր հոգևորականները, որոնք մի անգամ արդեն դատապարտվել էին Բ. Դռան կողմից, պատժվում են երկրորդ անգամ: Կառավարությունը Խրիմյանին ստիպում է ուխտի գնալ Երուսաղեմ, ուր «արծիվը փակվում է ճնճղուկի վանդակի մեջ»: Սրվանձտյանցն այլևս չի ընտրվում Ազգային ժողովի անդամ, իսկ ժողովի անդամ ընտրված Գ. Ալեաթճյանի և Մ. Իզմիրլյանի ընտրությունը Բ. Դուռը չի վավերացնում, նրանց փոխարեն պահանջելով ընտրել հնազանդ հոգևորականների:

Կառավարությունն ավելի է խստացնում հսկողությունը Սրվանձտյանցի նկատմամբ: 1891 թ. հոկտեմբերին, մահվանից մեկ տարի առաջ, նա գրում է. «Մենք միշտ կկասկածիմք, թէ բռնաբարուին մեր նամակները թէ այստեղ և թէ այդ տեղը (ակնարկում է Արևմտյան Հայաստանը – Է. Կ.), զի մեր գործոց

---

101 «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», 1884-1891, էջ 72-74:

102 Նույն տեղում, էջ 97:

և գրուածոց վրայ խիստ հսկողութիւններ կան: Պոլիսը շատ փոխուած է, մանաւանդ վերջերս, ինչ որ հայկական է՝ թէ կրօնական և թէ կրթական, այս և այդ պետութեանց համար միևնոյն քաղաքականութեան ենթարկեալ է. և իրարու կօժանդակին, իրարու իմաց կուտան և միօրինակ կգործին»[103]: Ինչպես տեսնում ենք այս մեջբերումից, Սրվանձտյանցը շատ լավ է հասկացել ցարիզմի քաղաքականությունը Հայաստանի, հայկական հարցի և հայ ժողովրդի ազատագրական ձգտումների նկատմամբ:

Ոչ մի հույս չտածելով եվրոպական պետությունների և ցարիզմի առաքելության նկատմամբ, Արևմտյան Հայաստանի և ընդհանրապես հայ ժողովրդի ազատագրությունը նա կապում էր միայն ու միայն ժողովրդի ինքնօգնության ու ինքնապաշտպանության հետ: Միևնույն ժամանակ, նա մտահոգված էր, որ հայ ժողովրդի ազատագրական շարժումը չմեկուսացվեր հարևան ժողովուրդներից: Այդ նպատակով էլ իր ուսուցիչ Խրիմյանի նման նա ուղիներ էր որոնում հայ-քրդական զինական համերաշխության ստեղծելու ուղղությամբ: Արևմտյան Հայաստանի քաղաքական իրավիճակին քաջածանոթ հեղինակի սուր աչքից չէր վրիպում պետական պաշտոնյաների և ընդհանրապես կառավարության՝ ոչ մահմեդական ժողովուրդների ազատագրական ձգտումները հենց բնում խեղդելու քաղաքականությունը:

[103] ԳԱԹ, Պ. Սիմեոնյանի, ֆ, գ. 68բ:

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

*Գարեգին Սրվանձտյանցի գործունեության սկիզբը համընկնում էր այն ժամանակաշրջանին, երբ արևմտահայությունը և մանավանդ Կ. Պոլսի ու Իզմիրի հայ գաղթօջախները գտնվում էին սահմանադրական եռուն պայքարի բովում: Նրա հայացքների ձևավորման վրա իրենց ազդեցությունը և հետքն են թողել այդ տարիների իրադարձություններն ու երևույթները:*

*Գործունեության հենց սկզբից Գարեգին Սրվանձտյանցը կանգնում է սահմանադրության համար պայքարողների առաջին շարքերում: «Արծուի Վասպուրականի» համարներից մեկում տպվում է սահմանադրության տարեդարձին նվիրված Սրվանձտյանցի բանաստեղծությունը, ուր երիտասարդ գործիչը ավետում է բացվող արշալույսի, «երջանկութեան դարի» մասին: Հեղինակը հավատում է, որ այդ «նորածին» օրենքն անսահման բարիքներ է բերելու հայերին և կոչ է անում «անձամբ և արեամբ» պաշտպանել այն բազում ոսոխներից*[1]*: 1863 թ. «Արծուիկ Տարօնոյ» լրագիրը մանրամասն տեղեկություններ է հաղորդում Տարոնի բոլոր գյուղերում սահմանադրության գործադրության մասին: «Սահմանադրութեան գործադրութիւն Տարօնոյ մէջ և ժողովրդեան վիճակի մը վրայ քանի մը խոսք» հոդվածում խմբագիրը ուրախությամբ հրապարակում է, որ Մշո դաշտի և Ջուխուրի 50, Բուլանըխների՝ 24, Խութի և Բռնաշենի 23 գյուղերում հաստատվել են եկեղեցական և թաղական խորհուրդներ, ժողովուրդն ամենայն առիթով ընդունում է սահմանադրության գործադիրներին, որոնց մեծամասնությունը «արծվո ճետերն» են՝ Խրիմյանի աշակերտները: Գովաբանելով Տարոնի ժողովրդին, որ «սիրով ընդունեց և դիւրաւ գործադրեց իւր մէջ զսահմանադրութիւն», Սրվանձտյանցը նկատում է, որ լուսավորյալ երկրներում ամեն բան ձեռք է բերվում «ճակատ-ճակատ զարկելով,*

---

[1] *«Արծուի Վասպուրական», 1861, N 1, էջ 31:*

*սիրտ վիրաւորելով, եղբայր մատնելով»։ Ջերմությամբ խոսելով «Հոգեւարքի վիճակի մէջ դեռ կանոնավորեալ սիրող» ժողովրդի մասին, Սրվանձտյանցն իր համակրանքն է արտահայտում անարյուն հեղափոխության նկատմամբ։ «Մի ժողովուրդ լի թշվառութեամբ, աղքատ, զրկեալ, չարչարեալ. վիրավորեալ, հափշտակեալ. ողորմելին մինչև իրիկուն ապրելու յոյս չունի, կրողոքե, ձայն չունի, բայց դեռ սահմանադրութիւն կընդունի»։ Երիտասարդ խմբագիրը կարծես մոռանում էր այն պայքարը, որ մղում էին Տարոնում բուն դրած ցեցերը՝ Մամիկոնյան Վարդան աղան, Մխիթար վարդապետը և նրա գործակիցները Մկրտիչ Խրիմյանի և նրա աշակերտների՝ սահմանադրության գործադիրների դեմ։ Քննադատելով Կ. Պոլսի Ազգային վարչությանն ու Հայ հոգևորականությանը, Սրվանձտյանցը միամտաբար կարծում է, որ սահմանադրության բոլոր կետերը գործադրելու դեպքում կարելի է հասնել մեծ հաջողությունների։ Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրանք սահմանադրական պատրանքի այն օրերն էին, երբ նույնիսկ այնպիսի գործիչ, ինչպիսին Հ. Սվաճյանն էր, մտածում էր համանման։ «Մեղվի» խմբագիրը ևս հպարտությամբ գրում էր. «Ազգային սահմանադրութեան համար Եվրոպայի մեծ ազգերը արիւններ թափեցին, մեծամեծ կորուստներ ըրին, տարիներով աշխատեցան և հազիվ անոնցմէ մեկ քանին այսօր յաջողած են անոր արդիւնքներն ու շնորհքները վայելելու... Հայերը այսօր ահա առանց արիւնահեղութեան կընդունին զանի...»*[2]

*Սակայն կարճատև էր այդ պատրանքի շրջանը։ Սրվանձտյանցը տեսնում է, որ սահմանադրության գործադրումը ոչնչով չի փոխում, չի բարելավում ժողովրդի կյանքը։ Գավառահայ բնակչության վիճակը օրըստօրե ավելի է վատանում։ «Ի՞նչ սահմանադրություն, ի՞նչ թաղական խորհուրդ, ի՞նչ Ազգային ժողով, ի՞նչ առաջնորդ։ Պսակ ձեխերու հրամանով կլինի, քահանայից իշխան սոքա են ու վարիչ։ ... Քաղաքացին կամ գեղի մեծն ի քուրդ կխրախուսե և քուրդն սոցա կապաստանի ու*

[2] *«Մեղու», 1860, էջ 113, տե՛ս Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 406-407։*

կգործե»[3]: Արդեն սթափված Սրվանձտյանցը տեսնում է, որ գավառի հայ բնակչությունը և ընդհանրապես հայությունը չվայելեց սահմանադրության շնորհները: Եթե դեռևս 1863-1864 թթ. լույս էին տեսնում ոգևորությամբ լեցուն հոդվածներ, ապա արդեն 1865 թ. երիտասարդ գործիչը գրում էր. «Ի բաց առնունք զՏարօն. և ուր արդեօք կտեսնանք գործ կամ կեանք սահմանադրութեան. որ գավառի հայը վայելեց նորա շնորհքը. թողունք զգավառներ, Պոլիսն ինչ տեսավ տակավին. կկանգնի և կիյնա. կրժշկոտի և կրկին վիրավորուած կպառկի, ազգը դեռ բարիք մը չտեսավ»[4]: Դեռ բավական ժամանակ էր պետք, որպեսզի գավառի առաջադեմ գործիչները հասկանային, թե սահմանադրությամբ ընտրված Ազգային ժողովը զբաղված է Կ. Պոլսի փոքրամիտ հայության առօրյա և մանր խնդիրներով: Շարունակելով իր խորհրդածությունները, Սրվանձտյանցը ցանկանում է գտնել այն պատճառները, որոնք սահմանադրությանն անգործության էին դատապարտում: «Բայց միթե անբարի խմի է սահմանադրութիւն. ոչ երբեք , այլ քանզի չարեր շատ ունի իր ոսոխ, վասնորո անձնակոտոր կլինի»: Այդ չարերի թվին են պատկանում, ըստ Սրվանձտյանցի, հենց Ազգային ժողովի անդամ ընտրված «ձայնով ազգասեր» այն աղաները, որոնք ոչ մի պատկերացում չունեն բուն Հայաստանի և նրա ժողովրդի կարիքների մասին, հեռու են կանգնած իրենց ժողովրդից: Այդ «չարերի» բազում հարձակումներին են ենթարկվում Խրիմյանն ու իր կողմնակիցները Տարոնում: Մշո մեջլիսի անդամները, Տարոնի հետադեմ հոգևորականությունը դառնում են Խրիմյանի և նրա աշակերտների երդվյալ թշնամի. «Վարդան, Մովսես և Ստեփան աղայք, պետք և բռնաւորք աշխարհին, հարստութիւնք Գլակա վանից բաժանորդ գոլով որևիցե եղանակով շրթէին ի եկամտից վանուցն... իսկ Խրիմյան անմիջապես զշահս նոցա խապառ ցամաքեցուց, ուստի նոքա բոլոր զորութեամբ զինեցան ընդդեմ նորա»[5]: Ժամանակի գործիչներից մեկի այս վկայությունը հաստատում է, որ սահմանադրական պայքարի հիմքում ընկած էր տնտեսական խնդիրը: Այդ պայքարի ուժգնությունը

---

3 «Արծուիկ Տարօնոյ», 1864, N 1:
4 Նույն տեղում, 1865, N 44:
5 Մատենադարան, ձեռ. N 4177, էջ 72:

*Հասնում էր այն աստիճանի, որ Տարոնի վերոհիշյալ աղաները դաշն են կնքում կառավարության և քուրդ բեյերի հետ՝ սահմանադրության գործադիրներին ոչնչացնելու համար: Բազմաթիվ մահափորձեր են կազմակերպվում Խրիմյանի և նրա աշակերտի՝ «Արծուիկ Տարօնոյի» խմբագրի դեմ, որը հականե-հանվանե նշում էր հակասահմանադրականների գործած ոճիրները, մերկացնում կղերա-ադայական վերնախավի չար արարքները: Գավառի չարաչահումները նկարագրող, գավառահայ ժողովրդի տառապանքները Կ. Պոլսի Ազգային ժողովի ականջին հնչեցնող հեղինակը շուտով հասկանում է, որ վաղ է ուրախությունն ու ցնծությունը, որ սահմանադրության նախկին հեղինակները, վախեցած ժողովրդական ընդվզումներից, դաշն են կնքել նրա թշնամիների հետ, սահմանադրությունը ամլության դատապարտելու համար: Գավառում գործող Սրվանձտյանցը ակնդետ հետևում էր Կ. Պոլսի Ազգային ժողովում կատարվող իրադարձություններին և «Արծուիկում» գրում էր. «Ազգային լրագիրները երկու ամիս առաջ ծանուցած են, թե լուծուեցավ Պոլսո ընդհանուր ժողովո դիւան և նոր կազմվեցավ: Նոյնպես Պոլսո Ազգային կեդրոնական քաղաքական նախկին ժողովը, որ իր կազմութենեն ի վեր կերերար, կտատաներ, երբեմն կխռովեր, երբեմն կանգ կառներ, ումն կպատճառեր, ումն կհակառակեր, ումն կտարակուսեր, ումն կհրաժարեր, վերջապես շատ անգամ անարդիւն և անժողով կլիներ, որո առթիվ ազգին խիստ կարևոր և բազմաթիվ խնդիրներ անգործ կմնային»[6]:*

*Գնահատելով «Մեղվի» աշխատանքը սահմանադրության համար մղված պայքարում. պետք է նշել նաև «Արծուիկ Տարօնոյի» բուռն գործունեությունը: Սրվանձտյանցը պարզորոշ տեսնում էր, որ Ազգային ժողովին հուզում է ոչ թե ողջ գավառահայության ճակատագիրը, այլ Կ. Պոլսի «մանրախույզ խնդիրները»: Նա իր քննադատական հարվածներն ուղղում է Ազգային վարչության ձայնով «ազգասեր», բայց փափկակենցաղ անդամներին, որոնք ոչ մի գաղափար չունեն Հայաստանի մասին: «Դու Ազգային վարչութիւն, Կեդրոնական կոչուած ես, բայց դուն ազգաբնակ կեդրոնեն 20, 30 և մինչև 50 աւուր չափ ին-*

---

[6] *«Արծուիկ Տարօնոյ», 1864, N 28:*

կած ես հեռու, այն ամենի վրա, ինչ որ կխորհիս՝ միայն կխորհիս և ինչ որ պիտի գործադրես, միայն կտնօրինես, կամիմ ասել աչքովդ չես տեսնար, ձեռքովդ չես գործադրեր: Գիտե՞ս ինչ կերպ-կերպ արգելքներ, պես-պես հնարքներ, վտանգներ ու որոգայթներ կան այն կողմերը... Այնպես ճարտարներ են անոնք, որ նստած ժողովրդեան գլուխ և իշխանութեան աթոռին քովը, ամեն բանի մեջ կիյնան, ժողովուրդ կկեղեքեն, տերութենեն կգողնան, պետերուն կհաճոյանան, տուրքեր բաժնելու, հարկեր ժողովելու մեջը ասոնց անիրավութիւնը անչափ է»[7]: Սրվանձտյանցը լավ է հասկանում, որ սահմանադրության նախկին թշնամիները պետք է հաջողացնեն տեղեր գրավել Ազգային ժողովի և Թաղական խորհուրդների մեջ ու խանգարեն սահմանադրության կիրառումը: Նա նշում է, որ զգոնությունը կորցնելու դեպքում Ազգային ժողովի և Թաղական խորհուրդների ղեկավարությունը կանցնի աղայական վերնախավի ձեռքը, որը զարտուղի ճանապարհներով կկարողանա ստանալ ձայների մեծամասնություն, զեղծումներ կկատարվեն նույնիսկ քվեարկությունների և ընտրությունների ժամանակ: Այդ պատճառով էլ Սրվանձտյանցը սահմանադրության գործադրումը կապում էր առաջին հերթին դեմոկրատ գործիչների ակտիվության հետ, որոնք ի վիճակի կլինեին գավառում բացատրական աշխատանք կատարել և ցույց տալ ժողովրդին նրա վարագուրված թշնամիներին. «Սահմանադրութեան հետ Մարդ և Մարդու հետ արտոնութիւն տալ պատրաստել հանել ի գավառներ: Մարդ, որ երթա զմարդ մարդոց ճանկէն ազատե: Մարդ, որ երթա մարդկութեան իրաւունքը և սահմանադրութեան սկզբունքը նորոգ հաստատե»[8]:

Արևմտահայ մյուս դեմոկրատների նման Սրվանձտյանցը ևս պաշտպանում էր սահմանադրությունը, որպես ժողովրդի ծանր դրությունը թեթևացնելու մի միջոց: Սակայն նա միևնույն ժամանակ քննադատում էր լիբերալ սահմանադրականների երկդիմի, անվճռական ու հակադեմոկրատական վարքագիծը, պահանջում էր, որ սահմանադրությունը գործադրվի ոչ միայն Կ. Պոլսի

---

[7] «Ժամանակ», 1864, N 27, էջ 8:

[8] Նույն տեղում:

հայության, այլ ամբողջ Արևմտյան Հայաստանի ժողովրդական լայն զանգվածների համար:

Այն ժամանակ, երբ Խրիմյանը պայքար էր մղում ազ. Կարապետի միաբանության «Հինօրյա» սկզբունքների դեմ, նրա պայքարի առաջամարտիկն է դառնում նախկին աշակերտը՝ «Արծվիկի» խմբագիրը: Սակայն Սրվանձտյանցը հույսը չէր կապում Ազգային ժողովի, Վարչության և պատրիարքի հետ: Խրիմյանին ուղղված նամակում նա խորհուրդ էր տալիս ուսուցչին՝ չվստահել Ազգային վարչությանը, «կրոնական անկար և անկամ» ժողովին, ընդհանուր ժողովին. «Վարչութիւն չի կրնար զքեզ պաշտպանել, պատրիարք զքեզ բարեկամ չէ, ոսոխներդ այս երկրի փոքր, բայց հզորագոյն մասն են»[9]:

Սրվանձտյանցը պայքարում էր սահմանադրության իրագործման համար՝ բախվելով կատաղի հակասահմանադրականների հետ: Սակայն նա չէր խուսափում նաև ուժգին հարձակումներ գործել սահմանադրաբար ընտրված Ազգային ժողովի, Վարչության դեմ, ցույց տալ նրանց թերությունները, ձաղկել հակաժողովրդական ընթացքը: Այդ տեսակետից Սրվանձտյանցի ժառանգության մեջ իր ուրույն տեղն է գրավում «Օրուան խնդիրներ» ընդարձակ հոդվածաշարը[10]: Մանրամասն անդրադառնալով արևմտահայ բնակչությանը հուզող ամենօրյա հարցերին, վերլուծելով Ազգային ժողովի նիստերը, Սրվանձտյանցը բարձրացնում է հայ եկեղեցու դավանաբանական խնդիրները, չհետապնդելով, սակայն, աստվածաբանական նպատակներ. արտաքին այդ կեղևի տակ ժողովրդանվեր գործիչը քննադատում է հայ բարձրաստիճան հոգևորականությանը՝ եկեղեցին իրենց շահերին ծառայեցնելու համար:

Բազմաթիվ հարցեր է քննարկում «Օրուան խնդիրներ» հոդվածաշարը՝ ժողովրդի և եկեղեցու, եկեղեցականի և եկեղեցու, կրոնական ավանդույթների և կրոնագրքերի, «Պոլոժենիայի» քննադատություն: Շոշափած հարցերից առավել նշանակալից է մեկը: Բացելով մեր ժողովրդի և քրիստոնեական եկեղեցու պատմության ծալքերը, Սրվանձտյանցը ցույց է տալիս, որ հայ

---

[9] ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., բ. 2, գ. 6:
[10] «Մասիս», 1874, N 1511, 1512, 1514, 1515, 1520, 1523, 1527:

եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները (նկատի ունի կաթողիկոսին կամ պատրիարքին) հաճախ ընտրվել են ոչ թե հոգևորականներից, այլ աշխարհականներից, ինչպես Ներսես Մեծը, Սահակ Պարթևը և ուրիշներ. «Մի՞թե սուրբ Գրիգոր վկայասերը աշխարհական Վահրամը չէր, որուն մեկ աւուր մեջ եկեղեցւո ամեն աստիճաններ տվին և կաթողիկոս օծեցին»[11]: Դրան Սրվանձտյանցը հակադրում է Կ. Պոլսի պատրիարքի ընտրության օրենքը, ըստ որի ընտրելին պետք է լինի միայն եպիսկոպոսներից. ցածրաստիճան հոգևորական՝ վարդապետ կամ քահանա, թեկուզև շատ արժանավոր անձնավորություն չէր կարող ընտրվել այդ պաշտոնում, մինչդեռ Սրվանձտյանցն առաջարկում էր պատրիարք ընտրել մինչև անգամ արժանավոր աշխարհականի: Ինչպես տեսնում ենք, Սրվանձտյանցի աստվածաբանական վեճերը կրավորական չեն, նրանց նպատակը շատ հրատապ է և առօրյական: Ըստ Սրվանձտյանցի, եկեղեցու գոյավիճակը պայմանավորված է ժողովրդին ծառայելով. եթե կատարվում է հակառակը՝ ժողովուրդն է ծառայում եկեղեցուն, նա այդ դրությունը համարում է հայոց եկեղեցուն և նրա ավանդույթներին հակառակ:

Սրվանձտյանցի կարծիքով եկեղեցին ոչ թե շինությունն է, ոչ թե էջմիածնի տաճարը կամ Կ. Պոլսի պատրիարքարանը, այլ հավատը և ոգին. այդ պատճառով պետք է պաշտել ոչ թե էջմիածնի տաճարը, այլ ունենալ հավատ, պաշտպանել հայ ազգի ինքնությունը: Իսկ երբ հարկ լինի «ամեն մեկ տուն մեկ եկեղեցի հանդիսանա, ամեն մեկ անհատ մեկ քահանա»:

Այս հոդվածաշարում (ինչպես նաև 1877-78 թթ. գրած նամակներում) Սրվանձտյանցը առաջարկում էր եկեղեցու բարեփոխություն, բարենորոգում, առավել դեմոկրատացում: Պատահական չէ այն հանգամանքը, որ նա այդ հոդվածաշարը չստորագրեց իր անուն ազգանունով, այլ հանդես եկավ «Հայ երեց» ծածկանվամբ: Ժամանակին այդ հոդվածաշարն առաջացրեց հետադեմ բարձրաստիճան հոգևորականների և նրանց խոսափողը հանդիսացող լրագրերի դայրույթն ու կատաղությունը: Կ. Պոլսի «Օրագիրը» հարձակումներ գործեց հրաժարական տված պատ-

---

[11] Նույն տեղում, N 1515:

րիարքի՝ Խրիմյանի և նրա «փոքրաւորի ու քարտուղարի»՝ Սրվանձտյանցի վրա, ճիշտ կռահելով, թե որտեղից են հասնում շռնդալից ապտակները:

Սրվանձտյանցի պայքարը կղերա-աղայական հոսանքի, հայ հոգևորականության հետամնաց տարրերի դեմ չի սահմանափակվել միայն Պողոս Մելիքյանով և Կրոնական ժողովի բարձրաստիճան հոգևորականության ներկայացուցիչներով:

Իր ողջ գործունեության ընթացքում Սրվանձտյանցը քննադատական վերաբերմունք է դրսևորել հայ հոգևորականության տարբեր ներկայացուցիչների նկատմամբ: Սակայն դա չի նշանակում, թե նա ընդհանրապես դեմ էր հոգևորականությանը և եկեղեցուն: Սրվանձտյանցի քննադատությունն իր մեջ պարունակում էր ոչ թե ժխտում, այլ բարենորոգումների, բարեփոխումների, հայ հոգևորականության բարոյական ու կրթական մակարդակը բարձրացնելու միտում:

Իր գործունեության արշալույսին, դեռևս աշխարհական, «Արծուիկ Տարօնոյ» լրագրի խմբագիր, նա ձաղկում էր հայ հոգևորականների որոշ մասի մոլությունները՝ ընչաքաղցությունը, կաշառակերությունը, տգիտությունը, նենգությունը: Մեկ առ մեկ թվելով նման հոգևորականների կատարած հանցանքները՝ Սրվանձտյանցը մտորում էր, թե ռամիկ ժողովուրդը, որ տեսնում է հոգևորականների այդ խաբեությունները, ինչպե՞ս հավատ ընծայի նրանց: Նա խարազանում էր հայ հոգևորականների կատարած քստմնելի ոճիրները բարձր աստիճանի հասնելու համար: «Մայր չկա այսպիսեաց չար օրինակներում. Թողունք ինչ որ ի հնումն՝ ի հնումն. նորերս ահա կռիվ կա Այրարատ, օձեր կխաղան Վասպուրական, նույն և Պաղեստին, նույն և հոս»,- իրեն հատուկ պատկերավորությամբ գրում է Սրվանձտյանցը, ակնարկելով էջմիածնի և Աղթամարի կաթողիկոսական, Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքական ընտրությունների շուրջը սկսված հուզումները[12]: «Արծուիկում» խմբագիրը ձաղկում էր աստծո տաճարը կեղծիքի և ստորության ասպարեզ դարձնող «սրբութեան պաշտոնեաներին», որոնք ժողովրդին առաջնորդում են դեպի մութը, խավարը, մոգությունն ու կախարդանքները:

[12] «Արծուիկ Տարօնոյ», 1865, N 44:

Սրվանձտյանցը զայրանում էր, որ եկեղեցականները զբաղվում են «չար արուեստով», խաբում միամիտ ժողովրդին, իսկ վերջիններս իրենց հիվանդությունները բուժելու համար դիմում են ոչ թէ «գիտնական բժշկաց, նրանց վստահելով իրենց անձը, այլ կախարդների և դեւերի»: Նա հականե-հանվանե նշավակում էր սբ. Առաքելոց թեմի նվիրակ Մուրոյանին, առաջնորդ Հակոբ Ճղնավորյանին, Թոքատի Ազգային վարժության ղեկավար Իփեկյան Հովհաննեսին և այլոց, որոնք ժողովրդին լուսավորելու կոչումն ունենալով, նրան առաջնորդում են խոր՝ դեպի միջնադարյան խավարամոլությունը: Գ. Սրվանձտյանցի աչքից չէին վրիպում այն հոգևորականները, որոնք եկեղեցին օգտագործում էին իրենց և մերձավորների բարօրության համար, հափշտակում եկեղեցու ունեցվածքը, իրենց անունով գրանցում եկեղեցապատկան հողատարածությունը: Այդպիսիք էին Կյուրինի առաջնորդ Զաքարիա եպիսկոպոսը, Տիվրիկի առաջնորդ Թեոդորոս վարդապետը, Մալաթիայի սբ. Լուսավորիչ վանքի վանահայր Սահակ քահանան և ուրիշներ: Եկեղեցու ունեցվածքը ժողովրդինն է. հափշտակել այն, նշանակում է զրկել ժողովրդին. այդպիսի եզրակացության է հանգում ժողովրդանվեր գործիչը Արևմտյան Հայաստանում կատարած իր ուղևորությունների ժամանակ: Սրվանձտյանցը քննադատում է նաև այն հոգևորականներին, որոնք դարձյալ անձնական շահի համար դիմում են կրոնափոխության, ընկնում բողոքական կամ կաթոլիկ միսիոներների ճանկը, իրենց հետ տանելով ամբողջ գյուղեր և գավառներ, երկպառակության որոմը սերմանելով և խախտելով հայ ժողովրդի կրոնական միասնությունը, դրանով մեծ հարված հասցնելով հայ ժողովրդի միասնության գործին առհասարակ: Այդպիսին էր Մալաթիայի առաջնորդ Մագըրմյան Առաքել վարդապետը, որի ապիկարության պատճառով ողջ կուսակալության հայությունը կաթոլիկություն է ընդունել. «Ասոնք տեղի ունեցած էին ոչ թե Գերապայծառի (կաթոլիկ եպիսկոպոս) հանճարեղութեննեն և զորավորութեննեն, այլ Մագըրմեանի չարարարութեննեն և ուրիշ առաջնորդաց անպիտանութեննեն և ժողովրդեան տգիտութեննեն»[13]: Այն, որ հայը դառնում է կաթոլիկ կամ բողոքա-

[13] «Թորոս աղբար», հ. 1, էջ 313:

կան, մեծ չափով Հարված է Հասցնում ժողովրդի ազգային միավորման գործին:

Դեռևս 1872 թ. Սրվանձտյանցը Վանից նամակով Հայտնում էր Խրիմյանին, որ Սանդխտյան վարժարանի մոտ գտնվող շենքը վարձել են միսիոներները, որոնք մեծ վտանգ են ազգային կյանքի Համար: Այդ պատճառով էլ նա խնդրում էր Վան ուղարկել մի բանիմաց առաջնորդ, որը կարողանար ժողովրդին Համախմբել իր շուրջը և դիմագրավել միսիոներների պառակտիչ գործունեությանը: Հայտնի են Սրվանձտյանցի թափած ջանքերը Բաղեշի Հայ բնակչության մեծ մասին բողոքականությունից ետ դարձնելու ուղղությամբ: Մեզ է Հասել նաև Ներսես Վարժապետյանի կոնդակ-շնորՀակալագիրը դրա առթիվ: Միսիոներների դեմ պայքարելով Հանդերձ՝ Սրվանձտյանցը նշում է նրանց առավելությունը Հայ քաՀանաներից և կոչ անում Հայ Հոգևորականությանը Հասնել գոնե նրանց աստիճանին: Միևնույն ժամանակ նա չէր պատկանում այն Հոգևորականների թվին, որոնք կրոնական անՀանդուրժողականություն են ցուցաբերում մյուս դավանանքների նկատմամբ: ԸնդՀակառակը, նա շեշտում է տարբեր դավանանքի պատկանող Հայերի միջավայրում, Հորդորում միանալ, գործել միասնական ուժերով: Իսկ երբ տեսնում է, որ բողոքականների դպրոցները գտնվում են ավելի բարեկարգ վիճակում, առաքելականներին քարոզում է օրինակ վերցնել նրանցից: «Թորոս աղբարում» նա գովեստով է արտաՀայտվում բողոքականների մասին. «Մխիթարենցս տեսնելով Հայոց և բողոքականաց մեջ առելութիւն չկար, այլ սիրով էին: Արարկերու պատուելին Մարտիրոս բարեկիրթ և քանիբուն մեկն էր, ազգային ամենայն խնդրոց նկատմամբ անխտիր և եռանդագին ջանացող»[14]: Գուցե այդ բացաՀայտ գովեստներն էին պատճառը, որ առիթ տվեցին նրա թշնամիներին Ազգային ժողովում Հարցում անել երեսփոխան Մ. Գափամաճյանի միջոցով, թե ստույգ է, որ «Գերապատիվ Սրուանձտյանցը գիր գրեր է Տիգրանակերտ, որպեսզի տեղվոյն ազգայինք իրենց զաակները պապականաց դպրոցներ ղրկեն: Եթե այս մասին որևէ տեղեկութիւն չկա, կա-

---

[14] Նույն տեղում, էջ 280:

առաջարկեմ, որ քննութեան ենթարկուի սոյն խնդիրը»[15]: Ուշադրության է արժանի Սրվանձտյանցի պատասխանը, ուր նա շեշտում է, որ ինքը քարոզում է ժողովրդին ազգային միություն և ազգային փրկություն և չի վախենում բարձրաձայն հայտարարել Ազգային ժողովում. «Դարուս քաղաքակրթութեան առջևն այ չեմ կրնալ դատապարտելի երևնալ, սիրով տեսնուած եմ ամենուն հետ, սրտովս կարեկցած եմ մեզմե բաժանեալ եղբարց և ի հոգի ցավելով մեր ի հոգի սիրեցեալ Հայ ժողովրդեան վրա. Հրավիրած եմ իրենց բոլոր ուշադրութիւնը և աշխատութիւնը չխնայելու ազգային վարժարանաց բացման և բարվոքման, գերազանցելու մեր լուսավորութիւնը, բարոյականութիւնը և քաղաքակրթութիւնը, որպեսզի օտարը արտահալած լինի հայկական փարախէն և ստացեալ մանկունք Հայրենեաց դառնան իր գիրկս և ի ստինս մորս մեր Ս. եկեղեցւո»[16]:

«Թորոս աղբարի» հեղինակը մերկացնում է հոգևորականների տգիտությունը, կույր բարեպաշտությունը: Սրվանձտյանցը ժողովրդին քարոզում էր նյութական միջոցները տրամադրել իր զավակների լուսավորությանը: Ամենից կարևորը հենց իրենց՝ հոգևորականների և ժողովրդի լուսավորության գործն է. «Ժամանակն է, որ հասկնանք, թե քարե տաճարին շատ գերազանց է Աստուծո բան տաճարը շինել, Մարդ պատրաստել, թե Աստծո փառաց և թե ազգի պարծանաց համար Մարդ. տալ մեր դրամները մեր զավակաց կրթութեան և գիտնականութեան, և լավ դաստիարակաց ձեռքով շինել զանոնք ժամանակի Մարդ: Տաճարն ինքնին կը պայծառանա, եթե ժողովուրդ նախ լուսաւորուի, Աստուած չհաճիր, որ ձեր զավակները տգետ և անկիրթ մեծանան, ձեզ անեծք ժառանգեն, և դուք կարծեք, թե ձեր շինած քարերը ձեզ արքայութիւն պիտի տանին»[17]:

Արևմտյան Հայաստանում աշխարհական ուսուցիչների հետ մեկտեղ կային մեծաքանակ հոգևորական ուսուցիչներ: Այդ պատճառով էլ, և ոչ միայն այդ պատճառով, Սրվանձտյանցը մեծ ուշադրություն էր դարձնում հոգևորականներին կրթելու հարցի վրա: Տգետ հոգևորականները կարող էին լուրջ խոչըն-

---

[15] «Ատենագրութիւնք Ազգային ժողովո», 1878-1880, էջ 338:
[16] Նույն տեղում, էջ 424-426:
[17] «Թորոս աղբար», Հ. 1, էջ 149-150:

դոտ լինել ոչ միայն ազգի լուսավորության, այլ նաև ազգային հրատապ խնդիրների լուծմանը: 1874 թ. Կ. Պոլսում հրատարակված «Հնոց և նորոց» ժողովածուի մեջ Սրվանձտյանցը դառնությամբ է արտահայտվում այն «ետին ժամանակների մասին», երբ լավ հոգևորական էին համարվում այն անձինք, որոնք քաջ եղնավար էին, թեմական ժողովրդից բռնությամբ հավաքում էին յուղ, պանիր, հոգեբաժին, պտղի, ճարպիկ էին և կարող էին խաբել, կռվել: Դրանք այն ժամանակներն էին, երբ եկեղեցուց և վանքից արտաքսված էին գրիչն ու կաղամարը և մատով էին ցույց տալիս գրի սևն ու սպիտակը ճանաչողներին: «Ետին ժամանակներ» արտահայտության տակ Սրվանձտյանցը նկատի ուներ նաև իր ժամանակը: Սրտի ցավով է նա հիշում Մեսրոպ Թաղիադյանի հանրահայտ խոսքերը էջմիածնի վեհարանի մասին՝ նույն վիճակը տեսնելով ողջ հայ իրականության մեջ: Զայրույթով ու դառնությամբ հայրենասեր գործիչը ձաղկում է անվանի եպիսկոպոսների ու վարդապետների (մանավանդ Տիգրանակերտի եպիսկոպոս Փիլիպոս Նաջարյանին և Խարբերդի առաջնորդ Կարապետ վարդապետին), որոնք զուրկ էին տարրական գրագիտությունից, անտեղյակ ժողովրդի պատմությանը:

Սրվանձտյանցը դատապարտում էր հոգևորականության ոչ միայն տգիտությունը. նրա սթափ աչքը տեսնում էր, որ հայ եկեղեցին միշտ եղել է ժողովրդին շահագործող հաստատություն: Պատահական չէ այն հանգամանքը, որ պատրիարքարանին ուղղված իր տեղեկագրում նա հայ ժողովրդի թշվառության աղբյուր համարում էր նաև հայոց թեմական առաջնորդներին, մանրամասն պատմում ապիկարների մասին, փաստերով նշում նրանց չար արարքները: Ըստ Սրվանձտյանցի, պետականությունից զուրկ հայ ժողովրդի համար գավառական առաջնորդությունները կարող էին լինել տեղական կառավարման մարմիններ և մեծ ազդեցություն ձեռք բերել նահանգական ժողովներում: Լուսավորյալ, իր պարտքը լավ իմացող առաջնորդը զգալի գործ կարող է կատարել գավառահայության վիճակի թեթևացման համար: Մեծ դեր հատկացնելով թեմական առաջնորդին գավառահայության կյանքում, Սրվանձտյանցը բողոքում էր պատրիարքարանի այն խտրական վարքագծի դեմ, որ գրագետ հոգևորականներին պահում էր Կ. Պոլսում, իսկ գավառ էր ու-

դարկում «ամենեն ապիկարները, որոցմէ շատերը նոյնիսկ Պոլսո եկեղեցաց քարոզչութեան անգամ արժան չեն համարված... շատերը Պոլսո մեջ խռովութիւն և անկարգութիւն հարուցանելով, ասկե հեռացնելու համար գաւառաց առաջնորդ են ընտրված»[18]: Հայարնակ գավառները, ըստ Սրվանձտյանցի, ավելի կարևոր են, քան Կ. Պոլիսը. և՛ պատրիարքը, և՛ Ազգային ժողովը իր ներկայացուցիչներով ընտրվում են գավառի ժողովրդի կյանքի բարելավման համար, այդ պատճառով էլ գավառ ուղարկվող առաջնորդը պետք է լինի հոգևորականներից ամենից լավագույնը:

Հայ հոգևորականությունը քննադատելիս Սրվանձտյանցը չի մոռացել անդրադառնալ հայոց վանքերի վիճակին: Այնտեղ կուտակվել է անբավ հարստություն, ժողովրդի «քրտանց» արդյունքը, արժեքավոր ձեռագրեր, որոնք, սակայն, հայ հոգևորականների ապիկարության պատճառով կամ վաճառվում են օտարազգիներին, կամ հափշտակվում: Հարկավոր է մեծ խնամք տանել վանքերում գտնվող ձեռագրերի նկատմամբ, այնտեղ դիզված հարստությունը օգտագործել ժողովրդանվեր նպատակներով, մինչդեռ վանականների մեծ մասը զբաղվում է այլ գործերով. նրանց խցերը գրքերի փոխարեն լի են «կթխաններով և շշերով»: Նա դատապարտում էր հայ վանականների ծուլությունը, մեղկ ու միօրինակ կյանքը: Ըստ Սրվանձտյանցի, վանքերը հանդես են գալիս ժողովրդի աշխատանքը գողացողի դերում. «Վանքերը միշտ տուեր, տուեր կկանչեն, առանց այնքան տուածներու փոխարեն առեք մի ցույց տալու»: Ի՞նչ են այդ վանքերը, ուր կենտրոնանում է «գեղացիների վաստակը», նրանց թափած քրտինքի արդյունքը. «Կարգ մը պորտաբոյծներու սնուցարան, որոնք կուտին, կզիրանան ու կելնին զժողովուրդ կխռովին, ազգի փորձանք կդառնան»[19]: Սրվանձտյանցի քննադատությունը հասնում է այն աստիճանի, որ նա խորհում է, թե վանքին կից ուսումնարանը այնքան օգտակար չէ, որովհետև այն կտրված է ժողովրդից, նրա առօրյա հոգսերից. «Վանքերու մեջ վարժարան ունենալն ալ ազգի համար այնքան օգտակար չէ. նույնիսկ վարդապետ մը, որ ժողովրդեան մեջ ուսած և

---

[18] «Փորձ», 1879, N 4, էջ 171:

[19] ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., բ. 2, գ. 65, էջ 31:

մնած չէ, նա ժողովրդեան համար չէ»: Ըստ Սրվանձտյանցի, և՛ հոգևորականը, և՛ վանքը, և՛ դպրոցը պետք է սերտ կապ ունենան ժողովրդի հետ, եթե չկա այդ կապը, ապա ավելորդ է նրանց գոյությունը:

Սրվանձտյանցի այդ ուժգին քննադատությունը իր մեջ ժխտում չէր պարունակում, այլ բարեկարգում: Նա առաջարկում էր բարեկարգել վանքերը և դրանք դարձնել լուսավորության տարածման օջախներ: Նրա համար իբրև լավագույն վանքի օրինակ էին ծառայում իր ուսուցչի վանահայրության ներքո գտնվող Վարագա և սբ. Կարապետի վանքերը, որոնց կից բացվել էին ժառանգավորաց դպրոցներ, երկրագործական ուսումնարան, թանգարան, ձեռագրատուն, ուր հավաքվում և կորստից փրկվում են արժեքավոր ձեռագրերը. «Կարի տխուր է տեսնել մեր վանքերու անշէն և ինկած վիճակը, նոյնիսկ մեր ձեռքով, մեր օրով: Որքան մեղավոր ենք, որ մեր նախնեաց մեզ թողուցածը գոնե պահել ու վայելել չգիտենք: Ինչ դժուարութիւն կա, որ իւրաքանչյիւր գավառ իր մեջը կամ վանք մը կամ եկեղեցի մը հատկացնե թանգարան հին մատենից, ինչպես ըրավ ի Վարագ մեր սուրբ Հայրիկը, և հոն խնամքով հավաքեն, կարգավորեն ու պահեն այդ գանձերը ավազակութենե և հափշտակութենե, հափշտակութիւն, զոր չեն կատարեր եկուզակներ, այլ դոշաքաղք, որոց ձեռքով կվաճառվին Ավետարանները և զանազան ընտիր ձեռագիրներ և կփոխադրվեն յարեվմուտս իբրև հնութիւն և հրաշալիք արուեստից, մնացեալներն ալ հողոյն տակ, կաթիլներու տակ, փոշիներու մեջ կոչնչանան և կանհետին»[20]:

Նույն նպատակն էր հետապնդում նաև Սրվանձտյանցի՝ հայ հոգևորականության քննադատությունը: Ինչքան էլ որ մեծ էր նրա կողմից ձաղկված ու խարազանված հոգևորականների ցուցակը, այնուամենայնիվ պետականությունից զուրկ հայ ժողովրդի համար նա եկեղեցին համարում էր ազգային, բարոյական և հոգեկան միավորման գործոններից մեկը: Նա ցանկանում էր տեսնել լուսավորված կղերականների, որոնք պիտի քայլեին «ավետարանի ազատ լուսով» և ոչ թե կույր բարեպաշտությամբ: Ժողովրդին առաջնորդողը, ըստ նրա, պետք է լինեն լու-

[20] «Թորոս աղբար», հ. 2, էջ 247-248:

*սովորյալ վարժապետը և վարդապետը. առաջինը՝ մանուկների, երկրորդը՝ Հասակավորների Համար: Պատրիարքարանին ուղղված նամակ-Հաշվետվություններում Սրվանձտյանցը ներկայացնում է իր ծրագիրը ապաշնորՀ Հոգևորականների վերաբերյալ. ըստ նրա, անՀրաժեշտ է կարգալույծ անել ապիկարներին, աքսորել անապատական խցերը՝ ապաշխարելու, որպեսզի «լավերը բուն-նեն սոսոնց տեղ»: Դա եկեղեցու բարենորոգումն էր. «Ժամ է ազգն ալ մաքրե եկեղեցին ու ժողովուրդը իր ապականարար որդազաններեն ու Հայր որրներեն»: Սրվանձտյանցն առաջարկում էր, որ ամեն մի առաջնորդություն Հոգևոր պետի Հետ ունենա աշխարՀական անդամ, որպեսզի առաջնորդությունները գավառում կարողանան մրցել Թուրքական տեղական կառավարական մարմինների Հետ. «Ժամանակն է ազգը տիրացուական վիճակեն Հանել և քաղաքական քայլ առնուլ տալ»[21]:*

*Այսպիսով, Թե՛ սաՀմանադրության գործադրման Համար պայքարելիս, Թե՛ կղերապաշտական Հոսանքի ներկայացուցիչների դեմ պայքարելիս Սրվանձտյանցը Հանդես էր բերում ընդգծված դեմոկրատական դիրքորոշում: Ամեն ինչ, ըստ նրա, պետք է ծառայեն ժողովրդին. և՛ Հոգևոր պետերը, և՛ եկեղեցին, և՛ վանքերը, և՛ նրանց կից Հաստատությունները:*

* * *

*Հետաքրքիր են Սրվանձտյանցի Հայացքները ժողովրդի մասին: Ժողովուրդ ասելով նա Հասկանում էր նյութական բարիքներ արտադրողներին: «Փոխանակ ժողովուրդը մարդկային կարգի ամենեն մեծը Համարելու, վերջը ըսվեր է»,- ասում է Գ. Սրվանձտյանցը 1869 թ. «Ճառ լուսավորութեան» բանախոսության մեջ: Ժողովուրդը բոլոր բարիքների ստեղծողն է: Հասարակության բոլոր խավերին կերակրողը ժողովրդի աշխատանքն է: «Տերությունները իրենց զորաց և պաշտոնատարաց ամսականները, պալատներու ծախքերը և կառավարութեան բոլոր պետքերը ժողովրդեան տուրքեն ու վաստակեն կմատակարարե. դու ես, որ կուտաս, ժողովուրդ, և քո գլուխը, տունդ, ընտանիքդ, դա-*

[21] *Գ.ԱԹ, Թ. Ալպոյաճի ֆ., ր. 12, գ. 10525:*

վակներդ կերցնելեն ու Հագուեցնելեն ղկնի, եկեղեցիներդ, վան-քերդ, կենդանիդ ու մեռելդ, տերտերդ ու վարդապետդ, աղքատն ու մուրացկանն էլ կՀոգաս, կուտաս և կկառավարես»[22]:

Սրվանձտյանցն իր զայրույթն է արտահայտում ժողովրդին գռփողների դեմ: Առաջնորդն ուտում է իր «թեմի պտղին», վարդապետը՝ «զաւազանապտուղը», քահանան իր «պաշտած սեղանի Հացը», վարժապետը՝ աշակերտի թոշակը. բոլորը Հարստահարում են ժողովրդին: Սրվանձտյանցը վշտանում է, որ ժողովուրդը դրան վերաբերվում է կրավորականորեն:

«Ճառի» մեջ Սրվանձտյանցն իր ցավն է արտահայտում այն բանի Համար, որ ժողովուրդը կատարում է իր պարտականությունը, սակայն ուժ չի ունենում իր իրավունքը պաշտպանելու: Նա բողոքում է դարերով սրբագործված այն ասացվածքի դեմ, ըստ որի Հասարակությունը Հոտ է Համարվում, իսկ Հոտին Հովիվ է պետք, այսինքն՝ կրոնական առաջնորդ: Սրվանձտյանցը բացատրում է, որ Հոգևորականության բոլոր ներկայացուցիչները Հովվելու իրավունք են ստանում ժողովրդի ընտրությամբ: «Տեսեր եք առաջնորդ մը, որ առանց ժողովրդեան ընտրութեան ու Հաճութեան գա տիրէ Հոտին. և եկեղեցական մը, որ առանց ժողովրդեան առաջարկության և Հաճության ձեռնադրուի... ժողովուրդը ոչ միայն Հասարակ ժողովականի մը, այլ բարձր աստիճան կուսակալի մը վրա ալ դժգոՀութիւն Հայտնե, տերութիւնը զայն կլուծէ պաշտոնեն, ժողովրդեան ձայնը մեծ Համարելով»[23]: Այս խոսքերով նա դրդում էր ժողովրդին ունենալ իր պաՀանջները և պայքարել Հանուն իրավունքների: Նույն նպատակն են Հետապնդում նաև «Թորոս աղբարում» գրված Հետևյալ տողերը. «Ժամ է Հասկընալ, թե այն դարու մեջն ենք, որ զորությունն ու իշխանութիւնը ժողովրդեան ձեռքն է: Ժողովրդեան կը Հետևի այսօր առաջնորդն ալ, կուսակալն ալ, պատրիարքարանն ալ, թագավորութիւններն ալ, եթե լուսավորված է ժողովուրդն, եթե ոչ՝ խաղալիք և կոխան է ամենուն Հաճոյից և ոտից, և ոչ ոք ունի իրեն գթացող: Այո, և ոչ նույ-

[22] ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., ը. 2, գ. 65, էջ 31:
[23] Նույն տեղում, էջ 32:

նիսկ Աստված»[24]: Փաստորեն, ըստ Սրվանձտյանցի, լուսավորված ժողովուրդը միայն կարող էր պայքարել իր ազատության և փրկության համար:

Պատմելով Վանի շրջակայքում գտնվող Շամիրամի ջրանցքի մասին, Սրվանձտյանցն ընդհանրացումներ է անում, ընդվզում տիրողների դեմ, որոնք ժողովրդի քրտինքով և արյունով շինություններ են կառուցում, պատմության մեջ անմահացնելով իրենց անունը, իսկ ժողովրդի զավակների անունը, արյունը և աշխատանքը կորչում է անհետ: «Այսպես կվարուին զորապետք և թագավորք զորականաց և ժողովրդեան ինկած դիակներու հետ, որոց խոցերով և արիւնով կլինին տեր բերդից, քաղաքաց, աշխարհաց, որոց վրա իրենց անունը կկնքեն և իրենց փառքը կդրոշմեն, իրենք կլինին հաղթական, դիւցազն, աշխարհաշեն, մեծագործ և կմոռցուին բուն նահատակաց անունն ու փառքը, որոց մայրերը, ամուսինները, զավակները կլաեն խաղաղութեամբ առանց բողոք հարուցանելու»[25]:

Սրվանձտյանցը ցույց է տալիս նաև, որ ժողովրդի կյանքում լինում են բախտորոշ պահեր, երբ նա արթնանում է, շտկում մեջքը և իր ակտիվ միջամտությամբ լուծում տալիս բազմակնճիռ հարցերին: Դա առանձնապես լավ է ընդգծված «Շուշան Շավարշանա» պիեսում: Ետ նայելով դեպի հայ ժողովրդի հերոսական անցյալը, հեղինակն արտահայտում էր իր խոր դժգոհությունը ներկայից, ցանկանալով հիշեցնել իր ժամանակակիցներին այն շրջանի մասին, երբ ժողովուրդը մեռնելով հաղթեց, ընկնելով քաջալերվեց, մահով անմահացավ և զոհվելով փրկվեց: Նա կոչ է անում «հայ մամիկներին ու պապիկներին» ուսուցանել մեր մատաղ սերնդին՝ պահպանել ազգային ինքնագիտակցությունը, «ապրիլ հայաբար»: Սրվանձտյանցի նպատակն է գրել այնպիսի ստեղծագործություններ, որոնք «այսօր դիականացած հայերին… կոգեւորեն, կմխիթարեն, կհարուցանեն»: Կարծես խոսելով իր ժամանակակիցների հետ, նա հուշում է ընթերցողին, թե «հայեր այսօր օտարի մը ձեռքի տակ են, բայց դեռ հայ են» և քանի որ կենդանի են, պահպանում են իրենց լեզուն

---

[24] «Թորոս աղբար», հ. 1, էջ 55-56:
[25] «Համով-հոտով», էջ 61:

և ազգային ավանդույթները, պետք է մտածեն փրկության ուղիների մասին: Նա մտածում է ժողովրդի մեջ նիրհած առյուծներին արթնացնելու, թշնամու դեմ գրգռելու մասին: Իսկ ո՞վ պետք է պայքարի ազգի ազատության համար. ազատության մասին կարող են խոսել բոլորը, բայց ազատության ձգտողը և հասնողը ոչ իշխաններն են, ոչ թագավորները, ոչ էլ գոռ զորապետները: «Ազատութիւն, փրկութիւն, ոչ թագաւորի թագին ճաճանչաւոր ականց շարքին մեջն է, ոչ զոռ և հուժկու զորապետին ահեղ հրամանին մեջը, ոչ նախարարին մեծութեան, ոչ գանձուց ճոխութեան, ոչ սկայից բազմութեան, ոչ պողվատին երկաթին, ոչ սուրին նիզակին, ոչ կերպասի բեհեզին, ոչ ճարտասանի լեզվին: Այլ այդ սրբազան տարերքն ժողովուրդն է միայն... անոր սիրտն հայերնիքը չի մոռնար... իր ազատութեան համար, և հայրենեաց ու ազգային հիշատակներ կեռացնեն անոր երակները, կվառեն անոր խորհուրդը... և այն օրն է ահա, ... որ վիրավոր մեջքակոտոր գառնուկը եղջրաւոր խոյ կդառնա, իր հոտին մեջ կխոյանա, զարնելով խորտակելով իր դեմ ելնողները»[26]: Օսմանյան բռնակալության պայմաններում Սրվանձտյանցը ժողովրդին է վերապահում պատմության կերտողի և վերափոխողի դերը: Ահա թե որն է պիեսի արժանիքը. նախապատրաստել ժողովրդին՝ փրկության երանավետ օրը մոտեցնելու: Անցյալի պատմությամբ նա դաստիարակում է իր ժամանակակիցներին, ցույց տալիս, որ երբ որևէ ազգի դեմ հալածանք է սկսվում, ապա բորբոքվում է նրա սրտում անթեղված կրակը, զարթնում է ժողովրդի դիմադրության ոգին, ազգապահպանման զգացումը դառնում է գերիշխողը: Այդ օրինակով նա ուսուցանում է բռնությանը պատասխանել ազգային ինքնագիտակցության և միավորման նլույթներով: Այդ տեսակետից էլ պիեսը գնահատվել և արժեքավորվել է ժամանակակիցների կողմից:

Հերոսական անցյալի օրինակը ներկային և ապագային ներկայացնելով իբրև ուշագրավ դասեր, արևմտահայ ազգային-դեմոկրատ Մաթևոս Մամուրյանը և Սեղրակ Տեկանցը նշել են պիեսի դաստիարակիչ նշանակությունը, նրա հայրենասիրական ներգործությունը:

---

[26] «Շուշան Շավարշանա», էջ 57-58:

Ուշադրության արժանի է Սրվանձտյանցի «Հնոց և նորոց» ժողովածուում տեղ գտած «Բեշե Պոլո» զրույցը, որը ժողովրդական անգիր հերոսապատումներից մեկի գրառումն է: Նյութի ընտրությունն իսկ ցույց է տալիս գրառողի սկզբունքները: «Բեշե Պոլոն» հայազգի քահանա տեր Պողոսի և եզդի Միրզըքի ղեկավարած ազատագրական անհավասար հերոսամարտի հուշապատումն է Բոհտանի տեր Միր Մեհմեդ ամիրայի և նրա զորքերի դեմ: Այս դրվագը հետաքրքիր է մի այլ առումով ևս. հայերը և եզդիները որոշում են համատեղ պայքարել մարական զորքերի դեմ. «Որրեւ զգետս զայրացեալ յաւուրս գարնայնո, այնպէս հորդան տմենայ մարական բանակին յառաջեւին աւարառութեամբ, հրձգութեամբ և սպանութեամբ. զոր տեսեալ Միրզըր և մեծամեծք հայոց և եզիդացն՝ ժողովեցան միաբանեցին հնարս հայթայթել զդեմ առնուլ ահագին եւ անխուսափելի վտանգին կորստական»[27]: Բեշե Պոլոն ոգևորում է իր քաջերին, նրանց ներշնչում հաղթելու կամք և վճռականություն: Ահա թե ինչպես է հայ քահանան դիմում իր ռազմիկներին. «Ձի, այս կռիվ սովորական վասն մարմնավոր փառաց և իշխանութեան կամ վրիժու, այլ ընդ ազատութեան անձանց զան և զհավատս մեր բառնալ հանել ի մէնջ. և քանզի եթէ խոյս տամք՝ սատակիմք, եթէ զգիմի հարկանիմք՝ մեռանիմք, բայց և մեռուցանեմք, և զանուն քաջութեան անձանց ժառանգեմք. Հապա անհապաղ, արիք ընդդէմ, ի ճակատ, և կանայք ու մանկտին մեր քաջալերս կարդասցեն մեզ, և ի մէնջ ուսցին զօրինակ քաջութեան ապրելոյ յաղթելոյ կամ կռվելոյ և մեռանելոյ»[28]:

Եթե «Շուշան Շավարշանա» պիեսում Սրվանձտյանցը ազատությունը, փրկությունը իրականացնող համարում էր ժողովրդին, ապա և՛ «Բեշե Պոլոյում», և՛ «Մանանա» ժողովածուի առաջաբանում նշում է, որ անհրաժեշտ են նաև առանձին ուժեղ անհատներ, որոնք արթնացնեին ժողովրդի միտքը, նրա ազգային ինքնագիտակցությունը և նրան նպատակամղեին ինքնապաշտպանության, ազատագրության: Եթե «Բեշե Պոլոյում» այդ ուժեղ անհատը զինավառ քահանան է, որը չարին չարով

[27] «Հնոց և նորոց», էջ 173-174:
[28] Նույն տեղում, էջ 174-175:

չհակառակվելու քրիստոնեական հնազանդության քարոզի փոխարեն ներշնչում էր իր զինվորներին մեռնել պատվով կամ ապրել հաղթանակած, ապա «Մանանայի» առաջաբանում Սրվանձտյանցը ժողովրդի ոգին արթնացնող համարում է գրողներին, «խոսող ու խորհող» անհատներին. «Այո՛, ազգ մը՝ գրողներն և խոսողներն կը զարթնու և կ'ուղղվի, գործողներով կը շինուի, և խորհողներով կը փրկուի»[29]: Այդ անհատները պետք է երկար ու տքնաջան աշխատանք կատարեն ժողովրդի մեջ. անոտ և տգետ ժողովուրդը անպատրաստ և անկարող է: Քաղաքական պայքարի համար առաջին հերթին պետք է լուսավորել ժողովրդի ամենալայն խավերին: Ժողովրդի լուսավորությունը ինքնանպատակ չէ, այն քաղաքական պայքարի նախադուռն է և այդ գործի կատարմանը պետք է ձեռնամուխ լինեն գրողները. «Հայք հարստահարութենէ փրկելու համար, իրենց ճանչցնել տալ պետք է զիրենք. Հայք անտարբերութենէն զերծման ափեն ետ դարձնելու համար՝ իրենց հայրենական բարբառով կանչելու է զիրենք: Մասեաց սրինգները հնչեցնելու է իրենց ականջին. ժամ է սրբել մեր քնարից փոշիները. կքել, լարել անոնց թոյլ և կտրտած լարն ու թելը. ի'գործ դնել սպագիր մամուլը...»[30]: Ինչպես տեսնում ենք, Սրվանձտյանցը մեծ ծրագիր էր առաջադրում ժողովրդի լուսավորության համար, որը նրա աչքում ուներ քաղաքական նպատակաուղղվածություն. լուսավորված ժողովուրդը չէր հանդուրժի բռնակալությունը և կպայքարեր ազատության համար: Որպես օրինակ Սրվանձտյանցը նշում է ֆրանսիական հերոս ժողովրդին, որը չհանդուրժեց իր բռնակալներին և գահընկեց արեց իր «ծիրանաւորին»[31]:

Ըստ Սրվանձտյանցի, հասարակության հիմքը ընտանիքն է. ամենից մեծ ուշադրությունը պետք է դարձնել ընտանիքի ամրության վրա, կրթել նրա անդամներին: «Բարեկիրթ ընտանիք՝ կունենան բարեկիրթ զավակներ, բարեկիրթ զավակներէն՝ կըլլա բարեկիրթ ժողովուրդ, բարեկիրթ ժողովուրդ՝ կկազմե բարեկարգ կառավարութիւն. բարեկարգ կառավարութիւնը բարի և երջանիկ

---

[29] «Մանանա», էջ 38:
[30] Նույն տեղում, էջ 36:
[31] ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., ր. 2, գ. 65, էջ 32:

կեանք կմատակարե իր ժամանակի մեջ ապրողներուն և երջանիկ կեանք կպատրաստե ապագա սերունդներուն»[32]:

Խոսելով ընտանիքի մասին, Սրվանձտյանցը հատկապես շեշտում է կնոջ դերն ու նշանակությունը: Դեռևս «Օրվան խնդիրներ» հոդվածաշարում, հակառակ այն հոգևորականների, որոնք հետևելով միջնադարյան սխոլաստիկային, կնոջը ներկայացնում էին իբրև պղծության անոթ, Սրվանձտյանցը գրում է, որ Քրիստոսը չի դրել էգի և արուի խտրություն: Հիացմունքով խոսելով V դարի հերոսական կանանց մասին, նա հորդորում է իր ժամանակի կանանց հետևել նրանց օրինակին: Մեծ էր Սրվանձտյանցի հավատը կնոջ ունակությունների, նրա հոգեկան և ֆիզիկական կարողությունների նկատմամբ: Բնորոշ է մի փաստ. նկարագրելով Արևմտյան Հայաստանի վանքերի անկումային վիճակը, Սրվանձտյանցը իբրև բացառություն պատմում է ս. Հովհան Ոսկեբերան վանքի բարեկարգ դրության մասին, որն ունի թանգարան, սենյակները մաքուր են, կահավորված. դա «կզարմացնե այցելու մը, վասնզի մեր Հայաստանի վանքերեն ոչ մեկուն կը նմանի»[33]: Սակայն փարատվում է զարմանքը, երբ պարզվում է, որ վանքի տնտեսությունն ու տեսչությունը հանձնված է ոչ թե եպիսկոպոսի, վարդապետի կամ քահանայի, այլ Մարիցա Գատենյանին, որի շնորհիվ վանքը ոչ միայն զերծ է պարտքերից, այլև ընդարձակում է իր տնտեսությունը: Եվ քանի որ ընդունակ կին կարող է ավելի լավ գործել և ավելի արդյունք ստանալ, քան եպիսկոպոսը, Սրվանձտյանցը Արևմտյան Հայաստանի որ վայրում էլ որ լինում է, խորհուրդներ է տալիս կանանց, կոչ անում դուրս գալ «ուրուական վիճակից» և ակտիվ դեր խաղալ հասարակական կյանքում:

* * *

Մարդկային հասարակության պատմության մեջ Սրվանձտյանցը տեսնում է սոցիալական տարբեր դասերի առկայությունը: Ըստ նրա՝ գոյություն չունեն միասնական ազգեր: Ազգի

---

32 Նույն տեղում:

33 «Թորոս աղբար», հ. 1, էջ 107:

*ներսում եղող ներհակությունններն արտացոլումն են գտնում նրա գրչի տակ: Սրտի ցավով է նա պատմում «Հայաստանի խղճալիների»՝ զրկված և ընչազուրկ դասի մասին: Իր գործունեության սկզբին իսկական հայրենասիրությունը նա տեսնում էր այդ դասին օգնելու մեջ: Նրա բոլոր գործերում անհուն կարեկցանքով, գթով, մեծ սիրով էր նկարագրվում Արևմտյան Հայաստանի ամենաստվար դասի՝ չքավոր գյուղացիության դարհուրելի կացությունը: «Շինական հայոց կեանք ի Հայաստան», «Մշեցւոց վրայ ընդհանուր տեսութիւն մը» մեծ հոդվածաշարերը, «Թորոս աղբար» երկհատորանոց աշխատությունը լի են այդպիսի նկարագրություններով: Սրվանձտյանցը անվերապահորեն կանգնում է չքավոր գյուղացիության պաշտպանության դիրքերում: «Արծուի Վասպուրականում» լույս տեսած մի բանաստեղծության մեջ Սրվանձտյանցը մեծ վարպետությամբ նկարագրում է գյուղի հարուստների և եկեղեցականների գռփող և թալանող վարքը: Աղքատների համար հանգանակություն է կատարվում, հսկայական գումար հավաքվում: Եղներ են գնում մատաղի համար, բայց մատաղի մսի համը չի տեսնում ժողովուրդը: Հարուստներն ու եկեղեցականները գողանում են կաթսաների միսը, իսկ աղքատներին հասնում է անյուղ բրնձե ճիլա և մի երկու կտոր ոսկոր, որի համար նրանք բռնում են իրար կոկորդից: «Արծուիկ Տարօնոյում» զետեղված «Մշեցիների բողոքի» մեջ Սրվանձտյանցը, որն արդեն հայտնի գործիչ էր, Ազգային վարչությանն է բողոքում Տարոնում բուն դրած ցեցերի հարստահարությունների դեմ:*

*Խրիմյանի պատրիարքության տարիներին Սրվանձտյանցը, երբ սբ. Կարապետի վանքի վանահայրության փոխանորդ էր, պատասխանատվության է կանչում մի քանի վարդապետների և աղաների, որոնք առանձնապես աչքի էին ընկնում գռփելու և շահագործելու իրենց ախորժակով: Խրիմյանը նամակով զգուշացնում է իր սանին, թե պատասխանատվության կանչվածների մեծ մասը հայեր են և դրանից նենելով պետական պաշտոնյաները կարող են պատճառաբանել, որ ժողովրդի հարստահարիչներն ընդհանրապես հայերն են: Գուցե տեղին էր պատրիարքի զգուշությունը, բայց մի բան պարզ է, որ իր գործունեության*

ընթացքում Սրվանձտյանցը կատարում էր իր պարտքը՝ Հօգուտ «Հայաստանի խղճալիների»:

Ընչազուրկ գյուղացիության Հետ մեկտեղ Սրվանձտյանցը տեսնում է նաև քաղաքի զրկված դասին՝ քայքայված արՀեստավորությունից առաջացող բանվոր դասակարգին: Սրվանձտյանցը պատմում է 1869 թ. Արաբկիրի մանուփակտուրային բանվորների գործադուլի մասին. փաստաթղթերի ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ դա Արևմտյան Հայաստանի բանվորների առաջին գործադուլն է: «Արաբկերի մեջ առաջին արուեստ Համարուած է մանիսա գործել. 1600 Հոր կը բանեն. իմ Հոն եղած օրերը բանիթողս (գործադուլ) բրած էին, իրենց օրականը թղթադրամով վճարելուն առթիվ. գործատերեր՝ որ վաճառականներն են, մեծ Հուզմունքի մեջ էին, գործողներ երդմամբ կապուած էին իյարու մինչև իրենց ուզած գինը տրվեր, անեծք և տուգանք սպառնացած էին իրենց ուխտին բաժնվողին»[34]:

Հետաքրքիր են Սրվանձտյանցի Հայացքները Արևմտյան Հայաստանում արդյունաբերության զարգացման մասին: Նա պատկանում էր այն գործիչների թվին, որոնք բողոքում են երկիրը Հումքի բազա դարձնելու դեմ: «Թորոս աղբարի» մեջ նա նկարագրում է, թե Հայաստանի որ գավառը ինչով է Հարուստ և ինչ կարող է արդյունաբերել: Դրա Համար էլ նա ամեն կերպ խրախուսում է տեղական արդյունաբերության զարգացումը, Հորդորում է բացել գործարաններ, վրդովվում, որ Ամասիայի, Թոքատի, Ակնի, Արաբկիրի, Խարբերդի, Մալաթիայի, Տիգրանակերտի, Վանի, Բաղեշի և այլ գավառների գործարանները փակվել են: Այդ գործարաններում կարելի էր արտադրել կերպասեղեն, կտավեղենի, չթի, մանիսայի, շալի, շիլայի տարբեր տեսակներ: Այնտեղ կաշխատեր տեղացի ժողովուրդը, տեղական ապրանքը կլիներ էժան և մատչելի: Սրվանձտյանցը զայրանում է, որ Արևմտյան Հայաստանի ամենաՀեռավոր գյուղերում իսկ տարածված է Ամերիկայի և Անգլիայի ապրանքը: Տեղական արդյունաբերության զարգացմանը խանգարում են օտարերկրյա ձեռ-

---

[34] Նույն տեղում, էջ 281:

նարկատերերը, որոնք շաՀագրգռված են երկիրը դարձնել Հումքի բազա և սպառման շուկա: «Թող գողը տանի, թող տէրութիւնը Հարկէ, ժողովուրդ մը չկործանուիր, բայց սարսափելի կործանումն է, երբ զմեզ անգործութեան կդատապարտեն, գործն ու գործողները կխափանեն և այնքան մեր սեփական շաՀերն զմեզ զրկելէ զկնի՝ ծանր-ծանր կողոպուտներ կընեն, տանելով մեծ քանակութեամբ դրամ մեզմէ, փոխարէն՝ թողլով մեզ չքաւորութեանց վարժութիւնը և նորաձևութեան ճաշակ»[35]: Սրվանձտյանցը արդյունաբերության զարգացումը Համարում է պանդխտությունն արգելակող գործոններից: Երկրում բացված գործարաններում կընդգրկվեր տեղի ժողովուրդը, կՀոգար իր ապրուստը և չէր մտածի պանդխտության մեկնելու մասին: Զայրացած պարսավելով Կ. Պոլսի ազգայիններին այնտեղի գերեզմանատները արյուն-քրտինքով պաշտպանելու Համար, Սրվանձտյանցը կոչ է անում Հայ Հարուստներին դրանց փոխարեն Հայաստանում ձեռք բերել ընդարձակ Հողատարածություններ, զարգացնել մեքենաշինություն, գործարաններ բացել, որ արտադրեն շաքար, մետաքս, մաՀուդ, թուղթ: «...Հոս պաՀեցեք թող աշխատեն Հայաստանցի խղճալիները իրենց ընտանեաց քով և իրենց քրտինքը թափեն իրենց Հայրենի Հողը. մի թողուք, ո՛Հ, ինչպէ՞ս ձեր սիրտերը չեն մղկտար տեսնելով այդ թշվառները 10,15 տարով իրենց տունեն, ծնողքեն, ամուսինեն տարագիր, ամենաանխիղճ կերպով Պոլսո փողոցներու մեջ չոփչի, ջրկիր, թուլումպաջի. այվազ և այլն...»[36]: Այսպիսով, Սրվանձտյանցը կոչ է անում զարկ տալ արդյունաբերությանը ոչ թե արդյունաբերողների շաՀերի տեսանկյունից, այլ Հայաստանի խղճալիների վիճակը բարվոքելու նպատակով: Արդյունաբերության զարգացմանը զուգընթաց, Սրվանձտյանցին Հետաքրքրում էր նաև երկաթուղու շինարարության Հարցը Արևմտյան Հայաստանում: 1879 թ. ՀովՀաննես քաՀանա Մկրյանին ուղղած մի նամակում նա ուրախությամբ Հայտնում է, որ Տիգրանակերտով անցնելու է երկաթուղի, որը դրական նշանակություն կունենա Տիգրանակերտը Տարոնի, մա-

35 «Թորոս աղբար», Հ. 2, էջ ԺԳ--ԺԴ:
36 «Արծուիկ Տարօնոյ», 1864, N 30:

նավանդ Սասունի հետ կապելու գործում, որն էլ կնպաստի հայերի ազգային միավորմանը[37]:

Արդյունաբերության զարգացման համար իբրև հումքի բազա Սրվանձտյանցը առաջարկում է գյուղատնտեսության զարգացումը: Նա սերտ կապ է տեսնում դրանց միջև. կտավի գործարան կառուցելու համար երկիրը պետք է բամբակի առատ հումք ունենա, ծխախոտի արդյունաբերությանը զարկ տալու համար պետք է հմուտ լինել «թութուն» մշակելու արհեստին: «Արծուիկի» էջերում նա ուրախությամբ հայտնում է, որ ականեցիները խնդրագիր են ներկայացրել Բ. Դռանը կտավի գործարան բացելու թույլտվության համար: Նա ցավով է արձանագրում, որ Տարոնում բացակայում է բամբակի, բրնձի և պտղատու այգիների մշակությունը: «Մեր մեջ ունենալու ենք գործարաններ կտավի, երկաթի, կերպասի, մշակութիւնք արմտեաց, տորոնի, բամբակի, ձիթահան հունդերու, շերամի և ինչո՞ւ չասենք նաև շաքարի և այլ իրաց»[38]: Սրվանձտյանցը երազում է այն օրը, երբ ապրանքներ ներմուծելու փոխարեն «բառնանք պատրաստենք բեռներ վաճառականութեան Հայաստանի բերքերէն ու ապրանքներէն»:

Հետաքրքիր է Սրվանձտյանցի դիրքորոշումը հողային հարցում: Նա այն գործիչներից է, որոնց մեծապես զբաղեցրել է աշխատավոր գյուղացիության հողը. սրտի ցավն կսկիծով նա արձանագրել է հայ գյուղացու հողազրկման գործընթացը: Դեռևս 1860-ական թվականներին արևմտահայ առաջադեմ գործիչները արձանագանքելով «Երկրագործության» անմահ հեղինակին, շեշտում էին հողի կարևորությունը գյուղացուն տնտեսական կախումից ազատագրելու գործում: 1862 թ. հունիսին «Մեղվում» տպագրվում է Սվաճյանի «Ով այսօր հող չունի, վաղը հաց չունի» հոդվածը, ուր հեղինակը նկարագրում է Արևմտյան Հայաստանի գյուղացիության ծանր վիճակը:

Սրվանձտյանցը հուզիչ և սրտաճմլիկ տողեր է նվիրել գյուղացու ողբալի կացության նկարագրմանը: «Շինական Հայոց կեանք ի Հայաստան»[39] ծավալուն հոդվածը ընթերցողի աչքի

---

37 ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., ց. 12, գ. 10526:

38 «Արծուիկ Տարոնոյ», 1864, N 31:

39 «Արծուի Վասպուրական», 1862-63, N 3:

առաջ բացում է Արևմտյան Հայաստանի գյուղացիության դաժուրեկի կացության ճշմարտացի պատկերը: Լացը, արցունքն ու տառապանքը, հարկահավաքների անողորմ ծեծն ու հարստահարությունը, պետական պաշտոնյաների անգթությունները գյուղացու մշտական ուղեկիցն են ծնունդից մինչև մահ: Հոդվածում բազմաթիվ էջեր են նվիրված հարկահավաքների գազանություններին և հարկերի ծանրությանը: Ահա գյուղում են խարազանով հարկահավաքները: Ատյան են կանչվում երիտասարդ հարսներ և ծերացած մայրեր պատասխան տալու պանդխտության մեկնած ամուսինների և որդիների փոխարեն: Ոչ ոք չի ունկնդրում տառապած մոր աղերսանքին. գլխահարկ են վերցնում նույնիսկ մեռած պանդուխտի համար: Նույն վերաբերմունքն են ցույց տալիս գյուղացուն մյուս հարկահավաքները: Պետական վարձակալից բացի հայ գյուղացին հարկ էր վճարում նաև քուրդ ավազակին, այսպես կոչված խաֆիրներին. «Տեարք և առողք բաժնիցս անվանեին խաֆիր. որոց հետք երևին և մնան ինչ ցայսօր ի բնակիչս Սասնոյ և Խոյթա՝ որ ի Մուշ. և Խիզանու, Մոկաց և Շատախու և ի գյուղորայսն Վանա, որք զխաֆիրութեան տուրս տան տերանց ի քրդաց»[40]: Սրվանձտյանցը մեկն էր այն սակավաթիվ գործիչներից, որոնք բողոքեցին խաֆիրների ապօրինությունների դեմ: Նրա գործերից մենք տեղեկություն ենք ստանում նաև մարաբայության մասին. ըստ Սրվանձտյանցի վկայության, տարբեր վայրերում տարբեր էր մարաբայական կախման ձևը: Մի վայրում գյուղացին տրամադրում էր իր բազուկները, զուրկ էր արտադրամիջոցներից, տնից, մի այլ վայրում, օրինակ Բաղեշում, մարաբան ուներ տուն, արտադրամիջոցներ, զուրկ էր միայն հողից: Սրվանձտյանցը մարաբաներին համեմատում է ստրուկների հետ: Խարբերդի մարաբաները «այնքան ստրկացած էին, որ չէին գիտեր, թէ իրաւունք ունեին կամ կարո՞ղ էին ձայն ունենալ բողոքելու իրենց բեկերուն կամ տէրերուն ըկնանաց և զրկանաց դեմ, զորս իբրև սովորութիւն և տիրական իրաւունք ի գործ կդնեին գեղացվոց և անոնց ընտանեաց ու զավակաց վրա»[41]: Սրվանձտյանցի սթափ աչքը տես-

[40] «Հնոց և նորոց», էջ 156:
[41] «Թորոս աղբար», հ. 2, էջ 81:

նում է, որ քուրդ և թուրք բեյերի հետ մարարանը ունեն նաև հայ աղաները, առանձնապես Մեղրեում բնակվող ակնեցի հողատերերը: Մարարայության և խաֆիրության սարսափների հետ Սրվանձտյանցը նկարագրում է նաև դշլաղության ահավոր ծանրությունը, որ ընկած է հայ գյուղերի վրա: «Գաւառականներու, հայհոյանքներու և թշնամաց ձայներէն յայտնի է, որ բարբարոսներր ձմեռելու եկած էին գեղ, որ ոսքին կծեծեին, դդրին կհայհոյեին, մեկսի վրայ սուր ու զէնք կքաշեին»[42]: Կարծես ընդոստացած ասստվածային և մարդկային անարդարության դեմ, «Տրնական հայոց կեանք ի Հայաստան» հոդվածում Սրվանձտյանցը բացականչում է. «Արարիչ, այս է քո ստեղծածի վիճակը. արդեոք այդպիսի սրտերը կօրհնեն քեզ»[43]: Նա վառպես գրչով նկարագրում է, թե ինչ ուղիներով է հայ գյուղացին կախման մեջ ընկնում վաշխառուից, դրամատերից, և դրանից հետո այլևս փրկություն ոչ մի հույս: Հուսահատված գյուղացին ճանապարհ է ընկնում մեծ քաղաքները՝ դրամ հայթայթելու: Տունով պարտքը կրկնապատկվում է, եռապատկվում... դրավ է դրվում գյուղացու հողակտորը, նրա «ձեթկիկ ձագերի» միակ կերակուրը, վերջին հույսն ու ապավենը: Վրա է հասնում կործանումը և այժմ էլ կինը երեխաները դրկին, մեջքին կամ փեշերից կախ նետվում է քաղաք, որոնելու ամուսնուն, ստվարացնելու Կ. Պոլսի և մեծ քաղաքների խաներում կորչող այն հսկայական զանգվածի թիվը, որ կոչվում է պանդուխտ հայություն: Սրվանձտյանցի սթափ աչքը տեսնում է, որ Կ. Պոլիսը դարձել է «Հայաստանցւոց կեանքը սպառելու սպանդարան մը»[44]: Նալբանդյանի, Րաֆֆու և մեր մյուս նշանավոր գրողների ու գործիչների նման Սրվանձտյանցը ևս զգում էր, որ պանդխտությունը ազգային չարիք է, որի դեմ անհրաժեշտ է ուժգին պայքար մղել: Իբրև պանդխտության դեղատոմս նա առաջարկում էր արդյունաբերության զարգացման հետ միասին երկրագործության զարգացումը: Կ. Պոլսի և մյուս հայ գաղթօջախների հարուստներին նա կոչ էր անում Հայաստանում գնել ընտիր և ընդարձակ հողեր՝ երկրագործությանը զարկ տալու համար: «Տվեք ունեցած-

---

[42] «Արծուի Վասպուրականն», 1862-63, N 3, էջ 74:
[43] Նույն տեղում:
[44] «Արծուիկ Տարօնոյ», 1864, N 30:

*նիդ. Հողի և բանեցուցեք ոսկինիդ երկրագործութեան մէջ. տվեք ավանդ և ի շահ Հավատարիմ Հողին... և թող ձեր երեսէն այլ շահուին շատ խեղճեր, լինելով ձեզ մշակ և սպասաւոր»*[45]*:* *Սրվանձտյանցը ջանքեր է թափում, որպեսզի Հայաստանում Հիմնվի փոխատվական բանկ, որը գյուղացուն օգնության կՀասներ սուր կարիքի դեպքում: «Պետք է Հողեր գնել, պետք է տեղ տեղ փոքրիկ ագանք Հաստատել, որոնք գոնե Հայը պանդխտութեան դիմելե ետ կկեցնի»*[46]*: Դրանով նա ցանկանում էր գեթ փոքրիկ ապեղանի դնել Հայ գյուղացու վերքերին:*

*Կոչերից և Հորդորներից բացի, Արևմտյան Հայաստանում Սրվանձտյանցը եռանդուն գործունեություն է ծավալում երկրագործության զարգացման Համար ընկերություններ ստեղծելու ուղղությամբ: Մասնավորապես նշանակալից է նրա օգնությունը 1865 թ. Ակնում կազմակերպված «ՆաՀապետական» ընկերության, որը Սրվանձտյանցին ընտրում է իր ներկայացուցիչը, վստաՀում իր գումարները: Վերջինիս Հաջողվում է գնել Մշո դաշտի անմարդաբնակ Շքավղիան գյուղը և Հիմնադրել Նոր Հայ գյուղ: Թիմուրյանը՝ ընկերության ղեկավարը, մի տետրակ է Հրատարակում, ուր շարադրում է իր Հայացքները և ծրագիրը ընկերության գործունեության վերաբերյալ: «Թորոս աղբար»-ի առաջին Հատորում Սրվանձտյանցը մանրամասն անդրադառնում է ընկերության աշխատանքներին և մեծ Հատվածներ մեջ բերում Թիմուրյանի տետրակից, իր լիակատար Համերաշխությունը Հայտնելով նրան:*

*Թիմուրյանը և Սրվանձտյանցը Հակասություններ են տեսնում քաղաքի և գյուղի միջև: Լինելով աշխատավոր գյուղացիության լայն զանգվածների շաՀերի արտաՀայտիչ, նրանք առավելությունը տալիս են երկրագործի արդար աշխատանքին, որը կերակրում է ոչ միայն իրեն, այլ Հագեցնում է «քաղաքներու բազմաթիվ մարդիկները, միլիոնավոր դատարկաշրջիկները, մեծամեծ տուներն ու ամարանոցները և վաճառանոցները»: Նախապատվությունը տալով գյուղացու աշխատանքին և այն «աստծո կամաց Համաձայն» Համարելով, Թիմուրյանն ու*

---

[45] *Նույն տեղում:*

[46] *«Թորոս աղբար», Հ. 1, էջ 269:*

Սրվանձտյանցը նպատակ ունեին Նոր Հայ գյուղ գաղթեցնել Ակնա «խնդճերին» և այլ հայազգի մշակներ ու վարեին օրինավոր տնտեսություն: Գյուղը պետք է ղեկավարեր չորս անձից բաղկացած տնտեսական ժողովը: Աշխատանքի արդյունքը պետք է բաշխվեր այնպես, որ բավարարեր տարվա ապրուստը, իսկ մնացորդը ուղարկվելու էր վաճառքի՝ էժան և մատչելի գներով: Վաճառվող ապրանքի էժանությունը շեշտվում էր հատկապես: Ղեկավարող քառյակին էր վերապահվում բարիդրացիական հարաբերությունների պահպանումը: Ընկերության անդամները պետք է փոխադարձաբար հարգեին միմյանց իրավունքները. «Վեճի պատճառ չըլլար, երբոր հասարակութեան միօրինակ խնամք տանին»: Եթե հանկարծ որևէ մեկը շեղվի այդ օրենքներից, պետք է ներեն նրան, ասելով՝ «Ընկեր, ինչպես փառահացար, որ այդպես ըրիր, ուրեմն մեղանչեցիր բանն. երբ ներում խնդրե, ներեն այ բնավ չհիշելու պայմանով, վասնզի Քրիստոս այդպես կհրամայե»[47]: Մի քանի տարի նախապատրաստվելուց հետո ակնեցիները տեղափոխվում են Նոր Հայ գյուղը: Սակայն գործընկերների թերանալու և «երկրի ու քաղաքականութեան պատահարեր դժուարութեանց պատճառով» Թիմուրյանը չկարողացավ «նահապետական» ընկերությունը դնել «բաղձացեալ վիճակի» մեջ: Պարզ է, որ նույնիսկ գործակիցների չթերանալու դեպքում այդ ընկերության աշխատանքները չպետք է պսակվեին հաջողությամբ «երկրի և քաղաքականութեան դժուարութեանց» պատճառով: Սակայն պետք է նշել, որ նահապետական նկրտումներ ունեցող այդ ծրագիրը, թեկուզև անիրականանալի, առաջադիմական էր Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի համար: Դրա նպատակն էր պաշտպանել գյուղացիության շահերը, արգելակել պանդխտությունը և դիմագրավել եվրոպական քաղաքակրթության ամենակուլ երախին:

Արխիվային նյութերից հայտնի է դառնում, որ ակնեցիները միակը չէին: Նման մի ընկերություն կազմակերպվում է Տրապիզոնում Պողոս Թումայանի ղեկավարությամբ: Վերջինս մեկնում է Բրուսա՝ ուսումնասիրելու թթաստանների դիրքն ու մշակությունը, շերամաբուծության վերն ու մետաքսի գործարանները, դի-

[47] Նույն տեղում, էջ 266:

տելու բամբակի, տորոնի և Հաշիշի պլանտացիաները և «անոնց մշակութեան վրայ կատարեալ տեղեկութիւններ ստանալ, Հարմար ատեն կարելի եղածներուն ձեռնարկելու նպատակով»: Առավել Հետաքրքիրն այն է, որ թե՛ Պողոս Թումայանը, և թե՛ Մկրտիչ Խրիմյանը Հիշյալ գործը գլուխ բերելու Համար խնդրում են դարձյալ Սրվանձտյանցի աջակցությունը[48]:

Այս երկու փաստերը մեկ անգամ ևս ընդգծում են, որ Սրվանձտյանցին շատ է մտահոգել Հայ գյուղացու Հողազրկման գործընթացը, այն, որ պատմական Հայաստանը դատարկվում է Հայերից և այնտեղ Հողատեր են դառնում թուրք և քուրդ աղաները: Այդ պատճառով էլ նա իր ողջ կարողությունները ներդնում է երկրագործության զարգացման Համար: Նման ձևով էր Սրվանձտյանցը արձագանքում «Երկրագործության» Հեղինակին: Եթե 1860-ական թվականներին երկրագործության զարգացման Համար Սրվանձտյանցն առաջարկում էր նմանօրինակ ընկերությունների ստեղծումը, նաև վարժարաններում դասավանդման Համար մտցնում երկրագործություն կամ Հողագործություն առարկան, ապա 70-ականների վերջերին և 80-ական թվականներին նա զգում է, որ Հայերի Հողազրկումը պետական քաղաքականության Հետևանք էր: Պատրիարքարանին ուղղված իր Հաշվետվություններում Սրվանձտյանցը սրտի ցավով արձանագրում է փաստեր, որոնցից ակնՀայտ երևում է Հողազրկման գործընթացի ուժեղացումը:

Գ. Սրվանձտյանցի թե՛ Հրատարակված աշխատությունները, և թե՛ արխիվային անտիպ նյութերը Հավաստի սկզբնաղբյուրներ են Արևմտյան Հայաստանի պատմության ուսումնասիրման Համար: Այդ տեսակետից Հրատարակված աշխատություններից առավել գնաՀատելի է «Թորոս աղբարը», իսկ արխիվային նյութերից՝ Սրվանձտյանցի կազմած Հայաբնակ վայրերի վիճակագրությունները: «Թորոս աղբարում» ամենայն մանրամասնությամբ տրված են Ամասիայի, Մարզվանի, Եվդոկիայի, Շապին-ԳարաՀիսարի, Տիվրիկի, Ակնի, Չարսանջակի, Արաբկիրի, Չմշկածագի, Խարբերդի, Բալուի, Մալաթիայի և Տիգրանակերտի վիճակագրությունները: «Թորոս աղբարից» դուրս են մնացել Բասենի,

[48] ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., ր. 2, գ. 316, 437:

Դերջանի, Քեմախի, Բայազետի, Ալաշկերտի, Սպերի, Կիսկիմի և Կարինի ու իր Թեմի վիճակագրությունները: Ե՛վ տպված, և՛ անտիպ* վիճակագրությունները կազմված են հետևյալ սկզբունքով. նշված է գավառի անունը, այնուհետև թվարկվում է, թե տվյալ գավառի կազմում ինչ քաղաք, գյուղաքաղաք կամ գյուղ է մտնում, տվյալ վայրում ինչ եկեղեցիներ կան, ինչ հասույթներով, ինչ դպրոցներ կան և ինչ միջոցներով են պահվում, նշվում է սովորողների, հայ ընտանիքների թիվը, հայ և օտարազգի բնակչության քանակը: Ավելի լրիվ տեղեկություններ են հաղորդում վերոհիշյալ անտիպ վիճակագրությունները: Դրանց մանրամասն ուսումնասիրությունից կարելի է գալ հետաքրքիր եզրակացությունների: Հայ ընտանիքները գավառներում բաղկացած են եղել միջին թվով 8-10 անձից: Օտարազգի և հայ բնակչության բաղդատումից պարզվում է հետևյալը. որքան էլ օսմանյան կառավարությունը վարում էր հայահալած քաղաքականություն և ցանկանում միջազգային դիվանագիտությանը հայերի քանակը ցույց տալ խիստ նվազեցրած և աննշան, այնուամենայնիվ այդ ժամանակաշրջանում հայերը կենտրոնանում էին առավելապես գյուղական վայրերում և ակնհայտ գերակշռություն կազմում թուրքերի և քրդերի նկատմամբ: Սակայն, չնայած թվական գերակշռությանը, հայերը զուրկ էին հողից. հողի մեծ և լավագույն մասը գտնվում էր թուրքերի և քրդերի ձեռքին: Բալուում «Հողերը գրեթե բոլորովին պեյերու և աղաներու սեփական են թափուով... Հարյուրեն մեկը հազիվ կա հայոց ձեռքը զորս կտոր կտոր գնած են»[49]: Չարսանջակի ողջ հողատարածությունը 25 աղաների սեփականությունն էր, որոնք բռնությամբ հափշտակել էին հողերը, անտառները, այգիներն ու տները[50]: Մալաթիայում հայերը շատ քիչ հող ունեին. «Երեք հարյուրեն մեկ բաժինը հազիվ հայոց ձեռքն է»[51]: Չմշկածագում ևս հողը մեծ մասամբ թուրքերի ձեռքին էր, միայն «վեցեն մեկը հայոց թափու է»[52]:

---

* Այդ վիճակագրությունները մեր կողմից հրատարակվել են «Բանբեր Հայաստանի արխիվների» ամսագրում (1976, N 2, էջ 62-94):

49 ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բ. 3, գ. 39:

50 Նույն տեղում, գ. 51:

51 Նույն տեղում, գ. 47:

52 Նույն տեղում, գ. 52:

Այդպես անընդհատ կարելի է թվարկել Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր վիլայեթները: Դա ակնհայտորեն ցույց է տալիս օսմանյան կառավարության հայկական հարցը լուծելու յուրօրինակ քաղաքականությունը: Ամենից առաջ հայ շինականը կտրվում էր իր տնտեսական հիմքից և կախման մեջ ընկնում թուրք աղաներից ու քուրդ ցեղապետերից: 1883 թ. Մամուրյանին գրած նամակում դառնացած Սրվանձտյանցը կիսում է իր վշտերը «Արևելեան մամուլի» խմբագրի հետ. նշելով, որ ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո Ռուսաստանից և Բալկաններից գաղթած չերքեզները ևս դուրս են մղում հայերին իրենց հողերից. «Ռուսիո մարդասպան և նուզակ ցեղերը այս կողմի հայկական գաւառները լցան և կը լեցուին, ու հայերը հողէն ու հողի յոյսէն կտրուած՝ կը մղուին դուրս...»[53]: Կարծես նախազգալով գալիք փոթորիկները, Սրվանձտյանցը շարունակում էր խորհրդածությունները. «Նյութէ ինկած, հոգին յատած, այսպէս ժամանակ չկարծեմ թէ ունեցեր է հայր»:

* * *

Գարեգին Սրվանձտյանցի գործունեության և հայացքների համառոտ շարադրանքից կարող ենք անել հետևյալ եզրակացությունները: Դուրս գալով ժողովրդի ծոցից, նա իր ողջ կյանքը ծառայեցրեց ժողովրդի մեջ ստեղծված և դարերի խորքից մեզ հասած ստեղծագործությունները հավաքելուն և մշակելուն: Սրվանձտյանցը եղավ հայ բանահյուսության, բանագիտության, ազգագրության և հնագիտության նախակարապետը, մեծ նրախտավորը: Ժողովրդական բանահյուսությունը, հնագիտությունը և ազգագրությունը նրա համար ունեցել են ժողովրդի ինքնագիտակցությունն արթնացնելու, ինքնաճանաչմանը նպաստելու, դիմադրության կորովն ու ոգին պահպանելու նպատակ: Ժամանակակիցներին հիշեցնելով Հայկի՝ Բելի դեմ ապստամբելու և ազատ ապրելու մասին, պաշտամունքի հասնող սիրող նկարագրելով Եղիշեին և նրա հերոսներին՝ Վարդանին և մյուս հայրենա-

---

[53] «Դիւան հայոց պատմութեան», հ. ԺԳ, էջ 454:

*սերներին, նա ներշնչում էր ծերերին և երիտասարդներին, կանանց և աղջիկներին՝ պայքարել բեկերի և հագկերտների դեմ:*

*Իր ժողովածուներում նա փաստորեն տեղագրեց Արևմտյան Հայաստանի մի մեծ տարածքը և դրանով իսկ կատարեց անգնահատելի գործ՝ թղթի վրա անմահացնելով բեկորների վերածված և բնավեր եղած ժողովրդի պատմական հայրենիքը, հավաստելով նրա՝ իբրև ժողովուրդ ապրելու իրավունքը:*

*Սրվանձտյանցը եղավ հայ ժողովրդական էպոսի՝ «Սասունցի Դավթի», առաջին պատումի հայտնաբերողն ու գրառողը, դրանով իսկ համաշխարհային մշակույթը հարստացնելով նման բարձրաժեք ստեղծագործությամբ, որը, իրավամբ, համարվում է հայ ժողովրդի «ազնվության վկայականը», «նրա ձգտումների մարմնավորումը»[54]:*

*Նրա գրական ժառանգությունը, Արևմտյան Հայաստանի գավառներում ծավալած երեսնամյա գործունեությունը օբյեկտիվորեն նպաստել են հայ գյուղացիության ամենակենսական շահերի և հուզող խնդիրների արծարծմանը: Հայ ազգային-ազատագրական շարժումների հիմնական շարժիչ ուժը, ըստ Սրվանձտյանցի հայ գյուղացիությունն է՝ «շինական եղբայրը»: Սրվանձտյանցը պայքարում է Ազգային սահմանադրության իրագործման համար, թե քննադատում նրա մեջ տեղ գտած հակաժողովրդական հոդվածները, պայքարում Ազգային ժողովի ղեկավարությունն իր ձեռքը վերցրած լիբերալ սահմանադրականների, թե կղերա-աղայական հոսանքի մանր ու խոշոր ներկայացուցիչների դեմ, պահանջում է եկեղեցու բարենորոգում և ապաշնորհ հոգևորականների կարգալուծում,- ելնում է ժողովրդի շահերի տեսանկյունից: Թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության զարգացումը նրա համար նշանակալից էին այնքանով, որքանով պետք է օգնեին Հյաստանի «խղճալիների» վիճակի բարելավմանը:*

*Նրա երկերում արտացոլված են ժողովրդի կյանքի իրական պատկերը, ժողովրդի հույզերը, խոհերն ու մտորումները: Պատահական չէ, որ Արևմտյան Հայաստանի XIX դարի երկրորդ կեսի*

---

*[54] В. Брюсов, Поэзия Армении, М., 1916, с. 44.*

պատմությունը գրող հեղինակը չի կարող շրջանցել Սրվանձտյանցի աշխատությունները, չվկայակոչել նրան:

Քաջատեղյակ լինելով իր ժամանակի Արևմտյան Հայաստանի հայ բնակչության անսահման տառապանքներին, Սրվանձտյանցը երբեք հույսը չկորցրեց հայ ժողովրդի գալիքի նկատմամբ: «Ամէն երկիր գիշեր կը լինի, խաւար կուննա, բայց չէ՞ որ Աստուած ամէն օր առաւոտ կը բանայ, լոյս կուտա մեզ, ձմեռվանէն յետոյ՝ կուգա գարուն... Կը հալին ձիւները, կը տաքնան օդերը, կը ծաղկին դաշտն ու ծառերը, այսպէս և մեր վիճակը կը նորոգուի»[55]: Ժողովրդական երգ դարձած իր մի բանաստեղծության մեջ նա ցանկանում էր ապրել «մինչեւ Հայոց գա գարուն...»

Գնահատելով հայ ազգագրությանը, բանահյուսությանն ու բանագիտությանը մատուցած Գ. Սրվանձտյանցի ծառայությունները, արժեքավորելով նրա դերը հայ ժողովրդի հոգեկան կերտվածքի նկարագիրը տալու, դարերի ընթացքում ժողովրդի ծոցում ամբարված գանձերը հայտնաբերելու, հրատարակելու և վերստին նրան վերադարձնելու գործում, Արշակ Ալպոյաճյանը իրավացիորեն գրում է. «Քիչերու համար կրնանք ըսել՝

– Իր ազգին կեանքը ապրեցավ լիովին:

–Իսկ հազվագիւտ են անոնք, որոնց համար կրնանք ըսել՝

–Իր ազգին կեանքը յայտնաբերեց իր կեանքով: Այս վերջիններէն մին եղավ Գ. Սրուանձտյանց»[56]:

Իր կյանքի կեսդարյա տևողության, հասարակական-գիտական, գրական-լուսավորական գործունեության երեսուն տարիների ընթացքում նա կատարեց բեղմնավոր աշխատանք, հետնորդներին ժառանգություն թողեց Արևմտյան Հայաստանի բնատարածքի մեծ մասի հավաստի նկարագիրը, բնակչության սովորությունները, նիստ ու կացը, արդյունաբերության և գյուղատնտեսության վիճակի պատկերը, հայ ժողովրդի ապրելու և հարատևելու կորովը:

---

55 «Թորոս աղբար», հ. 2, էջ Ի:

56 «Էջեր հայ գրականութենէն», հ. Ա., էջ 8:

# ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑԸ ԵՎ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ[1]

*Հայ բանահիւսութեան ու բանագիտութեան, ազգագրութեան, հնագիտութեան և հայրենագիտութեան մեծ երախտաւոր Գարեգին Սրուանձտեանցը անցեալ դարի վերջին քառորդին իր գործունէութեամբ բացեց մի արահետ, որը հետագայում դարձաւ լայնահուն պողոտայ: 1874 թուին հրատարակած «Գրոց ու բրոց» և «Հնոց-նորոց» ժողովածուները եղան այդ գործի նախաշաւիղը, իսկ հաստատուն դասընթացները՝ «Մանանա», «Համով-հոտով» ժողովածուները և «Թորոս աղբար ճամբորդ Հայաստանի» ուղեգրութեան երկու հատորները: Այդ աշխատութիւններն էին, որ ազդակ եղան արևելահայ և արևմտահայ գործիչների համար հետաքրքրուելու, որոնելու և լոյս աշխարհ հանելու մեր ժողովրդի մէջ ամբարուած անգին գանձերը: Ժամանակի մանկավարժ Սեդրակ Մանդինեանի պատկերաւոր արտայայտութեամբ, «Սրուանձտեանցի ծառայութիւնը...հէնց նորանումն է, որ մի հարուածով անհաւատներին հաւատքի բերեց:...Նորա ժողովածուն բոլորովին ազգային ոգու շնչով է շնչում, որտեղ և՛ ճաշակ կայ, և՛ իմաստ, և՛ հանճար, և՛ բարոյականութիւն, և այս բոլորը մերն է, մեր հայկականը և ոչ օտարինը: Դոքա անհերքելի ապացոյց են, թէ ժողովրդական բանաստեղծութեան անփոխարինելի ազդեցութիւնը որքան կախուած է հաւաքողի շնորհքից, որ իւր նուրբ ու հանճարեղ ճաշակով գիտէ ընտիրն անպէտքից ջոկել, բուն ազգայինը՝ թաթարացած բանդագուշանքից»:[2]*

*1867-ին վարդապետ ձեռնադրուած Սրուանձտեանցը, որ գտնւում էր իր ժամանակի արևմտահայ հասարակական կեանքի յորձանուտում և կիզակէտում, հանգամանքների բերումով, տարբեր յանձնարարութիւններ կատարելու համար շրջագայում է*

---

*[1] Զեկուցում՝ կարդացված գիտաժողովում: Առաջին անգամ լոյս է տեսել Վասպուրականի Հայրենակցական միության «Վարագ» պարբերաթերթում, 2003 թ., N 50, Լոս-Անջելես, էջ 13-19:*

*[2] Գ. Սրուանձտեանց, Երկեր, Երևան, 1978 թ., I հ., էջ 631-632:*

*Արեւմտեան Հայաստանի համարեա ողջ տարածքում. ժողովրդի. մանաւանդ Բարձր Հայքի և Ջարսանջակի Հայութեանը իր խօսքի մոգական ուժով յետ պահում արտագաղթից, իրաւացիօրէն հաւաստելով, որ «ժողովրդեան մը ու ազգի մը կեանքը հոգեկան կապեր ունի իր ծնած հողին ու արեւին հետ, իր հօրն ու մօրը գերեզմանին հետ....վանքին ու սուրբին հետ...«Ո՜ տայր ինձ զծուխ ծխանի և. դառաւոտն Նաւասարդի»: Ահա քեզ Թագաւորի մը հոգեկան կարօտ»:[3] Սրուանձտեանցի կարծիքով, հայ մարդը հեռանալով իր հայրենի հողից, աստիճանաբար կորցնում է ազգային յատկանիշները և բռնում ուծացման ուղին: Նա գտնում էր. որ ժողովրդին իր երկրի հետ կապելու համար, հայրենի հողում պահելու համար սոցիալ-տնտեսական պայմանների բարեյաւման հետ մէկտեղ. նոյնիսկ դրանից առաջ խիստ անհրաժեշտ է նրան ծանօթացնել իր պատմութեանը, իր ծագմանը, հայրենիքը պեղել «գրչով ու բրչով»: «Հայք...փրկելու համար իրենց ճանչցնել տալ պէտք է զիրենք»... և «Հանդերձի ու հացի պէս» տարածել ազգի պատմութիւնը, պայքարի, մշակոյթի պատմութիւնը: Հէնց այդ գործին է նա նուիրաբերում իր ողջ գիտակցական կեանքը և յայտարարում. «Այո, որդիք ենք մեր Մեսրոպայ, Խորենացւոյ, Դաւիթ Անյաղթին և այլոց: Եւ մենք ենք, որ զարէ հաց ուտելով, չուանէ գօտի կապելով, տրեխ հագնելով, մերկ մնալով, գրպարտուելով, հալածուելով ալ պիտի յօժարինք մեր սուրբ նախնեաց օրինակով՝ Հայաստանին ծառայել»:[4] Այդ խօսքերը յաւուր պատշաճի չէին ասուել, այլ հնչել էին իբրև երդում, որն անպայման ենթադրում է նաև կատարում, իրագործում: Նրա թողած ժառանգութիւնը պատիւ է բերում ոչ թէ մի անհատի, այլ ողջ ժամանակաշրջանին և ողջ սերնդին: Վարագայ «Ժառանգաւորացում» ընդամէնը երեք տարի վանական կրթութիւն ստացած երիտասարդը այնպիսի գործեր ստեղծեց, որ ժամանակակիցներից մէկը իրաւամբ գրեց.«Այդ վարդապետը գրեթէ դպրոց չէր տեսած և սակայն գտնուեցան հնախօսներ, որք տեղեկանալով անոր գրքերու պարունակութեանը, կարծեցին, թէ գիտէ քանի մը հին ու նոր լեզուներ, որոց առաջնորդութեամբ*

[3] *Գ. Սրուանձտեանց, Երկեր, II հ., Երևան, 1982 թ., էջ 333:*
[4] *Նոյն տեղում, էջ 83:*

գիտուն է եղած...»։[5] Ի՞նչն է, որ այդպէս զարմացրել էր ժամանակակիցներին։ Սրուանձտեանցի արտայայտած մտքերը Հայ ժողովրդի վաղնջական պատմութեան, Հայերի Հարևանների մասին։ Մատնանշենք դրանցից մի քանիսը։

Քննարկելով գրաբարի և ժողովրդական խօսակցական լեզուի յարաբերութեան Հարցը, Սրուանձտեանցն ուզում էր պարզել իր ժամանակի Համար (գուցէ նաև մեր ժամանակների Համար) դժուար լուծելի և խիստ կարևորութիւն ներկայացնող մի Հարց, մինչև Մեսրոպ Մաշտոցն ու գրաբարը Հայ ժողովուրդն ունեցե՞լ է արդեօք գիր և գրականութիւն։ Այդ Հարցին նա տալիս է դրական պատասխան, թէև որոշակիօրեն չի նշում, թէ ո՞րն է եղել այդ գիրը։ Նրա ուշադրութիւնն են գրաւում Հայաստանի բաց երկնքի տակ սփռուած սեպագիր կամ բևեռագիր արձանագրութիւնները, որոնք մեր ժողովրդի նախամեսրոպեան գրի լուռ վկայութիւններն են։ «Որովհետև մեր ժողովուրդն աւելի Հին է, քան մեր գրաբարն է, ուրեմն ժողովրդեան խօսած լեզուն աւելի մօտ լինելու է բևեռագրի լեզուին»։ Գիտնական լեզուաբանների ուշադրութիւնը նա Հրաւիրում է բևեռագրերը վերծանելու խնդրի վրայ, որպէսզի «լուսաւորութեան սեղանին վրայ գրուած տեսնեմ Հայաստանի Հին գրականութեան կնքեալ ու փակեալ փառաց մատեանը, յորում ազգային և ընդՀանուր Հնութեան ու պատմութեան գանձեր կան ծածկեալ և զորս Հայերը բանալու միայն կարող են»։[6] ԳնաՀատելով եւրոպական գիտնականների այդ ուղղութեամբ կատարած աշխատանքը, Սրուանձտեանցը նրանց թերութիւնը բացատրում է Հայաստանից Հեռու լինելով և բուն ժողովրդական լեզուն չիմանալով։ Այս Հարցը Սրուանձտեանցի Համար ունէր ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակութիւն, որովհետև, նրա կարծիքով, սեպագրերի վերծանումը Հնարաւորութիւն է տալու «յաւիտենական մոխիրներէ և մթութենէ սրբել մեր Հայկական ազգի պատմութիւնը»։ Այդ ժամանակաշրջանի Համար ազգի պատմութիւնը և նրա անցեալի քաջիմացութիւնը օգտագործուելու էր իբրև ազգային ինքնութեան և գոյութեան իրաւունքի կռուան։

---

5 Հայրենիք, Կ. Պոլիս, 1892 թ., N 306։

6 Գ. Սրուանձտեանց, Մանանայ, Կ. Պոլիս, 1876, էջ 144։

*Հայ ժողովրդի վաղնջական պատմութիւնից Սրուանձտեանցի ուշադրութիւնը առաւել չափով գրաւել է մեր ժողովրդի նախահայրը՝ Հայկը իր ազատատենչ ոգով.իր հոյակապ յաղթանակով: Տարբեր անգամներ նա մանրամասն նկարագրում է նահապետի ճակատամարտի վայրը, Բէլի և նրա զինուորների գոհուելու վայրը, Հայոց ձորը, Հայկավանքը: Սրտայոյզ է Հայոց ձորի նկարագրութիւնը, Հայկի յաղթանակի տեսարանը.«Խայտակն և քաջազանգուր Հայկն, իւր երեք հարիւր աղեղնաւորք, Բէլն և իւր խօլ բիւրաւորք: (Ուշադրութեան արժանի է թուական համեմատութիւնը՝ 300 և 10.000-ներ-է. Կ): Այս հովտին մէջ, այս հողին վրայ, այս երկնից տակ կանգուն... աչկունք այս հոյակապ աստղակամար կապոյտին համրանալով կը խօսէր համայն մարդկանց առաջինն՝ առաջին ճառն ընդդէմ անիրաւողին, բռնաւորին և ստրկացնողին...»: Ճառի ներգործութիւնն ամենից ցնցողն է.«Այո, այս ճառն հոգի տուաւ սակաւաւորաց, հոգին առաւ երկաթակուռ ուժաւորաց, հսկայից. քաջաց բիւրաւորաց: Այն օր աստղ մի պայծառ այս ծովէն ու ձորէն ցոլացաւ յաստեղատուն՝ Հայկին պատկերով, Հայկին անունով, զոր զետեղեց յաւիտենականին մատն արևուն դարպասը»:[7] Այդպէս է բացատրում Գարեգին Սրուանձտեանցը Հայկ կամ Օրիոն համաստեղութեան գոյութիւնը. իր ժողովրդի ազատութեան համար պայքարողին Աստուած անմահութիւն է պարգևում երկնային համաստեղութեան կերպարանքով:*

*Մի այլ տեղ անդրադառնալով Մովսես Խորենացու պատմութեանը, Սրուանձտեանցը նկատում է, որ պատմահայրը Բիւրասպեանց Աժդահակին համարում է առասպելական կերպար: Չհամաձայնելով այդ կարծիքի հետ, գրում է. «Բիւրասպեանց վեպն բացարձակ առասպել կ'անուանէ Խորենացի հայրն և անոր մէկ քանի մասերը մէջ կը բերէ: Այսպիսի առասպելաց մէջէն ծագած են և ի նոյն մնացած ամէն հին ազգաց նախնականութիւնը:»[8] Այդ համառոտ բնորոշումը յետագայում գրաւել է Ներսէս Ակինեանի (Մխիթարեան միաբանութեան անդամ), ապա մեր ժամանակակից հետազօտող Բարգէն Չուգասզեանի ուշադ-*

---

*Գ. Սրուանձտեանց, Երկեր, I հ., էջ 32:*

[8] *Նոյն տեղում, էջ 180:*

րութիւնը, երբ քննարկել են քերթողահօր դիտողութիւնները և հայ-իրանական առնչութիւնները: Այժմ արդէն պարզուել է, որ Աժդահակը Մարաստանի վերջին արքան էր, որի կառավարումն ընդհատուեց Աքեմենեան Իրանի ապստամբութեամբ: Թւում է՝ աննշան մի փոքրիկ փաստ և նոյնքան աննշան մի դիտողութիւն: Բայց երբ հաշուի ենք առնում, որ այդ կարծիքն արտայայտուել է մօտաւորապէս 150 տարի առաջ, ակնյայտ է դառնում Սրուանձտեանցի գիտական խորաթափանցութիւնը:

Հետաքրքիր հարցադրում է անում Սրուանձտեանցը եկեղեաց աշխարհ արտայայտութեան մասին: Նա ցանկանում է պարզել, թէ ի՞նչ կազմութիւն ունի «Եկեղեաց» բառը և մտորում է. «Եթէ Եկեղէ բառը առանձին նշանակութիւն մը չունի, արդարև Եկեղեցեաց գաւառ ըսուելու յարմար է, բայց միթէ «եկեղեցին» հայերէն էր քրիստոնէութենէն յառաջ և միթէ գաւառիս մերձակայ «Վերին Կեղի», «Ներքին Կեղի» անունով գաւառնե՞րն ալ Եկեղեց կամ Եկեղեցեաց գաւառ կը նշանակեն»:[9] Հետաքրքիր հարցադրում է սա, որին արժէ վերջնական պատասխան տալ. եկեղեցին ընդունել իբրև յունական բառ, թէ՞ բուն հայկական:

Շրջելով Արևմտեան Հայաստանի նուիրական վայրերը, ուր իրար են խառնուել մեր հեթանոս աստուածները քրիստոնեայ սուրբերի հետ, Սրուանձտեանցը կրկնակի երկիւղածութեամբ նկարագրում է այդ սրբութիւնները և անում հետաքրքիր դիտողութիւններ: Դրանցից ուշագրաւ է Կարմրւոր վանքի բացատրութիւնը: Ջորավանքին մօտիկ գտնւում է Կարմրւոր Ս. Աստուածածնի վանքը: «Կարմրւոր. ինչ սիրուն բառ...: Այս առթիւ ներելի՞ է կարծել, թէ Հայոց հին աստուծոց և աստուածուհեաց, Արամազդներու և Անահիտներու համար երգուած դիցաբանութեան փշրեալ ոսկեղէն երգոց բեկորներէն՝ ժողված լինին մեր թարգմանիչք շատ մը թանկագին գոհարներ և անոնցմով շարայօրինած լինին այնքան վսեմ շարականներ տէրունական, մանաւանդ՝ ի գովեստ Ս. Աստուածածնին... մանաւանդ, երբ գիտենք ատոնց մեծ մասն յօրիներ է Խորենացին. նա, որ ճաշակ ունէր հնութեանց և հնախօսութեանց, որ մեծ խնամօք զատւ և ա-

[9] Նոյն տեղում, II հ., էջ 345:

*ւանդեց մեզ Գողթնեաց երգերն. ... Այո. մեր շարականաց մեծ մասն Աստուածաշնչով բանաստեղծեալ են, իսկ մաս մը՝ ազգային շնչով ու լեզուով, որ չէր անհետացած մինչև այն օրերը»:[10]* Իմ կարծիքով. արտակարգ հետաքրքիր պարզաբանում է դա, որ նրբութեամբ և խորքով բացատրում է մեր եկեղեցու խսկապէս ազգային արմատները: Նման մի դիտարկում է նաև Եկեղեաց գաւառի Երեզն աւանի Սատաղ լեռը, ուր իրար են խառնուել մեր հեթանոս աստուածներն ու քրիստոնեայ սուրբերը: Սրուանձտեանցի ենթադրութեամբ, Սատաղ լեռան վրայ պէտք է լինէր Անահիտի մեհեանն ու արձանը, բայց հետագայում այն դարձաւ Գրիգոր Լուսաւորչի և Տրդատ թագաւորի պայքարի վայրը: Կանգնած են երկու հզօր ուժերն իրար դէմ. Գրիգորը՝ Տրդատի ծառան, բայց ամենից առաջ՝ Քրիստոսի ծառան, որ խաչի լոյսով ճառագայթում է, պայքարի ասպարէզ նետւում: Միւսը՝ Տրդատն է իր ահեղ բանակով ու նախարարներով: Գրիգորը «միայնակ կը նահատակի. արիւնն արիւն, մահէ մահ, երկաթէ երկաթ. վիրապէ վիրապ փոխուելով կ՛ուժովնայ, կը փայլի. կը զօրանայ, կը յաղթե»: Զարչարանքով ու տառապանքով հասնել յաղթութեան՝ Գրիգորի պայքարի արդիւնքը: Տեսարանը փոխւում է.«Առիծն Տրդատ Աստուծոյ գառն կը դարձունէ. Անահտայ դաշտն՝ եկեղեցւոյ հովիտ, լեռներ ու բլուրներ խաչին պսակով կը զարդարէ»:[11] Այդ գեղեցիկ աւանդութիւնը վերաբերում է Եկեղեաց գաւառի Սեպուհ լեռանը, ուր հոյակապ միախառնուած են մեր հեթանոսականն ու քրիստոնէականը:

Շարունակելով իր ճանապարհը մեր սուրբ վայրերում, Սրուանձտեանցը նկարագրում է Թադէոս Առաքեալի վանքը և Գրիգոր Լուսաւորչի Անապատը: Նա բացատրում է, որ այդ խոր և անտես ձորի մէջ Թադէոս Առաքեալը եկեղեցի է հիմնել այն ժամանակ, երբ հալածւում էր քրիստոնէութիւնը: Անապատականների ու ճգնաւորների համար Սեպուհ լեռն ունէր քարայրներ, խոռոչներ և ծածուկ ձորեր: Այստեղ է գտնւում նաև Մանեայ այրը, ուր յետագայում ապաստանեց Գրիգոր Լուսավորիչը՝ այդ լեռն ընտրելով իրեն աղօթարան և ճգնարան: Սեպուհ լե-

---

[10] Գ. Սրուանձտեանց, Երկեր, I հ., էջ 388:
[11] Նոյն տեղում. Երկեր, հ. II. էջ 344-345:

ռան վրայ է նաև «Գոհանամբ»-ը, Սևրովբէից վանքը: Այդ լեռան հետ կապուած է նաև ազգային մի սրբազան աւանդութիւն, ըստ որի Տրդատ Մեծը հետևելով «ողջ Հայութեան վարդապետին», իր վերջին օրերը նուիրել է ճգնութեան հէնց այդ վայրերում: Այդ օրերին նա իր մէջքից հանել է յաղթական սուրը, այն սուրը, որ ծառայել էր Արարատեան երկրի թշնամիներին յաղթելու, ծառայել էր ուղի բանալու Քրիստոսի Աւետարանին և բարձրացնելու յաղթական նշան Ս. Խաչին» և Ս. Լուսաւորչի ձեռքով ձգել այս լեռների մէջ: Այդ սուրը գետին չի ընկել, այլ խաչի ձևով օդի մէջ կախուած է մնացել, դրա շուրջը շրջանակով շող է փայլում՝ Լուսաւորչի մշտավառ կանթեղի լոյսը: Սրտի աւիւնով ու տրոփիւնով, մեծ ներշնչանքով գրուած նման նկարագրութիւնը յուզում է կարդացողներին, ինչպէս հեղինակին: Այդ նկարագրութիւնները ընթերցողի սիրտը լցնում են աստուածային սիրով, վեհութեամբ ու մաքրութեամբ: Երիցս իրաւացի է Սրուանձտեանցը, երբ գրում է.«Տեղ կայ, որ մարդու սիրտն ու քնար քար կը դառնայ. քար կայ, որ քար կտրած սրտեր և խորտակեալ քնարներ կը շարժէ»: Ի զուր չէր, որ Սրուանձտեանցի ուսուցիչը՝ Ամենայն Հայոց Հայրիկը յաճախ նրան անուանում է Յովհաննէս Պլուզ, զուգահեռ անցկացնելով երկու Յովհաննէսների միջև:

Գարեգին Սրուանձտեանցը՝ Արևմտեան Հայաստանի անխոնջ «Ճամբորդը» իր աշխատութիւններում սերունդների յիշողութեանն է ընծայել նրա տարբեր վայրերի նկարագրութիւնները, դրանցով փրկելով մեր անցեալի պատմութեան պատառիկները և իրաւացի էր, երբ գրում էր. «Գեղեր ու վայրեր կան, որոց կոչումն ու անունը մէկ-մէկ պատմութիւն են նախնեաց գործոց: Տաճարներուն և բերդերուն աւերակները, հին եկեղեցիները, որոց մէջ նախնեաց անուն կամ նշան կը տեսնուի»: Յիրաւի, մեր պատմութեան լուռ վկաներն են աւերուած պալատներն ու վանքերը, որոց հաւաստի տեղագրութիւնն է կատարել Սրուանձտեանցը: Դրանք մեզ համար առաւել թանկ են, որովհետև մնացել են սահմանից այն կողմ, դարձել թուրքական պետութեան հայաջինջ քաղաքականութեան լուռ վկաները, աստիճանաբար անհետանում են, աւերւում, ջնջելով իրենց ստեղծող ու շինարար ժողովրդի ձեռքերի հետքերը:

Հայկ Նահապետի, Գրիգոր Լուսաւորչի ու Տրդատի ոտնահետքերից յետոյ, զուցէ և բոլորից առաջ Սրուանձտեանցն անդրադառնում է Մեսրոպ Մաշտոցի անուան հետ կապուած վայրերին: Ահա Ս. Մեսրոպի ճգնարանը, որը, ըստ ժողովրդական վկայութեան գտնւում է Բալու քաղաքի մօտակայքում: Ժողովրդի կողմից Գրման քար անուանած սուրբ վայրերի մօտ գտնւում է այն ճգնարանը, ուր ապրել է Մեծն Մաշտոցը, աղօթել, տառապել և աշխատել «Հայ ժողովրդին և Հայաստանեաց Եկեղեցւոյն լոյս ու կեանք ճարելու ճգնութեամբ»: Ժողովուրդը այդ այրը կոչել է «Սուրբ Մեսրոպայ դպրոց» և հիւսել է աւանդութիւն, թէ այդ ճգնարանում էր, որ աստուածային յայտնութեամբ գրատախտակի նմանող քարի վրայ Սուրբ Թաթը գրեց մեր զարմանահրաշ տառերը՝ Ա, Բ, Գ: Սակայն Սրուանձտեանցը, չնայած վարդապետ, բարձր է գնահատում գիտնական Մեսրոպին: Նա անձամբ եղել է այդ ճգնարանում, մանրամասն նկարագրել նրա բոլոր պատերը, որոնց վրայ գտնուող բևեռագրերը ստիպում են նրան եզրակացնել, որ այն աւելի հին է, քան Մեսրոպի յայտնագործութիւնը: Ուրեմն, աւելի բարձր է Մաշտոցի կատարած գիտական գործի արժէքը: Մեսրոպի հետ միասին ըստ արժանւոյն գնահատւում է Վռամշապուհը՝ Մեծ Հացեկացւոյն օգնելու համար. «մէկից միտք, միւսից ջանք, մէկից գանձ, միւսից վաստակ», այդ միասնութեամբ կատարուեց Մեծ Հրաշքը, ստեղծուեց մեր մեծ զօրաբանակը, մեր 36 մատեան զունդը, յետագայ դարերում մեր երթը շարունակելու համար: Վռամշապուհի օժանդակութեամբ Մեսրոպի կատարած այդ «մեծ յայտնութեան» հետ Սրուանձտեանցը համեմատում է մի այլ մեծ գործ՝ Սահակ Բագրատունու օգնութեամբ և մեկենասութեամբ «Խորենեան ծնրունու» կատարած գործի հետ: Երկու դէպքում էլ Միացեալ ջանքերով «ծաղկեցուցին Հայկազանց դաշտերն ու հովիտները, արձակեցին սրտի և խորհրդոց կապանքները, լեզու, պատմութիւն, կրօնք, երգեր աւանդեցին մեզ, որոնցմով ապրեցանք և կ'ապրինք իբրև ազգ և իբրև ժողովուրդ»:[12]

[12] Գ. Սրուանձտեանց, Երկեր, I հ., էջ 625:

Ինչո՞ւ էր Խորենացու կատարած գործը համեմատվում Մաշտոցի կատարած գործի հետ: Սրուանձտեանցը տալիս է այդ հարցի պատասխանը, բարձր գնահատելով Խորենացու «Հայոց պատմությունը» գործ, որն ամբողջացրեց մեր ժողովրդի վաղնջական պատմությունը՝ ցոյց տուեց մեզ մեր արմատները և մենք հաստատուն տեղ գրաւեցինք ազգերի մէջ: Սրուանձտեանցի կարծիքով առանց Խորենացու պատմութեան, «ազգային լեզուով լոյս հանած այս մագաղաթներու», «աննշան և անգոյ ազգ մը կը ձևանայինք անշուշտ առանց նախնեաց. անարմա՛տ ծառ, ուստի և անհաստատ»:[13]

Կարելի է երկար շարունակել Սրուանձտեանցի տարբեր կռահումները, գիտականօրէն բացատրել, գնահատել տարբեր մեծութիւնները: Նրա գրչի հերոսներն են սուրբ Առաքեալներն ու Թարգմանիչները՝ Մեսրոպ, Խորենացի, Եղիշէ, Նարեկացի և Ներսէս Շնորհալի: Նրա նկարագրութիւններն ու համեմատութիւնները չի կարելի շփոթել որևէ այլ ստեղծագործողի գրածի հետ: Նրա խօսքը սրտի և մտքի արտակարգ միասնութեան արտայայտութիւն է: Բայց դա բաւական չէ: Դրան միանում է նաև գործը: Խորը, անչափելի յարգանքը Եղիշէի նկատմամբ հասնում է այն աստիճանի, որ 52 ամեայ Սրուանձտեանցը մահուանից յետոյ թողած կտակում պատուիրում է իր խնայած գումարից տապանաքար դնել «անտապան, անարձան, անյիշատակագիր հրեշտակակենցաղ հայոց վարդապետին, պաշտելի Եղիշէին»: Այդ պաշտամունքը ծնուել էր դեռևս տասնեօթամեայ պատանու սրտում, երբ ընդունելով Վարագայ ժառանգաւորացը Սանդենց Յովհաննէսը, ազդուած Եղիշէի «աղու մրմունջներից», Նրա պատմութեան հերոսներից մէկի անունով իրեն վերանուանեց Գարեգին Սրուանձտեանց, երկրորդ անգամ աւելի մեծ անմահութիւն պարգևելով այդ անուանը:

[13] Գ. Սրուանձտեանց, Երկեր, II հ., էջ 27:

# ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ 70-80-ԱԿԱՆ ԹԹ. ԸՍՏ ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ[1]

*1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Կ. Պոլսի Հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը երեք վարդապետների՝ Գարեգին Սրվանձտյանցին, Վահան Տեր-Մինասյանին (Պարտիզակցի) և Արիստակես Տեր-Սարգսյանին (Տեվկանց) հանձնարարեց ուղևորվել Արևմտյան Հայաստան: Տարբեր ուղղություններով մեկնած վարդապետները հրահանգ էին ստացել կազմել Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգների բնակչության, եկեղեցիների, դպրոցների, հողային կալվածքների վիճակագրությունը, նկարագրել ժողովրդի կացությունը, ամոքել նրա վշտերը: Սրվանձտյանցի գործն առավել դժվար էր. նրան հանձնարարվեց երկրորդ անգամ ևս ուղևորվել Արևմտյան Հայաստան: Առաջին ուղևորությունն սկսվեց 1878 թ. ապրիլի 30-ին: Նոր էր վերջացել ռուս-թուրքական պատերազմը, օդը դեռևս լի էր պատերազմական արհավիրքներով, պետական վերահսկողությունից դուրս ճանապարհներին վխտում էին զինված ավազակախմբեր: Ոտքով կամ ջորու կռնակին, խստաշունչ ցրտին և ամառվա տապին ու խորշակին, նա շրջում էր հայկական նահանգներում, կատարում պատրիարքի հանձնարարությունը, Կ. Պոլիս ուղարկում իր կազմած վիճակագրություններն ու հաշվետվությունները: Խանդավառված ռուսական զենքի հաղթանակով, Սրվանձտյանցը մեծ հույսեր էր կապում հայկական խնդրի բարեհաջող լուծման հետ: Կ. Պոլսի Ազգային ժողովի և վարչության անդամներին անհրաժեշտ էին ստույգ տեղեկություններ Արևմտյան Հայաստանի իրավիճակի վերաբերյալ: Եվ հայրենասեր գործիչը կատարում էր իր առաքելությունը. «Երբեք պատճառ մը չունիմ դժգոհելու, վասնզի յոժարութեամբ գնացի, յոժարութեամբ շրջեցա, յոժարութեամբ գործեցի: Ոչ երկրին անիշխանութեան օրերը, ...ո՛չ արեւն ու անհանգիստ ուղիները և այլն,*

[1] *Գիտաժողովում կարդացած զեկուցում, առաջին անգամ լույս է տեսել «Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների ժողովածու, N 5, 2005 թ., էջ 77-87:*

չկրցան վշտացնել զիս ... ամիական ուղևորի մը կրնիք ամենն ալ կրեցի, բայց երբեք ցավ չզգացի, վասնզի սիրով գնացի...: Հայ եղողը Հայաստանի Հողոյն վրա ինքզինքը կ'ճանաչե, ինքզինքը վեհ ու կենդանի կ'գտնե, փորձեցեք և տեսեք»:[2]

Սրվանձտյանցի առաջին ուղևորության արդյունքը եղավ «Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ» աշխատության առաջին հատորը, որը ուղեգրության, հուշագրության, վիճակագրության ինքնատիպ համաձուլվածք է, Արևմտյան Հայաստանի այդ ժամանակաշրջանի հավաստի նկարագիրը, այդ պատճառով ունի եզակի արժեք: Առաջին հատորն ընդգրկում է Սամսոն, Պաֆրա, Սինոպ, Ամասիա, Զիլե, Թոքատ, Սեբաստ (Սեբաստիա), Տյուրիկ, Գասման և Բենկա, Ակն, Արաբկիր և Մալաթիա քաղաքների, առաջնորդական թեմերի, հայաբնակ գյուղերի ժողովրդագրությունը, Հայ և օտարազգի բնակչության թվաքանակը: Հայերինը տրվում է և ծուխերի քանակով (տունք Հայոց) և բնակչության թվով: Դա մեզ հնարավորություն է տալիս որոշել յուրաքանչյուր ընտանիքի անդամների մոտավոր թիվը՝ 5-ից բարձր թիվ, տատանվում է 8-10-ի միջև: Որպես կանոն քաղաքների բնակչության մեծամասնությունը թուրքեր էին, որովհետև այնտեղ էին կենտրոնացված զորքը, ոստիկանությունը և պաշտոնեությունը: Գյուղերում գերակշռում էին Հայերը՝ երկրագործները և արհեստավորները: Սամսոն քաղաքը Տրապիզոնի վիլայեթի մյութեսարիֆություն էր, ուներ 760 շունչ Հայ (640՝ առաքելական, 111՝ կաթոլիկ և բողոքական), 342 հույն և 3670 թուրք բնակիչ:[3] Փոքր Հայքում՝ Սինոպ, Մարզվան, Ամասիա, Զիլե քաղաքներում գերակշռողը թուրք բնակչությունն էր, իսկ գյուղերում՝ Հայությունը: Մարզվանում կար 6496 Հայ, 6874 թուրք,[4] չնայած տարբերությունը մեծ չէր, սակայն Հայաթափման գործընթացն սկսվել էր: Ամասիայում տարբերությունն ավելի մեծ էր՝ 5700 Հայի դիմաց 9823 թուրք[5], իսկ Զիլեն դարձել էր թուրքական քաղաք, որտեղ 16688 թուրքի դիմաց կար ընդամենը 2012 Հայ,որոնք կանգնած էին ձուլվելու վտանգի դիմաց:

---

[2] Գ. Սրվանձտյանց, Երկեր, Հ. II, Երևան, 1982 թ., էջ 186-187:
[3] Նույն տեղում, Հ. II, էջ 189:
[4] Նույն տեղում, էջ 199:
[5] Նույն տեղում, էջ 216:

Սեբաստիայի վիլայեթի Թոքատ քաղաքում կար 8819 Հայ, 2600 Հույն և Հայ-Հռոմներ (այդպես էին կոչվում քաղկեդոնական Հայերը), 906 Հրեա և 10.500 Թուրք:[6] Իսկ 19 գյուղերում կային 4093 Հայ. գյուղեր կային, որ լրիվ Հայաբնակ էին, 5 գյուղում Թուրքերի Թիվը կազմում էր 1025: Ստացվում էր, որ Հայերի ընդհանուր Թիվը կազմում էր, 15.512, (Հայ-Հռոմների Հետ միասին), իսկ Թուրքերինը՝ 11.525: Վիլայեթության կենտրոն Սեբաստիա քաղաքում 13.200 Հայի դիմաց կար 18437 Թուրք, գավառի 35 գյուղերում 13516 Հայ և ընդամենը 4183 Թուրք. կլորացված Հաշվով 3:1 Հարաբերություն Հօգուտ Հայերի[7]: Նույնիսկ երբ գումարում ենք վիլայեթի կենտրոնի բնակչության Թվի Հետ (13.200 +13.516=26716 Հայ) և 18437+ 4185= 22620 Թուրք, Հայ բնակչությունը 4000-ով շատ էր Թուրքերից: Հետաքրքիր մի Հանգամանք. Մալաթիայի մյութեսարիֆության մասին «Թորոս Աղբարի» I Հատորում չի նշվում որևէ Թիվ. միայն նկարագրություններ, Հայաբնակ գյուղերի Թվարկում, դարձյալ առանց բնակչության Թվաքանակի: Գրականության և Արվեստի Թանգարանի Թորոս Ազատյանի ֆոնդում են գտնվում Գ. Սրվանձտյանցի ձեռքով գրված ընդարձակ Հաշվետվությունները, որոնք մեծ տարբերություն ունեն «Թորոս աղբարի» I Հատորից: Մյութեսարիֆության մեջ Սրվանձտյանցը Թվարկում է 5 վիճակ: Մալաթիո վիճակը. քաղաքն ուներ 28.000 բնակիչ, որից 20.000-ը՝ Թուրք, 8.000-ը՝ Հայ, 75 գյուղերն ունեին 15000 բնակիչ, որից 10.000-ը Թուրք, 5000-ը՝ քուրդ: Միակ վայրն է, որտեղ գյուղական բնակչության մեջ ընդհանրապես Հայ չկա: Ագճաթաղու վիճակը. քաղաք չունի, 125 գյուղերի 25000 բնակիչներից 20.000-ը քուրդ են, 4000-ը՝ Թուրք և 7 գյուղերի մեջ ընդամենը կար 1000 Հայ: ՊեՀեսնիյու վիճակը. նույնանուն քաղաքն ուներ 15.000 բնակիչ. որից 13.000-ը Թուրք, 2000-ը՝ Հայ: Վիճակի 160 գյուղն ուներ 35000 բնակիչ, որից 30.000-ը քուրդ, 4.800-ը՝ Թուրք և 5 գյուղերի մեջ միայն 200-ը՝ Հայ: Քյախթեյու վիճակը քաղաք չունի, 180 գյուղն ունի 40000 բնակիչ, որից 30000-ը՝ քուրդ, 7000-ը՝ Թուրք և 3000-ը՝ Հայ: Հայերն ապրում

[6] Նույն տեղում, էջ 229:
[7] Նույն տեղում, էջ 259-261:

են 15 գյուղերի մեջ և ընդամենը մեկ եկեղեցի ունեն: Ընդգծելով այդ փաստը, Սրվանձտյանցը շեշտում է. որտեղ գործող եկեղեցի կա, նրա շուրջն ապրող ժողովուրդը պահպանում է իր հայությունը, իսկ բացակա վայրերում՝ կորցնում: Շեշտվում է նաև մի այլ հանգամանք. նախկինում հայաբնակ բոլոր վայրերն էլ ունեցել են իրենց եկեղեցիներն ու վանքերը, որոնք կամ ավերվել են կամ վերածվել մզկիթի: <u>Ագլյամանի վիճակը</u>. բուն քաղաքի 10.000 բնակչից 7.000-ը թուրք է, 2500-ը՝ հայ և 500-ը՝ ասորի: Վիճակում գտնվող 110 գյուղերն ունեին 35.000 բնակիչ, որից 30000-ը՝ քուրդ, 4.500-ը՝ թուրք, 500-ը՝ հայ, առանց «եկեղեցու և վարժարանի»:

Դրությունը նույնն է նաև Սեբաստիայի վիլայեթի Տյուրիկ գայմագամությունում. «Թորոս աղբարի» I հատորում դարձյալ չի նշվում որևէ տվյալ: Տեղագրված են 13 հայաբնակ գյուղեր, գործող եկեղեցիների, վարժարանների և ուսանողների թվով (դա նշված է միայն 6 գյուղում): Գասման, Զմարա, Բենկա հայաբնակ մեծ գյուղերը ներկայացված են ավելի ճոխ, քան գայմագամության կենտրոն Տյուրիկը (Տիվրիկ): Բենկան մեկնաբանվում է իբրև Սեներքերիմ արքայի իշխան Բենիկի կառուցած և նորոգած վայր, այդ պատճառով կրում է նրա անունը: Հայաբնակ այդ գյուղն ուներ երեք գործող եկեղեցի, երկու վարժարան՝ 180 աշակերտ-աշակերտուհիներով: Բենկայի մոտակայքում կային հինգ ավերված եկեղեցիներ: Սակայն չի նշված բնակչության թվաքանակը: Նույն փաստը բացակայում է նաև Ակն քաղաքին վերաբերող հոդվածում, ուր դրա փոխարեն տրված են քաղաքի, նրա մերձակա Ապուչեխ և Կամրկապ գյուղ-արվարձանների, եկեղեցիների ու վանքերի շքեղ նկարագրությունները: Կամրկապին մոտ է Կաշո գյուղը, որի բնակիչները հարյուր տարի առաջ «տաճկացեալ հայք» են, որոնց տոհմերը կրում են հայ անուն և տաճկացել են «թրքաց բռնութենեն ազատվելու համար»[8]: Թուրքեր կան նաև հայկական բոլոր գյուղերում: Դրանց հայ բնակչությունն ապրում է պանդխտությամբ հայթայթած միջոցներով: Սրվանձտյանցը նկարագրում է այդ գյուղերի և Ակնի հայկական տները, ուր նույն սենյակում գրքերի՝ Սաղմոս և Նա-

8 Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. II, էջ 279:

րեկ, հետ պահվում են վառող և գնդակ, «տնական անոթ և գարդուց զգեստ, հրացան և սուր միևնույն պատեն կախված»[9]: Սրվանձտյանցը նկատում է, որ քաղաքի և նրա շրջակա 4 գյուղերի աշակերտների թիվն է 762 տղա և 162 աղջիկ: (Չնայած այսօր մեր գյուղերն ավելի փոքրաթիվ աշակերտություն ունեն): Եւ քանի որ ըստ Սրվանձտյանցի աշակերտներն էին որոշում գյուղի դիմագիծը, ապա սկսվել է հայության դիմախեղման գործընթացը: Ակնի շրջակայքում կային 4 գյուղեր՝ Ջորակ, Մուշեղկա, Վանք, Շրգու, որոնց բնակիչները հայ-հոռոմներ էին՝ «քաղկեդոնիկութեան ավարները» (Սրվանձտյանցի դիպուկ արտահայտությունն է) որոնց «ընտանեկան և վարժարանի լեզուն հայերենն է», քահանաներն անգամ հունարեն չգիտեն, ուղղակի օտարները պառակտել են հայ եկեղեցին, որի մի մասում առաքելական հայերն են իրենց ծեսերը կատարում, մյուս մասում՝ քաղկեդոնականները: Ակնի շրջակայքում թվարկվում է 21 գյուղերի հայկական անուններ, որոնց բնակիչները «տաճկացեալ հայք» լինելով պահպանել են հայկական անվանումներ՝ Փակեր, Արգո, Ագրակ, Ապրանք, Աղվորիկ, Սերկևիլ, Հողդուր, Արտոս, Բաղմաշեն, Փշատի և այլն:

Թվական տվյալներ չկան նաև Արաբկիրի և նրա շրջակա 15 հայկական գյուղերի մասին: Թվերը վերաբերում են միայն քաղաքներում և գյուղերում գործող հայկական եկեղեցիներին, վարժարաններին, սովորող երեխաներին՝ «մանկունք և աղջկունք»: Այդ թվերի հետ միասին նշվում է, որ չնայած դրանք Արաբկիրի առաջնորդության թեմն են, սակայն նրանցից տասը ենթակա է Ակնի գայմագամության, որտեղ էլ նստում է մյուդիրը: Փաստելով, որ այդ գյուղերը 5-6 ժամ հեռու են Արաբկիրից, Սրվանձտյանցը նկատում է, որ այդ հանգամանքը հոգևոր առաջնորդի համար ստեղծում է մեծ դժվարություններ և առաջարկում է վարչական բաժանումներին համապատասխան ստեղծել հոգևոր վիճակները: Դրանով ավարտվում է «Թորոս աղբարի» առաջին հատորը, առաջին ուղևորության հաշվետվությունները:

9 Նույն տեղում, էջ 280:

1879 թ. ապրիլի 26-ին սկսվում է Սրվանձտյանցի երկրորդ ուղևորությունը, որը հետապնդում էր մի քանի նպատակներ: 1878 թ. հունիսին կայացած Բեռլինի վեհաժողովը պարզություն մտցրեց բազմաթիվ հարցերում: Ռուսաստանի կողմից ազատագրված տարածքների մեծ մասը վերադարձվեց պարտված Թուրքիային: Դրանց մեջ ամենակարևորը Բարձր Հայքի կենտրոնն էր: Կարնո նահանգի կամ էրզրումի վիլայեթի հայության հոծ զանգվածը ոտքի կանգնեց Արևելյան Հայաստան գաղթելու համար: Այդ հանգամանքն ուներ փոքր ինչ դրական, բայց մեծ չափով բացասական կողմեր. դրական էր, որ Արևելյան Հայաստանը դառնում էր հայության կոնսոլիդացման վայր, առավել բացասական էր, որովհետև հայաթափ էր լինելու Արևմտյան Հայաստանի ամենահոծ հայաբնակ նահանգը, որը հաճախ անվանում էին էրմենիստան վիլայեթ: Նահանգի հայության գաղթը կանխելու և արգելակելու համար պատրիարք Ն. Վարժապետյանն այնտեղ ուղարկեց դեռ 60-ականներից տեղում մեծ ժողովրդականություն վայելող Գարեգին Սրվանձտյանցին, որի խոսքի ուժն ու ազդեցությունը մեծ էր Կարնո հայության վրա: Դրանից բացի, Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածն իր գործադրելու նպատակով սուլթանական կառավարությունը որոշել էր կոմիսերներ ուղարկել հայաբնակ վայրերը՝ հայության իրական կացությունը պարզելու և նրանց «չերքեզներից ու քրդերից» պաշտպանելու համար: Կոմիսերներն էին Յուսուֆ փաշան և Աբեդին բեյը. ամեն մի կոմիսերի ուղեկցում էր մի հայ՝ Ազգային ժողովի անդամներ Աղաբեկյան Սարգիս էֆենդին և Խորաճանյան Դանիել էֆենդին: Վերջինիս հետ շրջագայում էր պատրիարքի վստահությունը վայելող Սրվանձտյանցը, որին հատուկ կոնդակ էր տրվել, որ ուղարկվում էր «հայրենիքնին թողնելու դիտումներ» ունեցողներին այդ «նպատակեն ետ կեցնելու և իրենց Հայրենեաց մեջ մնալու համար խրատելու և հորդորելու պաշտոնով»[10]: Արևմտյան Հայաստանի այդ գավառների և նահանգների նկարագրությունն ու ժողովրդագրությունը կազմում են «Թորոս աղբարի» երկրորդ հատորի նյութերը: Երկրորդ հատորը լույս տեսավ 1884 թ., ճանապարհորդությունից հինգ տա-

---

[10] Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. II, էջ 336:

